



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1918

1919

1920

*[Faint, illegible handwriting]*

*[Faint, illegible handwriting]*

*[Faint, illegible handwriting]*

84  
11-60

2011

2003

84

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՏԻՒՍԱ

P-69

7-60  
26

# ՏՐԿԻՆ ՄՈՆՍՈՐՔ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Մ . ԹԱԹՈՒՂ . ԲՕՁԼԵԱՆՅ

ՏԵՐ ԵՒ ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՅՈՎՀԵՆՆԵՍ Գ . ԲՕՁԼԵԱՆՅ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ



Կ . ՊՕԼԻՍ

ՏՊԱՐԳՐՈՒԹԻՒՆ ԱԶԳ . ՀԻՆՆԳՆԱՅԻ

( 1869 )

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՆՈՍՈՆԵՆԵ ԻՄՈՅ

ԱՐԳԱՅՈՒՄԻ ԲՈՐԻՆՆԵՅ

Ազատեալ զՔրնարս ըզ սուրբն ոճեաւ տըխրազին,  
 Որ մերձ շիրմօքդ տայ հեճեճանս տըխրազին,  
 Խառնեմ ընդ այն յաւերժ սիրոյս անբիժ շունչ,  
 Շունչ-ն՝ զբք զսիրոյս, յիշատակացդ յաւեա փունջ,  
 Զոր, ո՛ր ալեաց նշխարք, հոգիք երկնածիլ,  
 Ի սըրտըկին ձերդ սերընդոց խոր է՝ անխիլ  
 Զեա ինչ արձան մըշտադողանջ պըղընձի  
 Ժամանակաց անհուն անդ խոր ՚ի ծոցի  
 Ընդ լըռութեամբ հեշտին բուրիւքն անդ յեթեր  
 Յողխդ ելցե՛նդ աշխարհ համայն անբստուեր,  
 Մինչ անաղօտ յիւր կանթեղիցն՝ ցոլայ ըյս  
 Յայն վայր ՚ի մեզ սուրբ ձերըդ հուր-երկնի՛ց յոյս:

Թ.Ս.ՌԻՆԻ

Գործի ասպարէզ մ' ընտրեցինք որոյ հետ երբէք յառաջմէ յարարե-  
րութիւն մը չունէինք : Դեռուտ ասպարէ'զ :


Այսպիսի փիճակի մը մէջ սյապիսի ստուար գործ մ' ՚ի գլուխ հանել կըզ-  
գայինք քանի' ծանր էր . յանդգնութիւնը մեզ առաջնորդ բունեցինք :  
Յանդգնութիւնը , որով բազում անգամ գեղեցիկ արգիւնք կ'ստանանք մեր  
զառաչիին փշալից երեւցած գործոց մէջ : Ազգային զրականութեան թան-  
գարանին օգտուէտ ծառայութիւն մ' ընել կ'ուզէինք և կը ցանկայինք  
նաեւ Ազգին մէջ ընթերցանութեան տարածմանն համար գրքերը գնոյ  
կողմանէ դժուարամտոց չընելու առաջին օրինակ մը տալ :

Ինքզինքնիս որչա'փ երջանիկ պիտի համարեմք եթէ' զէթ սակաւ  
առ սակաւ՝ օր մը մեր բաղձանաց կէտին հասած տեսնէինք զմեզ : Ասոր  
համար անշուշտ եմք որ ամեն ազգանուէր Հայ չպիտի վարանի մեր  
ջանքին պատասխանելու :

Գուցէ մեր այս հրատարակութեան ՚ի սկզբան Րնկերութեամբ մը ձեռ-  
նարկուած ըլլալուն վրայ մի քանի խօսք ընէինք , բայց խորհելով որ լաւա-  
գոյն է յարատեւութեան և հաստատամտութեան գաղափար սուած ըլլալ  
ժողովրդեան քան անարժէք իրողութեանց , լուծիւնը նախամեծար կը հա-  
մարեմք : Այս նկատմամբ նաեւ արժան չեմ համարիր այն « սուսմնական  
ազգասէր » ի մը անցեալները լրագրի մը մէջ մոլեռանդական գրուածքին  
վրայ խօսիլ : Սոյն գործը , ինչպէս Հիւկօի , Էօփէն-Վիւի , Ռուսօի գործերը ,  
Պապէն կամ Պրոպականտայի աշակերտներէն բարի բրիտանի մ' ընթերց-  
ման իրրեւ անգայել , արգիլուած ըլլալը « ազգասիրութեամբ » ժողովրդեան ,  
իմացունելով կ'երեւակայէր՝ իրեն պէս մոլեռանդները մեզ զէմ յարուցա-  
նել որով՝ որպէս զի իր խաւարային արբանեկութեան վարձքն առած ըլլալ  
սոյն ձեռնարկութենէն ետ կենանիս կ'երազէր : Ռուսի սաչափ միայն ըսել  
բաւական կը համարեմք թէ՛ այնպիսիներն իրենց մոլեռանդական ակտէն  
բուժելու համար՝ շատերու ինչորանոց համեմատ՝ մտադիր ենք մեք ալ սոյն  
գործոյ սպազբութիւնն աւարտելնես ետք միւս հեղինակաց գործերէն ալ  
հրատարակել :

Ի վերջոյ , պարտք կը համարեմք մեր գոհունակութիւնն յայտնել այն  
մեծապատիւ անձանց , որք ամեն պարագայից մէջ չլլացան մեզ երբէք  
իրենց քաջալերել :

1869 Կ . Պօլիս



2347  
39 4

Մեր դարը՝ նախնի դարուց հակառակեայն՝ յազթութեան հակայն է : Իւր սուրը միջին դարու եղջերուաքաղններուն արիւնն իւր կենդանի կարմրութեամբը մեզ կը նշուի :

Նորա ոտքին տակ՝ բունամտութեան փշրանքներն , ետին՝ գերութեան ամբարտակներուն, սին բեկորներն և աչքին առջև՝ մարդկութեան մտաց , հոգւոյն կամաց և ազատութեան դաւաճաններուն աճիւնը տարածուած են : Դիւցազն դա՛ր :

Բայց ո՞ չըշխտէր թէ այս փառաւոր դարը , մարդկութեան փրկութեան այս աւետաւոր կայտառ հրեշտակն իւր ծնունդը փրկութեան ընդհանր և առաւ և քանի մ' Եւրոպական հանճարներու , յաւնուն սկզբանց և իրաւանց մարդկութեան զինուող զրիչներու ձեռքին տակ աճեցաւ տատակի վրայ :

Այն օրէն որ մեր թանգարանաց քանի մը ցեցակեր և փոշոտ գրեանց միացան և Եւրոպիոց բարձր մատենադրութիւնք , այն օրէն փրթթիլ սկսաւ մեր բարօրութիւնը : Թափառական Հրէայ , Գաղտնիք Փարիզու , Մոնթէ-Վրիսթօ , Թշուառք , Ոճիւրք , ասոնք եղան մեր խոսքի մտաց անդամատաններուն արօրներն , ասոնք մեր երեւակայութեան հուրն , ասոնք մարդուն իր ճշմարիտ արարիչը ճանչցուցին , վերջապէս ասոնք խորտակեցին այն սեւ ձեռքն որ մարդոց գերութեան շղթայները կը դարբընէր , անոր մտաց և խղճին՝ գերեզմանական փոսեր կը պեղէր և անոր ապագայն աւազուտ երաշտ ու անբեր անապատի մը մէջ կը սերմանէր . ասոնք կ'ըսեմ , հիմն 'ի վեր ստապակեցին և քանդեցին երկնից և երկրի դաւաճան հրէշորդի ճիզութիւնը , բարոյական կենաց թոյնն , որպէս բունութեան մոլութեան , և հարստահարութեան ամբարտաւան գահայից ներքեւ մարդկային սիրտն ու միտքն , հոգին ու կամքը , լեզուն ու ազատութիւնը զբրած կը ճնշէին , անդադար կանխակալ կարծեաց , սուտ մարդարութեան խարաղաններովը կը ձաղկէին . մէկ խօսքով , երկնային դիմակներու տակ ծածկուած այս մարդախոշոշ ճիւղքը հալածեցան կործանեցան՝ երբ Աղեքսանդր-Տիւմայի պէս մարդկութեան իրաւանց և ազատութեան կուսակալու որ քաջ զինուորներ մարդկութեան սիրոյն անձնուէր՝ սուրը պատուանէն քաջած անպարէզ իջան , մարտնչեցան , զրիչը թանաքէն հանելով զրեցին ու զրեցին անդադար :

Գրեցին : Երբ բունաւոր գահն իր երկնածրար բարձունքէն մարդուն իրաւանց վրայ խոժոռեց , ամպեց ու շանթեց առանց ցողելու , ասոնք բոցեւանդ զրեցին , գոռացին , որպէս թէ հովիտներէ յեթեր բարձրացող արիւնիւնց հողմին պէս գանձնք ցրուելու մարանջէին , խիղախեցան , հալածեցին , լոյս և խաղաղութիւն սփռեցին :

Երբ անիրաւութիւնն, եղծումն ու կաշառքը՝ աշխարհի երես աղ-  
քատութիւն, Հարստահարութիւն, զրկանք, բանտ և կախազան զրին ու  
տարածեցին, առնք Եէհովային նուիրական շունչի պէս Մինայէն իջնե-  
լով, Նազրովեցւոյն խաչին պէս Գողգոթան ելնելով հառաչեցին, գոչե-  
ցին, սցրեցին ու Լախնախեցին եղեգ, կողանք և թշուառութիւն :


Երբ Լոտրայի հարազատ Պրոմներն և Պրոսի հաւատարիմ արեւել-  
եայ ձագուկներն Վոզովի ծծմրին և Գոմորի կապրին պէս Հնովմայի  
Նփեստեան հրափրիտուն մարդկային բանականութեան խղճին և աղա-  
ղատողութեան վրայ թափեցին, Վասիկանու կամ Պրոպականասայի բա-  
տորերկրեայներէն հրաբուխներ արձակելով բարոյական շէնքերը գրգռեցին  
և կործանեցին բարոյականութիւնը . իմացականութիւնը մեռացին, աշ-  
խարհը սեւ, թափուր և աւերակ ընելով թշուառ մարդն ողբական բուռ  
մը պէս անոր աւերակայ վրայ ձգեցին . մինակ այս շքեղ գանկերը, այս  
չնաշխարհիկ հանճարները, մտքի և սրտի այս շերքերլէսները, վիշ-  
աբ տարազիր աւերակն եղեմ, անասառք բուրաստան և մարդը երջանիկ  
ըրին ու կ'ընեն :

Ճիգովթութիւնը միայն անկից ստակայ և սիրտի ստակայ :  
Վասն զի ալ հասաւ օրն, որ իւր դահճութիւնն ալ հանճարին հետ  
կըլի և իր վարձքն առնու :  
Գահճութիւնն . . . : Ոճի՛ր ահռելի . . . :  
Ի՛նչ է Տիւմայի կամ Տիպիւն ՄՈՆՍՈՐՈՒ յանցանքը՝ ճիգովթեան բա-  
ցատրութեամբ :

— Այո :  
Հոն կը տեսնուի մերթ քաջ և անվեհեր, առաքելին և սրամիտ դի-  
ցազն մը, Պրոսի մը, որ կը խիզախէ անիրաւութեանց և վատութեանց դի-  
մադրու, իւր գորաւոր բազկօք մղիներու անմեղ զոհերը կը սրաշ-  
տպանէ, մերթ երկրժաբան Եիքօ մ՛ որ յայլթագաւորին փոփոխամիտ,  
անհող, դրստաէր ընթացքը կ'երկրժաբանէ, ճիգովթաց սօձաշունչ լեզու-  
ներէն, ժանդահար խաչերէն և ողեսպան զրուածներէն թիրաած, մղբրած  
միտքն ու սիրտը կը ծաղրէ և կոմսերու, իշխաններու ասպետներու կեր-  
պարանքով խաւարի մէջ դաւեր գործելու ելնող ճիգովթաները մերկապա-  
բանաց կը խայտառակէ : Հոն վերջապէս մոլութիւն և առաքինութիւն  
իրարու դէմ ճակատ առ ճակատ կը պատերազմին և առաքելութիւնն  
յաղթանակելով մարդոց միտքը կը կըթի :

1869 կ. Պօլիս

# ՏԻՊԻՆ ՄՈՆՍՈՐՈ



Գ Լ Ո Ի Խ Ա .

## ՄԷՆ-ԼԻԻՔԻՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

(Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն)

1578 ին բուն բարեկենդանին օրը, Բարիզի արքայական  
պարառին Լուվրի դիմացը՝ գետեղերը կառուցուած շքեղ  
ապարանքի մը մէջ փառաւոր հանդէս մը կուխէր : Օրը արդէն  
իրիկուն եղած էր . բարեկենդանի հանդէսները վերջացած էին  
և Բարիզի հրապարակներուն մէջ զուարթագէմ բնակաց  
ցնծութեան ազալակներուն փոխարէն խոր լուսլութիւն մը սկսած  
էր արել :

Ֆրանսոսա տ'Երբինէ տը Մէն-Լիւք որ Հէնրի Գ. թագա-  
ւորին մեծ բարեկամն ու սիրելի խորհրդականն էր, Գաղղիոյ  
մարալախ Բոսէ-Պրիտարին ժան անունով դստերը հետ կա-  
մուսնանար . եւ այս հարսանեաց հանդէսը շքեղացնելու հա-  
մար, կարդէ գուրս փառաւորութեամբ զաղբարուած էր ա-  
պալանքը : Այո ապարանքը գեռ նոր կառուցած էր Մոնմո-  
րանսի գերդաստանը որ Գաղղիոյ թագաւորութեան հետ պաշ-  
նակից ըլլալով, արքայազն գերդաստանաց հաւասար պատի-  
ւեւ ազգեցութիւն ստացած էր :

Հացկերոյթը Լուվրի պալատը կատարուեցաւ եւ թագա-  
ւորը որ մեծ դժուարութեամբ հաճութիւն առած էր Մէն-



Արքիւն ամուսնութեանը, հարսնետրի մը խիստ անվայել դժըն-  
գակ դէմքով մը ներկայ գտնուած էր հոն: Իր հագած ազօտ  
շաղանակագոյն զգեստներն ալ աւելի սղաւորի մը կը յարմու-  
րէին քան թէ հարսնետրի: Փուայէօղի հարսանիքն ալ այս  
զգեստներով զայցած էր, ինչպէս որ Քլուէ կը պատմէ: Ասկէ  
դատ ձեռքն ալ ահարկու գաւազան մը բռնած էր որ ամենքն  
ալ սոսկումով կը սառեցունէր. մանաւանդ երիտասարդ հար-  
սը՝ որուն երեսը նայած ժամանակ կարծես թէ աչուրներէն  
խէթ եւ ատելութիւն կը ցայտէին: Սակայն եւ այնպէս իր  
թախձալից կերպարանքը այս ուրախութեան հանդիսին մէջ  
եւ ոչ մէկու մը զարմանայի կը թուէր, որովհետեւ ամենքն  
ալ գիտէին թէ ասոր պատճառը արքունական այնպիսի դադա-  
նիք մ'էր որուն քովէն զգուշութեամբ պէտք է անցնիլ. նման  
ծովուն երեսը գտնուած այն խութեաւն որոնց դպչող նաւին  
ջախջախիլը անտարակուսելի է:

Հազիւ թէ հացկերոյթը վերջացած էր, շտապաւ ոտք եւ-  
լաւ թաղաւորը եւ ամենքն ալ պարտաւորեցան անոր օրինա-  
կին հետեւելու. թէև ոմանք տակաւին սեղանը նստելու փա-  
փաքնին միմեանց հետ մրմնջելով կը խոստովանէին:

Մէն-Արք՝ կարծես թէ իր կնոջը աչուրներէն զօրութիւն  
մ'առնելու համար, երկար ատեն անոր երեսը նայելէն վերջը  
թաղաւորին մօտենալով ըսաւ.

— Տէր արքայ, Ձեր Վեհափառութիւնը այս երեկոյ Մոն-  
մորանսի պալատը տայիք նուազերդութեանցս ներկայ դա-  
նուելու պատիւը պիտի չնորհէ՞ ինձի:

Հէնրի Գ. այն ատեն մեղամաղձոտ զայրութիւ մը յուզ-  
ուած երեսը դարձուցած էր. եւ որովհետեւ Մէն-Արք իրեն  
առաջը խոնարհած յանկուղիչ դէմքով մը եւ ամենաքաղցր  
ձայնով կը թախանձէր զինքը.

— Այո, Պարոն, կերթանք, պատասխանեց չէնրի. թէև մեր  
կողմէն բարեկամական այսպիսի ցոյցի մը ստուղիւ արժանի  
չէիք:

— Այն ժամանակ օրիորդ տը Պրիսաք որ Մէն-Արքին տի-

կինը պիտի ըլլար, խոնարհաբար չնորհակալութիւն մատոյց  
թաղաւորին. բայց Հէնրի առանց պատասխանելու Տիկին  
Մէն-Արքի չնորհակալութեանց, իւր թիկունքը դարձուցած  
էր անոր:

— Ի՞նչ ունի արդեօք թաղաւորը ձեզի դէմ, Պ. տը Մէն-  
Արք, հարցուց երիտասարդ կինը իր ամուսնոյն:

— Գեղանի բարեկամուհիս, երբ որ թաղաւորին այդ մեծ  
զայրոյթը փարատի, օր մը կը պատմեմ ձեզի, պատասխանեց  
Մէն-Արք:

— Եւ միթէ պիտի փարատի, հարցուց Փան:

— Սնտարակոյս, պատասխանեց երիտասարդը:

Օրիորդ տը Պրիսաք տակաւին Մէն-Արքին տիկինը եւ-  
զած չըլլալով, այս կէտին վրայ առ այժմ չուզեց պնդել,  
եւ իր հետաքրքրութիւնը սրտին խորը թաքոյց, յուսալով որ  
օր մը այս բանին վրայ խօսելու յարմար առիթ մը կը գտնէ  
եւ այն ատեն Մէն-Արք կստիպուի իր առաջարկութիւնները  
ընդունելու:

Ճիշդ այն միջոցին որ Մորմնբանտի ասպարանքը Հէնրի Գ.ին կապասէին, այս գրքին պատմութիւնը կսկսի :

Ժամը արդէն տասն և մէկն էր, եւ թագաւորը տակաւին չէր եկած :

Մէն-Լիւք պարահանդէսին հրաւիրած էր թագաւորին եւ իր բոլոր բարեկամները, իշխանները եւ իրենց մտերիմները, տ'Սքանտն դուքսը որ Հէնրի Գ. ի դահակայութեան ժամանակ Անժուի դուքս եղաւ. բայց ասիկա որ Լուլլի հացկերոյթին ներկայ գտնուած չէր, կերեւայ թէ Մորմնբանտի ասպարանքը կատարուելիք խնայքին ալ գտնուելու պարտաւոր չէր ճանչնար ղենքը :

Իսկ Նավարայի թագաւորը եւ թագուհին Պէտրն վախած եւ կարկինականներուն զուլս կենալով, յայտնի պատերազմ հրատարակած էին :

Տ'Անժու դուքսն ալ իր սովորութեանը համեմատ թշնամութիւններ կը գործէր, բայց միշտ լռիկ մնլիկ եւ խաւարին մէջ : Ինքը մութին մէջ ծածկուած միշտ յառաջ կը վարէր իր բարեկամներէն անոնք որ տակաւին լա Մուրի եւ Քորնայի սոսկայի մահուընէն խրատ առած չէին :

Ասկէց յայտնի կիմացուի թէ տ'Անժու դքսին կուսակից աղնուականները թագաւորին աղնուականացը հետ միշտ թըշնամաբար կը վարուէին, որով ամիսը գէթ երկու կամ երեք անգամ իրենց մէջ կռիւներ պատահելով, պատերազմիկներէն մէկը գրեթէ միշտ դաշտին վրայ իւր հողին կը վիչէր կամ ծանր կերպով կը վիրաւորուէր :

Գալով Քաթէրին թողուհւոյն, անոր փախաբները արդէն կատարուած էին. իր ամենաիրերի որդին Հէնրի, զոր Գաղ-

ղիոյ վրայ թագաւորեցնելու շատ կաշխատէր՝ անոր կամ աւելի եւս իր անճնական օգտին համար, արդէն արքայական դահը բազմած էր. եւ ինքն ալ իր որդւոյն անուամբը թագաւորական իշխանութիւն կը վարէր, թէեւ այնպէս կը ձեւանար որ այս աշխարհիս գործերէն ձեռքը քաշած իր հողւոյն վերկութիւնը միայն կը հողայ :

Մէն-Լիւք տեսներով որ արքայազուցներէն մէկն ալ դեռ չէր եկած, խիստ կը վրդուէր եւ կաշխատէր վտահացոճնել իւր անները որ այս սպառնական բացակայութենէն աստիկ յուզուած էր : Թագաւորին Մէն-Լիւքին հետ ունեցած բարեկամութեանը վրայ վտահացած՝ փախաբէր էր իւր աղջիկը անոր տալ, յուսալով որ բարձր պոչոպանութիւն մը պիտի վայելէ. բայց կը տեսնէր հիմա որ թագաւորին աղքէն ինկած մէկու մը հետ ինամութիւն կը հաստատէր : Մէն-Լիւք շատ նեղութիւններով կը ջանար վտահութիւն տալ իւր աներոյ՞ը, մինչդեռ ինքն իսկ անպտահ էր. իսկ իւր բարեկամները, Մօփրոն, Սքոնպէրի և Քէլիւս անոր վախը կաւելցունէին : Ստոնք ամենախառաւոր կերպով զգեստաւորուած էին և նորաձև նեղ բաճկոնակներնին շքեղութեամբ հողած որուն խիստ մեծ և զանգուր փողպատները կարծես թէ սկաւառակներ էին իրենց զուլսն ալ մէջը դրուած :

— Ա՛հ, թշուառ բարեկամ, կարծեմ այս անգամ ի կորուստ մատնուած ես, ըսաւ թագ տը Լէվի Քէլիւսի կոմսը : Երկու զօրաւոր թշնամիներ ունիս հիմա. թագաւորը քեզի դէմ առելութիւն ունի իր խրատուցը չանսաղուդ համար և Պ. տ'Անժուն ալ իւր քիթը \* ծաղրելուդ համար :

— Կը սխալիս, Քէլիւս, պատասխանեց Մէն-Լիւք. Թագաւորը Մինիմ Վէնսանի անտառը ուխտի պիտի երթայ, անոր համար չը կրնար դալ եւ տ'Անժու դուքսն ալ բացակայ է, որովհետեւ մտցած եմ իր սիրուհին հոս հրաւիրելու :

— Հացկերոյթին ատենը թագաւորին դէմը դիտեցի՞ր,

\* Ծաղկի հիւանդութենէն այնպէս չարաչար Ֆլատուած էր տ'Անժու դքսին երեսը որ կարծես թէ երկու քիթ ունէր :

ըսաւ Սօժիրոն . միթէ ուխտագնացութեան պատրաստուող մարդու մը հայրական դէմքն էր ան : ՏԱՆժու դքսին զարուկ եթէ ձեր ըսած պատճառին համար ինքը անձամբ ներկայ չը գտնուիր , ինչու համար իր մարդիկներն ալ արգիլած է հոս գալու : Կը տեսնէ՞ք որ անոնցմէ մէկն ալ ներկայ չէ : Գլտէ չորս կողմը . կարծես թէ լուսնոյ ամբողջ լսուարում՝ մ'եղեր է . եւ ոչ իսկ խորխոսապանձ եւ շատախօս Պիւսին հոս կը գլտնուի :

— Աւա՛ղ , Պարոնայք , ըսաւ դուքս տը Պրիսաք , յուսա հատ կերպով մը գլուխը թոթվելով : Ինձի կը թուի թէ իրաց այս վիճակը թագաւորին կատարեալ տհաճութեան արգիւնքն է : Տէ՛ր Ստուած . ինչու համար արդեօք մեր գերդաստանը որ միապետութեան այնչափ անձնուէր գտնուած է , տհաճելի պիտի ըլլար Նորին Վեհափառութեան :

Ծերունի պարտականը այս խօսքերը արտասանած ատեն տխուր գէպով ձեռքերն ու աչքերը դէպի երկինք կը վերցունէր :

Երիտասարդները բարձրաձայն խնդարով Սէն-Լիւքին երեսը կը նայէին որով տը Պրիսաք մարտախտը փոխանակ Սէն-Լիւքին խօսքերէն վստահութիւն առնելու աւելի ես կը յուսահատէր :

Մանկամարդ տիկինն ալ իր հօրը պէս տխրագէմ եւ ամբիտի մտքով կը խորհէր թէ ինչ պատճառաւ Սէն-Լիւք տը հաճելի եղած է թագաւորին :

Սէն-Լիւք ինքը քնն զիտէր այս պատճառը եւ այս գիտնալովը ամենէն աւելի վրդովեալ էր :

Սրահը առաջնորդող երկու գոններէն մէկուն առջեւ յանկարծ լուր մ'ըլլաւ թէ թագաւորը կուգայ :

Մարտախտին երեսը կարծես թէ արեւ մը ծագեց :  
— Օ՛հ , ալ բանէ մը երկիւղ չունիմ , դուքնք բարձրաձայն . եւ եթէ տ'Անժու դքսին ալ գալուն լուրը իմանամ , ալ գոհունակութիւնս կատարեալ կըլլայ :

— Իսկ ես , մըմնջեց Սէն-Լիւք , աւելի կերկնչիմ թագաւորին ներկայութենէն քան թէ բացակայութենէն . անտարա-

կոյս ինձի խաղ մը խաղալու համար եկած է , ինչպէս նաեւ տ'Անժու դուքսն ալ ուրիշ գեր մը խաղալու համար բացակայ կը գտնուի :

Սակայն այս տխուր խորհրդածութեան հակառակ Սէն-Լիւք աճապարեց յոտս թագաւորին որ հացիկերոյթին ժամանակ հազած սեւ զլետոնները մէկզի ձգած , մագուններով փողփողեալ , փետրագարդ եւականակուռ յառաջ կը քայլէր :

Այս վայրկենին տարօրինակ բան մը պատահեցաւ : Հէնրի Գ . թագաւորին ներս մտած դրանը դէմը գտնուող միւս դըրանը առջեւն ալ ուրիշ Հէնրի Գ . մը երեսն ելաւ ճիշդ առաջնոյն նման հազուած , մի և նոյն վարակալով , ներկուած երեսներով , զանդուր մագներով , եւ ճիշդ նոյն կօշիկները հազած :

Պարտականները որ առաջին եկող թագաւորին յափըշտակուած զմայլելով անոր երեսը կը նայէին , անկէց ալ երկբորդին վրայ ակնապիշ մնացին , նման ծովին ալիքներուն որ կամուրջին նեցուկներուն կը զարնուին և անկէց ալ հոգմայուղելով յետս յետս կը գառնան :

Հէնրի Գ . տեսաւ որ ամենքն ալ յուզուած , ամենքն ալ բերանաբաց կեցեր էին և պակուցեալ աչուքներով չորս կողմերնին կը դիտէին :

— Ինչ կայ , Պարոնայք ըսաւ :  
Ընդ երկար ծիծաղ մը պատասխանեց իրեն :

Թագաւորը արդէն անհամբեր բնուորութիւն մ'ունենալով , այս վայրկենին ալ համբերութիւնը բողբովին հատաւ և բարկութենէն սկսած էր յօնքերը պոստել , երբ Սէն-Լիւք երեսն մտնեալով ըսաւ .

— Սքբայ , Շիրօն է , ձեր խեղկատակը որ Չեր Վեհափառութեան պէս հազուած՝ ձեռքը տիկիններուն համբուրել կուտայ :

Հէնրի Գ . սկսեց խնդալ ,  
Շիրօ վերջին Վալուսին ( Հէնրի Գ . ) արքունեացը մէջ

այնպիսի-աղատութիւն մը կը վայելէր որուն նմանը երեսուն տարի յառաջ Թրիպուլէ վայելած էր Ֆրանսուա Ա. Թագաւորին արքունիքը եւ որ քառասուն տարի ետքն ալ Լանկլի պիտի վայելէր Լուի ԺՎ. ին արքունիքը :

Շիքո հասարակ խեղկատակ մը չէր : Այս անունը իր գեր-դատասանին հին անունն էր : Ինքը Աստղանիացի ազնուական մ'էր որ սիրահարական նախանձու մը պատճառաւ տը Սա-յէն իշխանէն բաւական փրատ տեսած էր : Շիքո թէև պարզ ազնուական մ'էր , այդ իշխանին յաղթահարած եւ Հէնրի Գ. ին պաշտպանութեանը գլխած էր : Ետուր Թ. ին յայտրդէն վայելած այս պաշտպանութիւնը երբեմն դառն ճշմարտու-թիւններով կը հատուցանէր :

— Էյ , Շիքո , երկու թագաւոր աւելորդ է հոս , ըսաւ Հէնրի :

— Ս.յս պարագայիս մէջ թող որ սովորութեանս համեմատ ես թագաւորի դերս խաղամ , դու ալ տ'Անժու դքսին : Թերևս տ'Անժու դուքսը կարծելով քեզ , այնպիսի խօսքեր պիտի ընեն որ եթէ ոչ անոր խորհուրդները , գէթ գործքերը պիտի խնայաս :

— Իբաւ տ'Անժու եղբայրս չէ եկած , ըսաւ թագաւորը զուարթութեամբ չորս կողմը նայելով :

— Արեմն պէտք է որ անոր տեղը դուն անցնիս . ալ ըս-ուած ըմպած է . ես Հէնրի եմ , դու ալ Ֆրանսուա . ես դա-հը կը բազմիմ , դու ալ կը պարես . թագակալի մը բոլոր խեղկա-տակութիւնները կընեմ ես , դու ալ ստով քեզ մը կը զուար-ճանաս . թշուա՛ն արքայ :

Թագաւորը դարձաւ Մէն-Լիւքին երեսը նայեցաւ :

— Իբաւունք ունիս , Շիքո , կը դարեմ , ըսաւ :

— Արեմն , ըսաւ իւրովի Պրիսաք , ես սխալած էի թագա-ւորը մեզի գէմ զայրացած կարծելով . ընդ հակառակն շատ զուարթագէմ է :

Եւ ինքզինքը շորհուրդներով որ Նորին Ա.հնարաւորութե-նէն այսպիսի մեծ պատիւ վայելող մեկու մը կուտար իւր գուտարը , յաջ եւ յահեակ կը վաղէր ամէնքն ալ ուրախակից ընելու :

Մէն-Լիւք վերադին իւր կնկանը քովը եկած էր : Օրիորդ-տը Պրիսաք ծայր ատիճան գեղեցիկ մը չէր . սակայն գեղա-նի սիրուն աչուկներ ունէր , սպիտակ ակունքեր եւ փայլունիկ մորթ մը եւ ասոնցմով կընար հրեշտակային գէմը մը կոչուիլ :

Օրիորդ տը Պրիսաք միշտ մի եւ նոյն խորհրդածութեամբ զբաղեալ ,

— Ի՞նչ կրտես ինձի համար , հարցուց իւր ամուսնոյն . ի՞նչ կուզէ թագաւորը ինձմէ . դալէն ի վեր անդադար երեսս կը-նայի ժպտելով :

— Հացկերոյթէն վերադարձին այսպէս չէիք խօսեր , սիրե-լի ժանս . այն ատեն իւր նայուածքը ստակում կը պատճառէր ձեզի :

— Նորին Ա.հնարաւորութիւնը այն ատեն գէշ վիճակի մը մէջ կը դանուէր անշուշտ , ըսաւ երիտասարդ կինը : Իսկ հիմա... :

— Իսկ հիմա աւելի գէշ , պատասխանեց Մէն-Լիւք անոր խօսքը ընդմիջելով : Ես աւելի կը փախարէի որ բայարձակա-պէս իւր ատամները ցուցունէր ինձի , քան թէ այսպէս բե-լանը դոյ պահէր : Ժանս , թշուառ սիրելիս , թագաւորը մե-զի համար նենգածէտ դաւադրութիւն մը կը նիւթէ... : Ա՛հ , մի այդպէս սրտաշարժ խանդաղատանօք երեսս նայիր , դար-ձուր , կաղաչեմ , ո՛հ , դարձուր երեսդ ինձմէ... : Ահա Մօ-ժիբօն մեր քովը կուգայ . արդիչ զանիկա , մի թողուր որ եր-թայ եւ քաղցրութեամբ վարուէ հետը :

— Գիտէք , Պարոն , զարմանալի յանձնարարութիւն մը կը-նէք ինձի , ըսաւ ժան ժպտելով . եւ եթէ ձեր ըսածը բնա-տու բառ դորժադրեմ , պիտի կարծեն թէ... :

— Ա՛հ , ըսաւ Մէն-Լիւք հառաչանքով մը . աւելի բա-ւ թէ այդպէս կարծեն :

Եւ իւր կինը կատարեալ զարմացման մէջ թողլով , դնաց Շիքօին պարտուպտոշաճ յարգանքը մատուցանելու որ խիստ յանկուցիչ եւ ծիծաղաշարժ փառաւորութեամբ մը թողաւ-ն ին գերը կը խաղար :

Հէնրի իր արբայական մեծութիւնը ուրիշ յանձնած ըլ-

լայէն օգուտ քաղելով սկսաւ պարել, սակայն եւ այնպէս Մէն-Ալիքն ալ երբէք աչքէն չէր կորսնցունէր :

Ներքեմն զանի իր քովը կը կանչէր զուարճալի բան մը պատմելու համար որ թէ ծիծաղաշարժ ըլլար եւ թէ ոչ, Մէն-Ալիք բարձրաձայն կը խնդար : Ներքեմն ալ իր ասիտէին մէջի տառուցեալ պտուղները եւ շաքարանուշները կը հրամայունէր որոնք շատ համեղ կը գտնէր Մէն-Ալիք : Միով բանիւ, եւ թէ Մէն-Ալիք թագաւորին սրահէն դուրս ելնէր միւս սրահներուն ալ պատշաճ մեծարանքը կատարելու համար, թագաւորը իսկոյն իր աղջականներէն կամ պաշտօնակալներէն մէկը կը դրկէր զանի կանչելու համար եւ գոհ չէր ըլլար, մինչև որ նորէն չը տեսնէր : Մէն-Ալիք ժպտելով իր տիրոջը քով կը վերադառնար :

Յանկարծակի սղմկայոյց ազազակ մ'ելաւ. այս ազազակը ամբոխին խառնաչիտթ ձայներուն մէջէն որոշ կերպով խնայուելու չափ զօրաւոր էր :

— Կարծեմ Երբօին ձայնն է, ըսաւ Հէնրի . կը լսե՞ս, Մէն-Ալիք, թագաւորը զայրացեր է :

— Այո, արքայ, ըսաւ Մէն-Ալիք առանց Նորին Վեհափառութեան ակնարկութիւնը գիտելու . կարծեմ թէ մէկու մը հետ կը վիճի :

— Գայէք, տեսէք թէ ի՞նչ կայ, եւ շուտով եկէք ինձի իմաց տալու : ըսաւ թագաւորը :

Մէն-Ալիք մեկնեցաւ գնաց :

Սղմկայոյցը նազազակներ հանողը ստուգիւ Երբօն էր որ թագաւորին նամակութիւնը ընելով, քթին տակէն մանչելով կաղազակէր :

— Քայց եւ այնպէս ծախքի համար կարգադրութիւններ բերել էի ես, կըսէր . եւ եթէ անոնք բաւական չեն, ուրիշ կարգադրութիւններ ալ ընեմ . ասով եթէ աղէկ ալ չըլլան, գէթ բազմաթիւ կըլլան : Սագայէլին սոյք վկայ ըլլայ, Պ, Պիւսի, վեց մանկաւիկ շատ է շատ :

Եւ երեսները ուսեցունելով, ազգերը ծռած, ձեռքն

ալ բռնցի կուշտին վրայ դրած, թագաւորին ճիչը նմանու թիւնը կընէր :

— Ի՞նչ կը խօսի Պիւսիին վրայօք, հարցուց թագաւորը յօնքերը պուտելով :

Մէն-Ալիք թագաւորին տեղեկութիւն հաղորդելու համար կը վերադառնար, երբ բազմութիւնը բացուելով վեց մանկաւիկներ անցան ոսկէնկար տառիներ հագած, շքեղ փողպատներ դրած եւ կուրծքերնուն վրայ ալ երկնեքանդ դահարներով զարդարուած իրենց տիրոջը նշանները կախած էին : Ստնց ալ ետեւէն կուգար գեղապանձ մարդ մը, սէգ, բարձրավիզ, հարտո նայուածքով, չրթունքը արհամարհանօք ամկոտիւմ եւ իրեն հագած սև թաւչէ պարզ հագուստը մանկաւիկներուն շքեղ զգեստներուն հետ այլանդակ տեսարան մը կը ներկայացունէր :

— Պիւսի, Պիւսի տ'Սմիգ'ւազ, կըսէին ամենքն ալ :

Եւ երիտասարդ մարդուն առաջը վագրելով կարգաւ կը շարուէին ճամբայ բանալու համար :

Մօժիրոն, Աքոնպէրիկ եւ Քէլիւս թագաւորին քովը նստած էին իբրև թէ զանիկա պաշտպանելու համար :

Մօժիրոն Պիւսիին անակնկալ դալուստը, եւ տ'Սնթու դըքսին բացակայութիւնը ակնարկելով,

— Տեսէք, ըսաւ . տեսէք, ծառան եկեր է եւ տէրը հոս է :

— Համբերէ, տեսնո՞ւք, պատասխանեց Քէլիւս . ծառային առջևէն իր ծառանները կուգային, ծառային տէրն ալ կարելի է ստորին ծառայներուն տիրոջմէն ետքը պիտի գայ :

— Կը տեսնե՞ս Մէն-Ալիք, ըսաւ Աքոնպէրիկ որ Հէնրի թագաւորին քով սիրելիներուն ամենէն երիտասարդն էր . կը տեսնե՞ս որ Պ . տը Պիւսի եւ ոչ իսկ պատիւ մ'ընել կուգէ քեզի . տես սա հագած սև բաճկոնակը . անիրաւ, հարսանեաց հանդերձ է այդ :

— Կործեմ թէ յուզարկաւորութեան հանդէս կը կատարուի հոս, սեւերը մտեր եկեր է, ըսաւ Քէլիւս :

— Ո՛հ, ո՛ր էր թէ իր յուզարկաւորութեան հանդէսը

կատարուէր եւ իր անձին համար այսպէս առաջուընէ սուգ բռնած ըլլար, ըսաւ Հէնրի միմնջելով :

— Հանդերձ այսու ամենայնիւ, ըսաւ Մօժիրոն, Պ. տ'Ան. ժու Պիւսիին ետեւէն չ'եկաւ : Մէն-Լիւք, այդ կողմին խակ տհաճեիլ եղած ես արդեօք :

«Իսկ» ը սաստիկ հարուած մը տուաւ Մէն-Լիւքի սրտին :

— Ինչո՞ւ համար Պիւսի ծառայի պէս տ'Ան. ժու դըքննաւ ջեհն պիտի գայ, պատասխանեց Քէլիւս : Չ'է՞ք յեւեր որ երբ Նորին Ա. հատիառութիւնը ուզեց Պ. տը Պիւսին պատուել իր սիրելի ազնուակամներուն կարգը անցունելով, Պ. տը Պիւսի պատասխանեց թէ Քլէրմոնի գերդաստանէն ըլլալով չ'ուզէր մէկու մը իշխանութեանը տակ մտնել և թէ վասա՞ ըլլալով որ իրեն համար իրմէ ընտիր իշխան մը չը պիտի կրնայ գտնել, իր անկախ եւ ազատ վիճակէն դու՛ս է ու չ'ուզէր մէկու մը վերաբերիլ :

Թագաւորը իւր յօնքերը պոտոտելով սկսաւ ընչացքը խաճատել :

— Սակայն և այնպէս ինձի կը թուի թէ, ըսաւ Մօժիրոն, ինչ որ ալ ըսես, Պ, տ'Ան. ժուին մարդիկներէն ըլլալով անոր կը վերաբերի :

— Ուրեմն, ըսաւ Քէլիւս հանդարտութեամբ, Պ. տ'Ան. ժուն մեր թագաւորէն աւելի մեծ իշխան մ'է :

Այս դիտողութեան հանդուրժել Հէնրիի համար շատ դժուարին էր, ըստ որում միշտ կարհամարհէր իր եղբայրը տ'Ան. ժու դուքսը : Ուստի թէև բան մը չը պատասխանեց, բայց երեսին գոյնը նեատեց :

Մէն-Լիւք դողդոջելով ընդմիջեց խօսակցութիւնը :

— Կը խնդրեմ, Պարոնայք, ըսաւ. հարսանեացս դուար. թու. թիւնը չը խանդարէք. սիրով վարուեցէք կոչնականներու հետ :

Մէն-Լիւքին այս խօսքերը հաւանականաբար ուրիշ խորհուրդներ ձգելով Հէնրիին միտքը,

— Այո՛, Պարոնայք, ըսաւ. Մէն-Լիւքին հարսանիքը չը վրդովենք :

Թագաւորը այս խօսքերը արտասանած առեն՝ պէխերը ու լորելով ցուցուցած խորամանկ գէմքը Մէն-Լիւքին ուշադրութենէն չը վրկպեցաւ :

— Օ՛, ուրեմն Պիւսի դաշնակից է Պրիստըի գերդաստանին հետ, գոչեց Արոնպէրի :

— Ինչո՞ւ համար, ըսաւ Մօժիրոն :

— Արովհետև Մէն-Լիւք կը պաշտպանէ Պիւսին : Այո նիրաւ. այս չուսաւ աշխարհիս մէջ ուր ինքզինքը պաշտպանելու անդամ մեծ գործ է, կարծես թէ ամէն մարդ իր ազգականները, դաշնակիցները եւ բարեկամները պաշտպանելու կաշխատի :

— Պարոնայք, ըսաւ Մէն-Լիւք, Պ. տը Պիւսի ոչ իմ դաշնակիցս է, ոչ բարեկամս եւ ոչ ալ ազգականս. պարզապէս կոչնական մ'է :

Թագաւորը խոժոռ գէմքով Մէն-Լիւքին երեսը նայեցաւ որ կարծես թէ այս նայուածքէն կայծակնահար եղած աճապարեց ըսել,

— Այսու ամենայնիւ ես զինքը երբէք չեմ՝ պաշտպաներ :

Պիւսի մանկլաւիկներուն ետեւէն ծանրութեամբ յառաջ քաշելով թագաւորը ողջունելու կերթար : Շէքօ նախաղջոյի պատիւը իրեն չտրուելուն համար զայրացած՝ ազաղակեց :

— Էյ . . . Պիւսի՛, Պիւսի տ'Ամպո՛ւազ, Լուի՛ տը Քլէրմոն, Կոմս Պիւսի. այս ամեն անուններդ ալ տալու է որ իմանաս. բուն խակ Հէնրիին չե՞ս տեսներ. չե՞ս կրնար որոշել թագաւորը իր խեղկատակէն : Այդ անձը որ ողջունելու կերթաս, Շէքօն է, խեղկատակս, ծաղրածո՛ւս որ իր խեղկատակութիւններովը երբեմն խնդալէն կը մարեցունէ վիս :

Պիւսի իր ընթացքը շարունակելով Հէնրիին քովը գնաց. եւ երբ անոր առաջը կը խոնարհէր, Հէնրի ըսաւ իրեն .

— Չ'է՞ք լսեք, Պ. տը Պիւսի, ձեզ կը կոչեն :

Թագաւորին սիրելիները սկսան բարձրաձայն խնդալ և ինքն ալ թիկունքը դարձուց երիտասարդ զօրապետին :

Պիւսի բարկութենէն շառագունեցաւ. բայց թագաւորին

խօսքը առանց կատակի խնայած ձեւանալով եւ Քէլիւսի, Սքոնպէրիի ու Մօփլորնի դժպէի ծիծաղները չընելու վար- նելով, Շիրօն մտեցաւ :

— Ներեցէք, տէր արքայ, ըստ. այնպիսի թագաւորներ կը գտնուին որ ճիշդ խեղկատակի կը նմանին. ուստի կը յուսամ որ ձեր խեղկատակը թագաւոր կարծելու համար զիս չէք մեղադրեր :

— Ի՞նչ, մրմնացէջէրի ետին դառնալով. Ի՞նչ կըսէ այդ :

— Այնչ, ոչինչ, տէր արքայ, ըստ Մէն-Նիւք որ այս գիշերային հանդիսին սկիզբէն մինչև վերջը կարծես խաղաղաբարութեան պաշտօնը ընդունած էր երկինքէն :

— Այ, Պ. Պիւսի, ոչ, ոչ. այս յանցանքնիդ աններելի է. ըստ Շիրօ ոտքին մատուըներուն վրայ կայնելով, ինչպէս որ թաւ գաւորը կընէր արքայական պերճութիւն ցուցունել ուզած ատեն :

— Ներեցէք, տէր արքայ, պատասխանեց Պիւսի. սաստիկ զբաղեալ էի :

— Մանկկութիւններուդ հետ, ըստ Շիրօ զուարթութեամբ: Դուք ալ մանկկութիւններուդ համար խնայողներիդ կը փճացու- նէք. եւ անիրաւ, ատոնց այդչափ շքեղ կերպով հազուիլը մեր նախապատուութիւնը յախշտակել է :

— Ի՞նչ պատճառաւ, ըստ Պիւսի, որ լաւ գիտէր թէ խեղկատակին իրեն ըրած ընդդիմախօսութիւնը թագաւորը իր վրան պիտի առնէր : Խնդրեմ, Ձեր Վեհափառութիւնը շնորհք ընէ վայն բացատրելու. եւ եթէ ստուգել յանցանք մը դործած եմ, կը խոստովանիմ վայն :

— Ոսկեղօծ ասուիէ զգե՛ստ այս անպիտաններուն, ըստ Շիրօ մասնանիշ ցուցունելով մանկկութիւնները. իսկ դուք որ ազնուական, զօրապետ, Քէլիւսի գերդաստանէն եւ վերջապէս գրեթէ իշխան մ'էք, սե թաւչէ զգեստներ հագած :

— Տէր արքայ, երբ այնպիսի ժամանակի մը մէջ կայրինք ուր գեղջուկները իշխաններու պէս հագուած են, ըստ Պիւսի իւր հայեացքը թագաւորին սիրելիներուն ուղղելով,

կարծեմ անկայել չէ որ իշխաններն ալ անոնցմէ որոշուելու համար գեղջուկներու պէս հագուին :

Աւստի պճնապաճոյճ երիտասարդ « սիրելիներուն » վայրկեան մ'առաջ կատարած ամբարտաւան ծիծաղը փոխաւ ընեց :


Հէրի իր սիրելիներուն երեսը նայեցաւ որոնք կատաղու- թեանէն դունաթափ կարծես թէ լաւ մը կապատէին իրենց տիրոջը բերնէն, Պիւսիին վրայ յարձակելու համար : Քէլիւս որ ամենէն աւելի բողբոջած էր այդ ազնուականին դեմ եւ սրուն հետ արդէն վէճ մ'ալ ունեցած էր, իսկոյն ձեռքը իր սրոյն դաստապանին երկնցուց :

— Միթէ ինձի եւ իմիններուն համար է որ այդպէս կը խօսիր, գոնէջ Շիրօ որ թագաւորին պատիւը յախշտակած ըլլալով Հէրիին ըսելէք ինքը պատասխանեց :

Խեղկատակը այս խօսքերը ըսած ժամանակ արքայական պերճութիւն ցուցունելու համար այնպիսի տարօրինակ ձեւեր կընէր որ բազմականաց կէսը բարձրաձայն խնդալ սկսաւ : Միւս կէսը չի խնդարուն պատճառը արդէն յայտնի է. ըստ ուրում խնդացող մասը միւս կէսին վրայ կը ծիծաղէր : Սակայն եւ այնպէս Պիւսիին երեք բարեկամները Շարը Պազլաք տ'Անդրակ որ աւելի սովորաբար Անդրակէ կը կոչուէր, Ռիւ պէյրազի կոմին փոխանորդը Ֆրանսուա տ'Օտի եւ Նիւլարօ խորհելով թէ գուցէ կռիւ մը ծագի, Պիւսիին քովը եկած շարուած էին :

Մէն-Նիւք թշնամութեանց այս նախապատրաստութիւն- ները տեսնելով գուշակեց որ Պիւսի իր իշխանին կողմէն ե- կած էր խռովութիւն յարուցանելու եւ կամ կռիւի մը հրա- վրելու համար : Աստի տեսնելով որ երկու գօրեղ թշնամի- ներու մէջ տեղը մնացած է որոնք իր տունը պատերազմի դաշտ պիտի ընէին, սկսաւ դիտէն մինչև ոտքը գողգող : Քէլիւսին քովը վազեց որ մէջերնին ամենէն աւելի բողբոջածն էր եւ ձեռքը անոր սուրին դաստապանին վրայ գնելով,

— Յանուն Աստուծոյ, կաղաչեմ, բարեկամ, ըստ. չա-



փառորէ բարկութիւնդ եւ դործին վախճանը նայինք :

— Է՛հ, անիրաւ , դուն ալ քեզ չսփառորէ . այդ անասունին տուած հարուածը ինչպէս ինձի , քեզի ալ կը վնասէ : Ով որ մեր մէջէն մէկուն դէմ բան մ'ըսէ , ամենուս դէմ բան մ'ըսէ . եւ ով որ ամենուս դէմ բան մ'ըսէ , թագաւորին դէմ բան մ'ըսէ :

— Քէլիւս , Քէլիւս , ըսաւ Սէն-Լիւք : յիշէ միանգամ Պիւսիին պաշտպանը տ'Մնժու գուքը որ որչափ բացակայ կը գտնուէ եւ ինքզինքը չը ցուցնէր , այնչափ անելի սովակի դաւ ընանգործ մ'է : Գուն դիտես անշուշտ թէ ծառայէն վախճաւուս համար չէ , այլ տիրովէն :

— Բայց երբ որ մէկը Գաղղիոյ թագաւորին պաշտպանութիւնը կը վայելէ , ալ ինչ կայ վախճաւուս , գոչեց Քէլիւս : Եթէ թագաւորին համար վասնդի մը ենթարկուինք , ինքը մեզ կը պաշտպանէ անշուշտ :

— Ձեզի համար կրնաք այդպէս խօսիլ , բայց ինձի համար , ըսաւ Սէն-Լիւք ողորմուկ ձայնով մը :

— Սղէկ կըսես , պատասխանեց Քէլիւս . բայց ինչո՞ւ համար դուն ալ կեղնես կամուսնանաս , երբ դիտես թէ թագաւորը որչափ նախանձոտ է իր սիրելիներուն նկատմամբ եւ չուզէր դաննը երբէք իր քովէն հեռացունել :

— Լաւ , ըսաւ Սէն-Լիւք իւրովի . սրովհետեւ ամէն մարդ ինքզինքը կը հոգայ , եւ ալ զիս հոգամ , եւ ամուսնութեանս դէմ առաջին շարժները հանգստութեամբ անցունելու համար , Պ . տ'Մնժուին բարեկամութիւնը ստանալու աշխատիմ :

Ս.յս խորհրդով Քէլիւսը թողուց եւ Պիւսին դիմաւորելու գնաց :

Պիւսի իր թշնամեկան յանդուգն խօսքերը ընելէն վերջը գլուխը վեր վերցունելով սրահին չորս կողմը դիտած էր եւ ակնմղներն ալ չորս բացած , իր ըրած խօսքին փոխարէն մեկէ մը թշնամանք լսելու համար : Բայց եւ ոչ մէկը իրեն դէմը ճակատաբայ կերեւնար . ամենուն ալ բերանը դոցուած էր . ոմանք թագաւորին առաջը Պիւսիին համար հաճութիւն ցու-

ցունելու կը վախճային եւ ոմանք ալ Պիւսիին առաջը իրեն համար ահաճութիւն ցուցնելու :

Վերջապէս Պիւսի Սէն-Լիւքին իրեն մօտենալը տեսնելով , կարծեց թէ իր նպատակին հասաւ :

— Միթէ այժմեան ըսած խօսքին համար է որ ձեր խօսակցութեամբը զիս պատուելու կը փախարկիք , ըսաւ Պիւսի :

— Ս.յժմեան ըսած խօսքերնուդ համար , ըսաւ Սէն-Լիւք շնորհայեց դէմքով մը . ինչ բոլի որ հիմայ . եւ բան մը չը քսեցի : Ձեզ տեսնելով փախարկեցայ ողջունել եւ շնորհակալ ըլլալ որ Ձեր ներկայութեամբը մեր տունը կը պատուէք :

Պիւսի ամեն բանի մէջ երեւելի մէկն էր : Թէեւ իր քաջութիւնը երբեմն անխոհեմ ու յանդուգն ձեռնարկութեանց ալ կառաջնորդ էր զինքը , բայց ուսեալ , հանձարեղ եւ ընկերական անձ մ'էր : Սէն-Լիւքին քաջութիւնը անմանթ չէր իրեն : Հասկցաւ որ անոր բժանեղբական դիւրագրգիւ զգացումը այս վայրկեանին ունեցած ամուսնիրական պարտականութեամբը առջև զիջած էր : Ուստի քաղաքավարութեամբ ողջունեց Սէն-Լիւքը եւ անոր յարգական խօսքերուն շնորհակալ պատասխաններ տուաւ : Եթէ փոխանակ Սէն-Լիւքի ուրիշ մէկը ըլլար , անշուշտ իր նախաաական զրգուիչ ոճը պիտի դործածէր :

— Ո՛հ , ս'հ , ըսաւ Հէնրի Սէն-Լիւքը Պիւսիին քովը տեսնելով . կարծեմ թէ մեր երկոտասարդ պարսնը ճուսմարանին գլխուն նախատինքներ տեղալու դացեր է : Եստ աղէկ . բայց չեմ ուզեր որ զինքը մեռցունեն ինձի համար : Պացեք , Քէլիւս , տեսէք թէ . . . բայց ոչ , ոչ , Քէլիւս , դուք խիստ բնասորթիւն մ'ունիք : Մօծիրան , դուք դացէք տեսնելու :

— Ինչ բոլի այդ ծանծաղամիտ Պիւսիին , հարցուց թագաւորը :

— Ե՛ս , տէր արքայ , ըսաւ Սէն-Լիւք :

— Ս.յո , դուն :

— Բարի իրիկուն մաղթեցի իրեն :

— Ս'յղչափ միայն , հարցուց թագաւորը :

Սէն-Լիւք տեսաւ որ իր ըրածը անխոհեմութիւն մ'էր :



— Բարի իրիկունն ըսի իրեն, պատասխանեց, աւելցնելով թէ վաղն առաւօտ բարի լոյս մաղթելու պատիւը պիտի ունենամ :

— Մտքէս անցաւ թէ դուք վէճ մը պիտի յարուցանէք, ըսաւ Հէնրի :

— Բայց ինդրեմ, Ձեր Վեհափառութիւնը բարեհաճի այդ գաղտնիքը երեւան չը հանելու, պատասխանեց Մէն-Ալիք գողտրիկ եւ մեզմ' ձայնով մը :

— Քեզ վտանգի մէջ ձգելու համար չըսի այդ խօսքերը : Վստահ եմ որ մինչև հիմա շատոնց իմ քովէս հեռացուցած էիր զինքը, եթէ քանի մը վերջ ընդունելու բանի մը տեղ չը դնէիր :

Ս,յս խօսքը ըսած ժամանակ սիրելիներուն ամէնքն ալ փոփոխակի իրարու երես նայեցան. բայց Հէնրի չը տեսնելու զարկաւ :

— Վերջապէս անդգամը այնպիսի լիըր եւ յանդուգն է որ . . . :

— Ս,յո՛, այո՛, ըսաւ Մէն-Ալիք : Սակայն եւ այնպէս անհոգ եղիք, տէր արքայ. օր մը իրմէ դրաւորին կը հանդիպի :

— Բայց զինաչարժութեան մէջ բաւական վարպետ է, ըսաւ Հէնրի զլուխը շարժելով : Ատողած շան մ'ալ չը հանդիպիր որ խաճնէր ըմպուներ. աս կերպով աւելի դիւրութեամբ կազատէինք ձեռքէն :

Հէնրի այս խօսքերը ըսած ժամանակ արհամարհոտ աչքով մը Պիտիին երեսը նայեցաւ որ իր երեք ընկերներուն հետ վեր ի վայր շրջելով կատակաբանութիւններ կընէր եւ կը ծաղրէր տ'Մնժու դրսին թշնամիները որոնք թագաւորին մտերիմ բարեկամներն էին :

— Անշնորհք, գոչեց Շիքօ, մի այդպէս խտտութեամբ վարուիր սիրելի ազնուականներուս հետ : Գուն իմ թագաւոր ըլլալուս մի նայիր. սուրբ քաջածիս պէս վրադ կը յարձակիմ, իբրեւ թէ խելկատակ մը եղած ըլլայի :

— Անաւակ զուարճաբան : Գիտէք, ճիշդ մտքէս անցածը կը խօսի, միմնչեց Հէնրի :

— Տէր արքայ, եթէ դարձեալ այսպիսի կատակաբանութիւններ ընէ Շիքօն, իրեն պատիժը պիտի տամ, ըսաւ Մօժիրոն :

— Մի դալլիր անոր, Մօժիրոն. Շիքօ ամուսական մ'է եւ իր պատուոյն ալ նկատմամբ շատ դիւրագրգիռ : Պատուհասի արժանի ամբարտաւանն . . . է :

Քէլիւս թագաւորին այս խօսքէն համարձակութիւն առած, տ'Մն եւ տ'Էքէրնոնը նշանացի մէկ կողմ՝ կանչեց որոնք անդին ուրիշ գործերով զբաղած այս դարձուածներուն վրայ տեղեկութիւն չունէին :

Քէլիւս զանոնք մէկ կողմ մը տանելով,

— Պարոնայք, ըսաւ, եկէք խորհուրդ մ'ընենք. դուն ալ Մէն-Ալիք, թագաւորին հետ խօսէ եւ արդէն սկսուած խազաղութիւնդ ամբապնդէ :

Մէն-Ալիք խորհրդոյն ներկայ գտնուելէն աւելի նախադատիւ համարեց իրեն եղած առաջարկութիւնը եւ թագաւորին ու Շիքօին քովը դնաց որ իրարու հետ կը վիճէին = Ս,յս միջոցին Քէլիւս իր չորս բարեկամները պատուհանի մը առաջը սարաւ :

— Տեսնենք, ինչ ունիք բտիլք, հարցուց տ'Էքէրնոն : Ձեր կանչած ժամանակը Տիկին Փուայթօղի տեսակցութիւնը կը վայելէի. ուստի կանխաւ կիմացունեմ որ եթէ ամենաւարեւոր բան մը չունիս բտիլք, այդ ըրածդ աններելի է :

Պարոնայք, ձեզի կուզեմ իմացունել որ, պատասխանեց Քէլիւս, պարտահանդէսէն ամուլտայէս վերջը որով պիտի երթամ :

— Ի՛նչ տեսակ որսի, հարցուց տ'Մ :

— Աինճ որսալու :

— Որ սատանան միտքդ ձգեց այս սաստիկ ցուրտին երթալ անտառի մը մէջ հոգնիլ, մինչև որ հոգիդ բերանդ գայ :

— Հոգ չէ, կերթամ :

— Ս,սանձի՛ն :

— Ոչ, Մօժիրոնին եւ Սքոնպէրկին հետ : Թագաւորին համար կինճ որսալու պիտի երթանք :

— Այո, այո, հասկցայ, ըսին միաբերան Աքոնպէրկ եւ Մօծիրոն :

— Թագաւորը կը խնդրէ որ վազն առաւօտ նախաճաշին կինճի գլուխ մը բերեն իրեն :

— Իտալական ծուռ փողպատով մը, ըսաւ Մօծիրոն Պիւս սին դրած պարզ փողպատը ակնարկելով . վաճառ զի իրենք ինչպէս որ արդէն դրած ենք, մեծ և դանդաւոր փողպատներ դրած էին :

— Այո, այո, հասկցայ, ըսաւ տ'Էքէրոն :

— Ի՞նչ բանի վրայօք կը խօսուի, ես չեմ հասկցած կա սարեղապէս, ըսաւ տ'Օ :

— Չորս կողմը գիտէ միանգամ, սիրելիս :

— Ղիտեցի :

— Ո՞վ է վրադ խնդացողը :

— Կարծեմ թէ Պիւսին :

— Լաւ ուրեմն . կինճ մը չը նմանիր այդ որուն զըւսը հաճելի պիտի ըլլայ թագաւորին :

— Բայց կը յուսամ որ թագաւորը . . . ըսաւ տ'Օ :

— Ինքն է որ կը խնդրէ, պատախոսնեց Քէլիս :

— Ուրեմն երթանք . բայց ի՞նչպէս պիտի որսանք :

— Պարանակողութեամբ . առ ամենէն ապահով միջոցն է : Պիւսի այս ժողովքը տեսնելով հասկցաւ թէ իրեն համար կը խօսակցին, եւ իր բարեկամացը հետ հեղնաբանութիւններ ընելով քովերնին մտայցաւ :

— Տես Անդրակէ, տես Ռիպէյրար . ի՞նչպէս խմբովին նրա տեր շըջանակ մը կազմեր են : Սհա սրտաշարժ տեսարան մը . կարծես թէ Ներիալ և Նիսոս, Գամին և Բիթիաս, Գասթօր և . . . բայց Բօլիւքս ո՞ւր է :

— Բօլիւքս կ'ամուսնանայ, անոր համար Գասթօր իր ընկերէն հեռու մնացեր է, ըսաւ Անդրակէ :

— Ի՞նչ կընեն հօգ, հարցուց Պիւսի, գոռոզութեամբ սիրելիներուն երեսը նայելով :

— Անտարակոյս նոր դաւաղդութիւն մը կը նիւթեն, ըսաւ Ռիպէյրար :

— Ոչ, Պարոնայք, որսորդութեան վրայ կը խօսինք, ըսաւ Քէլիս ժպտելով :

— Բայց Պ . Քիւրխօ, սաստիկ ցուրտ կայ, որսորդութեան ժամանակ չէ այս . մորթերնիդ ցուրտէն պիտի ձեզքքըւտուի :

— Շատ տար ձեռնոցներ և մուշտակով պատած վերարկուներ ունինք, ըսաւ Մօծիրոն քաղաքավարութեամբ :

— Ի՞հ, այդ կերպով ապահով է . երբ պիտի ելնէք որսի, հարցուց Պիւսի :

— Թերեւս այս գիշեր, ըսաւ Աքոնպէրկ :

— Թերեւս ըսելու դորժ մը չը կայ . անտարակոյս այս գիշեր, աւելցուց Մօծիրոն :

— Ուրեմն կանխաւ տեղեկութիւն տամ թագաւորին, ըսաւ Պիւսի : Եթէ Նորին Վեհափառութիւնը վազն առաւօտ իր սիրելիները հարրութեն զարնուած տեսնէ, ի՞նչ կրտէ :

— Ոչ, Պարոն, հարկ չիկայ թագաւորին խնայելու : Նորին Վեհափառութիւնը գիտէ արդէն որ որսի պիտի երթանք, ըսաւ Քէլիս :

— Արտօյս որսալու պիտի երթաք, հարցուց Պիւսի հեղնական և հպարտ գեմբով մը :

— Ոչ, Պարոն, կինճ որսալու . մեզի անպատճառ կինճի գլուխ մը պէտք է :

— Իսկ կենդանի՞ն . . . հարցուց Անթրակէ :

— Անոր ալ որքը դտած ենք, ըսաւ Աքոնպէրկ :

— Բայց պէտք է գիտնալ թէ ո՞ւրիկեց պիտի անցնի, հարցուց Լիլարօ :

— Բան մը չէ . այդ ալ կիմանանք, ըսաւ տ'Օ : Պար ալ մեզի հետ որսի կուզա՞ք, Պ . Պիւսի :

Պիւսի մի և նոյն եղանակաւ իր խօսակցութիւնը շարունակելով,

— Ոչ, չեմ կրնար գալ, պատասխանեց : Վաղը Պ . տը Մոնտրօ տ'Անժօու գլխին պարտը պիտի դայ և պէտք է որ ես ալ ներկայ գտնուիմ զինքը ընդունելու համար : Ինչպէս

որ դիտէք, Նորին Բարձրութիւնը արքունի որսորդապետու-  
թեան պաշտօնը շնորհել տուաւ Պ. տը Մոնտորօին :

— Բայց այս դիչեր, հարցուց Քէլիւս :

— Այս դիչեր ալ չեմ կրնար դալ, վասն զի Անթի-Սն-  
թուանի արուարձանը զաղտնի տան մը մէջ զտնուելու ժա-  
մողիք եղած եմ :

— Օ . . . Պ. Պիւսի, արդեօք Մարկօ թագուհին ծպտեալ  
կերպարանքով Բարիզ կը դառնուի . քանզի լսեցինք թէ լա  
Մոլին ժառանգորդ էք եղեր, ըսաւ տ'Էքէրնոն :

— Այո, բայց բաւական ժամանակէ հետէ այդ ժառան-  
գութիւնը մերժած եմ և հիսն ուրիշ անձի մը համար է որ  
խօսեցայ :

— Եւ այդ անձը Անթի-Սնթուան արուարձանին փողոցը  
ձեզի՞ կ'սպասէ, հարցուց տ'Օ :

— Այո : Ձեզի՞ ալ խորհուրդ պիտի ուզեմ, Պ. Քէլիւս :

— Ըսէք. թէ և փաստարան մը չեմ, բայց սարձանօք  
կըսեմ որ այդպիսի բաներու մէջ կրնամ օգտակար ըլլալ,  
մանաւանդ բարեկամներու համար :

— Արտուի թէ Բարիզի փողոցները փտանդաւոր են . Անթի-  
Սնթուան արուարձանն ալ խիստ անբնակ թաղ մ'է . ո՞ր ճամբ  
բէն երթալու խորհուրդ կուտաք ինձի :

— Իրաւունք ունիք, ըսաւ Քէլիւս : Լուվրի նաւաւարները  
անտարակոյս այս դիչեր մեզի համար կսպասեն . ուստի եթէ  
ես ձեր տեղն ըլլամ, Բրէ-օ-Քէրէն նաւակ մը նստելով,  
Թուս-տիւ-Քուէնը կենեմ եւ ծովեզերքէն քայլելով ուղ-  
ղակի Արան-Շաթըլէն կերթամ . անկէջ ալ Թիքսթրամարբի  
փողոցէն Անթի-Սնթուան արուարձանը կիջնեմ : Անթի-Սն-  
թուանի փողոցը անցածնուզ պէս, եթէ Օթէլ տէ Թուրնէ-  
լէն ալ առանց փտանդի անցնիք, ալ ողջ առողջ կրնաք հաս-  
նիլ ձեր ըսած խորհրդաւոր տունը :

— Շնորհակալ եմ, Պ. Քէլիւս : Բրէ-օ-Քէրէն նաւակը,  
Թուս-տիւ-Քուէնի աշտարակը, ծովեզերքէն մինչև Արան-  
Շաթըլէ, Թիքսթրամարբի և Անթի-Սնթուան փողոցները ը-

սիք, այնպէս չէ : Անհոգ եղիք, դիժ մ'անգամ չենք չեղիր  
Պիւսի հինգ բարեկամները ողջունելով դնաց, բարձրա-  
ձայն ըսելով Պալզաք տ'Անդրակին .

— Անդրակէ, վերջապէս աս մարդոց հետ ալ դորժ մը  
չ'ունինք . երթանք :

Լիվարօ և Ռիպէյրաք խնդալով Պիւսիին և տ'Անդրակին  
ետեւէն դայցին որոնք ամէն մէկ քայլափոխի կը դառնային եւ  
տենին նայելու : Թագաւորին սիրելիները հանդարտ կեցած  
էին . կերևայ թէ այս դարձուածքէն բան մը չէին հասկնար :

Պիւսի վերջին սրահէն անցած ժամանակ Տիկին Սէն-Լիւք  
հոն կեցած էր եւ աշուղները չորս բացած իր ամուսինը կը-  
դիտէր . ուստի Սէն-Լիւք աչքով նշանացի խնայուց իրեն թէ  
տ'Անթու դըսին սիրելին կերթայ : Ժան իզական սեռին բը-  
նական յատկութիւնը եղող սրամտութեամբ մը Անթի-Սնթին  
միտքը հասկցաւ եւ Պիւսիին առաջը վազելով անոր ճամբան  
կտրեց :

— Ոհ, Պ. տը Պիւսի, ամենուն ալ բերանը այս խօսքը կը  
պըտրտի թէ սքանչելի նուագերգութիւն մը խօսեր էք . . .  
ըսաւ :

— Թագաւորին դէմ, Տիկին, հարցուց Պիւսի :

— Ոչ, այլ ի պատիւ թագուհոյն : Խնդրեմ, անգամ  
մ'ալ ըսէք այդ նուագերգութիւնը որ ես ալ լսեմ :

— Պիտուս վրայ, Տիկին, ըսաւ Պիւսի . և իր թիւը Տիկին  
Սէն-Լիւքին տուած, խնդրած նուագերգութիւնը ըսելով  
դնաց :

Այս միջոցին Անթի-Սնթուան ձայն հանելու յուշիկ  
յուշիկ թագաւորին սիրելիներուն քովը դնաց եւ Քէլիւսին  
ձայնը լսեց որ կըսէր .

— Կենդանին իր այս հետքերովը դժուար չը պիտի ըլ-  
լայ դանել . Օթէլ տէ Թուրնէլի անկիւնը, Անթի-Սնթուանի  
դրանը քովը, Օթէլ Անթի Բօլի դիմացը :

— Ամեն մեկերնուս հետ ալ սպասաւոր մը, հարցուց  
տ'Էքէրնոն :

— Այ, Նովարէ, ոչ . միայն մենք դիտմանը մեր դաղորնիւ-  
քը և առանձին տեսնենք դարձերնիս : Ստուգիւ կատեմ  
զինքը, բայց կամբնամ ալ, չեմ ուզեր որ սպասաւորի մը  
դաւալանք դպչի իրեն, վասն զի ազնուական ցեղէ մ'է :

— Վեցերնիս ի միասին դուքս պիտի ելնենք, հարցուց  
Մօթիրն :

— Հինգ միայն և ոչ թէ վեցերնիս, ըսաւ Մէն-Ալուք :

— Այո, իրաւունք ունիք, մտացանք թէ ամուսնացած ես  
դուն և դեռ ամուրիի տեղ կը դնէինք քեզ, ըսաւ Սքոնպէրկ :

— Արդարեւ իրաւունք ունի թշուառ Մէն-Ալուքը հարսան-  
եաց առաջին դիչերն իր ամուսնոյն քովը անցնելու, ըսաւ տ'Օ :

— Գործին նկատմամբ լաւ տեղեկութիւն չունիք, Պարո-  
նայք : Ամուսինս չէ որ զիս վար կը դնէ . եթէ այդպէս ըլ-  
լար, դուք ալ դիտէք որ կարժէր կենալս . այլ թաղաւորն է  
որ կարդիլէ, ըսաւ Մէն-Ալուք :

— Ինչպէս, թաղաւորը . . . :

— Այո, Նորին Վեհափառութիւնը կուզէ որ մինչև Լուվ-  
րի պալատը հետը բնկերանամ :

Երիտասարդ սիրելիները միմեանց երեսը նայելով սկսան  
ծիծաղիլ որուն պատճառը չը կրցաւ խմանալ Մէն-Ալուք :

— Այ ի՛նչ կուզես . թաղաւորը քու վրադ այնպիսի ըս-  
քանչելի բարեկամութիւն մ'ունի որ քեզնէ չը կրնար զատ-  
ուիլ, ըսաւ Քէլլու :

— Այստեղ ամենայնիս Մէն-Ալուքին պէտք չունինք մենք :  
Թողունք զինքը իր թաղաւորին և իր տիկնոջը, ըսաւ Սքոն-  
պէրկ :

— Ի՛նչ, կենդանին բաւական ծանր է, ըսաւ տ'Էբէրնոն :

— Վա՛չ, ըսաւ Քէլլու . թող զիս իրեն հետ դէմ առ դէմ  
դնեն եւ մէկ սուխով մը անոր հետ գործս կը տեսնեմ :

— Այո վայրկեանին Հէնրիին ձայնը լսուեցաւ որ Մէն-Ալու-  
քը կը կանչէր :

— Կը լսէք, Պարոնայք, թաղաւորը զիս կը կանչէ . մնաք  
բարով, ի տեսութիւն . բարեյաջող որսորդութիւն կը մազ-  
թեմ ձեզ, ըսաւ Մէն-Ալուք :

Եւ զանոնք հոն ձգելով, վտիտանակ թաղաւորին քովը  
երթալու, իսկոյն սահեցաւ զնաց պատերուն քովէն ուր մէկ  
քանի հանդիսականներ և կարախչներ կեցած էին դեռ :  
Մէն-Ալուք գնաց մինչև դուռը հասաւ ուր Պիւսի արդէն մօ-  
տեցեր էր դեղանի տիկնոջը հետ որ իր կրցածին չափ կաշ-  
խատէր Պիւսիին երթալը արդիւլելու համար :

— Բարի իրիկուն, Պ . տը Մէն-Ալուք, ըսաւ երիտասարդ զօ-  
րապետը : Ինչո՞ւ այդպէս շիթած կերուար . արդեօք դո՞ւք  
ալ ի միասին որսորդութեան երթալու կը պատրաստուիք : Ա-  
տիկա ձեր քաջութեանը սպառցոյց մը կրնայ համարուիլ, բայց  
ոչ ձեր ազնուականութեանը :

— Երթած ըլլալուս պատճառը ձեզ փնտուելու է, պա-  
տասանեց Մէն-Ալուք :

— Իրա՞ւ կըսէք :

— Այո . կը վախնայի որ դացած չըլլար : Եւ իւր ամուս-  
նոյն դառնալով ըսաւ . Սիրելի ժանն, ձեր հօրը ըսէք որ թա-  
ղաւորը վայրիկ մը ևս սպասեցնելու աշխատի, ես ալ Պ .  
Պիւսիին հետ առանձնակի խօսելիք երկու խօսք ունիմ :

Ժան շուտով մեկնեցաւ . ինքը այս դարձուածներուն և ոչ  
մէկէն բան մը կը հասկնար . բայց զգալով անոնց անհրաժեշտ  
կարևորութիւնը, հնազանդութեամբ կը կտորէր :

— Ի՛նչ ունիք ինձի ըսելիք, Պ . տը Մէն-Ալուք, հարցուց  
Պիւսի :

— Պ . Կոմս, եթէ այս դիչեր տեղ մ'երթալու ժամագիր  
եղած էք, աւելի յարմար կը տեսնեմ որ վաղուան ձգէք, որովհետեւ  
Բարիդի փողոցները ապահով չեն . և եթէ այդ  
ժամագրութեան պատճառաւ Պասթիլլի կողմէն երթալ հարկ  
է, Օթէլ տէ Թուրնէլլի առաջին չանցիկը, որովհետեւ անոր  
պարսպին ծայրը խոռոչ մը կայ ուր շատ մարդիկ կրնան սահ-  
ուրտիլ : Ահա այս էր ձեզի ըսելիքս, Պ . տը Պիւսի : Ասով  
ըսել չեմ ուզեր որ ձեզի պէս մարդ մը կրնայ վախնալ, բայց  
պէտք է որ խորհիք :

Այս վայրկեանին Երթօին ձայնը լսուեցաւ որ կաղաղակէր .

— Մէն-Լիւք, իմ փոքրիկ Մէն-Լիւքս, օ՛ն, ինչո՞ւ այդպէս կը պահուըտիս, չե՞ս տեսներ որ քեզի կապատեմ պաշտատ վերադառնալու համար :

— Պատրաստ եմ, տէր արքայ, պտտասխանեց Մէն-Լիւք եւ Եփրօին ձայնը եկած կողմը վաղեց :

Հէնրի Գ. խեղկատակին քովը նստած էր և երեք մանկըւակներ ալ հոն կանգնած, մէկը ճերմակ արխի մուշտակով դրուադեալ ծանր վերարկուն կը հաղցունէր, միւսը մինչև արմուկը հասնող խոշոր ձեռնոյները կը ներկայացունէր և երբորդն ալ սնդուսով պատած թաշկայ դիմակը :

— Տէր արքայ, ըստ Մէն-Լիւք Հէնրիին և միանգամայն իր խեղկատակին դառնալով, պատիւ պիտի ունենամ ջահը մինչև ձեր գահաաորակը բերելու :

— Ամենեին ոչ, ըստ Հէնրի. Եփրօ իր տեղը պիտի երթայ, ես ալ իմս : Մտերիմներուս ամենքն ալ զիս այսպէս առանձին թողուցին Լուվրը վերադառնալու. անտաակները իրենք դիմակով պտըտելու դացեր են : Յոյսս անոնց վրայ գրած էի և ահա անոնք ալ հոս չեն. ուստի չես կրնար թողուլ զիս որ առանձին երթամ : Յանրաբարոյ և ամուսնացած մարդ մըն ես դուն, պէտք է որ զիս թագուհին քովը վերադարձունես : Եկուր, բարեկամս, եկուր : Աղէ՛, ձի մը Պ. Մէն-Լիւքին համար : . . . Բայց ոչ, ոչ. հարկ չէ. գահաաորակս լայն է և երկուքիս համար ալ կը բաւէ :

Ժան տը Պրիսաք այս խօսակցութեան ամէն մէկ բառը ուշադրութեամբ մտիկ ըրած էր. ուղեց խօսիլ, բառ մ'ըսել իւր ամուսնոյն, իմացունել իւր հօրը թէ թագաւորը Մէն-Լիւքը կառնէ կը տանի. բայց Մէն-Լիւք մատը բերնին վրայ դնելով, լռութեան և զգուշութեան հրաւիրեց զինքը :

— Գետինն անցին, ըստ ինքնիրեն Մէն-Լիւք. Գրանտուս տ'Մնիժուին հետ գործս կարգի դրի, հիմա ալ չե՛նենք Հէնրի տը Վալուաին հետ սարունք . . . : Եւ ձայնը բարձրացունելով, Տէր արքայ, ըստ, եթէ ձեր Վեհափառութիւնը հրամայէ, անձուէր ծառանիդ մինչև աշխարհքին ծայրը ետևնուդ կուգայ :

Մորմորանսի սպարանքէն մեկնելու պատրաստութիւնները արդէն տեսնուած էին. պալատին շրտ կողմը մեծ իրարանցում մը կար : Խոնարհութեան և յարգանաց շքեղ ցոյցերը կատարուէին վերջը՝ ամենքն ալ լուռ կեցած էին, տը Պրիսաք մարշալատին և իր դստերը՝ թագաւորին ըսած սրտաշարժ մնաք բարոյները լսելու համար :

Այ այնուհետև թագաւորը ճամբայ ելաւ. ձիերը բակին մէջէն սիդաճեմ անցան գայլին և ջահերը իրենց լոյսերուն կարմիր անդադարձութիւնները ազակիներուն վրայ զարկած էին : Վերջապէս արքունի պալատականները և հարսանեաց բոլոր հրաւիրեալները, կէս զուարթադէմ՝ և կէս ցրտասարսուռ գայլին աներեւոյթացան մառախլոյն և ստուերին մէջ :

Ժան իր արկնայցը հետ առանձին մնացած ըլլալով, մտաւ իր սենեակը և հոն կախուած կոյսի մը պատկերին առաջը ինկաւ որուն վրայ շատ ջերմեռանդութիւն ունէր : Ետքը հըրամայեց որ ամենքն ալ իր քովէն հեռանան և ամուսնոյն վերադարձին ստեն ճաշելու համար թեթև ընթրիք մը պատրաստուի :

Տը Պրիսաք մարշալատը ալ աւելին ըրաւ. վեց պահապաններ զրկեց որ երթան Լուվրի դասն առաջը իր փեսային սպանն, վերադարձին իրեն հետ ուղեկից ըլլալու համար : Ասոնք երկու ժամի չափ սպասելուն վերջը իրենց ընկերներէն մէկը զրկեցին մարշալատին լուր տալու համար թէ Լուվրի բոլոր դռները գոցուեցան եւ թէ՛ վերջին դուռը գոցուէին առաջ՝ փոքրիկ դռնակին (կիշէ) հրամանատարը պատասխանեց իրենց .

— Այ մի՛ ընդունայն սպասէք. այս գիշեր ոչ ոք Լուվրէն դուրս պիտի ելնէ : Նորին Վեհափառութիւնը պառկած է և ամենքն ալ կը քնանան :

Պ. տը Պրիսաք զնայ այս լուրը իր ազնկանք հաղորդելու որ խիստ վերոյիւելով իմացուց թէ ինքը այս գիշեր արթուն պիտի մնայ ամուսնոյն վերադարձին սպասելու համար :

Գ Լ Ո Ւ Խ Բ .

ԴՌՈՒՂ ԲՆՃՈՂԻՑ ՏԵՂԸ ԵՐԲԵՄԸ ՌԵՐԷ ՄԵՂԸ  
ՏՈՒՆԵՆ ՆԵՐՈ ՎԵՄՆԵ

Անթ-Անթուան ըսուած դուռը կամարածե քարուկիր շէնք մ'էր, գրեթէ հիմակուան Ան-Մարթէն և Ան-Տընի դռներուն նման : Իր ձախ կողմը կիյնային Պատթիլի սահմանակից շէնքերը որոնցմով այդ հին ամրոցին հետ կապուած էր : Այլ կողմը Օթէլ տը Պրըթայնի և դրան մէջ գտնուած միջոցը ընդարձակ, մթին և տղմուտ տեղ մին էր : Այս տեղը ցերեկ ատեն քիչ անցորդներ կը գտնուէին, իսկ երեկոյին բոլորովին հանդարտութիւնն ու առանձնութիւնը կը տիրէր : Այն ժամանակ Բարիլի փողոցները աւազականոցներ դարձած և գիշերներն ալ պահապան գիւտարներ չպարտուուն պատճառաւ, կերեայ թէ գիշերային ուղևորները ամբողջին աւելի մտար գտնուող ճամբայէ մը կանցնէին : Ասով կը յուսային որ Պատթիլին գիտանոցը գտնուող գիշերապահները աւազակաց յարձակում մ'եղած ժամանակ կը պաշտպանեն զիրենք : Բայց գիշերապահները զիրար օգնութեան կոչելով չարագործները քիչ մը վախցունելէ զատ բան մը չէին կրնար ընել : Արդէն ինքնին յայտնի կիմացուի թէ ձմեան գիշերները ամառային գիշերներէն աւելի խոհեմութեամբ կը շարժէին անցորդները :

Մեր պատմած եղելութիւնները կատարուած գիշերը սաստիկ ցրտաչունչ, խաւարամած և արջնաթոյր ու ստորեջ ամպերով ծածկուած էր . այնպէս որ արքունի ամրոցին պարիսպներուն ետեէն մէկը չէր կրնար տեսնել գիշերապահները որոնք ևս փոխադարձարար հրապարակէն անցնողները չէին կրնար նշմարել :

Քաղաքին ներքնակողմը Անթ-Անթուան դռան առաջը ամենեկին տուն չկար, այլ միայն բարձր պատուարներ : Այլ կողմէն Ան-Բօլ եկեղեցւոյն մեծ պարիսպը կը բարձրանար և ձախ կողմէն ալ Օթէլ տէ Թուրնէլ ապարանքին պարիսպը : Այս ապարանքին՝ Անթ-Քաթէրին փողոցին կողմը նայող պատին ծայրը ներքսամուտ անկիւն մը կար, որուն համար Ան-Լիւր խօսած էր Պիւսիլին : Այս պարիսպներէն անդին՝ Անթ-Անթուան և Թույ փողոցներուն մէջ տեղը խիտ առ խիտ հաստատուած տուներուն պատուարները կերեային : Անթ-Անթուան փողոցին գէմը կը գտնուէր այն ժամանակ տէ Պիլէթ փողոցը և Անթ-Քաթէրին եկեղեցին :

Նախկին Բարիլին այս նկարագրած բոլոր տեղերնիս, զիշերները ամենեկին ըլլա չէր վառուէր փողոցները : Լուսնի լուսով լուսաւորուած գիշերները կը տեսնուէր վիթխարի Պատթիլը, ազատախայլ լուսաւորութեամբ փառաւորապէս բարձրացած մինչև երկնից աստեղազարդ կապուտակ . իսկ խաւարազատ գիշերները Պատթիլի չըջակայքը կրկին թանձր խաւարով մը կը ծածկուէր և տեղ տեղ միայն մէկ քանի պատահաններու ազօտ նշքը կը լուսաւորէր :

Մեր պատմութեանը աւարկայ եղող գիշերը որ սաստիկ ստանամանեօք սկսած էր և վերջնալ առատ ձիւն մը կը ցուցունէր, փողոցէն արուարձանը տանող խորխորած առայատա կող ճամբուն վրայ բնաւ անցորդի մը ոտքին ձայնը չէր լսուէր թէ և անադան անցորդները ինչպէս որ արդէն ըսած ենք, խոհեմութեան համար այս ճամբայէն կերթային : Սակայն և այնպէս վարժուած ու հեռատես աչք մը Թուրնէլի պատուարին անկեանը մէկ մէկ քանի թխաղոյն ստուերներ կրնար նշմարել որոնց փոքր ի շատէ ըրած շարժումներն կը հասկըցունէր մարդկային մարմնոց չուքեր ըլլալին : Աս չար ստուանայները որ գէպքի մը համար ավիակալ կապակէն հան տեղ, կարծես թէ ալ ձանձրոցեր էին իրենց բնական շերտութիւնը պահելէն որ վայրկեան առ վայրկեան նուազելու վրայ էր, տեղերնին անշարժ կեցած ըլլալուն պատճառաւ :

Ամբողջին գիշերապահները որ խառարին թանձրութենէն չէին կրնար այս տեղը նշմարել, ստուերներուն մեղմածայն խօսակցութիւնն ալ լսելու բարեբաղդութիւնը չունեցան: Այսու ամենայնիւ այս խօսակցութիւնը բաւական հետաքրքրական էր:

— Այդ կատաղի Պիւսին իրաւունք ունի եղեր, կրտէր բաւուերներէն մէկը: Ճիշդ այսպիսի գիշեր մ'ալ Վարչալիսայի մէջ ունեցանք, Հէնրին Բոլոնիոյ թագաւոր եղած ժամանակը. և եթէ այս ցուրտը տակաւին շարունակէ, ըսածնուն պէս մտթերնիս պիտի ձեղքուտուի:

— Գնա բանդ, Վօթիրոն, դուն ալ կնկան պէս կը տրտընջաս, ըսաւ ուրիշ ստուեր մը: Իրաւ է որ շատ տաք չընէր, բայց վերաքիլուդ աչուրներուդ վրայ քաշէ, ձեռքերդ ալ դրսամդ գիր և ալ չես մնիր:

— Գուն ալ ուղածիդ պէս մեծ մեծ կը ջարդես, Աքոն պէրկ. գիտենք որ Գերմանացի ես, ըսաւ երբորդ ստուեր մ'ալ: Իմ չրթունքս ալ արիւն հոսել սկսան ևւ ընչացներս սառույցի կտորներու պէս ցցուեր են:

— Իմն ալ ձեռքէս զատ մէկ տեղս չը մնիր, ըսաւ չորրորդ ստուեր մը:

— Ինչո՞ւ համար մայրիկիդ մուշտակէ ձեռնոցները չես առած, թշուառ Քէլլուս, պատասխանեց Աքոնպէրկ: Եթէ ըսէիր որ իր սիրական Պիւսին ձեռքէն ղնիրը ազատել երթալու համար պիտի առնես, մեծաւ յօժարութեամբ կը հանէր կուտար: Միրելի մայրդ ժանտալտի պէս կը սիրէ Պիւսին:

— Կեցէք, քիչ մ'ալ սպասենք: Այն առենն ալ շատ տաքցած ըլլալուդ համար պիտի գանգատիր, ըսաւ հինգերորդ ձայն մը:

— Աստուած լսէ բերնէդ, ա'լբէրնոն, ըսաւ Վօթիրոն ոտնամանին ներբանը դեռիւր զարնելով:

— Ես չէի խօսողը, ա'՛՛՛ն է, ըսաւ ա'լբէրնոն: Իսկ ես ըռու կեցած եմ. կը վախնամ որ խօսքերս ցուրտէն կը սառին:

— Ի՞նչ կըրէիր հիմա, հարցուց Քէլլուս Վօթիրոնին:

— Տ'Օ կըսէր թէ հիմա սաստիկ կը տաքնանք և ես ալ

Աստուած լսէ ձայնդ կը պատասխանէի:

— Լաւ. կարծեմ թէ լսեց. որովհետև սա փողոցին վարի ծայրը բան մը կը նշմարեմ որ Աէն-Բօլ փողոցէն ասողին կուգայ:

— Կը սխալիք. անկարելի է որ ինքը ըլլայ:

— Ինչո՞ւ համար:

— Որովհետև անիկա ուրիշ ճամբայէ մը պիտի երթայ:

— Միթէ չը կրնամ ըլլալ որ բանէ մը կասկածելով իր ճամբան փոխէ:

— Բայց դուք Պիւսինն բնասորութիւնը չէք գիտեր. ուր կէ ըսաւ թէ պիտի երթայ, անպատճառ հոնկէ կանցնի. եթէ մինչև անգամ գիտնայ թէ սատոնան այն ճամբուն մէջ դարանի մտած է իր ընթացքը խաբանելու համար:

— Հիմակուհիմա ահա երկու մարդիկ կանցնին, ըսաւ Քէլլուս:

— Այո, այո, շիտակ է, կրկնեցին մէկ քանի ձայներ:

— Ուրեմն յարձակինք, ըսաւ Աքոնպէրկ:

— Վարդիեան մ'ալ կենանք, ըսաւ ա'լբէրնոն. մի դուցէ սխալմամբ բարի քաղաքացիներ կամ սրարկեշտ մանկաբարձներ փոսնդի մէջ ձգենք: . . . Ահա կայնեցան:

Եւ արդարև հինգ ընկերակցաց ուշադրութեանը առարկայ եղող երկու մարդիկը Աէն-Բօլ փողոցին ծայրը, Աէնթ-Անթուն փողոցին կողմը վարանեալ կեցած էին:

— Ո՛հ, ըսաւ Քէլլուս, արդեօք մեզ տեսնո՞ն:

— Գնա բանդ, հազիւ թէ մենք իրար կը տեսնենք:

— Իրաւունք ունիս, կրկնեց Քէլլուս: Տե՛ս, ահա ձախ կողմը կը դառնան. . . տան մ'առաջը կայնեցան. . . բան մը կը փնտռեն. . . :

— Այո, այո:

— Կերևայ թէ ներս մտնել կուզեն: Է՛հ, վարդիեան մ'ալ . . . արդեօք որսերնիս ձեռքերնուս պիտի փախցունենք:

— Բայց ասիկա ինքը ըլլալու չէ. որովհետև ան Աէնթ-Անթուն արուարձանը պիտի երթար, իսկ ասոնք Աէն-Բօլէն դուրս ելնելուն պէս փողոցէն վար իջան, պատասխանեց Վօթիրոն:

— Ո՞վ կրնայ ապահովյունել թէ խորամանկ սատանան գիպուածով և անհոգութեամբ կամ թէ գիտնալով և յատկապէս խարելու համար սխալ տեղեկութիւն մը տուած է՞, ըսաւ Արքեպէրկ :

— Կրնայ ըլլալ, պատասխանեց Քէլիւս :

Այս ենթադրութեան վրայ բոլոր աղնուականներն ալ սովալուի գայլերու նման ցաթիկեցին երեսնց կեցած տեղէն և սուսերամերկ սկսան վազել դրան առաջը կայնող երկու մարդոց վրայ :

Ճիշդ այս միջոցին սասնց մէկը բանալի մը կը մոցունէր դրան փականքին մէջ և դուռն ալ սկսեր էր բացուիլ, երբ յարձակողաց շառափուներ այդ երկու խորհրդաւոր գիշերաչափիկներուն գլուխը վեր վերցունել տուաւ : Սասնց փոքրագոյնը իր ընկերոջը գառնալով ըսաւ .

— Ի՞նչ է այս, ա՛՛՛՛՛՛ Օրիլի . արդեօք մեր ետե՛է՛ն ինկած են այս մարդիկը :

— Ո՛հ, տէր խո՛ . ինծի ալ այնպէս կը թուի, պատասխանեց դուռը բացողը : Յնունիդ պիտի տա՞ք թէ ծպտեալ պիտի մնար :

— Ձինեալ մարդիկ . դարանակալութիւն մը :

— Ո՛հ, տէր խո՛, մէկ քանի նախանձորդներ ըլլալու են որ ետեւուս ինկած մեղ կը լրտեսեն : Տէր Ատուած . ես առաջուց ըսի թէ տիկինը շատ գեղեցիկ է, անշուշտ զինքը փառաբայիներ ունի :

— Շո՛ւտ, չո՛ւտ, ներս մտնենք ա՛՛՛՛՛՛ Օրիլի . դրան ներսը առելի աղէկ կրնանք մեղ պաշտպանել, քան թէ դուրսը :

— Այո, տէր խո՛, եթէ հոն ալ թշնամիներ չը գտնուին : Բայց ո՞վ կըսէ թէ . . . :

Խօսքը բերանը մնաց, երբ երկտասարդ աղնուականները կայծակի արագութեամբ անցած ըլլալով հարկը քայլի չափ հեռաւորութեան միջոցը, քովերին հասան : Քէլիւս և Մօթիլան որ ուղղակի պատուարին քովէն վազելով եկած էին, դրան և ներս մտնել ուզող երկու մարդոց մէջ տեղը նետուեցան,

իրենց փակուտը արդիւելու համար :

Իսկ Արքեպէրկ, ա՛՛՛՛՛՛ Օ և ա՛՛՛՛՛՛ Էրքեպէրնոն կը պատրաստուէին ճակատ առ ճակատ յարձակելու :

— Ի մահ, ի մահ, դոչեց Քէլիւս որ հինգին մէջէն առկենն ետանդնոսն էր :

Նրկու մարդիկներէն փոքրագոյնը՝ զոր իւր ընկերը Տէր խո՛ կը կոչէր և որուն հարցուցած էր թէ ծպտեալ պիտի մնայ, իսկոյն դարձաւ Քէլիւսին, քայլ մ'առաւ անոր առաջը երթալու համար և հպարտութեամբ ձեռքերը իրարու վրայ ծալլած, ծուռ նայուած քով մը և տխուր ձայնով ըսաւ .

— Պ . Քէլիւս, կարծեմ թէ է՞հա՛, է՞հա՛՛՛՛՛՛ դոչեցիք Քաղզիդ զաւակի մը համար :

Քէլիւս յանկարծակի աշուրները գարձած, ձեռքերը անշարժ և ծունկերը դողդողալով, կտ կտ քաշուեցաւ :

— Նորին Բարձրութիւն ա՛՛՛՛՛՛ Մեծու դուրան է, գոչեց :

— Նորին Բարձրութիւն ա՛՛՛՛՛՛ Մեծու դուրսը՛, արագակեցցին միտնենն ալ :

— Լաւ ուրեմն, աղնուականներս, շարունակենք պօռալնիս . է՛հա՛, է՛հա՛՛՛ ըսաւ Ֆռանտուս ա՛՛՛՛՛՛ Մեծու ստակալի գէմքով մը :

— Ներեցէք, Տէր, կատակ մ'էր ըրածնիս, ըսաւ ա՛՛՛՛՛՛ Էրքեպէրնոն թոթովախօսելով :

— Ձէնք յուսար, Տէր, որ Ձեր Բարձրութիւնը Բարկոյն մէկ ծայրը, անընակ թաղի մը մէջ գէմերնիս պիտի ելնէ, ըսաւ ա՛՛՛ :

— Կատակ մ'ը, պատասխանեց Ֆռանտուս առանց ա՛՛՛ ին պատասխան մ'անդամ տալու . զարմանալի կատակներ կընէք, Պ . ա՛՛՛՛՛՛ Էրքեպէրնոն : Եւ եթէ ինծի գէմ պատուալու համար չէր ձեր կատակը, հայրս ո՞րու գէմ :

Արքեպէրկ յարգանք յուսալ մտնեալով ըսաւ .

— Տէր, այս գիշեր տեսանք որ Սէն-Լուք Մոնիորանտի ապարանքը ձգելով այս կողմը եկաւ : Այս բանս շատ տարօրինակ երեցաւ մեզի և ուղեցինք իմանալ թէ ամուսին մը



ի՛նչ նպատակաւ հարսանեաց առաջին զիշերը իր կինը առանձին պիտի ձգէ :

Սքոնպէրկին ըրած շատագոյնութիւնը հաւանական բան մ'էր, ըստ որում մ'Անժու դուքսը հետեւեալ օրը անտարակոյս պիտի խնայար թէ Սէն-Լիւք Մաննորանտի աղարանը պառկած չէր զիշերը և այս լուրն ալ Սքոնպէրկին ըսածը պիտի հաստատէր :

— Պ. տը Սէն-Լիւքը՛ . . . զիս Պ. տը Սէն-Լիւքը կարծեցիք, Պարոնայք :

— Ս.յո, Տէր, կրկնեցին հինգն ալ միաբերան :

— Ո՞րչափ ատեն մարդ մը սխալելով կրնայ խաբուել. չէր զիտեր որ Սէն-Լիւքին գլուխը իմինէս մեծ է, ըսաւ մ'Անժու դուքսը :

— Ս.յո, Տէր. բայց Պ. մ'Օրլիլի որ պատիւ ունեցած է Ձեզի հետ ընկերանալու, ճիշդ Սէն-Լիւքին հասակն է, ըսաւ Քէլիւս :

— Գիշերն ալ սաստիկ մութ է, Տէր, պատասխանեց Մօթիրան :

— Նաև տեսնելով որ Պ. մ'Օրլիլի բանալի մը կը մոցունէր վիականքին մէջ, ձեր գլխաւորը կարծեցինք զինքը, մըրմընջեց մ'Օ :

— Վերջապէս, յարեց Քէլիւս, Ձեր Բարձրութիւնը կրնայ վստահ ըլլալ որ իրեն նկատմամբ յոռի դիտաւորութեան մը ստուերն անգամ մտքերնէս անցած չէ, և չենք ուզեր իրեն հաճոյքներն իսկ վրդովել :

Ֆռանսուա մ'Անժու որչափ որ զարմանքն ու սարսափը կը նէրէին իրեն, այս պատեհ ու դժպտեհ խառնաշփոթ խօսակցութիւնը շարունակելով, առջնադիտական ճարտարութեամբ մը դրանը սեմէն հեռացած, իւր զիշերայրիկ սովորական ընկերն ու քնարահարը մ'Օրլիլին քայլ առ քայլ կը հետեւէր. և արդէն ալ բաւական հեռացած էր այն դռնէն, որպէս զի միւս տուներուն դրանցը հետ շփոթուելով որն ըլլալը չը կրնան որոշել :

— Իմ հաճոյքներս վրդովել, ըսաւ Ֆռանսուա դաճուած թեամբ. բայց ով կըսէ թէ իմ հաճոյքներս կատարելու համար հոս եկած եմ :

— Ո՛հ, Տէր, ինչ բանի համար ալ որ եկած ըլլաք, մենք ետ կը քաշուինք. ներեցէք, պատասխանեց Քէլիւս :

— Էաւ, ուրեմն մնաք բարով, Պարոնայք :

— Տէր, ըսաւ մ'Էրէշնոն, ձեզի ծանօթ եղող խոհակահում իւննիս . . . :

Տ'Անժու դուքսը որ արդէն սկսած էր ետ քաշուել, կայնեցաւ և յօճերը պաշտելով ըսաւ .

— Պ. տը Նովարէ, խոհականութիւն ըսիք. բայց ո՞վ ձեզնէ խոհականութիւն կը վնասէ :

— Տէր, կը կարծէինք թէ Ձեր Բարձրութիւնը այս ժամանակ առանձին իր մտքովն հետ . . . :

— Այր սխալիք : Ահա ճշմարիտը սա է :

Եւ սկսաւ ծանր ծանր խօսելով, կարծես թէ ունկնդրայ մտքին մէջ լաւ տպաւորելու համար, ըսել .

— Կախարդ հրեայ Մանասէին խորհուրդ հարցունելու կերթայի որ դուաթին և սուրճի գիրտին վրայ նայելով կը կարդայ : Ինչպէս որ զիտեք, իր բնակարանը Պարնէլի փողոցն է : Նամակէն անցած ժամանակնիս մ'Օրլիլի ձեզ տեսեր և մէկ քանի ազեղնաւորներ կարծեր է որ իրենց սոսկարէզը կը զննեն : Եւ որովհետև մենք ալ կախարդին խորհուրդ հարցունելու մտքով միայն այս ճանաչայէն կանցնէինք, յարեց Ֆռանսուա զուարթութեամբ մը որ ներկայ եղողներուն ստիւում կապառնար, մենք ալ ձեր սոսկալի նայուածքէն կարելի եղածին չափ ծածկուելու համար՝ որմերուն քովէն քուտելով կերթայինք և դռներուն մէջ կը պահուէինք :

Իշխանը այս խօսքերը ըրած ժամանակ ոտն առ ոտն մինչև Սէն-Բօլ փողոցը վերադարձած էր. այնպէս որ իրեն դէմ յարձակում մ'եղած միջոցին Պատթիլի զիշերայրահները կրնար օգնութեան կոչել. որովհետև իրեն դէմ իր եզբօրը շէնրի Պ. թաղաւորին հետեց իրեր սրտին մէջ սնուցած

ատելութիւնը զխնայում, անոր սիրելիներուն յուշուցած յարգանայն ու շատադովութեանցը շատ չէր կրնար վտահիլ :

— Հիմա որ բանին ստուգութիւնը իմացար, մնար բարով, Պարոնայք : Կարծեմ աւելորդ է իմացունել թէ առանձին կուզեմ շարունակել ճամբաս, ըսաւ Յուանուտա :

Ամենքն ալ գլուխին խոնարհելով մեկնեցան իշխանին քովէն որ քանի մը քայլ ալ յառաջ գնաց, միշտ աչքերը ետին դարցունելով զանոնք զխոտելու համար :

— Տէր իմ, ըսաւ տ'Օրիլի, կերգնում որ այս մարդիկը գէշ դիտաւորութիւն մ'ունենին : Արդէն կէս դիշեր է և ինչպէս որ ըսին, անմարդաբնակ թաղի մը մէջ կը գտնուինք : Օն, աճապարենք ապարանքը վերադառնալու, երթանք :

— Այ, ըսաւ իշխանը տ'Օրիլին կայնեցունելով. անոնք արդէն մեկնեցան դային և մենք կրնանք դործերնիս տեսնել :

— Ձեր Բարձրութիւնը կը սխալի, Տէր իմ, ըսաւ տ'Օրիլի : Տեսէք, սա վարի ծայրը, Թուրնէի ապարանքին ներքսս մուտ անկիւնին մէջ, ուր պահոււրած էին առաջ, նորէն ժողվուեցան :

Եւ արդարև Յուանուտա տեսաւ որ տ'Օրիլի ըսածը ստոյգ էր : Հինգ ազնուականները իրենց նախկին տեղերնին կեցած էին և կերևայ թէ իշխանին պատահամբը ընդմիջեալ ձեռնարկութեան մը վրայ կը խորհրդակցէին . թերևս իշխանին խօսքերուն ստուգութիւնը իմանալու համար՝ իրեն և իր ընկերոջը ճամբան լրտեսելու նստած էին :

— Տէր իմ, ի՞նչպէս պիտի ընէք, հարցուց տ'Օրիլի : Ձեր Բարձրութիւնը ինչ որ հրամայէ, պիտի կատարեմ . բայց կարծեմ թէ խոհեմութիւն չէ ալ ևս հոս մնալ :

— Բայց և այնպէս մեր դործը անկատար թողուլ երթալն ալ աղէկ չէ :

— Իրաւունք ունիք, Տէր իմ, բայց այդ դործը ուրիշ ժամանակի մ'ալ կրնայ թողուիլ : Արդէն ինչպէս ըսած եմ Ձեր Բարձրութեան, հարկ եղած տեղեկութիւնները ստացայ, տունը տարուան մը համար վարձած են, խոհիկն ալ ա-

ռաջին դատիկոնը կը բնակի : Ասկէ զատ տանը ազախինն ալ մեզի գործակից եղաւ և դռան յարմար բանալի մ'ունինք քովերնիս : Այս գիւրութիւնները ունենալով, երբ որ ուզենք, կրնանք երթալ :

— Աղէկ դիտե՞ս դռան բացուիլը :

— Այո, Տէր իմ, երբորդ բանալիով բացուեցաւ :

— Նորէն փակեցի՞ր դուռը :

— Անշուշտ :

Տ'Օրիլի թէ և այսպէս հատուտական կերպով կը խօսէր, բայց ոչ դուռը բացած և ոչ ալ դոցած ըլլալուն ապահով էր . սակայն և այնպէս այնպիսի վտահութեամբ պատասխանեց որ իշխանը ամենեւին տարակոյս չունեցաւ :

— Բայց կուզէի իմանալ թէ այդ անձինքը ինչո՞ւ համար լաբուած են հոն, ըսաւ իշխանը :

— Տէր իմ, կատարեալ վտահութեամբ կըտեմ ձեզի որ դաւադրութեան մը համար հաւաքուած են : Երթանք, Տէր իմ . թերևս Ձեր Բարձրութեան թշնամեաց մէկ գործն է այս :

— Լաւ, ուրեմն երթանք, բայց վերադառնալու պայմանաւ :

— Հաճեցէք, Տէր իմ, դոնէ այս գիշեր չվերադառնալ : Ձեր Բարձրութիւնը առ ոչինչ չհամարի իմ կասկածներս, որովհետև ամենուրեք թակարթներ լարուած կը տեսնեմ և այսպիսի երկիւղալից կասկածներ ունենալ ալ ներուի թող ինձի, որովհետև դահաժառանգ իշխանի մը հետը կը գտնուիմ որուն կորստեանը մէջ իրենց շահը կը վնասեն բազմաթիւ անձինք :

Այս վերջին խօսքերը Յուանուտային վրայ այնպիսի տպաւորութիւն մ'ըրին որ վերջապէս որոշեց մեկնիլ երթալ, ամեն անարգական խօսքեր տեղալով հինգ ազնուականներուն վրայ . և միտքը դբաւ որ այս վշտակրութեան փոխարէնը պատեհ առթիւ հատուցանէ իրենց :

— Լաւ, ուրեմն երթանք, ըսաւ . թերևս Պիւսին Սէն-Լիւքի հարսանիքէն վերադարձած ապարանքը կը գտնուի : Անշուշտ հոն մեծ կախ մը յարուցանելով այդ անկողնոյ

ծառայող սիրելիներէն մէկը մեռուցած է և կամ վաղը կը մեռ-  
ցունէ, որով սիրտս քիչ մը կսփոփի :

— Թող այնպէս ըլլայ, Տէր իմ . իմ փափարս ալ ուրիշ  
բան մը չէ . և ես ալ այս մասին Ձեր Բարձրութեան հետ  
կատարելապէս վստահ եմ Պիւսիին վրայ :

Այս բանով մեկնեցան դայիկն :

Հաղիւ թէ ասոնք Ժույ փողոցին անկիւնը դարձած էին ,  
մեր հինգ ընկերակիցները՝ Թիգոն փողոցին վերի կողմէն ,  
մեծ վերարկուի մէջ փաթթուած հեծեակիանի մը քայլ առ-  
սան : Քարայեալ հողին վրայէն անցնող յաղթանդամ և  
սիգանձեմ ձիուն ոտնատրոփը գիշերային խոր լուսթիւնը կը  
վրդովէր և լուսնոյ ազոտսիպլ նշոյլ մը՝ թանձրամած  
խաւարին դիմադրելով , միգապատ և ձիւնասոյղ մթնոլորտին  
մէջ կը թափանցեր ու հեծելոյն գլխարկին սպիտակ սեւտուրը  
արծաթաղոյն կը շողշողէր : Հեծեակիանը զգուշութեամբ ե-  
րկուարին սանձը բռնած կոտիպէր մեզմով քալելու : Օղին  
ստունասոյր զրոտութեան հակառակ երկուարին բերանը փրփրա-  
դէզ եղած էր :

— Այս անգամ նոյն իսկ ինքն է , բառ Քէլիւս :

— Անհնարին բան , բառ Սօփիրոն :

— Ննչո՞ւ համար :

— Որովհետև իրմէ բաժնուած Ժամանակինս Արիարօ ,  
տ'Անթրակ և Ռիդէ յրօք իր հետը կը գտնուէին . անշուշտ ա՛շ  
նոնք չեն թողուր որ այսպէս առանձին վտանգներու դէմ  
խիզախէ :

— Թէև առանձին , բայց նոյն իսկ ինքն է , բառ տ'Էրէր-  
նոն : Միթէ չե՞ս նշմարեր իր բարձրովիզ դըլուրը , խրոխտ  
հայեցուածքը և չե՞ս ըստ իրեն հազարուն կոկորդալիք ձայնը :

— Ուրեմն յիշակարգ մը կայ հոս , բառ տ'Ս :

— Ննչ որ ալ ըլլայ , բառ Սքոնպէրի , յայտնի է թէ նոյն  
իսկ ինքն է . ուրեմն օ՛հ , է զէ՛ն , է զէ՛ն :

Տ'Էրէրնոն իր կարծեացը մէջ սխալած չէր : Այս անձը որ  
աներկիւղ վստահութեամբ Անթ-Սնթուան փողոցէն կու-

դար , Պիւսին էր որ Քէլիւսին խորհուրդ տուած ճանրայէն  
դիմ մ'անդամ չէր չեղած : Ննպէս արդէն ըսած ենք , Ան-  
Վիւր խրատ տուած էր իրեն այս վտանգաւոր ճանրաներէն  
չանցնիլ : Որչափ որ իր խօսքերը բնականաբար սարսափ պատ-  
ճառած էին Պիւսիին , բայց և այնպէս իր երեք ընկերները  
Մանրանախ ապարանքին դրոն առջև իրենց տեղերնին ար-  
ձակած էր :

Քաջասիրտ երիտասարդին անվկանդ զօրութիւնը կը սիրէր  
այսպիսի վտանգներու դէմ խրոխտալ և յոխորտանօք կըսէր  
ինքնիրեն . Ես պարզ ազնուական մ'եմ , բայց կայսրի մը սիր-  
տը կը կրեմ կուրծքիս մէջ և երբ Պլուտարքոսի վարուց մէջ  
նախնի Հռովմայեաց քաջութիւնները կը կարդամ , չեմ  
դոնեք այնպիսի գիւցազն մը որուն քաջազործութեանցը չը  
կարենամ հատասարիլ :

Պիւսի որ Ան-Վիւրին բարեկամութեանը վրայ շատ վստա-  
հութիւն չունէր , այնպէս համարած էր թէ իր խորհուրդ տուած  
զգուշութիւնները հակառակորդաց առաջը զինքը ծաղրելի  
ընելէ զատ ուրիշ բանի չէին ծառայեր , և թէ երեք իր հա-  
կառակորդները դարձնակալութեամբ կայսախէին : Պիւսի  
վտանգէն աւելի վստութեանէն կերկնէր : Կր անվահեր քա-  
ջարտութեան վարկը որ թշնամիներն իսկ կը խոտովանէին ,  
անաղարտ սրահերու համար , ամենէն վտանգաւոր ձեռնարկու-  
թեանց դէմ՝ յանդդնաբար կը խիզախէր : Ուստի իր քաջորի  
երեք ընկերակիցները որ վաշտ մը հեծեալզօրքէ աւելի ազդե-  
ցութիւն ունէին , իրենց տեղերնին արձակած էր . և ինքը  
առանձնակի , որով և գաշոյնով մը միայն , ձեռքերն ալ վարա-  
պանակին ներքև լայնածև ծալած անհոգութեամբ կերթար  
դէպ է Անթ-Սնթուան փողոցը որոշեալ տունը :

Թերևս ընթերցողը կարծեն թէ մեր երիտասարդ զօրա-  
պետը իրեն սպասող տարիածուի մը դրկախառնութիւններն  
ընդունել կերթար հոն . բայց ո՛չ , իրեն սպասողը տարիա-  
ծու մը չէր , այլ նամակ մը՝ Նավարայի թագուհւոյն գեղա-  
վայն Սարկրիտի կողմանէ որ խրաբանչիւր ամիս որոշեալ որ

մը կը զրկէր իրեն ի յիշատակ իրենց անկեղծ բարեկամութեան .  
և Պիւսի ալ անոր տուած խոտունը հաւատարիմ դռնուե-  
լով, ամեն անգամ նոյն որոշեալ օրը կենէր թղթաբերին  
տունը կերթար գիշերայն և առանձնակի, որպէս զի իրմէ զատ  
ուրիշ մէկը վտանդի ենթակայ չընէ :

Կրանց-Օկիսթէն փողոցէն Մէնթ-Մէթուան փողոցը տա-  
նող ճամբան առանց վտանդի անցած էր . իսկ երբ Մէնթ-  
Քաթէրին փողոցին բարձրութեանը հասաւ, իր վարժ և սրա-  
տես աչքը մթութեան մէջէն մարդկային ստուերներ տեսաւ  
պատուարին առաջը դորս տ Մնթու դուրսը յարձակման հան-  
դիպէն առաջ չէր նշմարած : Ս, յառ ամենայնիւ անվեհեր  
երկտասարդ մը մտալուտ վտանգը նշմարած ատեն այնպիսի  
խանդ մը կզգայ իր սրտին մէջ որ խոհականութեան և զգայ-  
մանց դորձուներթիւնը վերջին ծայր կտարեւութեան կը  
հասցունէ :

Պիւսի դորձողոյն պատին վրայ տեսած մթին ստուերները  
հաշուելով ըսաւ .

— Ս, հա երեք, չորս, հինգ անձինք, սպասարներն ալ  
մէկտեղ չհաշուելով որոնք անշուշտ ուրիշ անկիւն մը պահ-  
ուըտած են իրենց տէրերուն ձայնը բաժնուն պէս օգնութեան  
վազելու համար . ուրեմն իմ վրաս մեծ դաղապար մ'ունին :  
Չա՛ր ստտանայ, մէկ մարդու մը դէմ այսչափ անձինք : Մեր  
բարի Մէն-Լիւքը մեզ խաբած չէ եղեր, և եթէ այս բազ-  
մութեան մէջէն ամենէն առաջ ինքը խցիք սիրտս, իրեն կը  
սէի . Ետըհակալ եմ ըրած ազգարարութենէդ, բարեկամ :

Ս, յս խօսքերը ընելով ճամբան կը շարունակէր և ձախ  
ձեռքովն ալ վերսրկուին ճարմանդ առանց արտաքին շարժ-  
ման քակած բլբլով, ալ ձեռքը դիւրութեամբ կը խաղցու-  
նէր անոր ներքե :

— Լաւ, Պարոնայք, ըսաւ Պիւսի սատիկ և անվրդով  
ձայնով մը, կերեայ թէ խեղճ Պիւսին սպաննել կուզէք :  
Ուրեմն այս դիչերուան որտորութեան համար պատրաս-  
տուած երէվայրին, այն հոչակաւոր կինճը Պիւսին է եղեր :

Փոյթ չէ . կերդեա՛մ ձեր առաջը որ այդ կինճը իր որտորդ-  
ներէն մէկ քանին պիտի դիչատէ . և դիտէք դուք ալ որ իմ  
խօսքիս միշտ հաւատարիմ կը դռնուիմ :

— Հոգ չէ, Պ . Պիւսի տ'Սմայուալ, ըսաւ Աքոնպէրիկ . քու  
ինչ ատիճան անկիրթ ըլլալդ յայտնի կը ցուցունես այդպէս  
ձիւուն վրայ նստած խօսելով, մինչդեռ մենք սուրբ վրայ  
կայնած մտիկ կընենք քեզ :

Ս, յս ըսելով, վերսրկուին տակէն դուրս հանեց թեւ որ  
ճեքմակ մեղուսով փաթթութեամբ էր և լուսնոյ ճաճանչներովը  
արծաթափայլ նկարուած փայլատական մը պէս շողացուց .  
այնպէս որ Պիւսի շուտով հասկցաւ թէ այս շարժումը իրեն  
դէմ յարձակողական պառնալիք մ'էր :

Պիւսի իր սովորականին համեմատ պիտի պատասխանէր  
այս շարժման, երբ իր երկարը մտարկելու միջոցին տեսաւ որ  
կենդանին թափկացած ինկաւ ծունկուրներուն վրայ : Աքոն-  
պէրիկ դեռահասակ պատանին, զարմանալի ճարպիկութեամբ  
մը որուն փորճը շատ պատերազմներու մէջ ցուցուցած էր,  
ձիւուն ծունկուրներուն դաշոյն մը նետած էր որու լայն եր-  
կաթը երակակալէն աւելի ծանր ըլլալով, զարնուած տեղը խը-  
րած մնացած էր փայտահաստ երկաթի մը պէս որ կաշնիկ  
ճիւղերուն զարնուած ատեն կը խրի կը մնայ :

Կենդանին ուժդին վընմամբ դողդոջելով ինկաւ ծունկ-  
ուրներուն վրայ :

Եւ Պիւսի որ ամեն բանի պատրաստուած էր գիմագրա-  
ւել, սուր ի ձեռին ոտքի վրայ մնաց :

— Թշուառական, դոջեց, իմ սիրելի ձիւ էր այս . ան-  
պատճառ պիտի հատուցանես :

Աքոնպէրիկ այս առաջին փորձով քաջաբերուած, յառաջ  
կը խաղար Պիւսիին վրայ, արհամարհելով անոր ձեռքը բռնած  
սուրը, ինչպէս որ մէկը գողարեալ օձի մը ստամանց ուժը  
կարհամարհէ . բայց և այնպէս այդ սուրն ու բազուկը զար-  
մանալի ճարտարութեամբ մը շեշտակի հարուածելով Աքոն-  
պէրիկի ազդը, երկուքի բաժնեցին :

Աքոնպէրի սոսկալի աղազակ մ'արձակեց :

— Լաւ, ըստ Պիւսի : Կը տեսնէք թէ ի՞նչպէս հաւատաւրիմ կը գտնուիմ խօսքիս . ահա որտղղին մէկը գիշատուեցաւ : Ազիկա՛ր, փոխանակ ձեռն ծունկերը կտորելու Պիւսին բազուկը կտրելու էր :

Եւ մինչդեռ Աքոնպէրի կաշխատէր իր վէրքը ճմլելով թաշկինակով մը կապելու, Պիւսի իր երկար սուրբն ծայրը միւս չորս ընկերաց երեօին և կուրծքին մըրելով ակնկարթի մը մէջ վիրաւորեց զանոնք առանց բնառ մէկը օգնութեան կուշելու, որովհետեւ ուրիշներէ օգնութիւն խնդրելը արհամարհէի վատութիւն մ'էր Պիւսին համար :

Իր վարապանակը ձախ թեկն վրայ փաթթելով վահան մ'ըրաւ և վայրկեանի մը մէջ տասը հարուած իջեցունելով իր թշնամիներուն, բաժնեց զանոնք և անցաւ մէջերնուն . չէ թէ ապարիզէն խոյս տալու, այլ իր թիկունքը պատի մը կըրթնցնելու համար, որպէս զի չուրջանակի չը պաշարեն զինքը : Բայց այս միջոցին քիչ մը սահեցաւ ոտքը և քետիներ պիտի իյնար : Քէլիւս այս ձախող շարժումէն օգուտ քաղելով, խօսին հարուած մ'իջեցուց Պիւսիի կուշտին :

— Չարնուեցա՛ւ, աղազակեց Քէլիւս :

— Այո, բաճկոնակ միայն կրցիք զօրնել . երկչոտ մտքու մը հարուածը մինչև հոն կրնայ հասնիլ, պատասխանեց Պիւսի որ չէր ուզէր վիրաւորուած ըլլալը խոտտովանիլ :

Եւ Քէլիւսին վրայ յարձակելով այնպէս ուժղին դիմադրութեամբ բռնաբարեց անոր սուրը որ Քէլիւսին ձեռքէն տասը քայլ անդին թռաւ : Բայց տ'իքերնոն, տ'Օ և Մօթիւրոն նոր կատարութեամբ մը յանկարծ Պիւսիին վրայ յարձակելով, թող չտուին որ յաղթութիւնը յաւաջ տանի : Պիւսի հասկցաւ որ չորս կողմէն պիտի պաշարուէր : Աքոնպէրի արդէն վէրքը փաթթած էր . Քէլիւս սուրը գետնէն վերուցած : Այլ վայրկեան մը միայն մնացեր էր Պիւսիին համար պատին առաջը հասնելու եւ եթէ այդ վայրկեանն ալ կորսնցունէր, ալ ամեն բան ըննցած էր իրեն համար :

Պիւսի իր թշնամեաց առաջին երեք քայլ ետ քաշուեցաւ : Չորս սուր կայծակի արագութեամբ կիլնէին իր վրայ . բայց Պիւսի անդամ մ'ալ ջաթիկելով, յաջողեցաւ կոնակը պատին տալու :

Հոն Աքիլէսի կամ Ռոլանտի պէս արիւթիւն մը զգեցած կանգնեցաւ եւ կը ծիծաղէր իր թշնամեաց վրայ որ կտրկուտի պէս հարուածներ կը տեղային իր գլխուն ահագին շառաչմամբ :

Բայց շատ չանցաւ, պաղ քրտինք մը սկսեց վաղել ճակտէն եւ մեռչ մը պատեց աչուրններուն վրայ :

Կոխը տարքսած ատենը եռանդին սաստկութենէն վէրքը մոռցած էր, բայց հիմն վրան թաղկացում մը դալով տկարութեան նշանները երեւան ելան և վիրաւորուած ըլլալը միտքը եկաւ :

— Կը նուազին . շատ լաւ, դո՛ւնեց Քէլիւս հարուածները կրկնելով :

— Հիմա կը պատասխանեմ քեզ, ըստ Պիւսի :

Եւ իր սուրին երակտակալով այնպիսի սաստիկ հարուած մ'իջեցուց Քէլիւսի քունքին որ գլորեցաւ ինկուտ :

Կնչպէս որ կատաղի կինճ մը իր բոլոր զօրութեամբը շուներուն գիմնադրաւէլէն վերջը կը խոյանայ անոնց վրայ, նոյնպէս ալ Պիւսի սոսկալի աղազակ մը հանելով թշնամեաց առաջը նետուեցաւ : Տ'Օ և տ'իքերնոն ետ քաշուեցան . Մօթիւրոն Քէլիւսը վերուցած իր բազկացը մէջ կը բռնէր, որուն սուրը ջախջախեց Պիւսի ոտքին տակը առնելով եւ տ'իքերնոնի բազկէն ալ սրոյ հարուած մ'իջեցունելով երկուքի բաժնեց . Պիւսի վայրկեան մը յաղթող հանդիսացաւ . բայց Քէլիւս նորէն ուժ առաւ և Աքոնպէրի, թէ եւ վիրաւորեալ, նորէն կռիւին մէջ մտաւ եւ չորս սուրեր գարձեալ սկսան չոքալ Պիւսիին վրայ : Պիւսի հասկցաւ որ նորէն պիտի յաղթահարուէր : Իր բոլոր զօրութիւնը ամիտիեց ետ քաշուելու համար և քայլ առ քայլ յետոս ընկրկելով պատին առաջը հասաւ : Ընդհանուր տկարութիւն մը տիրած էր իր վրան . սառնորակ քրտինք մը կը

հոսեր ճակրտէն . տկանջները սաստկութեամբ կը դռնչէին և արիւնսայից մշուշ մը իջաւ . աչուքներուն վրայ . ձեռքին սուրը իր շիտթած ու մթնշաղ մտքին ցուցուցած ճանքուն չէր հետեւէր : Պիւսի ձախ ձեռքովը սլատը մնտուելով գտաւ վայն , ու բուն դպած ատեն զգացած ցրտութիւնը օգտակար ազդեցու թիւն մ'ըրաւ իրեն . բայց մեծ վարմանքով տեսաւ որ սլատը բացուեցաւ . . . : Ախարաց դուռ մ'էր այն :

Պիւսի նորէն յոյս առնելով իր բոլոր զօրութիւնը ամփոխեց այս վերջին վայրկենին համար և երկվայրկենի մը մէջ այնպիսի սաստիկ եւ արագ հարուածներ իջեցուց որ իր հակառակորդաց սուրերը չկրցան բանիլ իր վրայ ու գետինը ինկան : Այն ժամանակ դբան միւս կողմէն սահեցաւ ներս մտաւ և կռնակովը բոլոր զօրութեամբ դրթցելով զայն , վակեց շառաչմամբ : Այլ ամեն բան լննցած էր . Պիւսի վտանգը անցուց . Պիւսի յաղթող հանգիսացաւ , սրովհետեւ կրցաւ զինքը ճուղսարել իր թշնամեաց ձեռքէն : Աւրախութենէն պլայլած աչուքներով դռնակին նեղ վանդակապատներէն իր թշնամեաց դժգոյն գէւքը դիտեց որոնք կատաղի աղաղակներով սրոյ հարուածներ կիկեցունէին դուռը կոտրելու համար : Յանկարծ իրեն այնպէս թուեցաւ թէ ոտքերը գետնէն կը կտրէին և սլատը կը դողդոջէր : Նրեք քայլ յառաջ գնաց և ինքզինքը բակի մը մէջ գտաւ . չորս կողմը դարձաւ և սանդուղի մը աստիճաններուն վրայէն գլորեցաւ ինկաւ : Այլ այնուհետեւ բան մը չը կրցաւ զգալ եւ այնպէս թուեցաւ իրեն թէ դերեզմանական խորին լուսութեան և խաւարին մէջ իջած էր :



ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՏԵՍԱԼՈՒՆՆԵՐ ԲՈՐՈՆԵԼԸ ԵՐԲԵՄՆԸ  
ԳՅՈՒՆԱՐՆԸ ԿԸԼԼԱՅՏ

Պիւսի սանդուղէն վար ինչպէն առաջ կուշտին վիրաւորուած տեղը շապիկին տակէն թաշկինակ մը գրած և վրայէն ալ սուրին դօտին կապած էր : Ատով իր կակիեցուցիչ սաստիկ վէքքը ուրկէ արիւնը բոցաշունչ հրոյ նման կը ցայտէր , կերպովմը վաթթած էր : Բայց մինչև որ սանդուղին առաջը հասաւ , բաւական արիւն կորսնցուցած ըլլալով՝ վրան թաշկուցում մ'եկաւ , ինչպէս որ վերը պատմեցինք :

Յաւէն ու զայրոյթէն ուղեղը գրգռուած՝ իր կենդանութիւնը թաշկացման կերպարանը մը առած ըլլալով , և կամ թէ իր առաջին թաշկացումը անցնելով անոր վրայ չերմը հասած և անոր ետեէն ալ երկրորդ թաշկացում մը եկած ըլլալով , կենդանութեան և անզգայութեան երկու գիշերաց մէջ գլուխուղ այս վերջալոյսին ժամանակը , կուզես տեսիլք բաէ կուզես իրականութիւն , Պիւսի հետեւեալը տեսաւ կամ թէ իրեն աչքին այսպէս երեցաւ :

Սքանչելի կերպով քանդակեալ փայտէ կարասիներով զարդարուած սենեկի մը մէջ կը դանուէր որուն առաստաղը գեղեցիկ գոյներով նկարուած էր և գետինն ալ դորդ մը փռած վրան մարդու պատկերներով : Այս մարդիկը ձեռքերնին ծաղիկներ ու ճիզակներ բռնած , գորգին վրայ այնպէս նկարուած էին որ կարծես թէ պատերէն դուրս ելնելով անոնց վրայէն կաշխատէին վեր գէպի առաստաղը ելնելու : Երկու պատուհաններուն մէջ տեղ գեղանի կնկան մը լուսաճաճանչ պտտիկըրը դրուած էր որուն շրջանակը՝ այնպէս թուեցաւ Պիւսին

թէ դրան մը բարբառի չըլանակն էր : Պիւսի՛ կարծես դե-  
րազոյն իշխանութեան մը զօրութեամբ իւր անկողնոյն վրայ  
հաստատուած մնացած էր անշարժ զգայազիրիկ, իր բոլոր կա-  
րողութիւնները կորուսած, միայն թէ մարած աշուրներով  
իւր առաջը գտնուածները կրնար նշմարել : Զարմանքով  
կը դիտէր գորդին վրայ նկարուած նիզակաւոր մարդոց բար-  
կութեան անհեթեթ ցոյցերը եւ միտնեւումն ալ որ ձեռքեր-  
նին ծաղիկներ բռնած էին, ուրախութեան լրենի ծիծաղնե-  
րը : Այս մարդիկը առաջուց տեսած էր թէ նոր կը տեսնէր .  
Պիւսիկն միտքը այն աստիճան շիտժած էր որ այս բանս չը  
կրցաւ որոշել :

Պիւսի յանկարծակի տեսաւ որ կնոջ կենդանագիրը իր  
չըլանակէն զտուեցաւ եւ հրեշտակներու հազածին նման  
ճերմակ ու երկայն չըլազցեստմը հազած պաշտելի արարած  
մը դէպի իրեն քովը յառաջացաւ : Իւր խարտեալ մազերը  
ուսերուն վրայ ձգուած էին . ակնուղիքը սև սաթի նման թխտ-  
րակ գունով կը փայլէին . թաշանման եւ երկայն արտեւանունքը  
դիւթիէ հայեցուածք մը կուտային իւր աչոց, և մարմնոյն  
մորթը այնպէս փայլուն ու մաքուր էր որ անոր տակէն վար-  
դազոյն արեան կատարած չըլանը կարծես թէ յայտնադէս  
կը տեսնուէր : Այս հրաշազան կնոջ գեղեցկութիւնը այն աս-  
տիճան ճառագայթացայտ եւ յանկուցիչ էր, իւր թեւերը տա-  
րածած ժամանակ այնպիսի, սքանչելի և սրտադրաւ կերպու-  
րանք մը կաննէր, որ Պիւսի իր բոլոր ձեղը թափեց երթալ  
ուղը ի յնալու համար : Սակայն ինչպէս որ անմահ հոգին այս  
աշխարհս արհամարհելով յերկինս բարձրացած ժամանակ  
մարմինը գերեզմանին մէջ կապուած կը մնայ, նոյն կապը-  
րով կաշկանդուած մնացած էր Պիւսին ալ իւր անկողնոյն մէջ :  
Քարկայայտ աչօք ուշի ուշով դիտեց այս շքեղ անկողինը եւ  
իրեն այնպէս թուեցաւ թէ Ֆրանսուս Ա. ին ժամանակները  
քանդակուած էր որուն վրայ ոսկեճամուկ դամասկէ ( քոսակ : )  
ճերմակ վարագոյրներ կախուած էին :

Պատին և առաստաղին վրայի մարդերը բոլորովին Պիւսիին

մտքէն ելան կնոջ տեսութեանն վերջը : Կենդանագրին կնոջմէն  
զատ ամեն բան ոչինչ էր Պիւսիին համար, և կը ջանար որ պատ-  
կերին մէջ անոր ձգած պարսպ տեղը տեսնէ . բայց անթա-  
փանցելի մշուշ մը պատկերին ու իր մէջ տեղը ծածանելով  
կարգէլէր իր տեսութիւնը : Պիւսի նորէն աշուրները այն խոր-  
հորուոր և սքանչելի էակին վրայ դարձուց և իր յարգանքը  
մատուցանելու համար ուզեց իր սովորութեանը համեմատ  
ոտանաւոր մ'ըտել :

Բայց յանկարծ կինը իր աչքէն աներևոյթ եղաւ . անթա-  
փանցելի մարմին մը իր և կնոջ մէջ տեղը մտաւ . այս մարմի-  
նը — չէր — չէր լսողցողի մը պէս ձեռքերը տարածելով յամ-  
բարայլ կը յառաջանար :

Պիւսի այնպիսի սաստիկ կատաղութիւն մը զգաց այդ նոր  
այցելուին դէմ, որ եթէ չարժեւու կարողութիւն ունենար,  
առանց վայրկեան մ'անդամ մտածելու վրան պիտի յարձա-  
կէր, ինչպէս որ յարձակելու փորձ մ'ալ ըրաւ, բայց տեսաւ  
որ տեղէն չարժիչ անդամ անկարելի էր :

Մինչդեռ Պիւսի վայրագար կախատէր իր անկողնէն դուրս  
ելնելու, նորեկ այցելուն սկսաւ խօսիլ :

— Ե՛հ, վերջապէս հասա՞նք տեղերնիս, հարցուց :

— Այո, տէր . հիմա կրնար ձեր աչքին փաթթուած լա-  
թը հանել, ըսաւ դողորթիկ ձայն մը որ Պիւսիին բոլոր ջիղերը  
դողդ դացուց :

Պիւսի ուզեց իմանալ թէ այս ձայնը կենդանագրին կնոջ  
ձայնն էր . բայց իր ջանքը ի դերեւ ելաւ : Իր առաջը երի-  
տասարդ և շնորհալի մարդ մը միայն կը տեսնէր որ իրեն ե-  
ղած ազդարարութեան համեմատ աչքին կապը հանելով,  
ակնապէշ կը դիտէր սենեկին չորս կողմերը :

— Գետինն անցնի այս մարդն ալ, ըսաւ ինքնիրեն Պիւսի :

Եւ իր մտքէն ըսածը բերանայի կամ շարժմամբ իմա-  
ցունել ուզեց, բայց երկուքն ալ անկարելի եղան :

— Հիմա հասկցայ դորձը, ըսաւ երիտասարդ մարդը ան-  
կողնոյն մօտենալով . վիրաւորուած էք, այնպէս չէ՞, սիրելի

Պարոն: Հոգ չէ. տեսնենք, վերքերնիդ ի՞նչպէս է:

Պիւսի ուզեց պատասխանել, բայց տեսաւ որ անկարելի բան էր: Աչքերը սառնամանու ա շողի մը մէջ կը լողային և իր մատանց պոեզները այնպէս ցաւազին կը կսկծէին, որ կարծես թէ հարիւրաւոր ասեղներ մտած էին:

— Սրդեօք վէրքը մահառիթ է, հարցոց գողորիկ ձայնը որ առաջ ալ խօսած էր, այնպիսի ցաւազին հնչումով և սրտատրոխով մը որ Պիւսին աչքերէն արտասուք հասել ըսկասն: Հասկցաւ Պիւսի որ այս ձայնը կենդանագրին կնօջն էր:

— Քեռ չեմ գիտեր, բայց հիմա կըսեմ ձեզի, պատասխանեց երիտասարդ մարդը. առ այժմ թաղկացած է:

Պիւսի այջափը միայն կրցաւ իմանալ. իրեն այնպէս թուէր ցաւ թէ այն տեղերէն հեռացող մէկու մը շրջազգեստին դեռիներ քսուելու շոշափունը լսեց: Քիչ մը ետքը զգաց որ հրաշէկ երկաթի պէս բան մը իր կողք մխեցին որով բարբառ վին կորանցունելով իր զգայական կարողութիւնները, ընդհանուր թաղկացում մ'եկաւ վրան:

Այս թաղկացման սրջափ տտեն տեսած ըլլալը չկրցաւ իմանալ Պիւսի. միայն թէ երբ իր թմրութենէն սթափեցաւ, և բռն ի վեր սառնաբեր հով մը կը շնչէր և ստուարու անախորժ ձայներ կը թնդացունէին իր ականջները: Արծեց թէ առաստաղին և դորդին վրայն մարդիկը իրարու հետ կը վիճէին, և յուսալով որ կենդանադիրը միշտ կեցած է հոն, աչքը բացաւ, չորս կողմը դիտեց, բայց ոչ առաստաղ կար, ոչ դորդ և ոչ ալ կենդանադիր, ամեն բան անբերոյթ եղած էր: Իր աջ կողմը մտիրազոյն լաթերով մարդ մը կանդնած էր, վրան արեան բիծերով սիւսմանելի մը կապած զքր ամբիտիւրով ոլորած ու մէջքը վաթթած էր. ձախ կողմը Քենովելիայի Եդբայրութեան կարգէն կրօնաւոր մը կար որ Պիւսին գլուխը վեր կը վերցունէր և առաջն ալ ծերուկ կին մը՝ որ մոմնջելով աղօթք կընէր Պիւսին վրայ:

Պիւսի աչքը չորս դին պտտցունելով տեսաւ որ իրմէ քիչ մ'անդին իրարու վրայ դիզուած խել մը քարեր գրուած

էին. և այդ քարակոյտ ամբարտակին բարձրութիւնը իմանալու համար աչքերը վեր վերուցած ժամանակ տեսաւ որ աչտարակներով շրջապատեալ այդ բարձր շէնքը Թամբլըն էր և անոր վրայէն ալ սպիտակ և սառնապատ երկինքը կը տեսնուէր որ արշալուսոյն թեթեւ ճաճանչներովը ոսկեղ սյն կը շողար:

Միով բանիւ, Պիւսի փողոցը կը դանուէր. կամ աւելի ճիշդ՝ փոսի մը եղերքը, և այդ փոսն ալ Թամբլըն բոլորափքի խրամն էր:

— Ենթահակալ եմ, Պարնայք, որ զիս հոս բերելու ներութիւնը յանձն առած էք, ըսաւ Պիւսի: Մարտը ողբ ողտակար և կարեոր է ինձի համար, բայց պատուհանները բանարով ալ կընար ըլլալ. և ես աւելի հանգիստ կըլլայի ձեր մակ դամասկէ ոսկեճամուկ անխղնոյս վրայ, քան թէ այսպէս գետնախալի ըլլալով: Բայց հոգ չէ. զրգանիս մէջ քան սկուզնոց քանի մը ոսկիներ կան, եթէ արդէն դուք ձեզէն աշխատութիւնիդ վճարած չէք. թէ և վճարած ըլլալիդ աւելի խելացութիւն է: Առէք, սիրելիներս, առէք այդ ոսկիները:

— Բայց, ազնուական Տէր, ըսաւ մտիրազոյն լաթեր հաղած մարդը որ մատուաճառ մ'էր, ձեզ հոս մենք չբերինք, արդէն իսկ հոգ էիք դուք: Առաւօտուն կանուխ անցած ժամանակինս ձեզ հոս այսպէս փառած տեսներ:

— Այ չար ստտանոյ. բժիշկն ալ հոս չէր, ըսաւ Պիւսի: Ներկայ գտնուողները իրարու երես նայեցան:

— Տակաւին զառանցանքը բոլորովն չէ գացեր, ըսաւ կրօնաւորը գլուխը շարժելով: Յետոյ Պիւսին քովը երթալով ըսաւ.

— Որդեակ, կարծեմ աղէկ կընէք որ հողեւոր պատրաստութիւններնիդ տեսնէք: Այո, այո, պէտք է որ ձեզ խոտովանցունեմ:

Պենովելիան եղբայրները (Պաէր) ճիշդութեամբ ոչ ոք մարդազաւ ընկերութիւն մը կազմած են: Այս կրօնաւորաց սկզբունքներէն մէկն է մարդիկ խոստովանուելու անոց զաղանկաւոր տեղեկանալու համար. ինչպէս որ պատուելեանս ընթացքին մէջ սուրիշ



Պիւսի զարհուրած դէմքով մը կրօնաւորին երեսը նայեցաւ :  
 — Թշուառ և սիրելի երիտասարդ, ըսաւ ծեր կինը . հոս քու քովդ բժիշկ չը կար : Առանձին ձգուած էիք հոս մեռու եպի մը պէս : Տեսէք, ձեր պառակած տեղը դռնուած քիչ մը ձիւնը սև դոյն մ'առած է :

Պիւսի անգամ մը իր ցաւած կողմը դարձուց աչքը, յիշեց որ սրոյ հարուած մը ընդունած էր, ձեռքը բաճկոնին տակը տարաւ և տեսաւ որ թաշկինակը վէրքին վրայ կեցած էր, վրայէն ալ սրոյն գօտին կապուած :

— Զարմանալի՛ բան, ըսաւ :

Ներկայ գտնուող մարդիկը իրենց եղած թոյլտուութեան համեմատ սկսած էին արդէն ցաւակցութեան խօսքեր ընելով քսակը բաժնել մէջերնին :

Երբ որ գործերնին լնցուցին,

— Սիրելի բարեկամներս, հիմա զիս ապարանքս տարէք, ըսաւ Պիւսի :

— Անշուշտ, անշուշտ, թշուառ և սիրելի երիտասարդ, ըսաւ ծերուկը . մնալաճառը ուժով մարդ մ'է և ձի մ'ալ ունի, ձեզ վրան կը հեծցունէ :

— Ըշմարիտ է, հարցուց Պիւսի :

— Աստուծոյ գոյութեանը պէս ճշմարտ, ըսաւ մնալաճառը . ես ու ձիս պատրաստ ենք ձեզ ծառայելու, աղնուական Տէր :

— Որդեակ, ըսաւ կրօնաւորը, թող մնալաճառը երթայ իր ձին բերելու, ես ալ ձեզ խոստովանցունեմ :

— Ի՞նչ է ձեր անունը, հարցուց Պիւսի :

տեղ մ'ալ պիտի տեսնենք որ Հայր Կորէնֆիլօ՝ Նիգոլա ճալիթ փաստաբանին մահուան անկողնոյն քովը գտնուելով՝ կը բռնադատէ զայն խոստովանցունելու եւ Ավիլիսօնի բարին դրութիւնները կուզէ ձեռքէն յափշտակել : Փաստաբանը նախամեծար համարելով իր կիանոքը առ քան թէ իր դադանիքը, խոստովանութիւնը սպանութեամբ կը վերջանայ, որուն հողոյն փրկութեանը համար « բարեխորտութեամբ » կադրթէ Հայր Կորէնֆիլօ :

— Եղբայր Կորէնֆիլօ :

— Ծա՛տ աղէկ . Եղբայր Կորէնֆիլօ, կարծեմ թէ դեռ ժամանակը չէ խոստովանութեան, ըսաւ Պիւսի կունքիկին վրայ կոթներով : Առտի, Հայրիկ, այդ ձեր ըսածը վերջին ժամերնու թող մնայ . հիմա սաստիկ կը մեխի՛ . խնդրեմ, զիս ապարանքս տանէիք նախնալու համար :

— Ի՞նչ է ձեր ապարանքին անունը :

— Պիւսիին ապարանքը :

— Ի՞նչ, Պիւսիին ապարանքը՞, աղաղակեցին ամենքն ալ :

— Այո, ի՞նչ կայ վարմանալու :

— Ուրեմն Պիւսիին մարդիկներէն էք դուք :

— Եոյն իսկ ես եմ Պիւսին :

— Պիւսի . . . աղաղակեցին ամենքն ալ . քաջ Պիւսին, սիրելիներուն ժանտախտը . . . Կեցցէ՛ Պիւսի :

Եւ Պիւսին ուսերնուն վրայ առած յաղթանակաւ իր ապարանքը տարին, մինչդեռ անդին կրօնաւորը իրեն բաժին ինկած կարմուկ ոսկիները ձեռքը անցուցածին պէս առաքարեց և զանոնք ուշի ուշով կը հաշուէր ու կը հաշուէր և գլուխը շարժելով քիթին տակէն կը քրթ մնչէր .

— Սա պարծենկոտ Պիւսին է եղեր այս մարդը . վարմանալի չէ ուրեմն որ չուզեց խոստովանիլ :

Պիւսի ապարանքը մտածին պէս իր սովորական բժիշկը կանչել տուաւ որ տեսաւ թէ վէրքը շատ ծանր չէր :

— Այո վէրքը դարմանուած է, հարցուց Պիւսի :

— Չեմ կրնար բնի թէ դարմանուած է, բայց դեռ նոր վիրաւորուածի նման թարփ է :

— Զառանցանք պատճառելու չափ ծա՞նր է, հարցուց Պիւսի :

— Անտարակոյս :

— Բայց և այնպէս այն դորդը որուն վրայ ձեռքերնին նիզակներ և ծաղիկներ բռնած մարդիկ կային, այն ներկուած առատապը, այն քանդակեալ անկողինը որուն վրայ ոսկեճամուկ և ձերմակ դամառներ փռուած էին, այն պատու-

հաններուն մէջ տեղը դրուած կենդանագիրը, թխորակ աչոււններով և խարտեայ մագերով այն սպառնելի կինը :  
 խաղաղութիւնը որուն վրայ քիչ մնաց որ սիրտի յարձակէի, այս ամենքն ալ զսուանցամ'եր են և միայն սիրելիներուն հետը ըստ սրտերս զմն ստոյգ է : Բայց իրաւ . . . ո՛ր տեղ պատահալ մեցայ ես . . . : Հա՛, ճիշդ . Պատթիլլին քովը Աէն-Բօլ փողոցին կողմը : Թիկունքս պատի մը կոթնցուցի և այդ պատը դուռ մ'էր . բարեբաղդաբար բացուած դուռ մը : Մեծ դժուարութեամբ գոցեցի զայն և նեղ ճամբու մը մէջ մտայ : Անկէց մինչև թաղկացման ժամանակս ալ բան մը չեմ յիշեր : Հիմակ այս ամենքը տեսիլք մ'էր . ահա իմանալու բուն խնդիրը այս է : Հասա՛ ճի՛ն, աղէկ միտքս ինկաւ, ի՛նչ եղաւ արդեօք ճի՛ն, անշուշտ հրապարակին վրայ մեռեալ գտած ըլլալու են : Բժիշկ, կաղաչեմ մէկը կանչեցէք :

Բժիշկը սպասաւոր մը կանչեց :

Պիւտի տեղեկացաւ որ կենդանին արիւնաթաթաւ և խնդանդամ, ստքերը քաշքշելով մինչև ապարանքին դուռը հասած էր և առտուն կանուխ անոր կողիսդաղին վրէժներն ըստ ըստ էին : Իսկոյն այս չարաչուկ լուրը ապարանքին մէջ տարածուած էր . Պիւտիին բոլոր մարդիկը որ իրենց տէրը կը սիրէին, առիտ անդին վազած էին որոնելու համար և շատերն ալ դեռ վերադարձած չէին :

— Արեւմտ կենդանագրէն զատ բոլոր բաներն ալ իրական էին, ըսաւ Պիւտի . իսկ կենդանագիրը անշուշտ տեսիլք մ'ըլլալու է . որովհետև ո՛րչափ խելքէ մօրքէ դուրս բան է որ կենդանագիր մը շրջանակէն զատուելով աչքը կապած բժշկի մը քովը դայ և անոր հետ խօսակցի : Ա՛յ . խենթեցած ըլլալու եմ ես :

Բայց և այնպէս երբ որ կը յիշեմ այդ կենդանագիրը . . . ի՛նչ գեղեցիկ էր : Իր . . . :

Պիւտի սկսեց կենդանագրին մանրամասն նկարագրութիւնը ընել և անոր ամէն մէկ յատկութիւնները յիշած ժամանակ սիրովաւ և սրտատուր զրացում մը՛նկուար իր բոցակէզ

կուրծքին մէջ :

— Այս ամենքն ալ տեսիլք էին, գոչեց Պիւտի, մինչդեռ բժիշկը վէրքին վրայ պեղանին կը դնէր : Անկարելի՛ բան, անկարելի . այսպիսի տեսիլք չը կրնար ըլլալ :

— Մնդամ՛ մ'ալ անցնի՛ր համառօտիս :

Պիւտի սկսեց հարիւր անգամ կրկնել .

— Պարահանդէսն էի . Աէն-Ալաք կանխաւ խնայուց թէ Պատթիլլի կողմը ինծի կապանն : Մնդրակէին, Ռէպէլրաքին և Ախլարօն հետ էի : Ծովղեղբքէն քաղելով ճամբայ ելայ կրան-Շաթրքէ, Էն, Էն : Օթէլ տէ Թուրնէլը հասածիս պէս մէկ քանի մարդիկ տեսայ որ ինծի կապատէին : Արաս յարձակեցան և ձիս խնդանդամ ըրին : Սասալութեամբ պնտերազմեցանք իրարու հետ : Նեղ ճամբու մը մէջ մտայ և հոն հասած ժամանակս գէշ վիճակի մը մէջ կը գտնուէի : Այնուհետև . . . ա՛հ, այս անգամ է որ զիս չարաչար կը նեղացունէ, այս անգամ է կը յաջորդեն ջերմ, զսուանցանք և տեսիլք :

Այնուհետև կրկնեց Պիւտի հառաչանքով մը, Թամբլի խրամներուն զառ ի վայրին վրայ գտայ ինքզինքս ուր Պենու վեփեան կրօնաւոր մը զիս խստովանցունել ուղեց :

Պիւտի իր յիշատակները միտքը բերելու համար վայրկեան մը լուռ կենայէն վերջը,

— Փոյթ չէ . խիղճս հանդարտ է, ըսաւ : Բժիշկ, սակեց առաջ ունեցած վէրքիս պէս առանուհինգ որ ալ ասո՛ր համար տունը մնալու է :

— Գործը գիտէ : Տեսներք, կրնա՞ք քաղել, հարցուց վերաբոյժը :

— Քաղելու մասին ամենևին անհոգ եղիք . կարծես թէ ստուրներուս մէջ անդիկ կայ :

Պիւտի այս բնելով անկողնէն դուրս ցատկեց և իր ըսածը փորձով ցուցնելու համար սենեկին մէջ զուարթութեամբ ըսկսաւ պտտուիլ :

— Ի՛նչ, գէշ չէ, ըսաւ բժիշկը . միայն թէ ճի հեծնելու

չէ և մէկ քանի որ ալ շատ ստորտել չըլլար :

— Շատ աղէկ , Պ . բժիշկ . ձեզի պէս բժիշկ մ'ալ այս դե-  
չեր տեսայ . . . : Սյո , այս , տեսայ , աղէկ կը յիշեմ . իր դե-  
մաց դժագրութիւնը լաւ մը տպաւորուած է մտքիս մէջ և  
եթէ որ մը տեսնեմ , կրնամ ճանչնալ զինքը :

— Սիրելի Տէր իմ , ես խորհուրդ չեմ տար ձեզի այդ  
մարդը փնտռելու ետեւէ ըլլալ . դիտէք որ սուրի հարուած-  
ներէն վերջը շերմը կուգայ մարդուս վրայ : Գուք սա բանս  
աղէկ գիտնալու էիք , որովհետեւ ասով ասաներկուերորդ  
անգամն է որ վերաւորուելով այսպէս անկողինը կիյնար :

Պիւսի առանց բժշկին խօսքերուն ուշադրութիւն ընելու ,  
գիշերուան խորհրդաւոր գէպքին վրայ կը մտածէր :

— Ով Տէր Աստուած , գոչեց յանկարծ նոր դաղափար  
մը միտքը դալով . արդեօք դռնէն ներս մտնելս , նեղ ճամ-  
բայէ մը երթալս , սանդուղի մը աստիճաններէն վար գլորիլս ,  
ասո՞նք ալ տեսիլք են կենդանադրին ու օսկեճամուկ և ձեր-  
մակ դամասկէ անկողնայն պէս : Արդեօք այն անդամները  
զիս մեռած կարծելով մինչև Թամբլի խրամները տարած  
ձգած էին իրենց եղբւճնադործութեան հետքն անգամ կոր-  
սընցունելու համար : Եթէ այսպէս է , ուրեմն բոլոր այս տե-  
սիւքը վէրքին ցաւէն յառաջ եկած է : Տէր Աստուած , եթէ  
ստուգիւ վէրքին ցաւէն էր որ այս տեսիլքը երեցաւ , այս տե-  
սիւքը որ բոլոր մտածմունքս դբուած չարաչար կընեղէ զիս ,  
կերդնու՞մ որ անոնցմէ մէկն ալ կենդանի չը պիտի թողում :

— Տէր իմ , ըսաւ բժիշկը , եթէ կուզէք շուտով առող-  
ջանալ , պէտք չէ որ այսպէս վրդովիք :

— Մէջերնուն միայն բարի Ան-Ալքը լնայելու է , յա-  
րեց Պիւսի առանց բժշկին խօսքը մտիկ ընելու : Ան ուրիշ  
տեսակ մարդ մ'է . հետս բարեկամաբար վարուեցաւ : Ես ալ  
դուրս ելածիս պէս ամենէն առաջ անոր այցելութեան պիտի  
երթամ :


— Գոնէ այս գիշեր մինչև ժամը հինգը դուրս ելնելու չէք :

— Շատ աղէկ , ըսաւ Պիւսի . բայց սա ալ ըսեմ ձեզի որ

այսպէս տունը մնալը աւելի կը ծանրացունէ հիւանդութիւնս  
քան թէ դուրս ելնելով մարդու հետ տեսնուիլը :

— Ի՛հ , կարելի է , ըսաւ բժիշկը . ձեր հիւանդութիւնը  
զարմանալի է , ուրիշ հիւանդներու չէք նմանիր : Ձեր սո-  
վորութեանը համեմատ վարուեցէք , Տէր իմ . միայն թէ սա  
կը պատուիրեմ որ մէկ վերքերնիդ դեռ չստողչացած , ուրիշ  
մ'ալ չը բացուի :

Պիւսի կարելի եղածին չափ խահեմութեամբ շարժելու  
խօսք տուաւ բժիշկին և իսկոյն հազուելով դահաւորակը բե-  
րել տուաւ և Մոնսրանսի տպարանքը դնաց :



Ք Ղ Ո Ւ Ն Պ

ՍԷՆ-ԼԻՒՔԻՆ ԿԱՐՍԱՆԵԱՅ ՅԱԼՈՒԳ ԳԻՇԵՐԸ

Լուի ուր Քլէրման որ օւելի Պիւսի մ'Ամբուազ անուամբ  
ճանցուած է , գեղեցիկ և կատարեալ աղնուական մ'էր զոր  
իւր քեւորդին Պրանթոմ ԺՊ . դարուն երևելի գորապետաց  
կարգը դասած է : Երկար ժամանակէ հետէ ոչ որ անկէց  
աւելի փառաւոր յաղթութիւններ կատարած էր : Թագա-  
ւորներն ու իշխանները կը փախարէին իրեն բարեկամութիւնը  
ստանալու : Թագուհիներն ու իշխանուհիները իրենց ամե-  
նաբազըր ժպիտները կուղղէին անոր :

Նախարայի բարեսիրտ թագուհին Մարկիտ որ իւր սի-  
րելի Լա Մոլին մահուանը համար մխիթարութեան կը կարօ-

տէր, գեղեցիկն և քաջ Պիւսի տ'Ամբուսզին վրայ այնչափ սաստիկ սէր մը ձգած էր որ իւր ամուսինը Հէնրի անդամ Պիւսին գէտ գրգռեցաւ. Հէնրին՝ որ այս տեսակ բաները բնաւ հող չէր բներ: Նոյնպէս Յռանսուա դուքսը իր քրոջը ունեցած սաստիկ սէրը երբէք չը պիտի ներէր Պիւսին, եթէ այդ սիրոյն սրտոճառաւ Պիւսին իր կողմը չը շահէր: Գուքսը այս անդամ ալ զոհած էր իր սէրը երկչտու և ծածուկ փառնասիրութեան մը որ իր բոլոր կենացը մէջ օգտակար արդիւնք մը չընենալէ զտտ շատ ցաւոց և թշուառութեանց ալ սրտոճառ եղաւ:

Պիւսի իր փառաց, պատերազմաց և մտերմութեան յաջողութեանցը մէջ բոլորովին ազատ մնացած էր մարդկային տկարութենէ և ինչպէս որ երկիւղ բտուած բանը չէր դիտեր, նոյնպէս և սիրահարութեան զգացումը գեռ անձանօթ էր իւրեն: Թէեւ ինքը ազնուական մ'էր, բայց իր կուրծքին մէջ թագաւորաւայել սիրտ մը կը բարախէր: Այս սիրտը՝ արեգական ճառագայթներուն տակ հոգին մէջ աճած ըլլալով գեռ նոր դուրս հանուած օչ չգործուած արամնոզի մը պէս տակաւին կոյս եւ մարուր էր: Այս սիրտը՝ այնչափ ազնիւ զգացումներով լցուած էր որ կայսերական պատուոյն նախանձելու զգացումը իրեն համար տեղի չէր կրնար գտնել հոն: Ինքը թագակալութենէ աւելի գերազանց արժանաւորութիւն մը ունէր:

Հէնրի Գ. ուղեց զինքը իր սիրելի բարեկամաց կարգը անցունել, բայց Պիւսի մերժեց բանով թէ թագաւորներուն բարեկամները իրենց սպասաւորներ կըլլան և երբեմն սպասաւորներէն ալ ստորին. եւ այսպիսի վիճակ մ'ալ իրեն չէր յարմարէր: Թէեւ վերջը Պիւսին Յրանսուա դուքսը իրեն իշխան բնորելով, Հէնրի Գ. ին բրած այս նախատիւնքը շատ ծանրացուց, բայց Հէնրի ձայն մը չը կրցաւ հանել իրեն գէտ: Այսու առ մենայնիւ Յրանսուա դքսին իր վրայ ունեցած իշխանութիւնը անասնաբոյժի մը իշխանութեանը կը նմանէր, որ իր աւելուքը կը սնուցանէ եւ ամեն դարման կը տանի անոր որպէս զի զինքը

չը գիշտէ: Այսպէս էր Պիւսին ալ զոր Յրանսուա իր անձնական վէճերը պաշտպանելու համար յառաջ կը վարէր:

Ռոհաններուն առածին պէս խօսք մը չինած էր որ շատ անգամ կըսէր ինքնիրեն:

Ռոհանները կըսէին.

Թագաւոր չեմ կրնար ըլլալ,  
Իսկ իշխան չեմ ուղեր ըլլալ.  
Ես ալ այսպէս Ռոհան կը մնամ:

Պիւսի ալ կըսէր ինքնիրեն.

Գաղղիոյ թագաւոր չեմ կըրնար ըլլալ,  
Տ'Անժու դուքսը կըրնայ եւ կուղէ ըլլալ.  
Ես ալ տ'Անժու դքսին թագաւորն կըլլամ:

Եւ իրօք ալ այսպէս էր:

Երբ որ Աէն-Լիւքին սպառաւորները այս ահաւոր մարդուն գալը տեսան, շտապու գացին Պ. տը Պրիսպրին լուր տալու:

— Պ. տը Աէն-Լիւք տո՛ւնն է, հարցուց Պիւսի դահաւորակին դռնէն դուրս հանելով զուխը:

— Ոչ, Պարոն, պատասխանեց դռնապանը:

— Աւր կը գտնուի:

— Չեմ գիտեր. երէկ դիշերուքնէ հետէ գեռ չեկաւ. առ մենքն ալ անհանգստութեան եւ տարտիւղոյ մէջ են:

— Իրա՞ւ կըսէք. . . : Բայց Տիկին Աէն-Լիւքը, ան հո՞ս է:

— Այո:

— Իմացուցէք ուրեմն Տիկին Աէն-Լիւքին որ շատ ուրախ պիտի ըլլամ, եթէ իրեն ներկայանալու պատիւը չնորհէ ինձի:

Հինգ վայրկեան վերջը պատասխան բերին թէ Տիկին Աէն-Լիւք մեծաւ հաճութեամբ կընդունի Պ. տը Պիւսին այցելութիւնը:

Պիւսի իր դահաւորակէն վար իջնելով, ուր թուշապատ բարձերուն կաթնած բազմած էր, տունէն ներս մտաւ եւ մեծ անդուզէն վեր ելաւ: Ժամ տը Բոտէ՛ Պիւսին պատուելու համար մինչեւ սրահին միջաւայրը եկած էր: Երեսին դոյնը նետած էր եւ ազուաւի փետուրներու նման սեւաթոյր մագերը

տժգոյն գիմայը վրայ գեղին փոփոխելի գոյն մը կուտային . ախանողիքը դառնակակիծ արնութեամբ կարմրացած էին եւ իր դաշկահար այտին վրայ գեռ նոր թափուած արտասուաց արծաթագոյն աղօս մը կը նշմարուէր : Պիւսի Տիկին Աէն-Ախրին գիմայ գունատութիւնը տեսնելով, առջի բերան սկսաւ ժպտիլ , և անոր ակնկար ու տխուր հայեցումքին յարմար բարեմադթութիւն մը պիտի ընէր . բայց տեսնելով որ այդ վշտակութեան նշանները կեղծիք չէին , չուզեց առաջ ինքը խօսիլ :

— Բարի եկաք , Պ . ար Պիւսի , թէ եւ ձեր ներկայութիւնը կտակած կը պատճառէ ինձի , ըսաւ գեռահասակ կինը :

— Իմ ներկայութիւնս կտակած կը պատճառէ ձեզի , ի՞նչ ըսել կուզէք , Տիկին , հարցուց Պիւսի :

— Այս դիչեր ձեր եւ Պ . ար Աէն-Ախրին մէջ կախ մը պատահեցաւ , այնպէս , չէ՞ , շիտակը խտատովանեցէր :

— Ի՞մ եւ Պ . Աէն-Ախրին մէջ , ըսաւ Պիւսի զարմացած դէմքով :

— Այո , այո . զիս հօրս քովը դրկեց ձեզի հետ առանձնակի երկու խօսք ընելու համար . դուք Երանու գրքին մարդիկներէն էք , ան ալ թագաւորին . մէջէրնիդ վէճ մը ծագած ըլլալու է . կազաչեմ , մի պահէք ինձմէ , Պ . ար Պիւսի : Ար հասկընաք անշուշտ թէ որչափ անհանդատութեան մէջ եմ : Իրաւ է որ թագաւորին հետ մէկտեղ զնայ , բայց վերջը կըրնաք մէկզմէկ գտնել : Կաղաչեմ , առանց վարանելու պատասխանեցէք . խտատովանեցէք ճշմարտութիւնը . ի՞նչ լիորձանք եկաւ Պ . ար Աէն-Ախրին գլխուն :

— Արդարեւ շատ զարմանալի բան , Տիկին : Ես կը խորհէի թէ իմ վերքիս նկատմամբ տեղեկութիւն պիտի ինդրէք ինձմէ եւ դուք ինձի Պ . ար Աէն-Ախրին վրայօք հարցումներ կընէք :

— Պ . ար Աէն-Ախր ձեզ վիրաւորեց . պատերազմեցա՞ք ուրեմն , դուք ժան : Մհ , կը տեսնէք որ . . .

— Բայց ոչ , Տիկին ոչ , մեր սիրելի Աէն-Ախրը ինձի հետ

ամենեւին վէճ մը չունեցաւ եւ ոչ ալ , կարծեմ , ուրիշներուն հետ . այս ունեցած վէքըս իրեն հարուածը չէ : Ընդհակառակն ինքը իւրովսանն աշխատեցաւ այս բանիս առաջը առնելու եւ կանխաւ իմացուց ինձի : Գոհութիւն Աստուծոյ , հիմա իրարու հետ աղէկ ենք , Պամնն եւ Բիւթիասին ողես կը վարուինք , ինչպէս որ անշուշտ ինքը ձեզի պատմած է :

— Բայց ի՞նչպէս ինքը ինձի պիտի պատմէ , մինչդեռ երէկ դիչերունէ հետէ զինքը տեսած չեմ :

— Երէկ դիչերունէ հետէ զինքը տեսած չէք . . . ուրեմն ձեր գոնապահին ըսածը շիտակ էր :

— Ի՞նչ ըսաւ :

— Ըսաւ թէ երէկ դիչերուան ժամը տանու մէկէն հետէ տունը չէր : Ես ա զարմանալի բան . երէկ դիչերունէ հետէ ձեր ամուսինը տեսած չէք :

— Ա՛հ , ոչ :

— Բայց ո՞ւր կընայ ըլլալ :

— Ե՛՛ր ոձեզի պիտի հարցունեմ :

— Բայց ինդրեմ , պատմեցէք ինձի այդ գործը , ի՞նչպէս եղաւ . այդ շատ զուարճալի բան մը կը նմանի , ըսաւ կտակած ոտ դէմքով մը :

Թշուառ կինը ամենամեծ զարմացմամբ Պիւսիին երեսը նայեցաւ :

— Այսինքն շատ ցաւալի ըսել կուզէի , յարեց Պիւսի : Այնչափ շատ արևն կորնցուցի որ ես ալ չեմ գիտեր ըսածս : Կ՛հ , պատմեցէք , Տիկին , պատմեցէք այդ ողբալի գործը :

Ժան իր դիտցածը սկսաւ պատմել . այսինքն թագաւորին Աէն-Ախրի տուած հրամանը իրեն հետ ընկերանալու համար , Լուվրի գոնեբուն դոցուիլը , պահապաններուն պատասխանը եւ մինչեւ ցարդ Աէն-Ախրին երեսուն չեղնելը :

— Հը՛ , շատ աղէկ , հիմայ հասկցայ , ըսաւ Պիւսի :

— Ի՞նչպէս , հասկցա՞ք ինչ ըլլալը , հարցուց Ժան :

— Այո : Երբն Վեհափառութիւնը Աէն-Ախրը Լուվրն տարած է եւ անդամ մը ներս մտածին պէս , ալ չէ կարողա-

ցած դուրս ելնել :

— Ի՞նչ պատճառաւ :

— Բայց . . . բայց դուք կուզէք որ Տէրութեան դաշտնիքը յարմարեմ ձեզ, ըստ Պիւսի շիտթած դէմքով :

— Սակայն ես Լուվրըն ալ դաջի . հայրս ալ դնաց հոն : Պահապանները մեզի պատասխանեցին թէ չեն հասկնար ինչ ըսել կուզենք եւ թէ Պ . տը Մէն-Լիւք շատոնց իր բնակարանը դայած ըլլալու է :

— Այդ բանն ալ կը հատոտուէ թէ Պ . տը Մէն-Լիւք Լուվրըն ըլլալու է, ըստ Պիւսի :

— Աղէկ դիտէ՞ք :

— Ատարեկապէս աստիճանով եմ ըսածիս վրայ, եւ եթէ դուք ալ կուզէք ձեր կողմէն աստիճանով ըլլալ . . . :

— Ի՞նչպէս :

— Անձամբ իսկ :

— Արեւի՞ է :

— Շատ կարելի :

— Բայց զուր տեղը պարտադ պիտի երթամ ներկայանամ . դարձեալ առաջուց ըսած խօսքերնին կրկնելով ճանաբայ պիտի դնեն : Վասն զի եթէ ինքը հոն ըլլայ, ով կրնայ արգիլել մեզ տեսնելու :

— Կուզէ՞ք Լուվրըն երթալ :

— Ի՞նչ ընելու համար :

— Մէն-Լիւքը տեսնելու համար :

— Բայց վերջապէս թէ որ հոն չէ :

— Ո՛հ . . . ես ձեզի կըրտեմ թէ հոն է :

— Չարմանալի բան : Սակայն դուք կրնա՞ք Լուվրէն ներս մտնել :

— Անշուշտ : Ես Մէն-Լիւքին տիկինը չեմ :

— Բայց դուք զիս բոլորովին կը շիտթէք : Ի՞նչ ըսել կուզէք . Մէն-Լիւքին տիկինը չը կրնար հոն մտնել եւ դուք կուզէք հետեւնի՞ր տանիլ :

— Ոչ երբէք, Տիկին . Մէն-Լիւքին տիկինը չէ որ հետս

պիտի տանիմ , այլ կին մը . . . :

— Ուրեմն զիս կը ծաղրէք . . . այս տխրութեանս մէջ ձեր ծաղրաբանութիւններն ալ շատ վայելուչ են , այնպէս չէ՞ :

— Բայց ո՛չ, սիրելի Տիկին , ո՛չ մտիկ ըրէք . դուք քսան տարեկան էք , թխորակ աչուքներով , բարձրահասակ , փոքր ինչ կորարամակ եւ ճիշտ իմ փոքրագոյն մանկաւիկիս կը նմանիք . . . ճանչցա՞ք . . . սա գեղեցիկ տղան որուն շատ աղուոր վայլեր էր երէկ իրիկուան հագած ասուիէ սոկեզօժ գրեատը :

— Է՛յ , ի՛նչ յիմար խօսքեր կընէք , Պ . տը Պիւսի , գոչեց ժան շառագունելով :

— Մտիկ ըրէք : Աս ձեզի ըսած կերպէս վատ ուրիշ ճար չըկայ : Կուզէք ընդունեցէք , կուզէք մի ընդունիք : Մտադիւ Մէն-Լիւքը տեսնելու կը փախարկէք :

— Ո՛հ , բոլոր ունեցածս կուտամ այդ բանին համար :  
— Լաւ . ես կը խոտանամ ձեզի որ առանց բան մ'ալ տալու կրնաք տեսնել :

— Այո . . . բայց . . . :

— Վայ . . . ձեզի ըսի թէ ինչ կերպով :

— Կամբք ձերն է , Պ . Պիւսի : Միայն թէ կանխաւ իմուցուցէք այդ երկուտարդ տղուն թէ իր զգեստներէն մէկը պիտի առնեմ եւ փոխարէն իմ կանացի զգեստներէս մէկը պիտի զրկեմ :

— Հարկ չէ : Մանկաւիկներուս համար նոր զգեստներ չիտնել տուի որ մայր թագուհւոյն առաջին պարահանդէսին պիտի հագնին : Անոնցմէ որը ձեր հասակին յարմար տեսնեմ , կը զրկեմ ձեզի . եւ այս իրիկուն Բրուլէր փողոցին քովը Մէնթ-Յօրէ փողոցը զիրար գտնելով , անկէց ալ . . . անկէց ալ միատեղ Լուվրըն կերթանք :

ժան ձեռքը Պիւսիին երկնցուց եւ սկսաւ խնդալ :

— Ներեցէք , ըստ , տարակուսելուս :

— Մեծաւ յօժարութեամբ : Ես չնորհապարտ պիտի ըլլամ ձեզի , վասն զի ձեր միջոցաւ այնպիսի դորձ մը պիտի կատարեմ որ բոլոր Եւրոպան պիտի խնդացունէ :

Գործը այսպէս կարգադրելով Պիւսի մնայր բարով ըսաւ մանկամտորդ տիկնոջ և իր տունը դնաց հարկ եղած պատրաստութիւնները տեսնելու համար :

Երեկոյնն որոշեալ ժամուն ատենները, Պիւսի և Տիկին Ան-Լիւր իրարու պատահեցան Պարիէր աէ Աքոժան ըսուած տեղը : Պիւսի՝ մանկլուսիկին զգեստներէն ճանչցաւ Տիկին Ան-Լիւրը որ իր ծպտեալ կերպարանքովը պաշտելի արարած մը դարձած էր : Քանի մը խօսք ընելէ վերջը՝ երկուքն ալ ճանբանին շտկեցին դէպ ի Լուվրը :

Յօսէ-Ան-Փէրմէն-Մ. քսեղուա փողոցին ծայրը մեծ բազմ մութիւն մը տեսան որ բոլոր փողոցը բռնած էր և իրենց անցնելու ճանբայ չէր ձգած :

Ժան այս բազմութիւնը տեսնելով վախ մ'եկաւ վրան : Պիւսի զինուորներուն հրացաններէն և բռնած ջահերնէն ճանչցաւ թէ ասոնք տ'Անժու դքսին սպասաւորներն էին և տեսաւ որ դուքսը իր գորշախայտ ձիուն վրայ հեծած և ըստ պիտակ թաշեայ վերաբրկուն ալ վրան առած էր :

Գեղանի մանկլաւիկս, ըսաւ Պիւսի ժանին դառնալով, դուք շուարած էիք թէ ինչպէս Լուվրէն ներս մտնելու է, այնպէս չէ՞. ալ անհող եղիք, հիմա յաղթանակաւ ներս պիտի մտնէք :

Գուքս տ'Անժու, Տէր իմ, աղաղակեց Պիւսի այնպիսի դորաւոր ձայնով մը որ այնչափ բազմութեան խառնաշփոթ ձայներուն մէջէն մինչև իշխանին տկանը հասաւ :

Տ'Անժու դուքսը ետին դառնալով,

— Հո՞ն ես դուն, Պիւսի, աղաղակեց զուարթութեամբ և ընցի թէ իմա՞ զ իրաւորուած ես և Արքնէլ փողոցը Գորնտիւ-Աէրֆի բնակարանդ կուգայի :

— Տէր իմ, եթէ մեռած չեմ, յանցանքը իմն է, ուրիշը չէ, ըսաւ Պիւսի առանց շնորհակալ ըլլալու իշխանին ցուցուցած հոգատարութեանը : Արդարև ալէկ դարանակալութեանց մէջ կը թողուք զիս որ իյնամ :

Երէկ Ան-Լիւրին պարահանդէսը բողբոջին վտանգաւոր

տեղ մ'եղած էր և ձերիններէն մէկն ալ ներկայ չէր հոն ինձ մէ զատ . քիչ մնաց որ բոլոր արիւնս պիտի քամէին :

— Անհող եղիք, Պիւսի . ձեր արիւնը շատ սուղ պիտի հատուցանեն և անոր ամեն մէկ կաթիլը հաշուել պիտի տամ իրենց :

— Այո, դիտեմ . այսպէս կըսէք ու վերջն ալ դէմերնիդ երնողին երեսն ի վեր կը խնդար, ըսաւ Պիւսի իր սովորական համարձակախօսութեամբը : Գոնէ խնդացած ժամանակնիդ ակուննի՞դ ցուցունէք, ան ալ չը կայ . այլ բոլոր ուժով չրթունքնիդ կը գոցէք :

— Մի երկարեր . Լուվրն եկուր ի միասին և կը տեսնես :

— Ի՞նչ պիտի տեսնեմ :

— Կը տեսնես թէ ինչպէս պիտի խօսիմ եղբորս հետ :

— Տէր իմ, եթէ յանդիմանութեամբ պիտի մերժուիմ Լուվրէն, ես չեմ գար : Այո, ձեւերը իշխաններուն և սիրելիներուն աւելի յարմար կուգան :

— Անհող եղիք, այս գործը ես կարողին պիտի դնեմ . շատ ծանր եկաւ ինձի :

— Խօսք կուտա՞ք որ աղէկ հատուցում մը պիտի ըլլայ :

— Կը խոտանամ որ գոհ պիտի ըլլաս : Ձե՞ս հաւատար :

— Տէր իմ, ձեզ այնչափ լաւ կը ճանչեմ . . . :

— Եկուր կըսեմ, քեզի համար պիտի խօսիմք :

— Ձայն մի հանէք . գործերնիդ կարողին է, մրմնջեց Պիւսի կոմսուհուն ալանջն ի վար : Այո երկու եղբայրները որ ժամտախտի պէս կը սիրեն զիրար, սոսկալի վէճ մը պիտի ընեն հիմա և դուք ալ նոյն միջոցին կրնաք Ան-Լիւրը տեսնել :

— Ի՞նչ կըսէք, հարցուց դուքսը կուզէ՞ք ի միասին Լուվրը գալ . կուզէ՞ք որ իշխանական պատուոյս վրայ խօսք տամ ձեզի :

— Ոչ, Տէր իմ, ըսաւ Պիւսի . ինչպէս ալ ըլլայ, ձեզի պիտի հետեւիմ . և եթէ մէկը յանդիմանութիւն կամ թշնամանք մ'ընէ ինձի, դեռեմ թէ ինչպէս վրէժխնդիդ պիտի ըլլամ :

Այս ըսելով դնաց իշխանին քովը իր աստիճանին վայե-

լուչ տեղը անցնելու համար և իրեն անմիջապէս ետևէն ալ նոր մանկլաւիկը կը քաշէր :

— Վրէժխնդիր ըլլա՛ւ, ըսաւ իշխանը Պիւսիին . ոչ, ոչ, այդ հոգը ես իմ վրաս առի : Քու հակառակորդներդ ալ կը ճանչնամ ես, ըսաւ ցած ձայնով մը Պիւսիին :

— Իրա՞ւ կըտէք : Ձեր Բարձրութիւնը այդ աստիճան հո՞գ տարած է այս դործին նկատմամբ տեղեկանալու համար :

— Անձամբ իսկ տեսայ զանոնք :

— Ի՞նչպէս, հարցուց Պիւսի զարմացմամբ :

— Գործ մ' ալ իմ գլուխս պատահեցաւ հոն, Անթի-Մն. Թուանի դուռը : Դէմն ելան և քիչ մնաց որ քու տեղը զիս պիտի մեռցունէին : Ա՛հ, թշուառականներ, մտքէս անցաւ թէ քեզի համար կսպասեն . ապա թէ ոչ . . . :

— Ապա թէ ոչ . . . ի՞նչ :

— Սյոնոր մանկլաւիկդ ալ հե՞տդ էր, հարցուց իշխանը եր սպառնական խօսքը անկատար թողլով :

— Այ, Տէր իմ, առանձին էի : Իսկ դու՞ք :

— Ես ալ Օրիլիին հետ : Բայց ինչո՞ւ համար առանձին էիք :

— Որովհետեւ «քաջ Պիւսի» անունը որ ինձի կուսանն, չեմ ուզեր աղարտել :

— Վերադրեցին զքեզ :

— Ձեռ՛ ուղեր իրենց ուրախութիւն պատճառել, բայց պէտք է խոստովանիլ որ կուշտիս վրայ սրոյ աստիկ հարուած մ' ընդունեցի :

— Ահ, անզգամներ . Օրիլիի բռնածին պէս ստուգիւ ասոնք դէշ դիտաւորութիւն մ' տնին եղեր :

— Ուրեմն իրենց թակարթ լարելին տեսաք Օրիլիին հետ որ քնարահարութեանը պէս քաջ զինաշարժութիւն ալ գիտէ, եւ Ձեր Բարձրութեանն ալ իմացուցեր է գէշ դիտաւորութիւն մ' ունենայնին, ու դուք հինգերնուն գէմ երկու հոգի էիք եւ հոն չտարանցիք լրցեթեքաւ եւ օգնութեան հասնելու համար :

— Սակայն ի՞նչ ընեմ, չէի գիտեր թէ որուն գէմ թակարթ կը լարեն :

— Բայց Հենրի Ք . ին բարեկամները որո՞ւ գէմ թակարդ պիտի լարեն, անշուշտ ձեր բարեկամացը գէմ : Եւ որովհետեւ ինձմէ գառ մէկը չը կայ որ ձեր բարեկամն ըլլալու քաջութիւնն ունենայ, կրնայիք դիւրաւ գուշակել թէ ինձի գէմիլը լարուէր այդ թակարթը :

— Այո, սիրելի Պիւսիս, թերեւս իրատունը ունենամ . բայց այս ամենքն ալ միտքս չեկան :

— Վե՛րջապէս, ըսաւ Պիւսի հառաչանօք, իբրեւ թէ իշխանին նկատմամբ մտքէն անցուցածը բացատրելու համար ալ ուրիշ բառ չը կար :

Լու՛րբի դուռը հասան : Գունապանները և իրենց հրամանատարը տ' Անժու դուրսը գլխմառերով փոքրիկ դանակէն ներս ընդունեցին : Այն ժամանակները աստիկ պատուէր տրուած էր պահապաններուն, պալատին դուռը զգուշութեամբ հսկելու համար . բայց այդ զգուշութիւնը անշուշտ տ' Անժու դուրսին համար կարեւոր չէր որ գրէթէ թաղաւորին երկրորդը կը համարուէր Վաստի իշխանը շարժական կամարին ներքեւէն ներս մտաւ իր բոլոր մարդիկներովը :

Պիւսի տեսնելով որ պատուոց սրահը հասած էն,

— Տէր իմ, ըսաւ իշխանին, դացեք և պէտք եղած յանդիմանական խօսքերը ըրէք թողաւորին . կը յիշէք անշուշտ թէ ձեր իշխանական պատուոյն վրայ խոստացաք . ես ալ երթամ մէկուն հետ երկու խօսք պիտի ընեմ :

— Ար բաժնուիս ինձմէ, հարցուց իշխանը անհանգստութեամբ որ իւր ազնուականին ներկայութեան քիչ մը սիրտաւած էր :

— Մտիպուած եմ . բայց փոյթ չէ, անհոգ եղիք, վէճին տատկացած ժամանակը կը հասնիմ ես : Որչափ որ ձայն ունիք աղաղակեցէք որ ես ալ լսեմ, ապա թէ ոչ չեմ գար :

Այո ըսեցին վերջը դուրսը մեծ սրահէն ներս մտաւ և Պիւսի ժամին հետ ի միասին Լու՛րբին ընտանաբանները դնաց պտտելու : Պիւսի արքայական պալատին բոլոր տեղումները իր տաարանքին պէս լաւ գիտէր : Գաղտնի ամեղուզէ մը վեր եւ




լաւ, երկու երեք նեղ և անմարդի տեղերէ անցաւ ու սալաւ սենեակի պէս տեղ մը հասաւ :

— Սպասէ հոս, ըսաւ Փանին :

— Տէր Աստուած. այսպէս առանձին կը թողուս զիս :

— Գործը այսպէս կը պահանջէ : Երթամ, ներս մտնելու կարգադրութիւնները ընեմ :



Գ Լ Ո Ւ Խ Ե

ՍԷՆ-ԼԻԲԵՐԵ ՀԱՐՍԱՆԵԱՑ ԵՐՈՄ Գ ԳԻՇԵՐ

Պիւսի ուղղակի Հէնրի Գ. ին ննջելու սենեակը գնաց : Այս սենեակը Եարլը Թ. թագաւորին շատ հաճելի եղած էր և իր զէնքերը կը պահէր հոն :

Հէնրի Գ. իրեն յաջորդելէն վերջը՝ պալատին բոլոր տեղ ուանքը նոր կարգադրութիւններ ըլլալով, այս սենեակն ալ Հէնրիի փափաքանացը համեմատ զարդարուած և անոր հան դատարանն եղած էր : Եարլը Թ. որսասէր, մեքենադէտ և բանաստեղծ թագաւոր մ'ըլլալով, այս սենեակին մէջ որսորդական եղջերախողներ, հրացաններ, փոքրիկ մամուլներ, գիրքեր եւ ձեռագիրներ գրած էր : Հէնրի Գ. ալ թաւշ և սնդուսէ երկու անկողիններ ունէր հոն, անհամետ պատկերներ, մերկանդամ մարդոց կենդանադիրներ, սրբոց մատուցաներ, Բարէն օրհնուած կրօնական զգեստներ, արեւելեան անուշահոտ մուշկեր և զինաշարժութեան համար ընտիր ու գեղեցիկ սուրեր :

Պիւսի քաջ դիտէր որ Հէնրի Գ. նոյն միջոցին այդ սենե-

եակը չէր, ըստ որում իր եղբայրը տ'Անժու գուքսը մեծ սրբահը իրեն հետ տեսակցիլ խնդրած էր : Գիտէր նաեւ թէ թագաւորին սենեակին կից Եարլը Թ. ի դայեակին բնակարանն էր, ուր հիմայ Հէնրի Գ. ի սիրելի խորհրդականն ու բարեկամը կը բնակէր : Հէնրի Գ. իր բարեկամական յարաբերութեանցը մէջ շատ փոփոխամիտ մէկը ըլլալով, այս տեղն ալ յաջորդաբար բնակած էին Մէն-Մէկրէն, Վօփրոն, տ'Օ, տ'Էրէրնոն, Քէլիւս և Սքոնպէրի : Պիւսի խորհեցաւ թէ Մէն-Վիւք ալ հիմա հոն կը բնակի, որուն վրայ թագաւորը այնչափ սատարի սէր ունէր որ իր մանկամարդ կնոջէն հեռացունելով Լուվրի պալատը տարած էր :

Հէնրի Գ. զանազան յատկութեանց տէր և զարմանալի մարդ մ էր. նրբամիտ և միանգամայն նանրասրտհուրդ, վեհերոտ և միանգամայն քաջամիտ. միշտ անհանդարտ, բանդադուչուչ և տաղտուկ բնասորութիւն մ'ունենալով, միշտ զբօնուղ կախորժէր. լոյս, ազազակ, խաղեր, կրթութիւններ, խեղկատակութիւններ, պարահանդէսներ, խառնազանձ գործեր, զիշեր, ցերեկ, շատախօսութիւն, աղօթք և զեղխութիւնը պէտք էին իր փոփոխական միտքը զբօսցունելու համար : Հէնրի Գ. եթէ այս դարուս մէջ ծնած ըլլար, իր բնասորութիւններովը զրեթէ եզակի մարդ մը կըլլար : Այս համբաւար կնամարդը՝ արեւելքի մէջ ծնելու արժանի մէկն էր, համընթաց, գերինթու, ներքինիներու, մանկլաւիկներու և էփիլիսոփաներու և իմաստակներու մէջ. ուր իր թագաւորութիւնը կանայի զեղխութեանց և անլուր յիմարութեանց նշանասոր թուական մը պիտի ձգէր Նէրոնին ու Հէլիոկայպին նման :

Պիւսի խորհելով թէ Մէն-Վիւք Եարլը Թ. ի դայեակին բնակարանը կը գտնուի, դնաց նախասենեակին դուռը զարկաւ : Պահապանաց հրամանատարը եկաւ դուռը բանալու :

— Օ՛, հրամանքնի՞ գ էք, Պ. տը Պիւսի, դոչեց զարմացմամբ :

— Այո, սիրելիդ իմ Պ. տը Նանտէյ, թագաւորը Մէն-

Ալուքին հետ տեսակցել կուզէ :

— Շատ աղէկ . թող երթան իմացունեն Պ . Մէն-Ալուքին :

Պիւսի կիսաբայ դռնէն ակնարկ մ'արձակեց իր մանկլաւիկին :

Յետոյ Պ . ալ Նանտէյի դառնալով :

— Բայց ի՞նչ կընէ հոգ այդ թշուառ Մէն-Ալուքը , հարցուց Պիւսի :

— Շիքօին հետ կը խաղայ և կսպասէ որ թաղաւորը ա'Սն ժու դըքին հետ խօսակցութիւնը լինիցունելով հոս վերադառնայ :

— Հրաման ունի՞ք որ մանկլաւիկս հոս սպասէ ինձի :

— Մեծաւ յօժարութեամբ :

— Ներս մտէք , ժամն , ըսաւ Պիւսի մանկամարդը կնոջը և հրամայեց որ պատահանի մը առաջը երթայ նստի :

Հապիւ թէ մանկլաւիկը հոն տեղ կձկտեցաւ , Մէն-Ալուք ալ ներս մտաւ :

Պ . ալ Նանտէյ քաղաքախրութեան համար քովերնէն հեռանալով , մէկ կողմ մը քաշուեցաւ , այնպէս որ իրենց ձայնը չէր կրնար լսել :

— Ի՞նչ պիտի ընէ զիս թաղաւորը , հարցուց Մէն-Ալուք խապոտ ձայնով եւ խրժու գէքով մը . . . : Քհ , դո՛ւք էք , Պ . ալ Պիւսի :

— Այո , ես , սիրելի Մէն-Ալուք . նախ և առաջ . . . :

Հոս ձայնը իջեցուց :

— Նախ եւ առաջ շնորհակալ կըլլամ ինձի ըրած երախտեացի համար :

— Իմ պարտականութիւնս կատարեցի : Ես չէի կրնար անտարբեր մնալ ձեզի պէս քաջ ազնուականի մը սպանութեանը նկատմամբ : Բայց ես կը կարծէի թէ մեռած էք :

— Վիշ մնաց , բայց այս պարագայիս մէջ քիչն ալ շատ սուղի նստաւ :

— Ի՞նչպէս :

— Սրոյ գեղեցիկ հարուած մ'ընդունելով միայն , ազատե-

ցայ . թէ և անոր փոխարէնն ալ շահովը մէկտեղ վճարեցի , կարծեմ , Սքանդելիկին և տ'էրէրնսին : Իսկ Քէյիւս թող շնորհակալ ըլլայ իր գլխուն ոսկերաց կարծրութեանը :

— Խնդրեմ , պատմեցէք ինձի ձեր գլխուն պատահածը որ քիչ մը սրտիս նեղութիւնը փարատի , ըսաւ Մէն-Ալուք այն ատիճան յօրանջելով որ ծնօտները տեղերնուն պիտի ելնէին :

— Ժամանակ չունիմ հիմա , սիրելիդ իմ Մէն-Ալուք : Ուրիշ գործի մը համար եկած եմ հոս : Կերեւայ թէ շատ կը ձանձրանար այնպէս չէ՞ :

— Ընչդ ըսածնուդ պէս :

— Լաւ , ես ալ ձեզ զբօսցունելու համար եկայ : Երախտիքի մը փոխարէն երախտիք հատուցանելու է :

— Ձեր երախտիքը իմ բրածէն աւելի մեծ է : Չանձրոյթի ալ սրոյ հարուածի մը պէս կսպաննէ մարդը . անոր պատճառած մահը թէ և վաղահաս չէ , բայց աւելի անկասկած :

— Թշուա՛ւ կամս . ուրեմն բանտարկուած էք հոս , ինչպէս որ կը կասկածէի :

— Բանտարկութենէ աւելի դէշ : Թագաւորը ինձմէ զտտ մէկը չուզէր զբօսնելու համար : Արդարեւ բարեօրիտ մէկն է , վասն զի երեկուրնէ հետէ իր կապիկէն աւելի ձեւեր ըրի իր աւջին և խեղկատակէն աւելի ծանր խօսքեր ըսի իրեն :

— Լաւ , ի՞նչ ծառայութիւն կրնամ մատուցանել ձեզ :

— Տը Պրիսաք մարտխախտին և կամ իմ սպարանքս կերթար թշուառ կինս ապահովցունելու համար որ անտարակոյս մեծ անհանգստութեան մէջ կը գտնուի :

— Ի՞նչ բան մը իրեն :

— Ինչ որ տեսար . այսինքն՝ բանտարկուած ըլլալս , պահապաններուն սատրիկ պատուէր տրուած ըլլալը և թէ երեկուրնէ հետէ թագաւորը Արիկերոնի պէս բարեկամութեան վրայ կը ճառէ ինձի եւ Սոկրատին պէս առաքինութեան վրայ :

— Ի՞նչ կը պատասխանէք թագաւորին այդ խօսքերուն հարցուց Պիւսի ժպտելով :

— Բարեկամութեան մասին կը պատասխանեմ թէ սպե-

բախտ մէկն եմ ես, բարեկամաց երախտիքը չեմ՝ ճանչեր. և առաքինութեան մասին ալ՝ թէ ամբարշտ, անօրէն մէկն եմ և առաքինութիւն ըսուած բանին արժէք չեմ տար. բայց և այնպէս իր քարոզներուն վրայ կը յամառի ու հառաչանօք կը կրկնէ. Ա՛հ, Ա՛հն-Ա՛իւք, ուրեմն բարեկամութիւնը ցնո՛ւրք մ'է միայն. ա՛հ, Ա՛հն-Ա՛իւք, ուրեմն առաքինութեան անո՛ւնը կայ միայն: Եւ այս խօսքը գաղղիերէն ըսելէն վերջը, քանի մ'ան դամ ալ լատիներէն եւ յունարէն կը կրկնէ:

Այս վայելուչ պատասխանին վրայ, մանկլաւիկը որուն Ա՛հն-Ա՛իւք դեռ ուշադրութիւն ըրած չէր, բարձրաձայն սկսաւ խնդալ:

— Ի՞նչ ընէ խեղճը, բարեկամ. կը յուսայ որ այսպիսի կըրկնութիւններով սիրտդ կընայ շարժել. առած մը կայ լատիներէն թէ « երկու անգամ կրկնելիքդ երբորդ անգամ մ'ալ կրկնէ » (պիս ուէրէթիթա ըլատէնթ թէն): Բայց ա՛յստի միայն ծառայութիւն կընամ մատուցանել ձեզ:

— Այո, ես այսչափին ալ տարակոյս ունիմ:

— Ուրեմն արդէն իսկ կատարուած է այդ:

— Ի՞նչպէս:

— Ես կանխաւ գուշակեցի ձեր գլխուն պատահածը եւ ձեր տիկնոջը պատմեցի:

— Ի՞նչ պատասխանեց:

— Նախ չուզեց հաւատալ. բայց կը յուսամ որ վերջապէս ճշմարտութեան վերահասու պիտի ըլլայ, ըսաւ պատուհանին կողմը նայելով: Ուրիշ ծառայութիւն մը չե՞մ կընար մատուցանել ձեզ որ աւելի դժուարին ըլլայ. մեծաւ հաճութեամբ կը կատարեմ:

— Ուրեմն, սիրելի Պիւսիս, ազնուական Ս. սոլօք զօրապետին կերթաս և իր թռչուն երիւարը քանի մը ժամուան համար առնելով, սենեկիս պատուհաններէն մէկուն առաջ կը բերես: Երկուքնիս ալ ի միասին ձիուն դաւակը կը նստինք և զիս ամուսնոյս քովը կառաչնորդ ես: Այնուհետեւ ազատ ես ուղած տեղդ գնա: »

— Պրեթիս, ալ աւելի դիւրին կերպը կայ, թռչուն երիւարը ձեր կնոջը կը տանիմ և ինքը վրան կը հեծնէ, հասկուգայ:

— Հո՞ս, Լո՞ւվըն:

— Այո. այդ կերպը աւելի զուարճալի չըլլա՞ր:

— Անտարակոյս:

— Ալ չէք ձանձրանար, այնպէս չէ՞:

— Անշուշտ: Իսկ հիմա ինչ աստիճան ձանձրացած ըլլալը Շիքօին գացէք հարցուցէք: Առաւօտէն ի վեր կը գարջիմերմէն եւ երեք անգամ սուսերամարտութիւն առաջարկեցի: Անգամը դժկամակեցաւ ընդունելու, ըսելով թէ այդ առաջարկութիւնը խիտ ծիծաղաշարժ է: Թէև ձայն չը հանեցի, բայց եթէ այսպէս շարունակուի, ձանձրութիւնս փարատելու համար, կարծեմ, կամ ան զիս պիտի մեռցունէ կամ ես զինքը:

— Զգուշացէք, չըլլայ որ Շիքօին հետը իյնաք, որովհետեւ ճարտար զինաշարժ մ'է: Պետէք որ գաղաղին մէջ կենալը աւելի ձանձրացուցիչ է, քան թէ այս բանտիս մէջ:

— Կարելի է:

— Կուզե՞ս որ մանկլաւիկս քեզի տամ, ըսաւ Պիւսի ժրպակով:

— Ինձի՞:

— Այո, զուարթամիտ տղայ մ'է:

— Ենթահակալ եմ, ես մանկլաւիկներէն չեմ ակորժիր. թագաւորը ինձի հրաման տուաւ որ իմ ամենէն աւելի սիրելի մանկլաւիկս բերել տամ եւ ես չուզեցի: Տարէք, թագաւորին նուիրեցէք այդ: Իսկ ես ասկէջ դուրս ելածիս պէս, ալ կնիկ սպասուհիներ պիտի գործածեմ, ինչպէս որ ըրին Շընոնսօին ինչոյքը, եւ անոնց հանդերձներուն ձեւն ալ ես պիտի որոշեմ:

— Օ, իրա՞ւ կըսէք. բայց փորձեցէք անգամ մը սա մանկլաւիկը, ըսաւ Պիւսի թախանձելով:

— Պիւսի, ձեզի չի վայելք որ զիս այսպէս ծաղրէք:

— Թողէք որ գիտցածս ընեմ:

— Բայց ո՞չ, չըլլար:

— Ես ըրածս գիտեմ :

— Բայց ո՛չ, ո՛չ, հարիւր անգամ ո՛չ :

— Եկուք, մանկաւիկ, հոս եկուք :

— Ա՛յ թշուառական, զոչեց Ահն-Ախր :

Մանկաւիկը բորբոլին շառագունած, պատուհանին առաջէն ասդին եկաւ :

— Ահ, Տէր Աստուած, զոչեց Ահն-Ախր զարմայմամբ, տեսնելով որ իր կինն էր ան և Պիւսին մանկաւիկներուն զընտանեքը հագած էր :

— Կէ՛, ի՞նչ կրտէք հիմա . կուզէ՞ք որ ճանրեմ զինքը, հարցուց Պիւսին :

— Աչ, ոչ : Ահ, Պիւսի, ալ յախտեանս քու բարեկամդ եմ ես, քու երախտապարտդ :

— Պիւսէ՞ք, Ահն-Ախր, թէ և ձայնեմնիդ չը լսուիր, բայց ձեզ զիտող կայ :

— Իրաւունք ունիք, ըսաւ Ահն-Ախր որ թէ և երկու քայլ յատալ զացած էր դէպ ի իւր կինը, երեք քայլ ետ քաշուեցաւ :

Եւ արդարեւ Պ. տը Նանսէյ՝ Ահն-Ախրին խօսուն ձեռնաչարժութեանը (բանդօմիմ) վրայ զարմացած սկսած էր ունկնդրութիւն ընել, երբ ասակիներով զարգարուած մեծ սրահէն եկող աղաղակ մը իր ուշադրութիւնը գրաւեց :

— Տէր Աստուած, կարծեմ թագաւորը մէկու մը հետ կը վիճի, զոչեց Պ. Նանսէյ :

— Տարակոյս չը կայ, պատասխանեց Պիւսին, Նանսէյին անհանգստութիւնը աւելցունելու համար : Արդեօք տ'Անտու դքսին հետ է վեճը որուն հետը եկայ ես ալ :

Պահապանաց հրամանատարը իր սուրը մէջըը պնդեց և ուղղակի սրահին կողմը վազեց տրկէ արդարեւ սատոխ վիճաբանութեան ձայն մը կուգար որ չորս կողմը կը թնդացունէր :

— Ի՞նչպէս, գործը աղէկ չե՞մ կարգադրած, ըսաւ Պիւսին Ահն-Ախրին կողմը դառնալով :

— Ի՞նչ կայ :

— Պ. տ'Անտու և թագաւորը հիմա զիրար կը դիպատեն . ես ալ այսպիսի շքեղ տեսարանէ մը չը զրկուելու համար առանց վայրկեան մը կորսնցունելու երթամ : Գուք ալ ասդին այս իրարանցումէն կրնաք օգուտ քաղել . ոչ թէ խուսափելու համար, որովհետեւ թագաւորը շուտով կը հասնի ետեւնուդ, այլ քեզի տուած սա զեղեցիկ մանկաւիկս ապահովութեան մէջ դնելու համար : Ձկրնա՞ր ըլլալ :

— Թէ և անկարելի ալ ըլլայ, ընելու է . բարեբաղդաբար ես ալ հիւանդ ձեւացած եմ, սենեակէս դուրս չեմ ելնէր :

— Ուրեմն մնաք բարով, Ահն-Ախր : Տիկին, յիշեցէք զիս աղօթքներնուդ մէջ :

Պիւսին Հէնրի Գ. ին այսպիսի խաղ մը խաղալուն վրայ ուրախութեամբ լցուած, նախանենակէն դուրս ելու և մինչև մեծ սրահը դնայ ուր թագաւորը բարկութեան շառագունած և տ'Անտու դուքսն ալ կատաղութեան էր երեսին գոյնը նետած կը վիճէին իրարու հետ :

Հէնրի Գ. կը պնդէր թէ նախարդ զիշերուն դէպքին շարժառիթն ու նախայարձակը Պիւսին էր :

— Ես կը հաստատեմ, տէր արքայ, կաղաղակէր տ'Անտու դուքսը, որ տ'Երէնտն, Աքոնպէրիկ, տ'Օ, Մօփրոն եւ Քէլիւս Օթէլ տէ Թուրնէլի փողոցը իրեն կապակէին :

— Ո՞վ ըսաւ ձեզի :

— Սչքովս տեսայ, երկու տչքովս :

— Թանճրամամ խաւարին մէջ տեսար զանոնք, այնպէս չե՞ :

— Ոչ թէ դէմքերնին տեսնելով ճանչցայ :

— Հասաւ ո՞ր տեղերնին, թիկունքնին :

— Ոչ, տէր արքայ, ձայնեմնուն ճանչցայ զիրենք :

— Հետեմնիդ խօսեցա՞ն :

— Ալ աւելին ըրին, զիս Պիւսին կարծելով վրաս յարձակեցան :

— Ձեր վրայ յարձակեցան :

— Այո :

— Ի՞նչ գործ ունէիր Սէնթ-Անթուան դուռը :

— Այդ ձեզի չը վերաբերէր :

— Բայց պէտք է որ ես խնայեմ. այսօր վերջին աստիճան հետաքրքրէր եղած եմ :

— Մանասէին տունը կերթայի :

— Մանասէին տունը, հրեայի մը տունն :

— Բայց դուք ալ Ռիւսիէրի տունը կերթաք, թունավաճառի մը տունը :

— Ես թագաւոր եմ, ուր որ ուզեմ կրնամ երթալ :

— Բայց ատիկայ պատասխանել չէ, այլ նախատել :

— Ինչպէս որ ըսի, Պիւսին գրող եց զանոնք :

— Ո՞ր տեղ :

— Սէն-Վիքրին պարահանդէսը :

— Պիւսի հինգ մարդ իրեն դէմ գրող եց : Արդարեւ զարմանալի բան : Պիւսին քաջ է, բայց ոչ անխոհեմ :

— Բայց ես կըսեմ ձեզի թէ իմ ականջովս լսեցի իր դըրդուիչ խօսքերը, ես լսեցի : Այստեղ ամենայնիւ, ի՞նչպէս կըսէք թէ կարող չէ հինգին ալ դիմագրաւելու, մինչդեռ Սքոնպէր կին ազգերը եւ տ՛ղբերնոնին թեւը վիրաւորած է եւ Քէլիւան ալ հողին հանելու չափի գանակոծ ըրած :

— Իրա՞ւ կըսէք : Թէ որ ինձի պատմած ըլլար Պիւսին, չնորհակալ կըլլայի իրեն :

— Իսկ ես մէկուն ալ չնորհակալ չը պիտի ըլլամ, այլ այդ կռուասիրին իր չափը պիտի ճանչցունեմ :

— Ես ալ ըսաւ դուքը, որ միշտ ձեր բարեկամներէն յարձակում կը կրեմ, չէ թէ միայն անուղղակի Պիւսին միջոցաւ, այլ ուղղակի անձամբ իսկ, ես ալ պիտի ցուցունեմ իրենց թէ Ձեր Վեհափառութեան եղբայրն եմ եւ թէ Գաղղիոյ մէջ չի կայ մարդ մը որ առանց ակնածութեան երեսս ի վեր նայի եւ երկիւղը իր հայեցումքը չը խոնարհեցունէ :

Պիւսի որ վարդապարտիւր ճարմանդներով կանանչ եւ փափուկ անգուստ շքեղ գգեստներ հագած էր, սրահէն ներս մը տաւ, երբ երկու եղբայրը աղաղակներուն սաստկանալը լսեց :

Հաճեցէք, տէր արքայ, ընդունիլ իմ խոնարհ յարգանքս :  
 ըսաւ Հէնրի Գ. ին առաջը խոնարհեցով :

— Հա՛. ահա ասիկ եկաւ, ըսաւ թագաւորը :

— Արեւայ թէ Ձեր Վեհափառութիւնը իմ վրաս խորհելու պատիւը կընէր ինձի :

— Այո. շատ ուրախ եմ ձեզ տեսնելու : Թէեւ գէշ լուրեր ասի ձեր վրայօք, բայց դէմքերնիդ կը ցուցնէ որ առողջ էք :

— Տէր արքայ, մարդ մը արեւն առնել տայէն վերջը երեսները զովութիւն, առողջութիւն մը կ'ստանան. ուստի իմ երեսներս ալ այս գիշեր բաւական առողջ ու առողջ կրեմնալու եմ անջուշա :

— Պ. ալ Պիւսի, եթէ ձեզ գանակոծ ըրին ե պիտի ապանեմ ին, կրնաք դատ պահանջել եւ ես ալ իրաւունքը որ կողմն ըլլալը արգարութեամբ կը վճռեմ :

— Արեւեցէք, տէր արքայ, ոչ ոք զիս գանակոծած ե պաննել ուզած է եւ ես ալ մէկու մը հետ դատ չունիմ :

Հէնրի զարմացած տ՛Անտու դըսին երեսը նայեցաւ :

— Ի՞նչ կըսէիք հիմա, հարցուց թագաւորը տ՛Անտու դըրտին :

— Արեւի թէ Պիւսի գաշտնի հարուած մ՛ընդունած է իր կուշտը :

— Ստոյգ է, Պիւսի, հարցուց թագաւորը :

— Ստոյգ ըլլալու է որովհետեւ Ձեր Վեհափառութեան եղբայրը կը հաստատէ զայն եւ արքայապն իշխանը հարկաւ չը ստէր :

— Պիւսի, սրայ հարուած մ՛ընդունած էք կուշտերնիդ եւ չէք ուզեր դատ վարել :

— Տէր արքայ, եթէ անձամբ վրէժխնդիր չըլլալու համար աջ ձեռքս ալ կտրեն, դարձեալ դատ չեմ պահանջեր ես, եւ ձախ ձեռքովս իմ վրէժս կը լուծեմ, ըսաւ անյաղթելի մեհամարտը :

— Տէր արքայ, ըսաւ տ՛Անտու դուքը, հիմայ ըսիք թէ դատաստան մ՛ըլլայ եւ յանցաւորին պատիժը արդարութեամբ տնօրինէք. լա՛ւ, մեր ալ ուզածը այդ է : Հրաման ըրէք որ քննիչ մասնագիտով մը կազմուի եւ դատաւորներ ընտրուին եւ

որոշուի թէ դարանակալութիւնը ո՞ր կողմէն պատրաստուած է և ս՛վ նախարարձակ եղած է :

Հէնրի շառագունելով ըստ .

— Ս, յս անգամ ալ կուզեմ ներել իրենց հառասարտպէս և յանցանքը որ կողմը բլլալը չը գննել : Ար փափարթիմ որ այս կատաղի թ՛նամինները ալ հայտուին միսեանց հետ : Պժբաղդ արար Արոնպէրին ու տ՛էրէրնան ներկայ չեն հոս : Բաէք նա լինք , Պ . տ Անժու , սիրելիներուս մէջ ո՞րն էր ամենէն աւելի բողբոքածը , ձեր կարծեացը համեմատ , որովհետեւ կրտէր թէ տեսար զանոնք :

— Քէլուսն էր , տէր արքայ :

— Իբրաւուր ունի , ըստ Քէլլուս , ըրածս չեմ ծածկեր , Եորին Բարձրութիւնը շատ աղէկ տեսեր է :

— Ուրեմն , ըստ Հէնրի , թող Պ . տը Պլուսի և Պ . տը Քէլլուս բողբոքին կողմէն հայտուին միսեանց հետ :

— Ոհ , ըստ Քէլլուս , ի՞նչ կը նշանակէ այս , տէր արքայ :

— Ձեզի կրտսմ որ հիմա , հոս աչքիս՝ առաջը զիրար պիտի գրկէք :

Քէլլուս արհամարհոտ նայուածքով մը յօնքերը սրտտեց :

— Է՛հ , Պարոնիկ , ըստ Պլուսի Քէլլուսին կողմը գառնալով և Բանդալանի նման իտարական շարժում մը ընելով , կը զբանաք ինձի ս յդ շնորհքը :

Պլուսի այս անակնկալ խօսքը այնպիսի եռանդեամբ ըստ որ թագաւորն ալ սկստ խնդալ : Յետոյ Քէլլուսին մօտենալովի

— Սրի , Պարոն , արքայն ինդրէ այսպէս , ըստ դաւաւական հնչումով մը և Քէլլուսին վիզը փաթթուեցաւ :


— Ար յուսամ որ մեր զգացումները չայլայլեցան ատով , քրթ մնլեց Քէլլուս Պլուսիին ականջն ի վար :

— Անհոգ եղիք . օր մը դարձեալ զիրար կը գտնենք , ըստ Պլուսի նոյնպէս մեզմ՝ ձայնով :

Քէլլուս բողբոքովին շառագունած և գանգուր մագերը խառնակուած , կատաղութեամբ ետ քաշուեցաւ :

Հէնրի իր յօնքերը պոստեց և Պլուսի իտարական շարժու-

մը շարունակելով չըջան մ՛ ըրաւ սրահին մէջ և խորհրդարանէն դուրս ելաւ :



ԳԼՈՒԽ Զ .

ՀԵ՛ՐԹԻ Գ . ԱԸ ՆՆԶԷ

Ս, յս տեսարանէն վերջը որ ողբերգութեամբ սկսաւ և կատակերգութեամբ վերջացաւ և որուն լուրը արձագանքի մը պէս ձայն արձակեց Աուվրէն դուրս բողբոքազարին մէջ , թաղաւորը զայրազին դիմաք ուղղակի իր բնակարանը դնաց Շիքօին հետ որ ընթրիքը պատրաստելու հրաման տուաւ :

— Անթի չեմ , ըստ թագաւորը իր սենեկին դռնէն ներս մտնելով :

— Կարելի է , ըստ Շիքօ . բայց ես անթոթթենէս կը մտնեցնիս հիմա . բան մ՛ ըլլար , խածատէի ուտէի . փոյթ չէ , թող ոչ խարի զիտի կտոր մ՛ ըլլայ :

Թագաւորը չը լսելու վարկաւ : Ա, կրարկուին ճարմանդները քակեց և անկողնոյն վրայ դրաւ . գլխանոցը որ երկար սև գնդասեղներով գլխուն վրայ բռնել տուած էր , հանեց և աթոռին վրայ նետեց . յետոյ Ան-Վիլքին սենեակը առաջնորդող դէպ ինեղ ճանբան յառաջացաւ : Ս, յս սենեակը պատով մը միայն բաժնուած էր իրենէն :

— Սպասէ հոս և կուգամ հիմա , խեղկատակ , ըստ թաղաւորը :

— Մի աճապարեր , որդեակ , մի աճապարեր , ըստ Շիքօ . և Հէնրիին հեռանալուն օտնադարովը լսելով , շարունակեց . Մի աճապարեր որ ինձի ժամանակ մնայ քեզի համար զարմանալի բան մը պատրաստելու :

Երբ որ տանատրոփը բոլորովին դադարեցաւ, Շիրօնախասնեւ եակին դուռը բանալով սպասաւոր մը կանչեց :

Իսկոյն սպասաւոր մը վազեց եկաւ :

— Թագաւորը միտքը փոխեց . կը խնդրէ որ իրեն եւ Աէն-Ախ-քին համար ընտիր համադամներով ընթրիք մը պատրաստուի, ըսաւ Շիրօ: Մանաւանդ գինին, չմուռնար աղէկ տեսակէն ըլլայ : Եռու ըրէք, գացէք սպասաւոր :

Սպասաւորը իսկոյն գնաց Շիրօին հրամանները կատարելու որ թագաւորը հրամայած ըլլալուն վրայ ամենեւին տարակոյս չունէր :

Իսկ Հէնրի, ինչպէս որ վերը պատմած ենք, Աէն-Ախ-քին բընակարանը գայած էր որ Նորին Վեհափառութեան նշանաւոր կանխաւ իմացած ըլլալով, անկողինը մտած պառկած էր եւ իրեն հետ Առվըր գալով հոն քնայած ծերունի սպասաւորի մը իր վրաս, աղօթել կուտար : Իսկ Պիւսիին բերած մանկլաւի՛ր սենեկին մէկ անկիւնը ոսկեգօծ արձառի մը վրայ գլուխը երկու ձեռքերուն մէջը առած ի խորքուն կը խորդար :

Թագաւորը այս բոլոր բաները մէկ նայուածքով մը դիտեց :

— Ո՛վ է այս երիտասարդը, հարցուց Աէն-Ախ-քին անհանգըստութեամբ :

— Ձեր Վեհափառութիւնը զիս հոս դրած ժամանակ հրաման չը տուաւ մանկլաւիկ մը բերել տալու :

— Այո՛ :

— Ասաւ . ես ալ Ձեր Վեհափառութեան հրամանէն ուղեցի օգուտ քաղել :

— Ի՛հ :

— Միթէ Ձեր Վեհափառութիւնը կը զՂՂճճ այս շնորհքը ինծի ընկուն համար :

— Ոչ, սիրելի որդեակ իմ, ոչ . ընդհակառակն կրնաս ուղղածիդ պէս զբօսնուլ : Խնչպէս էք այսօր, աղէկ էք :

— Տէր արքայ, սաստիկ կը ջերմնոտիմ :

— Մտուգիւ երեսներդ կարմիրակ դոյն մ'առեր են . բողբկերակդ նայիմ . դիտես որ բժշկութենէ քիչ մը կը հասկնամ :

Աէն-Ախ-ք արտմայլին դէմքով ձեռքը երկնցուց :

— Վայ՛, ըսաւ թագաւորը . աս բազկերակիդ բարախունք շատ տկար է եւ միշտ կընդհատի :

— Ի՛հ, արգարեւ սաս սիկ հիւանդ եմ, տէր արքայ, ըսաւ

Աէն-Ախ-ք :

— Անհոգ եղիք, իմ բժիշկս պիտի նայի ձեզի :

— Ենորհակալ եմ, ես Միրոնէն չեմ ախորժիր :

— Անձամբ իսկ կը նայիմ ձեզ :

— Տէր արքայ, չեմ ընդունիր որ . . . :

— Աէն-Ախ-ք, քու սենեկիդ մէջ անկողին մը պատրաստել կուտամ ինծի համար եւ ամբողջ գիշերը խօսակցելով կանցունենք : Հազար ու մէկ բաներ ունիմ ձեզի պատմելու :

— Ի՛հ, գուցեց Աէն-Ախ-ք յուսահատութեամբ . կրտէք թէ բժշկութենէ կը հասկնամ, զիս ալ ձեր բարեկամը կը կոչէք եւ չէք ուզեր որ հանդարտ քնանամ : Զարմանայի՛ բժիշկ, ինչ աղէկ գիտէք եղբւր ձեր հիւանդները նայելուն կերպը . զարմանայի՛ թագաւոր, ինչ աղ՛կ գիտէք եղբւր ձեր բարեկամները սիրելուն կերպը :

— Հապա կուգէք որ այդպէս առանձի՛ն մնար, ցառոց եւ հեծութեանց մէջ լքուած :

— Ժան մանկլաւիկս քովս է, տէր արքայ :

— Բայց կը քնանայ :

— Ես ալ այդպիսի հիւանդապահները կը սիրեմ . գոնէ հանդարտ կը թողուն որ ես ալ քնանամ :

— Ես ալ իրեն հետ միասին կը հսկեմ քու վրադ եւ միայն արթնցած ժամանակդ կը խօսակցիմ :

— Տէր արքայ, արթնալէս առաջ այնպիսի յիմարական խօսքեր կըսեմ եւ արթնցած ժամանակս ալ այնպիսի անշնորհք շարժումներ կընեմ որ վարժուած չեղողի մը համար շատ անտանելի է :

— Գոնէ եկուր ննջելու ժամանակս ներկայ գտնուէ :

— Բայց վերջը դալ անկողինս պառկելու ազատ եմ :

— Բայց անձակ ազատութիւն քեզի :

— Լաւ ուրեմն . բայց սա ալ ձեզի ըսեմ որ զուարճադէմ պարտականի մը պէս չը պիտի կրնամ վարուիլ Ձեր Վեհափառութեան հետ : Քունիս ծանրութենէն կը գրորվի :

— Ազատ ես , ուղածիդ պէս յօրանլէ հոն տեղ :

— Ի՞նչ բռնութիւն . . . բայց միւս բարեկամներնիդ ձեր քովը չե՞ն :

— Հրամար էք : Պիւսին աղէկ վիճակի մը մէջ ձգեր է զանոնք : Սքոնպէրկին աղբըը ճեղքեր , տ՛լէքնոնկն ալ բազուկը կտրեր և այնտեղական մեղեխ մը դարձուցեր է թեւը . իսկ Քէլիս երէկուան դանակածութեանը և այսօրուան ալ դրկախառնութեանը վրայ բոլորովին ապուշ դարձեր է : Ար մնայ անդին տ՛Օ որ հողիս հաներու չափ կը ձանձրացունէ զիս և Մօծիտն որ կախարդի մը պէս երեսը կախեր նստեր է : (ն ուրեմն , շուտով հանուէ , արթնցուր սա անպետան մանկըսիկը և թող զիչերային զգեստներդ հազցունէ :

— Տէր արքայ , եթէ Ձեր Վեհափառութիւնը կը հաճի առանձին թողուլ զիս . . . :

— Ի՞նչ ըներու համար :

— Ի պատկառանս . . . :

— Պու ալ հիմա . . . :

— Հինգ վայրկեանէն կուգամ Ձեր Վեհափառութեան սենեակը :

— Հինգ վայրկեանէ՛ն , ըս . բայց չուշանաս , հինգ վայրկեանը չը պիտի անցնի , կը ըսես . նայէ որ զուարճալի պատմութիւններ գտնես , Մէն-Լիւք , քիչ մը ուրախանանք :

Ասոր վրայ թագաւորը գոհ սրտով գուր . ելաւ :

Մենեկին դուռը դոցուածին պէս , յանկարծ արթնցաւ մանկըստիկը և իսկոյն ցաթիկեց դրան նուարտանին սուալը գնաց :

Երբ որ թագաւորին ոտնատրոխը դադրեցաւ , Մէն-Լիւքին դառնարով ըսաւ .

— Ո՛հ , պիտի թողու՞ք զիս , Պ . տը Մէն-Լիւք : Տէր Աստուած , սա ինչ փորձանք է . եթէ գործը յայտնուի . . . սոս

կուճէս կը մեռնիմ հիմա :

— Սիրելիդ իմ ժամ , Պատարը հոս է , ձեզ ամեն վրանդներու գէմ կը պաշտպանէ , ըսաւ Մէն-Լիւք ծերունի սպասաւորը ցուցնելով :

— Ուրեմն աւելի աղէկ է որ ես երթամ , ըսաւ մանկամարդ կինը շառագունելով :

— Ժամ , թէ որ անպատճառ կուղէք երթալ , ըսաւ Մէն-Լիւք տխուր ձայնով մը , մինչև Մոնմորսնի սպարանքը կը յուղարկեմ ձեզ . որովհետև դռնապաններուն տրուած պատուէրը միայն ինձի համար է : Բայց թէ որ ձեր գեղեցկութեանը նման աղնիս սիրտ մ՛ալ ունիր և թէ որ այդ սիրտը թշուառ Մէն-Լիւքին համար զգացում մը կը կրէ , քանի մը վայրկեան ալ կսպասէք հոս : Հիմա թագաւորին սենեակը այն աստիճան գլուխա պիտի ցախի , ջիղերս գողցան և աղիքներս գաւարին որ թագաւորը չի պիտի ուզէ այսպիսի տերազէմ բնկեր մ՛ունենալ իր քովը և շուտով պիտի զրկէ զիս քնանալու :

Ժամն աչուրները գետինը խոնարհեցուց :

— Պացէք ուրեմն , կսպասեմ ձեզի , ըսաւ . բայց ես ալ թագաւորին պէս կը կրկնեմ , մի ուշանար :

— Ժամն , սիրելի ժամ , պաշտելի արարած մ՛էք դուք , ահամայ կը հեռանամ ձեզի . վստահ եղիք որ կարելի եղածին չափ շուտով քովերնիդ պիտի վերադառնամ : Միտքս դադար վար մ՛եկաւ , քիչ մը խորհիմ անոր վրայ և վերադարձիս ձեզի ալ կը հաղորդեմ :

— Ազատութեան՞ գաղափար մը :

— Թերեւս :

— Պացէք ուրեմն , շուտ ըրէք :

— Պատար , զգուշացէք որ մարդ ներս չը մտնէ : Քառորդէ մը վերջը դուռը դոցեցէք և բանալին ինձի բերէք թագաւորին սենեակը : Պացէք ապարանքս և ըսէք որ անհող բլան Տիկին կոմսուհոյն համար և վագը վերադարձէք հոս :

Պատար ծպտելով խոտոացաւ անթերի կատարել այս հրամանը որ շառագունելով մտիկ կընէր մանկամարդ տիկինը :



Մէն-Ալիք իւր ամուսնոյն ձեռքը բռնելով գորովանօք համբուրեց և սրացաւ Հէնրի Վ. ին սենեակը դնաց որ ակնկալ սպասելով համբերութիւնը հատած էր :

Ժան առանձին մնաց : Վաղդալով դնաց անկողնոյն երկաթի գաւազաններէն կախուած մեծ վարագոյրին մէջ կըծկտեցաւ , ուր զայլազին գէմբով նստած , շեփորի մը հետ կը խաղար և իր այս տարօրինակ վիճակէն յազժանախաւ դուրս ելնելու միջոց մը կը խորհէր :

Երբ որ Մէն-Ալիք արքայական սենեակը մտաւ , ախորժ և հեշտական հոտ մը կը բուրէր : Հէնրի՝ գետինը սիւսուած քաղցրաբոյր ծաղկանց վրայ կոխուածն էր կը քայլէր : Ասանց ցօղունները կտրուած էին , որպէս զի Նորին Վեհախառու թեան ոտից փախուկ մարթը չը վերաւորեն : Թէև ձմեռն իր ձիւնեղէն պատառը երկրիս վրայէն գետ չէր վերուցած , դարնայնի զարդարանքը , վարդն ու յասմիկը , մանիշակն ու շահորբամը , Հէնրի Վ. ի ոտից ներքև կակղիկ և քաղցրաբոյր գորգ մը ձեւացուցած էին :

Սենեակին ցածուն առատաղը գեղեցիկ նկարներով զարդարուած էր և ինչպէս որ արդէն ըսած ենք , երկու շքեղանկողիններ գրուած էին հոն , որոց մէկը այնչափ լայն էր որ սենեակին մէկ երրորդ մասը բռնած էր , թէև իր սնաբքը պատին յեցուցած էին :

Անկողնոյն մետաքսեայ և ոսկեթել վարագոյրները , գիշարանական պատկերներով նկարուած էին , որոնք Մէնէի հոշակաւոր արուէզին պատմութիւնը կը ներկայացուէին : Յայտնի է թէ յիշեալ արուէզին կերպափոխութիւնները ներկայացունելու համար , նկարչին երեւակայութիւնը ինչ աստիճան ճիշդ թափած է : Անկողնոյն ձեղունը ոսկեթել զիպակի վրայ բանուած մետաքսեայ պատկերներով զարդարուած էր և արքայական զինանշանները խիստ պրանչելի կերպով ասղնեղործուած էին ձեղունին այն կողմը որ պատին կը թնամ ըլլալով , անկողնոյն սնաբքը ձեւացուցած էր :

Սենեակին պատուհանաց և անկողնոյն վարագոյրները , ա-

թուներուն , նստարաններուն և անկողիններուն պատառները , ամենքն ալ մի և նոյն կերպաէն էին : Առատաղին մէջ տեղը ոսկեթել չգծացով շառագոյն կանթեղ մը կախուած էր , որուն մէջ վառուած իւզը քաղցրաբոյր հոտ մը կը արձար սենեակին մէջ : Անկողնոյն ալ կողմը ոսկեքանդակ այծեմարդ մը ձեռքը բազմաճիւղ աշտանակ մը բռնած էր որուն վրայ վարդակարմիր և անուշահոտ չորս ճրագներ կը վառուէին : Այս խոշոր ճրագները առատաղէն կախուած կանթեղին հետ կը լուսաւորէին սենեակը :

Թաղաւորը եւեռեայ ոսկեպատ դահուն վրայ բազմած , գետինը սիւսուած ծաղկանց վրայ բոկանի գրած էր տօքք . ծնդացը վրայ եօթը ութը սպանիական լակոտներ ունէր որք իրենց փոքրիկ հոտտերիքը Հէնրիի փախուկ ձեռացը վրայ քսելով , մեղմով մը կը մարմալեցունէին : Երկու սպասաւորներ քովը կանգնած ոչ ըրած մագեքը կը գտտէին իրարմէ , գանդուր կը շինէին և ընչոցքն ու մօբուքը կը յարդարէին : Երբորդ սպասաւոր մ'ալ թագաւորին երեսը սերի վարդագոյն իւզային հիւթը (քեւմ ոօզ) կը քսէր որ իրեն յատուկ համ մը և խիստ ախորժագրգիւս հոտ մ'ունէր :

Հէնրի աչուրները գոցած և հնդիկ աստուծոյ մը պէս փառաւորապէս բազմած կը թողուր որ այս ամեն զարդարանքը կատարեն :

— Մէն-Ալիքը ո՞ւր է , Մէն-Ալիքը , կըսէր :

Մէն-Ալիք սենեակէն ներս մտաւ : Եիքօ Մէն-Ալիքին թեւէն բռնելով թագաւորին առաջը տարաւ :

— Ահա բարեկամք Մէն-Ալիքը եկաւ , ըսաւ թագաւորին հրաման ըրէ իրեն որ ան ալ սերի հիւթով (քեւմ) մաքրէ երեսը կամ աւելի շիտակը լսօսելով ազտեղէ . վասն զի եթէ այս անհրաժեշտ զգուշութիւնը չը կատարես , սաղ էշութիւնը պիտի լլլայ որ կամ դուն որ այդչափ անուշահոտ իւզեր քսուած ես , գէշ հոտ մը պիտի զգաս անոր վրայէն , կամ ինքը որ բան մը քսուած չէ , չափազանց անուշ հոտ մը պիտի զգայ քու վրայէդ : Հա՛պա , տուէք ամառները և սերի իւզը , ըսաւ

Շիրք թագաւորին դէմը մեծ աթոռին վրայ փռուելով, ես ալ պիտի գործածեմ:

— Շիրք, Շիրք, գոչեց Հէնրի, ձեր մտրվը շատ չոր է, սերը կը ծծէ կը հտոցունէ. արդէն քիչ մը բան կաւ եւ ան ալ հողիւնն ինձի կը բաւէ: Մաղբնիդ ալ սաստիկ կարծր են, սանտրերս կը կոտորան:

— Սպերախտ, մտրվս չորցեր է որ քեզի պատերազմի դաշտ ըլլայ եւ մաղերս կարծր ըլլալուն պատճառն ալ դուն ես որ քու ընդդիմախօսութիւններովդ միշտ կը բարկացունես զիս եւ մաղերս կը ցցուեցունես: Բայց թէ որ կարգիլես ինձի սերը երեսներուս քսելու, սխնդն արտաքին կերպով դործածելու, փոյթ չէ, որդեակ իմ... այսչափը միայն կըսեմ քեզի:

— Հանդիստ թողէք զիս. կը զառանցէք թէ կը խօսիք:

Յետոյ Մէն-Լիւքին դառնալով ըսաւ Հէնրի:

— Ի՞նչպէս ես, որդեակ իմ, դիտուդ ցաւը անցաւ:

Մէն-Լիւք ձեռքը ճակտին տանելով խորին հառաչանք մը արձակեց:

— Գիտե՞ս, շարունակեց Հէնրի, Պիւսի տ'Սմպուազը տեսայ: Ա՛յ... երեսս այրեցիք, Պարոն, ըսաւ վարսավիրային:

Վարսավիրայն ծնրադրելով խոնարհեցաւ թագաւորին առաջը:

— Պիւսի տ'Սմպուազը տեսայ ըսիք, յարեց Մէն-Լիւք բոլոր մարմինը դողդալով:

— Այո, Գիտե՞ս, մեր անպիտանները հինգ հոգի միասին յարձակեր են վրան եւ չեն կրցեր յաջողիլ: Սմիւնքն ալ ջուրին տուր երթան: Թէ որ դուն հետեւնին գտնուէիր, Մէն-Լիւք, ... ի՞նչ կըսես:

— Տէր արքայ, հաւանական է որ ես ալ իմ ընկերներէս աւելի բան մը չը պիտի կրնայի ընել:

— Գնա բանդ, ինչե՛ր կը խօսիս. ես հազար ոսկի գբաւ կը դնեմ որ Պիւսիին վեց հարուածին դէմ տան անգամ կիջեցունես դուն: Վազը կը փորձենք ատիկա: Սմեն ժամանակ զինաշարժութիւն կընե՞ս, որդեակ իմ:

— Է՛հ, այո, տէր արքայ:

— Քեզի կը հարցունեմ թէ ամեն ժամանակ կը թութիւն կընե՞ս:

— Առողջ եղած ժամանակս դրէթէ ամեն օր կընեմ. իսկ հիւանդ եղած ժամանակս բանի մ'ալ չեմ դար:

— Քեզի հետ կը թութիւն ըրած ժամանակնիս, ինձմէ քանի՞ հատ աւելի կը նետէիր:

— Երկուքնիս ալ դրէթէ նոյն չափով:

— Բայց ես Պիւսիէն աւելի աղէկ կը նետեմ...: Ա՛յ, ընչացքս կը փրցունէիք, Պարոն, ըսաւ ստիբիլին:

Ստիբիլը ծնրադրելով խոնարհեցաւ թագաւորին առաջը:

— Տէր արքայ, ըսաւ Մէն-Լիւք, սրտիս ցաւին դեղ մը:

— Կերակուր ուտելու է:

— Ո՛հ, կը սխալեք, կարծեմ:

— Ոչ, ոչ:

— Իրաւունք ունիս, Վալուա, ըսաւ անդիէն Շիրք. եւ որովհետեւ իմինս ալ, սիրոս թէ ստամբոս, աղէկ չեմ գիտեր, սաստիկ կը ցաւի, տուած հրամաննիդ կը կատարեմ:

Ստոր վրայ՝ կապիկի մը ծնօտներուն արագութեամբ իւրարու զարնուելու ձայնին նման շառաչիւն մը լսուեցաւ:

— Թագաւորը ետին դառնալով տեսաւ որ Շիրք երկու մարդու համար պատրաստուած ընթրիքը որ թագաւորին անուամբը բերել տուած էր, առանձին ուտել ընցունելէն վերջը, ճեռական յախճապակէ պնակի մը մէջ դրուած սերն ալ (քուէմ) բոլորը մէկէն ուտելով շառաչմամբ կը շարժէր ծնօտները:

— Է՛յ, ի՞նչ կընէք հող, Պարոն Շիրք, ըսաւ Հէնրի:

— Սերը ներքին կերպով կը գործածեմ, որովհետեւ արտաքին կերպով դործածելը արգիլուած է ինձի, ըսաւ Շիրք:

— Ա՛յ անգղամ, գոչեց թագաւորը գլուխը կէս մը ետին դարձունելով. բայց այնպիսի ձախող շարժմամբ մը որ իր բերսը իւրօտող սենեկապանին մատը բերանը մտնելով սերով լցուց դայն:

— Կեր, որդեակ իմ, կեր, ըսաւ Շիրք ծանր դէմքով: Ես

քեզի պէս բռնաւոր չեմ, ներքին և արտաքին՝ երկուքն ալ կը ներեմ քեզի, կեր :

— Այ . . . զիս պիտի խզէք, Պարոն, ըսաւ Հէնրի սենեկապանին :

Սենեկապանը վարսավիրային և սափրիչին նման ճերպղբերով խոնարհեցաւ թագաւորին առաջը :

— Պահապանաց հրամանատարը գայէք կանչեցէք, շո՛ւտ, շո՛ւտ, պահապանաց հրամանատարը, հի՛մա հի՛մա, դաչեց Հէնրի :

— Ի՛նչ պիտի ընէք, հարցուց Շիրօ . և մատովը յախճապակէ պնակին մէջը արագութեամբ լաւ մը մաքրեց վերջը, մատը բերանը տարաւ և լախիղցեց :

— Թող գայ, Շիրօն մտթէ . և թէպէտ փոխտէ, խորովելով լակոտներուն առաջը նետէ, ըսաւ Հէնրի :

Շիրօ ոտքի վրայ ելաւ կայնեցաւ և դիտարկը ծռելով,

— Այ, անիրաւ, ըսաւ . Շիրօն լակոտներուդ առաջը նետե՛ն, ազնուական մը անասուններուդ առաջը : Ա՛ւ, թող գայ, որդեակի ի՛մ, թող գայ նայինք սա պահապանաց հրամանատարդ :

Եւ Շիրօ իր երկար սուրը քաշելով զինաչարժութեան այնպիսի ծիծաղելի փորձ մ'ըբաւ վարսավիրային, սափրիչին և սենեկապանին գէմ որ թագաւորը չը կրցաւ խնդալը բռնել :

— Բայց անթի լո՛ւ կա, ըսաւ թագաւորը տըրտմազին ձայնով . սա անտուակը ամեն բան առանձին կերաւ ըմպուց :

— Ի՛նչ յամառ մէկն ես դուն, Հէնրի, ըսաւ Շիրօ : Քեզ սեղանը հրամցուցի և չընդունեցիր : Ինչ և իցէ, հի՛մա արգանակդ մնացած է, առ . ալ ես չեմ ուտեր : Փորս կշտացած է, երթամ պառկելու :

Այս միջոցին, ծերունին Փասպար եկաւ բանակին իր տիրոջը յանձնելու :

— Ես ալ երթամ պառկելու, ըսաւ Սէն-Ալբր . թէ՛ք քիչ մ'ալ ոտքի վրայ մնամ, թագաւորին պատշաճ եղած յարգութիւնը չը պիտի կրնամ մատուցանել և ջղային սաստիկ յարձակմամբ մը պիտի գլորիմ իյնամ . . . : Սարտուռ մ'եկաւ վրաս :

— Կեցիր, Սէն-Ալբր . առ , սա՛նք ալ առ տար, ըսաւ թագաւորը խել մը լակոտներ տալով :

— Ի՛նչ ընելու համար, հարցուց Սէն-Ալբր :

— Քու հետդ մէկտեղ պառկեցուր, ցաւդ վրայէդ կերթայ ասոնց կանցնի և դուն կազատուս :

— Շնորհակալ եմ, ըսաւ Սէն-Ալբր, լակոտները նորէն իրենց կողովին մէջը դնելով . ոչդ ձեռ տուած դեղին վրայ վտահոթիւն չունիմ ես :

— Այս գիշեր պիտի գամ քեզ տեսնելու, Սէն-Ալբր, ըսաւ թագաւորը :

— Ո՛հ, տէր արքայ, կազաչեմ մի գար, պատասխանեց Սէն-Ալբր : Քունիս մէջէն յանկարծ կարթնցունէք զիս և կըսեն թէ սակեց լուսնոտութիւն կը պատճառի :

Սարը վրայ Սէն-Ալբր թագաւորը ողջունելով սենեակէն դուրս ելաւ և մինչեւ որ գնաց, Հէնրի բարեկամական ցոյցեր բրաւ իրեն :

Շիրօ արդէն ելած գացած էր :

Նորին Վեհափառութեան ննջելու ժամանակը ներկայ գտնուող երկու կամ երեք անձինքն ալ կարգաւ գուրս ելան :

Թագաւորին քովը միայն սպասաւորները մնացին որք իրեն երեսը՝ անուշահոտ խղով ծնւթած բարակ կառաէ դիմակ մը անցուցին : Այս դիմակին վրայ՝ քթին, բերնին և աչուրներուն համար ծակեր շինուած էին : Արծաթաթել և մետաքսեայ կերպասէ գտակ մը զլուխը դրած էր, որ ճակտին և ակամշներուն վրայ հաստատուն բռնած էր այս դիմակը :

Յետոյ թագաւորին թեւերուն վարդադոյն սնդուսէ կարճ բաճկոնակ մ'անցուցին որուն մէջը ընտիր մետաքսով և բամբակով պատած էր : Վերջը ձեռնոցները ձեռքը անցուցին որոնց մերթը այն աստիճան կակուղ և փափուկ էր որ կարծես թէ կերպասէ էին : Այս ձեռնոցները մինչեւ արմուկը կը հասնէին և իրենց կակղութեան ու առաձգութեան պատճառը ներքին կողմերնին անուշահոտ խղով մը օծուած ըլլալնին էր որ արտաքին կողմէն ամենեւին չէր նշմարուէր :

Շիրօ արդէն ելած գացած էր :

Արքայական զարդուց այս դադանիքները լրանալէն վերջը, ոսկի պնակի մը մէջէն արդանակը խցուցին Հէնրի Գ. ին. բայց ինքը խմելէն առաջ՝ կէսը ոսկեղէն ուրիշ պնակի մը մէջ լեցուց և հրամայեց որ Սէն-Լուքին տանելով, « գիշեր բարի » մաղթեն իր կողմէն :

Կարգը եկաւ Աստուծոյ . բայց այս գիշեր, անշուշտ թագաւորին միտքը տատոխի զբաղեալ ըլլալուն պատճառաւ, Աստուծոյ գործը թեթեւ կերպով լմնցաւ : Հէնրի միայն մէկ աղօթք մ'ըբաւ, առանց ձեռքը առնելու օրհնեալ համբիշնեւրը . և համեմով, քաղբանով ու կինտամնով ջերուցած անկողինը բանալ տալով պառկեցաւ :

Հէնրի գլուխը բարձին վրայ դնելէն վերջը՝ հրամայեց որ գետինը սիւսուած ծաղիկները վերցունեն, որոնց հոտը սկսած էր սենեկին օդը ապականել : Պատուհանները քանի մը վայրկեան բաց ձգեցին, ածխաթթուով ծանրացած օդը նորոգելու համար : Վերջը՝ մարմարեայ կրակարանին մէջ որթի բարունակներով մեծ կրակ մը վառեցին որ բնակարանին չորս կողմը օդերեւոյթի մը պէս արագութեամբ քաղցր ջերմութիւն մը սարածելէն վերջը մարեցաւ :

Այն առեւն վարագոյրներն ու դրան նուարտամները գոցեց պառասաւորը եւ թագաւորին սիրելի չուր Նարկիսը ներս առաւ, որ իսկոյն թագաւորին անկողնոյն վրայ ցաթկեցով, ոտքերը դուխեց, մէկ երկու վայրկեան սաղին անդին դարձաւ և իր տիրոջը ոտուքներուն վրայ երկնայով պառկեցաւ :

Վերջապէս՝ ոսկեղէն այծեմարդուն ձեռքին վրայի վարդակարմիր ճրագներն ալ մարեց և գիշերային կանթեղին լոյսը նուազեցուց, պատրոյգը խոխելով և անոր տեղը բարակ մը դնելով : Սպասաւորը այս վերջին կարգադրութիւնները ընելէն յետոյ, ինքն ալ ոտից մատներուն վրայ քայլելով դուրս ելաւ :

Հէնրի իր թագաւորութեան տակը դամբուած վանքերուն մէջ թապալուող ծոյլ և պղերդ կղերականներէն առելի անհոգ, աւելի անխոյժ և մոռացկոտ միճակի մը մէջ ինկած, ալ չէր ուղեր խորհիլ, թէ Վազգիտ մը կայ որուն թագաւորն է ինք :

ԿԸ ՆՆՁԼԻՄ :

Կէս ժամ վերջը, բնակարանին օրահներուն մէջ հակող պահապանները՝ որ իրենց կայաններէն Հէնրիի սենեկին պատուհանները կրնային նշմարել, վարագոյրներուն ետեւէն տեսան որ թագաւորին կանթեղը բողբոլին մարեցաւ և լուսնոյ արծաթախայլ ճաճանները վարդադոյն գեղեցիկ լուսով մը կը գունաւորէին պատուհանները : Աստի խորհեցան թէ Նորին Վեհափառութիւնը հանդիստ կը քնանայ :

Այս միջոցիս բնակարանին թէ ներսը և դուրսը աղմուկները դադարած էին և չլլկան մը թռչելու մեղմիկ ձայնը միայն կը լսուէր որ Լուվրի բնակարաններուն (արաւոդըման) նեղ և մթին անցքերուն մէջ լռիկ մնլիկ կը թռչտէր :

Գ Լ Ո Ւ Մ Ի .

ՀԼԻՐԻ Գ . ՅԱՆԱԿԵՍ ԿԸ ՉԱՐԹՆՈՒ ԵՒ ԿՈՒՉԻ ԽՈՍՏՈՒԱՆԻԼ

Նրկու ժամ այնպէս անցաւ :

Յանկարծակի որոտընդոտտ աղաղակ մը չորս կողմը թընդացուց : Այս աղաղակը Նորին Վեհափառութեան սենեակէն կուգար :

Բայց և այնպէս գիշերային կանդեղը դեռ մարած էր, խոր ըտութիւնը կը շարունակէր և թագաւորն աղաղակէն զատ ձայն մը չէր լսուած :

Յանկարծ կահ կարասեայ ի յնուր դղրդիւն մը լսուեցաւ, յախճապակիի մը ջալջալտելու շառաչիւնը և սենեկին մէջ մուրեղնաւոր վազվազողի մը ոտնատրտիլը . յետոյ նորէն աղաղակներ և չուներու հալիւններ լսուեցան :

Իսկոյն ճրագները վառեցին, սուրբը սկսան շոքալ սրահներուն մէջ և քնածու պահապանաց ծանրաշորժ ոտքերը վազած Ժամանակինն թանձր և հատատուն սինները կը դողդղը զըզացունէին :

— Ի զէ՛ն, ի զէ՛ն, թագաւորը մեզ կը կոչէ, թագաւորին սենեակը արշաւենք . այս ձայները կը լսուէին ամեն կողմէն :

Պահապանաց հրամանատարը, դռնապան զինուորաց զընդապետը, պալատականները, գիշերապահ հրացանակիրները, ամենքն ալ սրահը լցուեցան . քսան հատ շահեր վառեցին իսկոյն և բոցազարդ լուսով մը լուսաւորեցաւ սենեակը :

Գեանաթաւալ աթոռոյն քովը ջախջախած գաւաթներու բեկորներ կը տեմնուէին, անկողինը տակն ի վրայ եղած էր, որուն վերմակներն ու սաւանները սենեկին մէկ կողմը նետուած էին, և Հէնրի անշորժ աչուքներով, ցցուած մազերով և գիշերոյն զգեստներովը այլանդակ մէկը դարձած, սենեկին մէկ անկիւնը կանգնէր ոտքէն մինչև գլուխը կը դողդղար :

Այ ձեռքը որ հոգնայուզեալ տերեւի մը պէս կը շարժէր երկնյուցած էր :

Չախ ձեռքը սրոյն երախակալը բոլոր զօրով թեամբ բռնած կարկամած էր :

Նարկիսն ալ իր ախրովը նման վրդովեալ, ճիրանները բացած երեսն ի վեր կը նայէր և կուռար :

Թագաւորին լեզուն երկիւղէն բռնուած էր և ոչ ոք կը համարձակէր լուծթեան կապը խղբելու . ամենքն ալ այս վըրդովման պատճառը ակնարկի կը հարցունէին միմեանց և սաստիկ անձկութեամբ ակնակառոյց կեցած էին :

Լուիզ ար Լուէն, մանկամարդ թագուհին, այն խարտեշադեղ և հեղահամբոյր արարածը որ սրբուհոյ մը կեանքը վարեց աշխարհիս վրայ, ամուսնոյն օրտաղոջ աղաղակներէն արթնցած, կիսամերկ, թէեւ մեծ վերարկուի մը մէջ փաթթուած, եկաւ բազմութեանը մէջ երեւցաւ :

— Ի՛նչ կայ, տէր արքայ, ըսաւ ամենէն աւելի դողդղալով . Տէր Աստուած, ձայնդ մինչև սենեակս հասաւ և ես ալ վազելով եկայ :

— Բա՛ն . . . բան . . . բա՛ն չի կայ, ըսաւ թագաւորը առանց աչքերը շարժելու, որոնք կարծես թէ անորոշ և այլոց համար աներեւոյթ բան մը կը դիտէին օդին մէջ :

— Բայց Ձեր Վեհափառութիւնը ին՞ու համար աղաղակեց, կրկնեց թագուհին . . . : Սրբեօք հիւանդ էք :

Երկիւղը ակներու նկարուած էր Հէնրիի դիմացը վրայ և ներկայ գոնուողներուն ամենքն ալ ակնապիշ իր երեսը կը նայէին : Յետոս յետոս կրնկրկէին, յառաջ կը խաղային և կարծես բոլորովն աչք կտրած թագաւորին չորս կողմը կը դիտէին թէ արդեօք վիրաւորուած է, կայծակնահար եղած կամ թէ սողուն մը զինքը խածատած :

— Ա՛հ, տէր արքայ, դուչեց թագուհին . տէր արքայ, կաղաչեմ . յանուն Աստուծոյ, մի այսպէս մոտատնջութեանց մէջ թողուք զմեզ : Կուզէ՛ք, բժիշկ մը բերել ում :

— Բժիշկ մի՛ . . . ըսաւ Հէնրի խեղճուկ ձայնով . ո՛չ, ո՛չ . մարմնս հիւանդ չէ, այլ հօգիս . բժիշկ չեմ ուզեր, այլ խոստովանահայր մը, խոստովանահայր . . . :

Ամենքն ալ իրարու երես նայեցան և դռները, վարագոյրները, դեղինը և սաւատաղը կը դիտէին այս տարօրինակ եղբու թեան պատճառը իմանալու համար :

Այն աներեւոյթ իրը՝ որ թագաւորին այս աստիճան սոսկում պատճառած էր, տեղ մ'անդամ իր հետքը ձգած չէր :

Ամենուն ալ հետաքրքրութիւնը երթալով աւելի կը սաստկանար, դադունիքը անթախանցելի կերպարանք մը կառնէր, թագաւորը խոստովանահայր մը կը ինդքէր . . . :

Իսկոյն սուրհանդակ մը ճանրայ ելաւ, որուն երկվարին տոներէն հալարաւոր կայծեր կը ցայտէին Լուվրի պալատին գաւիթը : Հինգ վայրկեան վերջը՝ Հայր Ժօզէֆ Գուլոն, Սէնթ-ժէնրվիէի վանքին վանահայրը որ աճալարանօք բունէն արթնցուններով զրէթէ բռնաբար անկողնէն հանած էին, թագաւորին պալատը եկաւ :

Խոստովանահայրը եկածին պէս աղմուկը դադրելով լուծութիւնը վերահաստատեցաւ . ամենքն ալ սկսան ստոր պատճա-

ուր իրարու հարցունել . զանազան կարծիքներ կընէին , կարծես գաղտնեաց խորը կը թախանցէին , բայց երկու-դը իրենց սրտերուն մէջ տիրած էր . . . : Թագաւորը կը խոստովանէր . . . :

Հետեւեալ առաւօտուն կանուխ թագաւորը ամենէն յառաջ արթննալով հրամայեց Ղուվրին դուռները գոցել որ խոստովանահայրին պատճառաւ բաց մնացած էին :

Յետոյ արքունի մատակարարը , լուսավառութեան և հանդէսներու անօրէնները քովը կանչեց , սեւ կաշեպատ աղօթագիրքը ձեռքը առաւ և աղօթք ընել սկսաւ . երբեմն ալ աղօթքը ընդմիջելով սրբոց փոքրիկ պատկերներու վրայ վարդեր կը շինէր :

Յանկարծ նոր գաղափար մը միտքը գալով , հրամայեց որ բոլոր բարեկամները քովը կանչեն : Նախ և առաջ Մէն-Ղուքին սենեակը գացին , բայց և այնպէս Մէն-Ղուքին հիւանդութիւնը սաստկացած էր , կը հեծէր , ցաւերուն ծանրութեանը տակ ճնշուած վաստակաբեկ եղած էր :

Յաւէն սաստիկ նեղութիւն մը տիրած էր սրտին վրայ . իր քունը այնչափ խորին և մահանման եղած էր որ պարտաւ կաններէն ինքը միայն թագաւորին գիշերուան ալազակները չէր լած , թէ և իր սենեակը բարակ որմով մը միայն զատուած էր թագաւորին սենեակէն : Մէն-Ղուք ինդրեց որ հանգիստ թողուն զինքը անկողնոյն մէջ և թէ թագաւորը ինչ աղօթք որ հրամայէ , անկողնոյն մէջ կը կատարէ :

Այս ցաւալի իրողութիւնը լած ժամանակ Հէնրի խաչակընրեց երեսը և հրամայեց որ իր դեղագործը Մէն-Ղուքին քովը դրկեն :

Յետոյ հրամայեց որ Գենովեիեան կրօնաւորաց վանքին բոլոր խորագանները Ղուվրն բերեն , և ինքն ալ սեւ զգեստներ հագած Սքոնպէրկին քովը զնաց որ կաղալով կը քայլէր , նոյնպէս և տ'Լըէրնոնին քովը որ վերադրեալ թեւը կապած էր , Քէլիւսին՝ որ բոլորովին ապուշ դարձած էր , տ'Օին ու Վօփիրոնին՝ որ վախերնէն դեռ կը դողդղային : Ասոնց ամենուն ալ խորագաններ բաժնեց և հրամայեց որ ամենայն

գորութեամբ զիրար ձաղկեն :

Տ'Լըէրնոն դիտողութիւն ըրաւ թագաւորին թէ իր թեւը կապած ըլլալով չը պիտի կարողանայ այս արարողութեան մասնակցել , ըստ որում չը պիտի կարենայ իրեն տրուած հարուածները փոխարինել և ձաղկելու արարողութեան ներդաշնակութիւնը պիտի կորսուի :

Հէնրի պատասխանեց թէ իր ապաշխարանքը այս կերպով աւելի հաճելի կը լայ Աստուծոյ :

Այս ուրիշներուն օրինակ ըլլալու համար , վերարկուն , բաճկոնակը և շապիկը հանեց ու սկսաւ մարտիրոսի մը պէս ձաղկել զինքը : Շէքօ իր սովորութեանը համեմատ ուղեց ծաղրաբանութիւններ ընել , բայց թագաւորը սոսկալի հայեցողութեամբ մը խնայուց իրեն թէ ծաղրաբանութեան ժամանակը չէ . ուստի Շէքօ ալ միւսներուն նման խորագան տ'առաւ ձեռքը , բայց փոխանակ ինքզինքը ձաղկելու իրեն քովը գտնուողները կը հարուածէր . և երբ իրեն քովը մէկը չէր գտնելո նկարներով զարդարուած սիւները և փայտակերտները կը զարնէր կը կոտորէր :

Թագաւորը այս ապաշխարութեան հանգէտը տեսնելով փոքր ինչ գուարթութիւն մը կզգէնուր , թէ և իր մտքին վրդովումը գէմքին վրայ յայտնի կը նշմարուէր :

Յանկարծ սենեակէն գուրս ելաւ և հրամայեց որ սպասեն իրեն : Արծես դիւթական զօրութեամբ մը՝ թագաւորը գուրս ելածին պէս ապաշխարութիւնն ալ գազրեցաւ իսկոյն : Շէքօ միայն անդադար կիջեցունէր խորագանը տ'Օին կունդկէն որ բիւր անձք կարդարով , կրցածին չափ ինքն ալ կը փոխարինէր հարուածները :

Հէնրի թագուհւոյն սենեակը գնաց : Քամուհինգ հազար սկուտի արժողութեամբ քառամանեակ մը ընծայ ըրաւ իրեն , անոր երկու երեսները համբուրեց ( գրեթէ տարիէ մը հետէ այսպիսի բան տ'ըրած չէր իրեն ) և աղաչեց որ իր արքայապան զարդերը հանելով քուրճ գցենու :

Ղուիլ տը Ղուէն , բարեպիտ և հեզահամայր թագու-

հին, հաճեցաւ իսկոյն իր ամուսնոյն առաջարկութեանը և հետաքրքրութեամբ ուզեց տեղեկանալ թէ ինչո՞ւ համար արդեօք մարդարտադրող մանեակ մը չնորհած ժամանակ, կը խնդրէ միանգամայն որ քուրճ զգենու :

— Ի՞մ մեղացա համար, պատասխանեց շէնրի :

Ս.յս պատասխանը բաւական եղաւ թագուհւոյն մտայ յուզմունքը հանդարտեցունելու, որովհետեւ քաջ գիտէր ինքը թէ շէնրի Պ. ինչ աստիճան ծանր մեղաց ասկ կը ճընշուէր և թէ այդ ծանրութեանն փրկուելու համար սաստիկ ապաշխարութեան կը կարօտէր: շէնրի պատուիրեց թագուհւոյն որ քրճեղէն զգեստները հագածին պէս իր սենեակը դայ և ինքը մեկնեցաւ դնաց :

Թագաւորը իր սենեակը վերադարձածին պէս մարմնատանջութիւնը դարձեալ սկսաւ : ՏՕ և Եիքօ անդադար զիբար հարուածելով արին սթաթաւ եղած էին : Թագաւորը շնորհակալ եղաւ իրենց և իր միակ ճշմարիտ բարեկամները կոչեց զանոնք :

Տասը վայրկեան վերջը թագուհին խորազննուեցաւ, արքայական սենեակը եկաւ : Իսկոյն բոլոր պալատականներուն մամեր բաժնուեցան և այն ձիւնակոյտ, եղեմոսպատ ու սաստկաշունչ օդին հակառակ, գեղեցիկ պալատականները, գեղանի տիկիները և թագաւորին ու Եոթը-Տամ կեղեցուոյն ջերմեռանդ Բարիպիները՝ բոկոտն մինչև Մոնարքիթը դաշին յրտոյն սաստկութեանէն դողդալով. բայց Եիքօ իր խարաղանին քովը գտնուելու դժբաղուածութիւնը ունեցողներուն այնպիսի կատաղի հարուածներ իջեցուց որ շուտով սկսան տարնալ :

ՏՕ խոտովանեցաւ իր պարտութիւնը և Եիքօէն յիտուն քայլ անդին փախաւ :

Ս.յս ապաշխարողաց շրջագայութիւնը իրիկուան ժամը հինգն անցաւ : Վանքերը բազմաթիւ ընծաներ ընդունեցին, բոլոր պալատականաց ոտքերը ուռեցան, արքունի պնուականաց թիկուները խոցուեցան, թագուհին խոշոր կտաւէ մեծ շապիկ

մը հագած հասարակութեան ներկայացաւ, նոյնպէս և թագաւորն ալ՝ մեռելաց գլուխներուն ձեւովը հատիկներ ունեցող համբիշ մը ձեռքը բռնած : Ողբ, արտասուք, աղօթք, խնկարկութիւն, օրհնելութիւն, ահա ասոնք էին նոյն օրը կատարուածները :

Ս.յսպիսի բարեպաշտական դորձերով անցաւ այս օրը :

Ս.մեռնին ալ թագաւորին հաճելի ըլլաւ համար յրտահար եղան և վիրաւորեցան, բայց ոչ ոք կըրցաւ իմանալ թէ, ինչո՞ւ համար շէնրի որ անցեալ գիշեր զուարթութեամբ կը պարէր Ան-Լիւքին պարահանդէսը, երկու օր վերջը այսպիսի խտամբեքութեամբ կը տանջէր իր մարմինը :

Բողոքականները, Քաշնակիցները և ազատամիտները այս ապաշխարողաց թախտին անցնիլը տեսած ժամանակին, կը խնդային վրանն և ծաղրելով կըրէին թէ ամէնէն վերջի թախտը շատ գեղեցիկ և բարեպաշտական էր, որ ընդհակառակն եղած էր :

Շէնրի երբ որ ապարանքէն ներս մտաւ, տեսաւ որ թիկանցը վրայ խարազանի հարուածներու կտրվի և կտայտ նշաններ գծուած էին : Առաւօտէն հետէ դեռ նախաճաշ ըրած չէր. ամբողջ օրը թագուհւոյն քովէն չը զատուելով եկեղեցուոյն մէջ ապաշխարանաց ամէն մէկ դաղարման ժամանակ նոր եկամուտներ կը խոտանար իրեն և միտսին ուխտողնացութիւններ ընելու վրայ կը խորհրդակցէր :

Իսկ Եիքօ այդ միջոցներուն, թագաւորին հրամայած այս անսովոր կրթութեանն յարնած և փոյն ալ անօթեցած ըլլալով, գնաց Մոնարքիթըրը դռան վրայի տեղը պահուրտեցաւ քիչ մ'ատեն և յետոյ իր բարեկամը Սղըայր Արէնֆլօին հետ (Պիւսին խոտովանեցուեալ ուղող Պենոպիլիտան կրօնաւորն է այս) համբաւաւոր զինետան մը պարտեղը գնաց, ուր համեմախառն զինին խմելով, Արանտ-Պաթըլիէրի ճախիններուն մէջ որսացուած մրտի՞\* մը կերաւ : Վերջը թախտին վերա-

\* Մանր ձկներ ուտող ջրային փոքրիկ բագ մ'է : Գաղղ. սարսէլ :

դարձին ժամանակը իր տեղը անցնելով, մինչև Լուվրն եկաւ. և ճամբան ուզածին պէս հարուածներ իջեցունելով ապաշխարողներուն և ապաշխարուհիներուն, կատակարանութիւններ կրնէր և լիակատար ներողութիւններ կը բաշխէր իրենց :

Երեկոյին ապարանքը վերադառնալէն յետոյ՝ թագաւորը տեսաւ որ ծոմապահութենէն, բոկոսն չըջաղայութենէն և ընդունած ոստիկ հարուածներէն վատակարեկ եղած էր : Հրամայեց որ պահքի կերակուրներով սեղանը պարտատեն, թիկանցը վրայի վերքերը լուան և մեծ կրակ մը վառեն : Այնուհետեւ ելաւ Մէն-Լիւքին սենեակը գնաց որ այս երեկոյ ուրախ զուարթ նոտեր էր :

Գիշերու ընէ հետէ թագաւորը բորբոսովին կերպարանափոխ եղած էր . իր ամեն գաղափարները՝ մարդկային իրաց ոչնչութեան, ապաշխարութեան, մահուան և հանդերձեալ աշխարհին վրայ կը շրջէին :

— Ո՛հ, բաւ Մէն-Լիւքին այս աշխարհէս ճանճրացած մարդու մը կերպարանքով : Աստուած ամենաբարին շատ աղէկ է ըրեր որ այսպէս դառն է մարդկային կեանքը :

— Ինչո՞ւ համար, տէր արքայ :

— Արովհետեւ մարդս այս աշխարհէս ճանճրանալով, փոխանակ մահուանէ երկնչելու տեղի կը փախաբի անոր :

— Ներեցէք, տէր արքայ, դուք ձեզի համար այդպէս կրնա՞ք խօսիլ . բայց ես ամենեւին չեմ փախաբի մահուան :

— Մտիկ ըրէ : Մէն-Լիւք, ըսաւ թագաւորը դու ինչ շարժելով, աղէկ կրնես թէ որ դուն ալ խրատս ընդունելով իմ օրինակիս հետեւիս :

— Մեծաւ հաճութեամբ, տէր արքայ, եթէ ձեր օրինակը յապիք գործը ուրախաւ իմ բան մ է :

— Առկե՞ս որ երկուքնիս ալ ելնենք, ես թագս, դուն ալ կինդ ձգես ու վանք մը մտնենք : Մեր սրբազան Բարէն ուրբանայի ընդունած եմ ես . առանց ժամանակ կորսնցունելու վաղը կը ձեռնադրուինք և աստիճան կառնենք :

Ներքայր Հէնրի դնել պիտի տամ անունս . . . :

— Ներեցէք ներեցէք, տէր արքայ, դուք ձեր թագը շատ ատենէ ի վեր կրե՞նուդ համար ալ բանի մը տեղ չէք դներ, բայց ես դեռ նոր պիտի ճանչեմ իմ կինս, անոր համար չեմ կրնար իրմէն բաժնուիլ : Ուստի կը մերժեմ ձեր առաջարկութիւնը :

— Ո՛հ, ո՛հ, կերեւայ թէ այսօր աղէկ էք, առողջացեր էք :

— Կատարելապէս աղէկ . միտքս հանդարտ է, սիրտս ուրախ, հոգիս ալ յօժար երջանկութեան և զուարճութեան :

— Թշուա՞ւ Մէն-Լիւք, ըսաւ թագաւորը ձեռքերը իրար կցելով :

— Երէկ պէտք էր այդպիսի առաջարկութիւններ ընել ինձի, տէր արքայ : Երէկ սիրտս աստիկ կը նեղանար, բարկութիւնը տիրած էր վրաս, ոչինչ բանի մը համար ինքզինքս ծովը կը նետէի : Բայց այս իրիկուն . . . այս իրիկուն հանգիստ բուն մը քաշեցի, ցերեկն ալ զուարթութեամբ անցաւ : Ի՛հ, հիմա ի՞նչպէս չուրախանամ, անիրա՛ւ . կեցցէ՛ ուրախութիւն :

— Հայհոյեցիր, Մէն-Լիւք :

— Հայհոյեցի՛, կարելի է, տէր արքայ . բայց կարծեմ դուք ալ երբեմն կը հայհոյէք :

— Այո, Մէն-Լիւք . բայց ալ այսուհետեւ չը պիտի հայհոյեմ :

— Ես չեմ համարձակիր այդպիսի խօսք մ'ընելու, միայն թէ կարելի եղածին շատ չի պիտի հայհոյեմ . այս կրնամ խոստանալ : Այսու ամենայնիւ Աստուած ամենաբարի և ամենազորմ է, մեր մեղքերը կը ներէ մեզի, երբ որ մարդկային սկարութենէ յառաջ կուգան :

— Կը հաւատաս որ Աստուած պիտի ներէ ինձի :

— Բայց իմ խօսքս ձեզի համար չէ, տէր արքայ, ծառայիդ համար խօսեցայ ես : Մալայն դուք . . . դուք իբրեւ թագաւոր մը . . . մեղանշած էք, իսկ ես իբրեւ պարզ մարդ մը : Կը յուսամ որ Աստուած երկու տեսակ կ'իւր և երկու տեսակ կը որդ պիտի ունենայ դատաստանին օրը :



Թագաւորը խորին հառաչանք մ'արձակեց, և կուրծքը ծեծեցով, Սէն-Լիւք. խորհրդանշանք և հառաչում, մեծ է ողբերգական իրաւոյն, ըստ :

— Սէն-Լիւք, վերջապէս այս գիշեր սենեակս պիտի գամ :  
— Գործը գիտէ : Ի՞նչ պիտի ընենք Ձեր Վեհափառութեան սենեակը :

— Սենեակին բոլոր ճրագները կը վառենք՝ ես կը պառկիմ, գ ուն ալ Վարք Սրբոյը կը կարդաս որ մտիկ ընեմ :

— Օ, հասկցայ. չնորհակալ եմ ուրեմն, տէր արքայ :

— Ձե՞ս ուզեր գալ :

— Տարակոյս չի կայ :

— Կը թող՞ուս զիս ուրեմն Սէն-Լիւք, կը թող՞ուս զիս :

— Ոչ, ընդհակառակը ես չեմ թողուր ձեզ, թէ որ ուզէք . . . :

— Անտարակոյս կուզեմ :

— Բայց սա անհրաժեշտ պայմանաւ . . . :

— Ի՞նչ :

— Սա պայմանաւ որ Ձեր Վեհափառութիւնը սեղաններ պատրաստել տայ, քնարահարները և շքադիր պարտականները կանչէ և մենք ալ պարենք,

— Սէն-Լիւք, Սէն-Լիւք, գ ոչեց թագաւորը սոսկալով :

— Ո՛հ, կը խենթենամ հիմա, կեցցէ՛ ուրախութիւն. կուզէ՞ք, տէր արքայ, խմենք, պարենք, երգենք, կանչենք :

Հէնրի ամենեւին պատասխան չէր տար : Իր եռանդուն, դրօսասէր և զուարթ մտայնը վրայ սակաւ առ սակաւ տըխրութեան քող մը կը ծածկուէր և կարծես թէ իր վրայ ծանրացող գաղտնի խորհրդածութեան մը դէմ կուռերով կաշխատէր զինքը ճողոպրելու, ինչպէս որ իր թաթիկներէն կապարի կտոր մը կախուած թռչուն մը ի դուր կաշխատի և թեւերը կը տարածէ թռչելու համար :

— Սէն-Լիւք, ըստ վերջապէս թագաւորը տխուր դէմքով մը, գ ուն երբեմն երազ կը տեսնե՞ս :

— Շատ անգամ, տէր արքայ :

— Երազի կը հաւատա՞ս :

— Անշուշա :

— Ի՞նչ պատճառաւ :

— Որովհետեւ երազը իրական բաներու համար մխիթարութիւն կուտայ մեզի : Ինչպէս որ այս գիշեր գեղեցիկ երազ մը տեսայ ես :

— Ի՞նչ :

— Երազիս մէջ կինս . . . :

— Սէն-Լիւք, տակաւին մտքեդ չէ՞ երաձ կինդ :

— Ընդհակառակն ալ աւելի հաստատուած է մտքիս մէջ :

— Ո՛հ, ըստ թագաւորը հառաչանք մ'արձակելով և աչքերը դէպ ի երկինք վերցունելով :

— Երազիս մէջ տեսայ որ՝ շարունակեց Սէն-Լիւք, կինս առանց իր հրեշտակային գեմբը կորսնցունելու, որովհետեւ ինչպէս գիտէք, տէր արքայ, կինս շատ գեղեցիկ է . . . :

— Ո՛հ, Եւան ալ գեղեցիկ էր, բայց մեր ամենուս կորստեանը պատճառ եղաւ :

— Հա՛, հիմա հասկցայ կանանց դէմ ձեր ռիսակալութեան պատճառը : Բայց մենք շարունակենք երազինս :

— Ես ալ երազ մը տեսայ, ըստ թագաւորը :

— Կինս առանց կորսնցունելու իր հրեշտակային գեմբը, թռչունի մը կերպարանք առեր և թեւաւորուեր էր և դռները ու երկաթի վանդակները բանի մը տեղ չը դնելով, Լուսինին պէտքերուն վրայէն թռչելով եկեր սենեակիս պատուհաններուն կը բազխէր գլուխը և դողաբիկ ճիւղ կարճակէր : Բայց Սէն-Լիւք, բայց սիրելի ամուսինս, կըսէր :

— Բայց՞ր գ ուն ալ, հարցուց թագաւորը դրեթէ յուսահատած :

— Անշուշտ, գ ոչեց Սէն-Լիւք. տեղէս ցաթկածիս պէս իսկոյն բացի :

— Աշխարհասէ՛ր :

— Ա, յո՛, տէր արքայ, կը սիրեմ ես այս աշխարհքը :

— Ի՛հ, այնուհետեւ արթնցար :

— Ոչ, տէր արքայ, ինչո՞ւ պիտի արթնայի, այսպիսի գեղեցիկ երազէ մը ո՞վ կրնայ դատուիլ :

ԹԱԳԱՌՈՒՆ ԵՒ ՇԻՔՈՒՆ ԵՐԿԻԼԸ

— Ուրեմն երկարեցաւ երազդ :  
 — Կրցածիս չափ , տէր արքայ :  
 — Կը յուսամ որ աս գիշեր ալ . . . :  
 — Նորէ՛ն երազ տեսնեմ . այո , տէր արքայ , յոյս ունիմ .  
 ասոր համար է որ Ձեր Վեհափառութեան սենեակը դարով  
 Վարք Սրբոց կարդայու ե ալօթք ընելու պատիւը մերժեցի :  
 Թէ որ քունէս գրկուիմ , դոնէ փոխաբէն մ'ըլլալու համար՝  
 տեսնելիք երազիս համարօք բան մ'ըլլալու է : Թէ որ ըսա-  
 ծիս պէս Ձեր Վեհափառութիւնը հրաման տայ սեղաններ  
 պատրաստելու , քնարահարները կանչելու . . . :

— Լուէ , Սէն-Լիւք , լուէ , ըսաւ թագաւորը ոտքի վրայ  
 եջնելով : Գուն արդէն մարտեր ես ե եթէ քիչ մ'ալ քովդ  
 կենամ , դիս ալ քեզի հետ մէկտեղ պիտո՞ կորանցունես :  
 Մ'նաս բարով , Սէն-Լիւք . կը յուսամ որ Աստուած այդ սա-  
 տանայական երազիդ տեղը փրկարար տեսիլք մը կերեւցունէ  
 քեզի ե վաղուանէ սկսելով դուն ալ ինձի ոգէս կապալախարես  
 ու միասին կը փրկուինք :

— Ես չեմ հաւատար ասոր , տէր արքայ . ե խորհուրդ  
 կուտամ Ձեր Վեհափառութեան , որ վաղն առաւօտ կանուխ  
 աս անառակ Սէն-Լիւքը Լուվրին դռնէն դուրս նետէք որ  
 միտքը դրած է առանց պաշխարելու անգեղջ մեռնիլ :

— Ոչ , ոչ . կը յուսամ որ Աստուծայ չնորհքը քու վրադ  
 ալ կիջնէ մինչեւ վաղը , ինչպէս որ իմ վրաս իլաւ : Գիշեր  
 բարի , Սէն-Լիւք . երթամ քեզի համար ալօթք ընելու :

— Գիշեր լոյս բարի , տէր արքայ . ես ալ ձեզի համար ե-  
 րազ տեսնելու դրազիմ :

Այս ըսելով Սէն-Լիւք լիտի երգի մը առաջին տունը սկը-  
 սեց երգել զոր թագաւորը սովորութիւն ըրած էր իր ուրա-  
 խութեան ժամանակները երգելու :

Ասոր վրայ թագաւորը բարկանայով աճապարեց դռնէն  
 դուրս ելնել ե իր սենեակը դնաց քիչին տակէն քրթննելով :

— Տէր իմ ե Աստուած իմ , արդար է բարկութիւն քո , զի  
 աշխարհ ամենայն դնաց զիջի մարտութեան :

Թագաւորը Սէն-Լիւքին սենեակէն դուրս ելնելէն վերջը՝  
 տեսաւ որ բոլոր պալատականները իր հրամանին համեմատ  
 մեծ սրահը հաւարուած էին :

Իր սիրականներուն մէկ քանի չնորհքներ ըրաւ . տ'Օն , ա'Լե-  
 ըէրնոնը ե Սրոնպէրը դաւաճները զրկեց , Մօժիրոնին ե  
 Քէլիւսին սպառնացաւ անաչառութեամբ դատել զիրենք , Ե-  
 թէ Պիւսիին գէմ'նորէ՛ : վէճ յարուցանեն , Պիւսիին՝ ձեռքը  
 համբուրել տուաւ ե իր Ֆաւնտուա եղբայրն ալ դորովանօք  
 սեղմելով կուրծքին վրայ , երկար ատեն անոր իաթթուած  
 կեցաւ :


Գաղով թագուհւոյն , այնպիսի մտերմական ձեւեր ե դո-  
 վեստներ ըրաւ անոր որ ներկայ դոմեւօղները թագուհին  
 Գաղղիոյ գահուն վրայ Հէնրիի յաջորդելուն ալ տարակոյս  
 չունեցան :

Քայց ե այնպէս ննջելու ժամանակը կը մերձենար ե ա-  
 մենքն ալ կը տեսնէին որ թագաւորը կարելի եղածին չափ  
 կուշանար երթալու : Վերջապէս Լուվրի ժամացոյցը տասը  
 զարկաւ . Հէնրի չորս կտրմը գիտեց , կարծես թէ իր բարե-  
 կամաց մէջէն մէկը կը վնասուէր , որ Սէն-Լիւքին մերժած  
 պաշտօնը անոր յանձնէ :

Շիքօ ակնապիշ թագաւորին երեսը նայելով , իր սովորա-  
 կան համարձակախօսութեամբ ըսաւ .

— Հէնրի , այս գիշեր մեղոյշ աշուրներով երեսս կը նայիս :  
 Սրդեօք տասը հազար լիար եկամուտով վանքի մը մէջ պաշ-  
 տօն պիտի տաս ինձի , դիտե՛ս , ինչ ազէկ վանահայր մը  
 կրնամ ըլլալ : Տուր , որդեակ իմ , տուր :

— Հետս եկէք , Շիքօ , ըսաւ թագաւորը : Գիշեր բարի ,  
 Պարոնայք . երթամ ննջելու :



Շիրօ պալատականներուն դարձաւ, պետերը սլորեց և իր սիրուն ու խոշոր աչուքները դարձունելով :

— Գիշեր բարի, Պարոնայք, կրկնեց Հէնրիին ճայնին նըմանութիւնը ընելով: Գիշեր բարի, Պարոնայք. երթանք ննջելու :

Պալատականները իրարու երես նայելով չրթունքնին խաճին և թագաւորը շառագունեցաւ :

— Օն, վարսավիրայ, սա՛փրիչ, սենեկապան, շուտ բրէք. չք մոռնաք սերն ալ բերելու, ըսաւ Շիրօ :

— Այ, ըսաւ թագաւորը, այս գիշեր ատոնց և ոչ մէկը պէտք է. մի՞ժ պահք է, ապաշխարութեան մէջ եմ ես ալ :

— Մեղքը չէ՞ սերս :  
Թագաւորն ու խեղկատակը երան ննջելու սենեակը դացին որուն վրայ պրզէն դրած ենք :

— Հէնրի, այս գիշերուն սիրելիդ ե՞ս եմ, ըսաւ Շիրօ. ուրեմն Քիւբիտոն աը Քէլիւսէն աւելի գեղեցիկ եմ ես որ ինձմէ չես կրնար դատուիլ :

— Առէ, խեղկատակ : Թող դուրս ելնեն վարսավիրայն, սափրիչը և սենեկապանը :

Սպասաւորները խելոյն դուրս ելան, դուռը գոցուեցաւ, Հէնրի և Շիրօ առանձին մնացին : Շիրօ զարմացմամբ Հէնրիին երեսը կը նայէր :

— Ինչո՞ւ համար ճանքեցիք զանոնք, հարցուց խեղկատակը : Գեռ չիւզոտեցին զմեզ. արդեօք դո՞ւն պիտի իւզոտես զիս արքայական մատներովդ : Է՛հ, այդ ալ տեսակ մը ապաշխարանք է :

Հէնրի պատասխան չը տուաւ : Սենեկին մէջ իրենցմէ զատ մարդ չի կար. ակնապիշ կը դիտէին զիրար :

— Ելէք, աղօթք ընենք, ըսաւ Հէնրի :

— Ծնորհակալ եմ, գոչեց Շիրօ. ես ի՞նչ զուարճութիւն պիտի իմանամ աղօթքէն. թէ որ ասոր համար զիս հոս կանչեցիր, ես չեմ կենար, իմ ընկերներուս քովը կերթամ : Մտաք բարով, որդեակ իմ. գիշեր բարի :

— Կեցէք, Շիրօ, կեցէք :

— Ահ, ըսաւ Շիրօ ոտքի վրայ ելնելով, երթալով բռնաւոր մը կը դառնաս գլխուս : Գուն միտպետ մ'ես, Յալարիս մը, Տընիս մը : Ես չեմ կրնար կենալ հոս, կը ճանձրանամ, օրն ի բուն քեզի համար խարազանով հարուածեցի բարեկամներս և թիկունքնին վիրաւորեցի. հիմակ ալ կուզես որ դա՞րձեալ նոյն թմբուկը վարենք : Չսկսինք նորէն, Հէնրի, չսկսինք. գիտես որ միայն երկու հոգի ենք հոս և ամեն հարուած երկուքներնուս . . . կիջնէ :

— Առեցէք, շատախօս. եւ նայեցէք որ շուտով զղջումի գալով ապաշխարէք :

— Ե՛ս զղջումի դամ. բայց ի՞նչ բանի համար, կրօնաւորի մը խեղկատակը ըլլալուս համար. լաւ, ահա կը զղջամ. Սեւայ Ասորոնայ. Իսսորոնայ առաջի Ասորոնայ և սրբահոյ Ասորոնայն և սինայի սրբոց . . . :

— Առէ, սրբապիղծ թշուառախան, լռէ :

— Բայց ի՞նչ պիտի ըլլայ այս . . . : Աւելի կը սիրեմ կապիկներու ընտկարանին և կամ առիւծներու դառադղին մէջ փակուիլ, քան թէ այսպէս կրօնամոլ թագաւորի մը սենեակը : Մնաս բարով, ես կերթամ :

Թագաւորը դռան վրայէն փականքը վերցուց :

— Հէնրի, ըսաւ Շիրօ. քեզի առաջուց կիմացունեմ որ ես քու գեմքիդ չեմ հաւնիր, միտքդ գէշ բան մը դրած ես դուն. և եթէ չը թողուս ինձի դուրս ելնել, կը պօռամ, կը կանչեմ, դռները և պատուհանները կը կոտրեմ : Բայց . . . բայց դուն ալ . . . :

— Շիրօ, ըսաւ թագաւորը մեղամաղձոտ դէմքով և ցաւազին ճայնով. Շիրօ, մի այդպէս չարաչար վարուիր հետս այս տխուր վիճակիս մէջ :

— Հասկցայ, կերկնչիս առանձին մնալու. բռնաւորները այսպէս են : Գուն ալ Տընիսին պէս տասներկու սենեակ շինել տուր կամ Տիւրերին պէս տասներկու պալատ : Հիմակու հիմա առ սա երկար սուրս թող քովդ մնայ և պատեանն ալ առնեմ :

իմ սենեակս տանիմ. ի՞նչ կըսես :

Երբ երկնիկ բառը արտասանած ժամանակ՝ Հէնրիի աչա-  
ցը մէջ կարծես թէ կայծակ մը փայլատակեցաւ . տարօրինակ  
սարսուռ մ'եկաւ վրան, ուղբի վրայ ելաւ և սկսաւ սենեկին  
մէջ շրջադայիլ : Հէնրի ոտքէն մինչև գլուխը կը դողդղար,  
սոսկալի դունատութիւն մը տիրած էր դիմացը վրայ, այնպէս  
որ Երբ սկսաւ հաւատալ թէ իրօք հիւանդ ըլլալու է և պա-  
կուցեալ աչօք դիտելով սենեկին մէջ Հէնրիին երեք չորս շրջան  
ընելը, ըսաւ իրեն .

— Եկուր նայի՛ւր, Հէնրի, ի՞նչ կայ, ի՞նչ ունիս . պատմէ  
քու ջաւերդ բարեկամդ Երբօին :

Թաղաւորը խեղկատակին առաջը կանգնեցաւ և երեսն  
ի վեր նայելով ըսաւ :

— Այո, դուն իմ բարեկամս ես, իմ միակ բարեկամս :

— Վայրանէ՛յի վանքին վանահայրութեան աթոռը սպարապ  
է, ըսաւ Երբօ :

— Մտիկ ըրէ, Երբօ, խոհեմութեամբ խօսէ :

— Բիթիլիէրի վանահայրութեան աթոռն ալ սպարապ է .  
աս վանքը արտոյտ թռչունին մտովը շինուած աղուորիկ կար-  
կանդակ կուտեն :

— Թէև կատակարանութիւններ կընես, բայց բարեխրոտ  
և աներկիւզ մէկն ես :

— Ուրեմն վանք մը մի տար ինծի, այլ զօրաց գունդ մը :

— Խեղացի մարդ մըն ալ ես :

— Ուրեմն զօրաց գունդ մը մի տար, այլ խորհրդական ըրէ  
զիս : Բայց ոչ . . . խորհրդական չեմ ըլլար, այն ատեն պիտի  
ստիպուիմ թաղաւորին ամեն խորհուրդներուն հաճութիւն  
տալու . վանք մը կամ զօրաց գունդ մ'ընդունելու է . այս եր-  
կուքին ո՞րը ընտրեմ արդեօք :

— Լուս կեցէք, Երբօ, լուս կեցէք, սոսկալի ժամը մօ-  
տեցաւ :

— Ո՛հ, նորէն սկսաւ բանդադուշել :

— Ար տեսնես՝ս, կը լսես հիմա :

— Ի՞նչ պիտի տեսնեմ, ի՞նչ պիտի լսեմ :

— Քիչ մ'ալ սպասեցէք և դորձը ինքնին կը յայտնէ ձեզի :

— Բայց ոչ, ոչ, չեմ կրնար սպասել . այս ի՞նչ բռնութիւն

. . . ո՞ր կատղած շունը եկեր մօրդ գէմը խաղացեր է, հայրդ  
և մայրդ քեզ յղանալու ձախող գաղափարը ունեցած դիչերնին :

— Երբօ, քաջ մէկն ես դուն :

— Այո, պարծելով կըսեմ, բայց իմ քաջութիւնս չեմ ու-  
զեր փորձի դնել, անշնորհք : Երբոր Քաղզիոյ ու Բարնիոյ  
թագաւորը կենէ կէս դիչերուն այնպիսի սաստիկ աղաղակ մը  
կը բրցունէ որ բոլոր Լուվրն իրար կանցնի, և չնչին մէկը  
այսպէս քու բնակարանդ մտալով անպատուութիւն մը բերած  
կըլլամ : Կանչէ պահապանաց հրամանատարները, դռնապան-  
ները և թող որ ևս երթամ հանդիստս նայիմ. ի՞նչ է այդ ը-  
սած աներեւոյթ վտանգդ որ ևս չեմ գիտեր :

— Քեզի կը հրամայեմ որ հոս կենաս, ըսաւ թաղաւորը  
իշխանարար :

— Առ քեզի ծիծաղելի տէր մը որ կուղէ երկիւղին հրա-  
մայել . ևս կը վախնամ. կը վախնամ ըսի քեզի, թող զիս :

Եւ Երբօ անտարակոյս վտանգէն ազատելու համար սեղա-  
նին վրայ ելաւ :

— Յն ուրեմն, խեղկատակ, ըսաւ թաղաւորը . հասկցայ  
որ մինչեւ ամեն բան չըսեմ քեզի, ձայնդ չը պիտի քաշես .  
ուստի սկսինք պատմելու :

Երբօ ձեռքերը իրարու շիւելով, զգուշութեամբ սեղանին  
վրայէն վար իջաւ և իր երկայն սուրը քաշելով :

— Անդամ մը դորձը իմանամ, ըսաւ, գիտեմ ևս ընելիքս .  
յգատմէ, որդեակ իմ, պատմէ : Արեւայ թէ կոկորդիլոս մը  
ըլլալու է, ի՞նչ կըսես : Սուրիս երկաթը գէշ չէ, ամեն շա-  
բաթ եզջիւրներուս քովերը կառնեմ անով և եզջիւրներս ալ  
բաւական կարծր են : Հէնրի, կոկորդիլոս մ'է կըսելիք :

Եւ Երբօ մեծ աթոռի մը վրայ փռուեցաւ նստաւ, սուրը  
Քրկու աղդերը մէջ առանց պատենի դրած և երկու սրունք-  
ներն ալ վրան փաթթած . ինչպէս սր օձերը Արքիբի ( Հեր-

մէս) դաւաղանին վրայ փաթթուած կը նկարուին իբրև խորհրդաւոր նշանակ խաղաղութեան :

— Երէկ դիչեր երբ որ կը քնանայի . . . ըսաւ Հէնրի :

— Ես ալ կը քնանայի , ըսաւ Եիքո :

— Յանկարծ շունչ մը սկսաւ փչել երեսիս վրայ :

— Կերեւայ թէ կոկորդիլոսը ըլլալու է որ փորը անօթեցեր և եկեր երեսիդ իւղերը կը լլցէ :

— Կիսովին արթնցայ և զգացի որ երկիւղէս մօրուքս ցըցուեր էր գիմակիս տակը :

— Ա՛հ , անուշ սարսուռ մը բերրի վրաս , Հէնրի , ըսաւ Եիքո աթոռին վրայ կծկտելով և կըսովր սուրին երախակալին վրայ կըթնցունելով :

— Այն ժամանակ , ըսաւ թագաւորը այնպիսի տկար և դողդոջուն ձայնով մը որ հագին մինչև Եիքոին ականջը հասաւ . այն ժամանակ սենեկիս մէջ այնպիսի ցաւաղին և թրքթրուուն ձայն մը հնչեց որ ուղեղիս բոլոր ջիղերը դողդղացուց :

— Կսկորդիլոսին ձայնն ըլլալու է : Ես Մարքո Բօրօի ճանապարհորդութեանց մէջ կարգացած եմ որ կոկորդիլոսը ստակալի ձայն մը ունի և տղայոց պէս ճիչեր կարձակէ . բայց անհող եղիք , որդեակ իմ , թէ որ դալու ըլլայ , կապանները զինքը :

— Լաւ մտիկ ըրէ :

— Է՛հ , ի՞նչպէս մտիկ ընելու է , ըսաւ Եիքո . կոճիղ մը պէս անշարժ և ծածան ճուղին պէս անշտունջ նստեր քեզ մտիկ կընեմ :

Հէնրի աւելի տխուր և վշտաղին ձայնով մը շարունակեց .

— Թշուա՛ւ մեղաւոր , ըսաւ ձայնը . . . :

— Վա՛յ , ըսաւ Եիքո թագաւորին խօսքը ընդհատելով , այդ ձայնը կը խօսէ՞ր . ուրեմն կոկորդիլոս չէ եղեր :

— Թշուա՛ւ մեղաւոր , ըսաւ ձայնը , քու Տէր Աստուծոյդ ձայնն եմ ես :

Եիքո նստած տեղէն վեր ցաթկեց և ոտքերը վեր քաշելով աթոռին վրայ ծռնկ նստաւ :

— Է՛յ , ըսէ նայինք , Աստուծոյ ձայնը . . . :

— Ա՛հ , Եիքո , սոսկալի ձայն մ'էր :

— Ի՞նչպէս , գեղեցիկ էր . Ս . Գրքին ըսածին պէս փողի ձայնին կը նմանէ՞ր :

— Կը բե՛ս , կիմանա՛ս , անպեղձ մեղաւոր , ըսաւ ձայնը . տակաւին պիտի շարունակե՞ս քու ամբարշտութիւններդ , տակաւին չը պիտի՞ ապաշաւես :

— Ի՞նչ կըսես , ստո՞յգ է Հէնրի . բայց այդ Աստուծոյ ձայնը , կարծեմ , ճիշդ ժողովրդեանդ ձայնին կը նմանի :

— Յետոյ հազար ու մէկ նախատինքներ ըրաւ ինձի , որոնք՝ կը խոստովանիմ Եիքո , սաստիկ վիրաւորեցին սիրտս :

— Եարունակէ , որդեակ , շարունակէ . պատմէ այդ ձայնին ըսածները , տեսնեմ Աստուած կատարեալ տեղեկութիւն ունի՞ եղեր :

— Սմբա՛րիչտ , դուչեց թագաւորը . եթէ կը թերեհաւատիս , պատժել կուտամ քեզ :

— Ե՛ս , խոստովանիմ և հաւատամ . միայն թէ սա կը զարմանամ որ Աստուած մինչև այս օրս համբերեր է այդ յանդիմանութիւնները ընելու համար : Զրհեղեղէն հետէ շատ համբերող եղեր է : Վերջապէս , շարունակեց Եիքո , սաստիկ վախցար , այնպէս չէ՞ :

— Այո :

— Ի՞նչ կար :

— Քշտինքը երեսէս վար կը հոսէր և ոսկերացս մէջի իւղերը սառեցան :

— Ինչպէս Երեմիայի մարգարէութեանց մէջ գրած է . այդ բնական է . թէ որ ես ձեր տեղն ըլլայի , չեմ գիտեր արդարեւ թէ ինչ պիտի ընէի : Վերջապէս այն ատեն ազաղակեցիք :

— Այո :

— Վազեցին եկա՞ն :

— Այո :

— Չորս կողմը դիտեցի՞ն , փնտռեցի՞ն :

— Ամեն կողմ :

— Բան մը չի գտա՞ն :

- Ամեն բան աներեւոյթ եղած էր :
- Եւ Հէնրի Գ. ալ ապշած մնացած, այնպէս չէ՞, սարւ ստիւիլի՛ բան :
- Այնչափ սարսուղիչի սր խոտորվոնոհայրս կանչել տուի :
- Է՛յ, շատ աղէկ, վազեց եկա՞ւ :
- Իսկոյն :
- Ի՞նչ խօսեցաւ այդ յայտնութեան նկատմամբ : Ըսէ, որդեակ իմ, սովորականիդ պէս համարձակ խօսէ ճշմարիտը :
- Յայտնութիւնը պատմած ժամանակս սովաջ :
- Այդ արդէն յայտնի է :
- Երեսը խաչակիցեց և պատուիրեց որ զզջումի դամ, ինչպէս որ Աստուած կը հրամայէր :
- Շատ աղէկ, զզջումը դէշ բան չէ, ամեն բրած շարիք ներնու համար կարեւոր է. բայց տեսիլքին կամ լսած ձայնիդ նկատմամբ ի՞նչ ըսաւ :
- Ըսաւ թէ նախահամութեան մէկ գործն է այս, հրաշք մ'է և թէ պէտք է փութալ Տէրութեան փրկութիւնը խորհելու : Ես ալ այս առաւօտ . . . :
- Ի՞նչ ըրիր այս առաւօտ, որդեակ իմ :
- Հարիւր հազար լիտր ողորմութիւն տուի ճիզվիթներուն :
- Շատ լա՛ւ :
- Եւ խարազանի հարուածներով իմ ու երխտասորդ սիրելիներուն մորթը ճեղքուեցի :
- Լաւագոյն ևս : Բայց այնուհետե՞ւ :
- Այնուհետեւ . . . : Ի՞նչ կը կարծես դուն, Շիրօ, ծաղրաբան մարդու հետ խօսք չունիմ ես, խոհեմ մարդու, բարեկամի հետ է խօսքս :
- Ո՛հ, տէր արքայ, ըսաւ Շիրօ ծանր գէմբով, կարծեմ թէ Խուճէ եկած ձեր անկողնոյն վրայ նստած ըլլալու է :
- Կը կարծես թէ . . . :
- Թէ Ձեր Աւհապառութեան պատմածը երազ մ'է և եթէ մտքերիդ անոր վրայ չը յոգնեցունէք, նորէն չը պիտի տեսնէք այդ երազը :

- Երազ մը՛, ըսաւ Հէնրի գլուխը շարժելով. ո՛չ, ո՛չ. արթուն էի, Շիրօ, լաւ կը յիշեմ :
- Քնացած ըլլալու ևս, Հէնրի :
- Բայց աչքս չորս բացած էի :
- Ես ալ աչքս բաց կը քնանամ :
- Այո, բայց աչքերս կը տեսնէին. մարդ մը քնացած ատեն ի՞նչպէս կրնայ ըլլալ որ աչքերը տեսնեն :
- Ի՞նչ կը տեսնէիր :
- Կը տեսնէի որ լսւնիք սենեկին պատուհաններուն վրայ ծաղած էր և սուրս՝ որ ձեր նստած աեղը դրած էի, իրեն երակակալին սուտակէ գնտակը աղօտ լուսով մը կը փայլէր :
- Իսկ կանթե՛ղը ի՞նչ եղած էր :
- Մարած էր :
- Երազ մ'է այդ, սիրելի որդեակ, պարզապէս երազ մը :
- Ինչո՞ւ համար չես հաւատար, Շիրօ. գրուած չէ՞ թէ Տէր Աստուած երբեմն թաղաւորներուն հետ կը խօսի, երբ որ աշխարհիս վրայ մեծ փոփոխութիւն մ'ընել ուզէ :
- Այո, ստոյգ է որ կը խօսի, սակայն այնչափ մեղով ձայնով որ չեն լսեր :
- Բայց ինչո՞ւ այդ աստիճան թերեհաւատութիւն կը ցուցնես :
- Որովհետեւ կը զարմանամ թէ ի՞նչպէս այդ աստիճան յստակ և որոշ լսէք ես :
- Գիտե՞ս ինչու համար ուզեցի սր հոս մնալ :
- Ո՛չ :
- Այդ ձայնը դուն ալ անձամբ խի լսելու համար :
- Որպէս զի եթէ լսածս երթամ ուրիշ տեղ մը պատմեմ, իրբեւ կատակարանութիւն մը համարին, այնպէս չէ՞ : Կ'հ, գէշ լսելը չէ ըրածդ, որդեակ իմ : Շիրօ այնպիսի չնկն, դրժուճ մէկն է որ մէկն ալ անոր ըսածին չը հաւատար :
- Բայց, սիրելի բարեկամս, ինչո՞ւ համար չես հաւատար, թէ այդ գաղանիքը միայն քեզի վտտահելու համար ուզեցի հոս մնալ :

— Սուտ մի խօսիր, Հէնրի, սուտ մի խօսիր. եթէ ձայնը դարձեալ լսելի ըլլայ, այդ ստախօսութիւնդ ալ երեսօղ կը դարնէ. արդէն բաւական յանցանքներ ունիս քեզ յանդիմանելու համար. բայց փոյթ չէ, կընդունեմ առաջարկութիւնդ. ես ալ կուզեմ Աստուծոյ ձայնը լսել, թերեւս բան մ'ալ ինծի համար կրտէ:

- Լաւ, ի՞նչ ընելու է հիմա:
- Պէտք է որ պառկես:
- Բայց թէ որ ընդհակառակն . . . :
- Բայցի խօսք չը մնար ալ:
- Սակայն և այնպէս . . . :
- Ի՞նչ, կը յուսաս թէ ոտքի վրայ կենայով կրնաս Աստուծոյ ձայնը խափանել: Թագաւոր մը ուրիշ մարդիկներէն իր թագին բարձրութեանը չափ միայն մեծ կերեւայ, իսկ թէ որ դուխը բաց ըլլայ, հաւատա ինծի Հէնրի, որ երբեմն ուրիշ մարդիկներէն ալ փոքր կըլլայ:
- Եստ լաւ, կը կենաս հոս:
- Կը կենամ:
- Ուրեմն ես պառկեմ:
- Լաւ:
- Բայց դուն ալ չե՞ս պառկիր, ըսաւ թագաւորը:
- Ամենեւին ոչ:
- Միայն թէ բաճկոնակս պիտի հանեմ:
- Ուզածիդ պէս ըրէ:
- Ներքնաշապիկս չը պիտի հանեմ:
- Գէշ չէ այդ զգուշութիւնը:
- Իսկ դո՞ւն:
- Նստած տեղս պիտի կենամ:
- Գիտե՞ս որ չը պիտի քնանաս:
- Խօսք չեմ կրնար տալ. քունն ալ երկիւղի զգացման պէս մեր կամքէն անկախ բան մ'է, որդեակ իմ:
- Գոնէ կրցածիդ չափ աշխատէ որ չի քնանաս:
- Անհոգ եղիր, միսս կը կամրթոտեմ որ քունս փախի. այ-

սու ամենայնիւ եթէ քնանամ ալ, ձայնը զիս կարթնցունէ:

— Մի ծաղրեր ձայնը, Եիքօ, ըսաւ Հէնրի և անկողնոյն մէջ խոթած մէկ ոտքը դուրս քաշեց:

— Օն ուրեմն, շուտով պառկէ, ըսաւ Եիքօ. պէտք է որ ե՞ս դամ քեզ պառկեցունեմ:

Թագաւորը հառաչանք մ'արձակեց և անհանգստութեամբ սենեկին ամեն կողմերը ակնարկի դիտելէն վերջը, դողդղալով վերմակին տակը կծկտեցաւ պառկեցաւ.

— Ես ալ պառկիմ, ըսաւ Եիքօ:

Եւ բարձրը իր չորս կողմը շարելով տարածուեցաւ պառկեցաւ աթոռոյն վրայ:

— Ի՞նչպէս էք հիմա, տէր արքայ:

— Էհ, դէշ չեմ. դուն ի՞նչպէս ես:

— Եստ աղէկ: Գիշեր բարի, Հէնրի:

— Գիշեր ըյս բարի Եիքօ. բայց մի քնանար,

— Ամենեւին ոչ, ըսաւ Եիքօ այնպէս սաստիկ յորանչելով որ ծնօտները տեղերնէն պիտի ելնէին:

Եւ երկուքն ալ աչքերնին գոցեցին, թագաւորը քնանալ ձեւացունելու համար, իսկ Եիքօ ստուգիւ քնանալու համար:



Գ Լ Ա Ի Խ Թ

ԱՍՏՈՒԹՅՈՅ ԶԱՅՆԸ ԿԸ ՍԵՒՆԻ ԵՒ ԳՈՒՍՆԱԿ ԹԱԳԱՒՈՐԻՆ

ԷՒՐՈՒՆ ԷՆՏ ԿԸ ԽՕՍԵԿՏ

Գրէթէ տասը վայրկենի չափ թագաւորն ու Եիքօ այսպէս անդարձ և լռիկ մնչիկ կեցան: Յանկարծ թագաւորը ելաւ և անկողնոյն մէջ նստաւ:

Թագաւորը իր այս քաղցր նիրհումէն արթնցնող յուզմունքը Երթօն ալ ընդօստնելով արթնցուց :

Երկուքն ալ հրացայտ աչօք իրարու կը նայէին :

— Ի՞նչ կայ հարցուց Երթօ, ցած ձայնով :

— Ես՛նչը, շո՛ւնչը . . . ըստ Թագաւորը աւելի մեղով ձայնով :

Նոյն վայրկենին՝ ոսկեքանդակ այծեմարդուն ձեռքի ճըրագներէն մէկը մարեցաւ, յետոյ երկրորդը, երրորդը և վերջապէս չորսն ալ մարեցան :

— Ա՛հ, ըստ Երթօ, ի՞նչ շունչ է այս :

Երթօ այս խօսքին դեռ վերջին վանկը չարտասանած կանթեղն ալ մարեցաւ և կրակարանէն արձակուած յետին նշոյլները միայն լոյս կուտային սենեկին մէջ :

— Այո ի՞նչ յանդգնութիւն, ըստ Երթօ ոտքի վրայ ելնելով :

— Պիտի խօսի հիմա, ըստ Թագաւորը անկողնոյն մէջ կորարքամակ եղած :

— Աւրեմն մտիկ ըրէ, ըստ Երթօ :

Եւ արդարեւ նոյն վայրկենին՝ խորին ձայն մը որ երբեմն չչելու պէս հնչումներ ալ կը հանէր, անկողնոյն և որմնն անջրպետին մէջ լսուեցաւ :

— Անգե՛ղջ մեղաւոր, կը լսե՞ս, ըստ ձայնը :

— Այո, այո, Տէր, ըստ Հէնրի որուն ատամունքը սոսկումէն իրարու կը բաղխէին շառաչմամբ :

— Ա՛հ, ըստ Երթօ, այս ձայնը կերեւայ թէ երկինքէն եկած Ժամանակ՝ ցուրտի հանդիպէր և հարբուխէն զարնուեր է, փոյթ չէ, սոսկալի՛ ձայն մ՛է :

— Մտիկ ըրէ, ըստ ձայնը :

— Այո՛, Տէր իմ, ձեր բարկութեանը տակ ընկճուած կուրարքամակ եղած մտիկ կընեմ, թո՛թովախօսեց Հէնրի :

— Կը կարծես թէ իմ պատուէրներուս հնազանդած՝ կըլլաւ այսօրուան կատարած կեղծութեանդ դորձերովդ, չարունակեց ձայնը . պէտք է որ և բոլոր սրտէջերմեռանդութեամբ ըլլայ զղջումդ, պէտք որ սիրտդ փոխես :

— Ես՛տ գեղեցիկ խօսք, շա՛տ վայելուչ խօսեցաւ, գոչեց անդ իէն Երթօ :

Թագաւորը ձեռքերը իրարու կցած էր որոնց սաստկուած թեամբ դողդապէն մատները իրար կը բաղխէին :

— Ե՛յ, հիմա կը հաւատաս, թշուառական :

— Սպասէ քիչ մը, ըստ Երթօ :

— Ի՞նչ ըսել կուզես,

— Լ՛սւռ կեցիր, անշունջ դուրս ել անկողնէդ և թող որ ես քու տեղդ անցնիմ :

— Ինչո՞ւ համար :

— Որպէս զի Տիրոջը բարկութիւնը նախ իմ վրաս թափի :

— Կը կարծե՞ս թէ այդ կերպով կը խնայէ ինձի :

— Փորձենք :

Եւ թախանձելով, Թագաւորը մէկդի առաւ անկողնէն և ինքը անցաւ անոր տեղը :

— Հիմա, Հէնրի, գնա դուն ավոտիս վրայ նստէ և թող որ ես գործս տեսնեմ :

Հէնրի հնոպանդեցաւ : Սակաւ առ սակաւ իր մտքին մէջ ալ կատկածները կարթննային :

— Ձե՞ս խօսիր, յարեց ձայնը . ուրեմն սրտած ես անգե՛ղջ մնալ :

— Ա՛հ, ներեցէք, ներեցէք, Տէր, ըստ Երթօ, թագաւորին նման ռեզայը մէջէն խօսելով :

Յետոյ Հէնրին դառնալով, մեղով ձայնով ըստ :

— Զարմանալի բան . կը տեսնե՞ս, որդեակ իմ, ամենաբարին Աստուած Երթօն չը ճանչէր :

— Վա՛յ, ի՞նչ կը նշանակէ այս, ըստ Հէնրի :

— Սպասէ, սպասէ քիչ մ՛ալ և ո՛րիչ շատ բաներ ալ պիտի տեսնես :

— Թշուա՛ռ, ըստ ձայնը :

— Այո, Տէր իմ, այո, անգեղջ և թշուառ մեղաւոր մ՛ եմ ես, սոսկալի մեղաւոր մը :

— Աւրեմն խոստովանէ յանցանքներդ և ապաշտէ :



— Կը խոստովանիմ որ եղբորս դուրս Գոնթէ իշխանին դէմ իբրև մասնիչ մը վարուեցայ, իրեն կինը դայթակղեցուցի, ուրուն համար կը զգլամ, մեզայ Սատուծոյ :

— Բայց ինչեր կըսես դուն հող, քրթնիչ թագաւորը կը լսես : Բաւական ժամանակէ հետէ ասոր խօսքը չի կար :

— Սղէկ լսիր, ուրիշ նիւթի մը անցնիք :

— Խօսէ, ըսաւ ձայնը :

— Կը խոստովանիմ, շարունակեց կերպարանեալ Հէնրին, որ իբրև աւագակ մը վարուեցայ Բոլոնիացեայ հետ, որք վա թագաւոր ընտրեցին իրենց վրայ և գիշեր մը թագաւորական բոլոր աղամանդները ժողովելով ձգեցի վախայ : որուն համար կը զգլամ, մեզայ Սատուծոյ :

— Ա՛հ, սրիկայ, ինչեր կը խօսիս. այդ մոռցուած էր, ըսաւ Հէնրի ատամները կախկախելով :

— Թող որ ինքը խաբեմ, ևս ըրածս գիտեմ, ըսաւ Եիքո :

— Խօսէ, ըսաւ ձայնը :

— Կը խոստովանիմ որ Գողգիոյ թագաւորութեան գահը տ'Ալմանոն եղբորս ձեռքէն յախշտակեցի սր ըստ իրաւանց իրեն կը վերաբերէր. վասն զի Բոլոնիոյ գահը ընդունած ժամանակս պաշտօնական կերպով մերժած էի զայն. որուն համար կը զգլամ, մեզայ Սատուծոյ :

— Ա՛յ անգղամ, ըսաւ թագաւորը :

— Կը խոստովանիմ որ իմ մօրս Քաթերին աը Մէտիսի հետ միաբանելով, քեռայրս Նալարայի թագաւորը Գողգիայէն դուրս վանեցի իր բոլոր բարեկամները չնչեւ վերջը. նոյնպէս և քոյրս Մարկրիտ թագուհին իր բոլոր սիրահարները չնչեւ վերջը՝ որուն համար ի սրտէ կը զգլամ, մեզայ Սատուծոյ :

— Ա՛հ, ինչ անգղամ մէկն ևս դուն, քրթնիչ Հէնրի բարկութենէն ատամները աստիկութեամբ կրճտելով :

— Տէր արքայ, Սատուծոյ ամենագիտութեանը դէմ մեզանչած կըլլանք, եթէ մեր մեղքերը իրմէն ծածկենք :

— Բազարականութեան վրայ չէ գործը, շարունակեց ձայնը :

— Ա՛հ, ըսաւ Եիքո ըսելով ձայնով, գիտեմ, Տէր Սատու-

ուած, գիտեմ որ բարուցո համար է, այնպէս չէ :

— Ա, յո՛, ըսաւ ձայնը :

— Ստոյգ է, Տէր Սատուած, ստոյգ է որ ևս կհասարդի, ծոյլ, թոյլ, յոյլ, ամենաճշին և վերջին աստիճան կեղծաւոր մէկն եմ :

— Ա, յո՛, ստոյգ է, ըսաւ ձայնը խորունկ տեղէ մը եկած հնչումով :

— Կանանց հետ չարաչար վարուած եմ, մանտանդ իմին հետ որ համեստուհի և արժանաւոր կին մ'է :

— Ամեն մարդ իր կինը իր անձին պէս սիրելու և ամեն բանէ նախապատիւ համարելու է, ըսաւ ձայնը ահաւոր հընչումով :

— Ա՛հ, գոչեց Եիքո յուսահատ ձայնով որ միշտ թագաւորին բերնէն կը խօսեր. ուրեմն մեծապես մեղանչած եմ :

— Եւ ուրիշներուն ալ օրինակ ըլլալով անոնց ալ մեղանչելուն պատճառ եղար :

— Ա, յո՛, Տէր Սատուած, այո :

— Քիչ մնաց որ թշուառ Սէն-Լիւքն ալ դժոզոյ դատաւարութեան արժանի բնես :

— Վայ . . . : Կատարելապէս վտա՛հ էր, Տէր Սատուած ստուղիւ գեռ բոլորովին դատապարտուած չէ :

— Այ. բայց ան ալ՝ դուն ալ, երկուքնիդ միասին պիտի դատապարտուիք, թէ որ գոնէ մինչև վաղն առաւօտ իր բնտանեաց քովը չը գրկես զինքը : Եւ թէ որ զինքը դուրս ուր կինն ալ դըսուհի չընես, ի վախարկութիւն իւր մէկ քանի աւուր որքեւայրութեան, շարունակեց ձայնը :

— Ա՛հ, ըսաւ Եիքո թագաւորին. այս ձայնը Բոսէի դերդատանին բարեկամ ըլլալու է :

— Իսկ թէ որ չը հնազանդիմ, պատասխանեց Եիքո այնպիսի ձայնով մը որ մերժելու կատկած մը կը ցուցներ :

— Իսկ թէ որ չը հնազանդիս, յարեց ձայնը տոտալի և զանակաւ, յախտեանս յախտեանից պիտի ալրիս միկիս դժոզքին մեծ կաթսային մէջ ուր Սորգանաւալ, Նաբուգոդո-

նոսր և որ Ռէյ մառաջախար կեփին կը խորովին ու քեզի կապանեն :

Հէնրի Գ. հառաչանք մ' արձակեց : Այս սպառնալիքը լըսած ժամանակ զիսէն մինչև ոտքը կը դողդղար :

— Պահ, ըստ Տիքօ. կը տեսնե՞ս Հէնրի, Աստուած ինչ պէս նախանձախնդիր է Մէն-Լիւքին օդ տին. սատանան առնէ մեզըս, կարծես թէ Մէն-Լիւք զԱստուած իր քղանջքին ներքև պահեր է :

Բայց Հէնրի Եփրօսին կատակաբանութիւնները չեր հասկընար. և կամ եթէ հասկնար ալ, չեր կրնար ապահով ըլլալ :

— Ս'լ իմ գործս ընդած է . . . կրնէր. ալ իմ գործս ըմբացած է, այս երկնային ձայնը զիս պիտի սպաննէ :

— Երկնային ձայն, յարեց Եփրօ : Ահ, այս անգամ կը սխալիս, Հէնրի, շատ շատ կողմնային ձայն կրնաս ըսել :

— Ի՞նչպէս, կողմնային ձայն :

— Այո, չե՞ս լսեր, որդեակ իմ, ձայնը աս պատին կողմէն կուզայ : Հէնրի, ամէնաբարին Աստուած լուրը կը բնակի : Հաւանակնաբար Եարլը Ե. կայսեր պէս Գաղիայէն կանցնի դժոխք երթալու համար :

— Անհաւատ, անաստուած, հոյհոյիչ :

— Այդ պատուանունները քեզի շատ ազուոր կը վայելեն, Հէնրի, ես ալ իմ յերմ բարեմալթութիւններս կ'եմքեզի համար : Բայց կը խոստովանիմ որ Աստուծոյ քեզի բրած այս պատուոյն դէմ շատ անտարբերութեամբ կը վարուիս : Ի՞նչ. Ամենաբարին Աստուած և կեր լուրը բնակեր է և իր սենեակին ալ բարակ որմովմը միայն քուկինէդ բաժնուած է ո՞րդուն չե՞ս երթար իրեն այցելութիւն մ' ընելու : Սրդարև Վալուա, չէի դիտեր այդ աստիճան անքաղաքավար ըլլալդ :

Այս վշտիկներին վառարանին մէկ անկիւնը մնացած բարունակի ոտ մը բորբոքեցաւ և սենեկին մէջ լոյս մ' արձակեց որ Եփրօսին երեսը լուսաւորեց :

— Ի՞նչ, դէմքդ զուարթ է. կը համարձակի՞ս ծագրել . . . ըստ Հէնրի :

— Այո, կը համարձակիմ. և շատ շանցնիր դուն ալ պիտի համարձակիս : Մտածէ անգամ մը, որդեակ իմ, մտածէ և ինչ որ կըսեմ, ըրէ :

— Երթամ տեսնելու . . . :

— Թէ ամենաբարին Աստուած ստուգիւ քովի սենեակը կը բնակի :

— Բայց թէ որ ձայնը տակաւին խօսելու ըլլայ :

— Միթէ ես հոս չե՞մ : Աւելի ազեկ է որ ես ըստ անուշտովը շարունակեմ պատասխանը, այս կերպով կը կարծէ թէ դուն հոս կեցած ես. որովհետև այս աստուածային ձայնը շատ դիւրահաւան կը թուի ինձի, և իր արարածները չը ճանչէր : Քառարդ մը կրնէ որ նստէր հոս կը դուրս և դեռ զիս չը ճանցաւ. խելքին պտուկը սիրեմ :

Հէնրի յօնքերը պատուեց : Եփրօ ալ այնչափ խօսեցաւ որ վերջապէս Հէնրի սկսաւ համոզուիլ սակաւ առ սակաւ :

— Կարծեմ իրաւունք ունիս, Եփրօ, ըստ. շատ կը փափաքիմ որ . . . :

— Է՛հ, դեռ ուրեմն, ըստ Եփրօ զինքը մղելով :

Մերձակայ սենեակը, ինչպէս արդէն գրած ենք, Եարլը Թ. ի դայեակին բնակարանն էր ուր հիմա Մէն-Լիւք կը բնակէր : Այս սենեակը նեղ անցքովմը բաժնուած էր արքայական սենեակէն :

Հէնրի առանց ձայն հանելու նեղ անցքին դուռը բացաւ. բայց հազիւ թէ չորս քայլ առած էր, յանդիմանութեանց կրկնուելուն ձայնը լսեց. Եփրօ ալ կեղծուպատիր ողւերով և դառնապէս արտասուելով կը պատասխանէր :

— Այո, կըսէր ձայնը. դուն կ'նս՞ մը պէս փոփոխամիտ, վառաշատ մտրդ ու մը պէս թուլտնորթ և հեթանոսի մը պէս մուրեհալ ես :

— Է՛ . . . է՛ . . . կըսէր Եփրօ լայով ողւերով. ես ի՞նչ յանցանք ունիմ, Տէր Աստուած, երբ որ դուն մտրթս այնչափ փափուր : ձեռքերս այսչափ սպիտակ, հոտոտիլքս այսչափ նուրբ և միտքս այսչափ փոփոխական ստեղծած ես :

ևս ինչ յանցանք ունիմ: Բայց ընցաւ ալ, Տէր Աստուած, այսօրուրնէ սկսեալ, Յոր երանելիին պէս ոտքէս մինչև զլուխ ազրին մէջը պիտի թաղուիմ և Եզէկիէլ մարդ արէին պէս կովի քակոր պիտի ուսեմ:

Բայց և այնպէս Հէնրի նեղ ճանքէն քաշելով յառաջ կերթար և զարմանքով կը գիտեր որ երթալով Շիքօին ճայնը նուազելու վրայ էր, իսկ աստուածային ճայնը աւելնալու վրայ: Այնպէս կը թուէր իրեն թէ այդ ճայնը ասուղիւ Մէն-Ղիւքին սենեակէն կուգար:

Հէնրի սենեկին դուռը պիտի զարնէր, երբ տեսաւ որ ըլլա մը կը ցորըր քանդակեալ փականքին խոշոր ծակէն:

Հէնրի ծուեցաւ փականքէն ներս գիտելու համար:

Եւ ահա յանկարծ Հէնրիի գիմաց դռնաստուծիւնը կարճ րոթեան փոխաւեցաւ բարկութենէն. ոտքի վրայ ելաւ և սխալ տեսած չըլլալու համար աչքերը շիւնց, երկիւղը այն աստիճան տիրած էր իր մտքին վրայ որ իր աչքերուն անգամ չէր հաւատար:

— Զարմնալի բան, կարելի է որ այս աստիճան խաղ մը խաղացած ըլլան ինձի, քրթ քնից Հէնրի:

Փականքին մէջէն տեսաւ որ Մէն-Ղիւք մետաքսեայ անգրաւարաիքով և գիշերային զգեստով սենեկին մէկ անկիւնը նստած, շեփորի մը մէջէն աստուածային սպառնալեաց խօսքերը կը չէ, իր քովն ալ երիտասարդ կին մը սպիտակ և բարակ զգեստներ հագած Մէն-Ղիւքին թիկանցը կըլծած նրստած էր, և երբեմն երբեմն շեփորը անոր ձեռքէն առնելով, օտուար ճայնով մը խերքին փշածը կը խօսէր մէջէն ծիծիղախիտ չըթռնքներով: Եւ ամեն մէկ անգամուն որ շեփորը իրարու ձեռքէ կառնէին, խնդալէն կը մարէին, մինչդեռ Շիքօ անդին լալով ողբալով կը սրատասխանէր և այնպիսի ճիշդ նմանութիւն մը կընէր թագաւորին ճայնին և անոր ռնդական խօսուածքին որ Հէնրիին անդամ այնպէս կը թուէր թէ ինքն է որ կուրայ և կողրայ:

— Ժան աը Գոսէ Մէն-Ղիւքին սենեակը . . . պատին մէջ

ծակ մը . . . զիս այդ աստիճան խայտառակ ընել . . . քրթ քնից Հէնրի բարկութեամբ: Ա՛հ, թշուառականներ, սուղի պիտի նստի ձեզի այդ:

Եւ մինչդեռ Տիկին Մէն-Ղիւք շեփորին մեջէն աստիկ սպառնական խօսք մը կը չէր, Հէնրի չը կրցաւ ալ ևս հանդուրժել, քայլ մը ևս ընկրկեցաւ և իր զօրութենէն վեր այնպիսի աստիկութեամբ արձայի հարուած մը տուաւ դրան որ ծղինիները կիսովին ելան իրենց տեղէն և փականքը վար ինկաւ:

Ժան՝ ստկարի աղաղակ մ'արձակելով փախաւ ծածկուեցաւ անկողնոյն վարագոյններուն տակ և անոնց մէջ փաթթըրուեցաւ:

Մէն-Ղիւք՝ շեփորը ձեռքը բռնած և ստիկունէն երեսին գոյնը նետած, ծռնկի վրայ եկաւ թագաւորին առաջը որ բարկութենէն դռնաթմաի եզած էր:

— Ա՛հ, կը դռնէր Շիքօ արքայական սենեակը, ա՛հ, զըթութիւն, Աստուած. զթա ինձ մեղաւորիս. սուրբ Աստուածածին օգնութեան համար Ամենայն սուրբ բարեխօսեցէք առ Տէր վասն իմ մեղաւորիս . . . կը նուայիմ . . . կը մեռնիմ . . .

Իսկ քովի սենեկին մէջ՝ ծիծաղաշարժ տեսարանը ներկայացնողներէն և ոչ մէկը կընար բերանը բանալ. կատակերգութիւնը յանկարծակի ոգրերդ ոթեան փոխաւած էր:

Հէնրի ըտլծեան և անշարժութեան այս կապը խլեց խօսք մ'արտասանելով և շարժում մ'ընելով:

— Գուրս ելիք բաւ ձեռքը երկնցսնելով:

Եւ թագաւորի մը անարժան կատաղութեամբ Մէն-Ղիւքին ձեռքէն շեփորը քաշեց սուս, անոր զարնելու համար: Բայց Մէն-Ղիւք խօլոյն ոտքի վրայ ելաւ կայնեցաւ:

— Տէր արքայ, բաւ. գլխէս զաւ մէկ տեղիս զարնելու արտօնութիւն չունիք. այնուական եմ ես:

Հէնրի բարկութեամբ շեփորը գետինը նետեց: Մարդ մ'ալ գետնէն վերուց զայն. այս մարդը Շիքօն էր որ դրան

խորտակուելուն ձայնը առած ըլլալով և խորհելով թէ միջնորդի մը ներկայութիւնը անողուաւ չըլլար, իսկոյն վաղելով հոն եկած էր:

Թողուց որ Հէնրի և Մէն-Լիւք ուզածնին ընեն. և ինքը ուղղակի վարագործին քովը դնաց որուն տակը կը կասկածէր թէ բան մը պահուած ըլլալու է. և քաշեց դուրս հասնեց թշուառ կինը որ գլխէն մինչև ոտքը կը դողդողար:

— Վայ, վայ, ահաւասիկ Ս. դամ ու Եւան՝ անհնազանդութենէն վերջը, ըսաւ Եիքո: Հէնրի, դուն ալ գրախտէն դուրս կը համեռն ասոնք, հարցուց թագաւորին:

— Այո:

— Արեմն ես ալ բոցեղէն սրով պահապան հրեշտակը կըլլամ:

Եւ թագաւորին ու Մէն-Լիւքին մէջ տեղը մտնելով, երկու յանցաւորներուն դիտուն վրայ տարածեց շեփորը ի նմանութիւն բոցեղէն սրոյն և ըսաւ:

— Այս իմ դրախտս է զոր ձեր անհնազանդութեամբը կորուսիք. կարգիլեմ ձեզ հոս մտնել:

Յետոյ Մէն-Լիւքին ակամօջն ի վար ըսաւ.

— Եթէ ընտիր ձի մը ունիք, փախէք հոսկէ և մինչև որ պայթի վազուցէք. բայց նայեցէք որ մինչև վաղը քսան մզոն հեռանաք հոսկէց:

Մէն-Լիւք թաղաւորին բարկութեանը գէմ իր կինը պաշտպանելու համար անոր փաթթուած և զրկած էր:

Ք Լ Ռ Ի Խ Ժ.

ՊԵՒՍՒ ՏՅԱՒԻ ԱՌ ՏՅԱՒԻ ԿԸԼԱՄՈՂՈՒԻ ԹԷ Խ ՏԵՍԻԼԸԸ  
ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Մ'ԵՐ ԵՒ ԿԸ ՀԵՏԱԶՕՏԷ ԶԱՅՆ

Բայց և այնպէս Պիւսի տ'Անժու դքսին հետ վերադարձած էր, երկու քն ալ մոտտանջութեանց մէջ էին. դուքար Պիւ-

սին թերադրութեամբը կատարած աստիկ վիճաւ անաթեան հետեւանքէն կերկնէր և Պիւսի ալ ամեն բանէն աւելի նախորդ գիշերուան գէպքին վրայ կը խորհէր ու կը խորհէր:

Պիւսի տ'Անժու դքսին կատարած քաջութեանը վրայ իրեն շատ շնորհակալութիւններ մատուցանեց վերջը, մեկնեցաւ իր բնակարանը երթալու:

— Վերջապէս, կըսէր ինքնիրեն՝ ճամբան չարունակելով, ստոյք է որ վրաս յարձակեցան, պատերազմեցանք իրարու հետ, վիրաւորուեցայ ես, որովհետեւ ալ կողմի կուշտ վերք մ'ունիմ որ շատ ալ ցաւ կուտայ: Պատերազմած ժամանակս Բրթի-Շանի խաչը կը տեսնէի, ինչպէս որ հիմա կը տեսնեմ սա տեղը. Օթէլ տէ Թուրնելի պատուարը և Պասթիլի առամառձեւ ժայռերով աշտարակները կը տեսնէի: Այո, Պասթիլին հրապարակը, Օթէլ տէ Թարնէլէն քիչ մը վեր, Մէնթ-Բաթէրին և Մէն-Բօլ փողոցներուն մէջ տեղը յարձակեցան վրաս. ըստ որում հոնկէց Մէնթ-Անթուան արուարձանը կերթայի Եսովարայի թագուհւոյն նամակը առնելու համար: Արեմն հոն տեղ վրաս յարձակեցան, դրան մը մտը որուն վրայ նեղ ծակերով վանդակէ փոքրիկ դռնակ մ'ալ կար պատուհանի պէս. դռնէն ներս մտածիս պէս գոցեցի զայն և վանդակապատին նեղ ծակերէն Քէլիսին դէմքը դիտեցի որուն այտերը դունաթափ եղած էին և աչքերէն կրակ կը ցայտէր: Նեղ և երկայն ճամբու մը մէջ մտայ. այս ճամբուն ծայրը սանդուղ մը կար: Առջս սանդուղին առաջին աստիճանին վրայ դրի և հոն դրբեցայ ինկայ: Վրաս թաղացում մը եկաւ. այնու հետեւ տեսիլքս սկսաւ. վերջը երբ որ խելքս գլուխս եկաւ, ստունատոյր հովմը կը շնչեր երեսս ի վեր և ինքզինքս Թամբլի խրամներուն զառ ի վայրին վրայ պատկած գտայ, կրօնաւորի մը, մտաւաճառի մը և պառաւ կնոջ մը մէջ տեղը:

Հիմա, ինչու համար տեսիլքիս միւս մասերը այնչափ շուտով և կատարելապէս մաքէս եղած են, մինչդեռ ասոնք եր-

Թալով աւելի կը տպաւորուին մտքիս մէջ : Ա՛հ, հօս է ահա  
դ աշանկերը :

Այս վայրկենիս՝ իր ապարանքին դուռը հասած ըլլալով,  
կանգնեցաւ հոն՝ և պատին կրճիներով աչքերը դոցեց :

— Անկարելի բան, ըսաւ, անկարելի՛ . աւելեւոյթ տե-  
սիւք մը այս աստիճան մարդուս մտքին մէջ չը տպաւորուիր :  
Կարծես թէ գեռ աչքիս առաջն է մարդոց նկարներով զար-  
դարեալ դօրդ մը փռուած սենեակը, նկարուած առաստաղը,  
կաշնիի փայտէ քանդակեալ անկողինը իր սակեճամուկ և  
սալիտակ դամասկէ վարագոյրներով, գեռ աչքիս առաջն է  
կենդանադիրը, խարտեշագեղ կիներ . կը կատակածիմ ալ որ  
կիներ և կենդանադիրը մի և նոյն բանը եղած չըլլան . վեր-  
ջապէս գեռ աչքիս առաջն է երկոտասարդ բժշկին զուարթ և  
բարեմոյն դէմքը որուն աչքերը կապած անկողնոյս քովը բե-  
րին . ահա այսչափ նշաններ՝ իրականութիւն մ՛ըլլալուն .  
Կրկններ համառօտիւ . դօրդ մը, առաստաղ մը, քանդակ-  
եալ անկողին մը, ճերմակ դամասկէ ոսկեճամուկ վարագոյր-  
ներ, կենդանադիր մը, կին մը և բժիշկ մը : Այո, այո,  
պէտք է որ այս բանը հետազօտեմ . և եթէ այս հանելուկը  
չը կրնամ լուծել անասուններուն ամենէն ստորինը ըլլամ :

Նախ և առաջ, ըսաւ Պիւսի գեռ դօրծի չսկսած, գիշե-  
քաւրլիկ մէկու մը վայելուչ զգեստներ հագնիմ և այնուհե-  
տեւ ուղղակի Պասթիլլ երթամ :

Մարդ մը՝ որ նախորդ գիշերը յարձակում կրած և մահ-  
ուան ձեռքէն մեծ դժուարութեամբ ճողաղրած էր, հետեւե-  
լալ օրը նոյն ժամուն կամ նոյն միջոցները կերթար իր յար-  
ձակման տեղը զննելու : Այսպիսի դիտաւորութիւն մը թէ և  
շատ խոհական չէր, բայց Պիւսի որոշեց դօրծադրել զայն .  
Իր ապարանքը մտաւ և սղատաւոր մը կանչեց որ փոքր ինչ  
տեղեկութիւն ունէր վերաբուժութեան և իր վէրքին պա-  
տանքը հաստատ կերպով կապել տուաւ . վերաբուժուն վրան  
առաւ դահաւորակը բերել տալով հեծաւ, Ռուաւ արձ-Միտի  
փողոցին ծայրը հասածին պէս դահաւորակը կեցունել տա-

լով վար իջաւ, հրամայեց իր մարդիկներուն որ սպասեն իրեն  
և ինքը Մէնթ-Մնթուանն մեծ փողոցէն իր ճամբան ուղղեց  
դէպ ի Պասթիլլի հրապարակը :

Նրեկոյեան ժամը իննին միջոցներն էր . հանգստեան զան-  
դալը արդէն հնչած էր . փողոցներն ալ մարդ չէր գտնուեր :  
Յերեկին քիչ մը արեւ ծագած և օրն ալ տակաւ ինչ շերմու-  
թիւն ստացած ըլլալով ձիւները սկսած էին հալիլ, որով սա-  
ռուցեալ շուրին միւրնները և աղմակոտ տեղերը անթիւ լը-  
ճերով և բարձրագէղ խորտիիններով լցուցած էին Պասթիլլի  
հրապարակը, որուն բոլորտիքը բացուած խորխորած սալար-  
կով ճանբանն որուն վրայ արդէն խօտուած ենք, շրջանակի մը  
պէս պատած էր զայն :

Պիւսի արեւելեան կողմը դարձաւ, ձիուն թալիւսցած և  
ինկած տեղը մնտուեց որ կարծեց թէ գտաւ : Յետոյ յետո  
ընկրկելով և յառաջ խաղալով իր յարձակման և ետ քաշուե-  
ուն շարժումները ըրաւ, որչափ որ միտքը մնացած էին ետ  
ետ քաշուելով, մինչև պատին առաջը գնաց՝ և ամեն դըռ-  
ներն ալ աչքէ անցուց, որպէս զի գտնէ այն ներքսամուտ ան-  
կիւնը որուն կրթնած էր և այն դռնակը ուրկէ Քէլիւսին  
դէմքը գիտեց : Վժբալըսըսար այն ժամանակ ազնուականաց  
տունները դռնապաններ գտնուիլ սովորութիւն եղած չըլլա-  
լուն համար, զրէթէ ամեն տուններու դռներէն ներս պատին  
մէջ տեղը երկայն և նեղ ճամբայ մը կար :

— Մնիծեալ, ըսաւ ինքնիրեն Պիւսի բարկացած . պէտք  
է որ այս ամեն դռները շարեմ, անեցիկներուն վրայօք հարկ  
եղած տեղեկութիւնները ստանամ . երբ որ հազար ոսկի  
ծակը ընեմ, բոլոր սպասաւորները և պառաւ կիները խօտե-  
ցունել կուտամ և ուղածս կրնամ իմանալ : Յիսուն տուն կայ  
հոս, իւրաքանչիւր երեկոյ տասը տուն հաշուելով, հինգ օր-  
ուան մէջ կը կատարուի այս գօրծը : Միայն թէ քիչ մը սպա-  
սելու եմ որ օգերը բարեխառնին և գետինն ալ չօրնայ :

Պիւսի ինքնիրեն այս խօսքերը բօւլէն վերջը՝ դողդոջուն  
և աղօտ լոյս մը իրեն մօտենայր տեսաւ որ ծովային աշտարակ-

ներքէն կախուած լապտերին պէս ճախիններուն շրէրուն վրայէն իր լոյսը կանդորադարձէր : Այս լոյսը յամբագնաց կը յառաջանար անհաւատար ընթացքով . երբեմն ալ և երբեմն ալ ձախ կ'ոյն կը ծռէր , յետոյ յանկարծ կը սահէր և շրջանիկ հուրի մը պէս կը տատանէր . նորէն կսկսէր իր ծանր ընթացքը շարունակել , վերջապէս դարձեալ կը տատանէր ու կը շարժէր :

— Արդարեւ զարմանալի տեղ մ'է Պատթիլի այս հշաւպարակը , ըսաւ Պիւսի իւրովի . բայց փոյթ չէ , սպասե՛ք :

Պիւսի իր փախարանացը համեմատ աւելի հանդատութեամբ հոն սպասելու համար վերարկուին մէջը փաթտուեցաւ և դռան մը ներքստմուտ անկեանը մէջ նստաւ : Այս գիշեր սաստիկ խաւարամած էր և անկարելի էր չորս քայլ անդին դիմացինը տեսնել :

Լապտերը շարունակեց իր ընթացքը , յիմարական շարժմամբ տատանելով : Բայց որովհետեւ Պիւսի նախապաշարեալ մէկը չէր , ուստի հատատապէս համոզուած էր թէ այդ լոյսը ուրուական մը չէր ուրիշ միջին դարու ճանապարհորդները դիշերները սաստիկ կը վախնային , այլ պարզապէս մէկ լապտեր մը ձեռքի ծայրէն կախուած և այդ ձեռքն ալ սնչուչ ուրիշ մարմնոյ մը կցուած էր :

Եւ արդարեւ մէկ քանի վաղիկան սպասելէն վերջը Պիւսի տեսաւ որ իր կարծեացը մէջ սխալած չէր : Իրմէ զրէ թէ եռեսուն դաս հեռուն՝ ցիցի մը պէս երկար բարակ սեւ բան մը տեսաւ որ սակաւ առ սակաւ կենդանի էակի մը կերպաբանիք առաւ , որուն ձախ ձեռքէն լապտեր մը կախուած էր . այս էակը երբեմն լապտերը իրեն գէմը կերկնցուններ , երբեմն քոյի ի վեր կը տանէր և երբեմն ալ մինչև սրունքները ցեխին մէջը կը մտնէր : Արեւուտր թէ գինեմոններուն պատուարժան միաբանութեան անդամներէն սէկն էր այս , որով հետեւ գինովութենէն ուրիշ բանի մը չէին կրնար տրուիլ իր անհեթեթ շարժումները որով տղմասոր տեղումնքը կը զլորէր կ'իյնար և ճախիններուն մէջէն քաղելով կանցներ :

Անգամ մը այնպէս եղաւ որ դեռ չը հայած սառնապտտ ջրի մը վրայ սահեցաւ ինկաւ և սառուցի բեկրեկման համր ձայնէն ու լապտերին ակամայ շարժումէն որ զլիսիվայր կը դառնար , Պիւսի հասկցաւ թէ դիշերային ուղղութիւնը իր երկու ոտներուն վրայ չը կրնալով հաստատուն մնալ , ծանրութեան աւելի հաստատ կեդրոն մը կը խնդրէր :

Պիւսի այն վայրկենէն սկսեալ , ազնուական սրտերու յատուկ զթուլթիւն մը զգաց իր սրտին մէջ այդ ժամանակ փողցններ մնացող գինովներուն վրայ և այդ Բագոսի տեղապահին՝ ինչպէս կը կոչէ զիրենք Պ. Ռոնսար , օգնութիւն մատուցանելու համար յառաջ պիտի երթար . երբ լապտերին արագութեամբ շտկուելը տեսաւ , որով հասկցաւ թէ այդ մարդը կարծուածին չափ անզօր չէր , թէեւ իր լապտերը չէր կրնար պէտք եղածին պէս գործածել :

— Արեւուտր թէ այս ալ ուրիշ նոր դիպուած մ'է , ըսաւ Պիւսի :

Եւ որովհետեւ լապտերը իր ընթացքը կը շարունակէր և այնպէս կը թուէր թէ ուղղակի Պիւսիին կողմը կը յառաջանար , ինքն ալ դրան անկիւնին աւելի խորը քաշուեցաւ :

Լապտերը տասը քայլ ալ յառաջ եկաւ և իրեն արձակած լուսովը Պիւսի տարօրինակ բան մը տեսաւ . լապտերը բաճող մարդուն աչացը վրայ լաթ մը փաթթուած էր :

— Ի՞նչ խելացի մարդ , ըսաւ իւրովի . լապտերով ելեր աչկապուկ կը խաղայ , մանաւանդ այսպիսի տեղ մը : Արդեօք նորէն՝ աչքիս տեսիլք երեւնալ սկսաւ :

Պիւսի քիչ մ'ալ կեցաւ և աչքերը կապած մարդը հինգ վեց քայլ յառաջ եկաւ :

— Ստուած մեղք չհամարէ ինձի , եթէ կը սխալիմ . կարծեմ այս մարդը ինքնիրէն կը խօսակցի . . . : Ո՛չ , ասիկա ոչ գինով է և ոչ յիմար , այլ մաթէմատիկոս մը որ խնդիր մը լուծելու կաշխատի :

Պիւսի այս վերջին խօսքերը ընելուն պատճառը՝ լապտե-

րով մարդուն արտասանած վերջին բառերն էին որոնք ինքը լսեց :

— Չորս հարիւր ութսունուութը, չորս հարիւր ութսունուինը, չորս հարիւր իննսուն . սակէքիչ մ'անդին ըլլալու է, կը միմնչէր լսարեւրով մարդը :

Եւ աչ ձեռքովը աչքին պատանքը վերցուց այդ խորհրդաւոր անձը և ինքզինքը տան մը գիմացը գտնելով, դռանը մերձեցաւ :

Գռանը առաջը հասած ժամանակ ուշադրութեամբ դիտեց զայն :

— Ոչ, այս չէ, ըսաւ :

Յետոյ աչքին լսիթը վար իջեցուց և իր հաշիւը շարունակելով սկսաւ քալել :

— Իննսուն ու մէկ, իննսուն երկու, իննսուն երեք, իննսուն ու չորս ըսաւ :

Եւ դարձեալ աչքին կապը վեր առաւ և Պիւսիին կեցած տեղւոյն մերձակայ դրանը առաջը դալով, առաջնոյն նման ուշի ուշով դիտեց զայն :

— Հը՛, հը՛, ըսաւ, կարելի է որ այս ըլլայ, ոչ, այո՛, ոչ ոչ . այս անպիտան դռներն ալ ամենքը իրարու կը նմանին :

— Այդ խորհրդածութիւնը ես արդէն իսկ ըրած եմ, ըսաւ Պիւսի իւրովի . երթալով այս մարդը ուշադրութիւնս աստիկ կը դրաւ է :

Մտթէմատիկոսը նորէն վար առաւ աչքին կապը և իր ձամբան շարունակեց :

— Չորս հարիւր իննսուն ու հինգ, չորս հարիւր իննսուն ու վեց, չորս հարիւր իննսուն ու եօթը, չորս հարիւր իննսուն ու ութը, չորս հարիւր իննսուն ու ինը . . . Թէ որ դէմս դռու մ'եյնէ, այն ըլլալու է, ըսաւ :

Եւ աշդարեւ իր դէմը դռու մը կար և այդ դռան առաջն ալ Պիւսին պահուրտած էր . հետեւաբար երբ կարծեցեալ մտթէմատիկոսը աչքին կապը վեր առաւ, ինքը և Պիւսի դէմ առ դէմ ելան :

— Է՛յ, ըսաւ Պիւսի :

— Ո՛հ, դուքց դիչերաչը իր ընտանաբար քայլ մը ետ քաշուելով :

— Տէ՛ր Աստուած :

— Անկարելի՛ բան, դուքց անձանօթը :

— Ոչ, սխալած չէք, ճիշդ է միայն թէ պատահմունքը դարմանայի է : Գո՛ւք էք բժիշկը :

— Գո՛ւք էք ազնուականը :

— Այո, ճիշդ :

— Տէ՛ր Աստուած . ինչ բարեբաղդութիւն :

— Այն բժիշկը որ երեկ իրիկուն ազնուականի մը կուշտին վէրքը դարմանեց, շարունակեց Պիւսի :

— Ճիշդ :

— Ձեզ տեսածիս պէս իսկոյն ճանչցայ, դո՛ւք էք այն դոդորիկ, թեթեւ և միանգամայն ճարտար ձեռքով բժիշկը :

— Ո՛հ, Պարոն, չէի յստար թէ զձեզ հոս պիտի գտնեմ :

— Հոս ի՞նչ կը վնտուէրք :

— Տունը :

— Ա՛հ, տօ՛ւնը կը վնտուէրք :

— Այո :

— Ուրեմն չէք դիտեր զայն :

— Ի՞նչպէս կուզէք որ գիտնամ, պատասխանեց երիտասարդ մարդը, աչքերս կապած զիս հոն տարին :

— Աչքերնիդ կապած ձեզ հոն տարին :

— Անտարակոյս :

— Ուրեմն ատուղիւ եկած էք դուք այս տունը :

— Այս կամ ասոր կից տուն մը, որն ըլլալը լաւ չեմ գիտեր . ես ալ կը վնտուեմ :

— Լաւ, ուրեմն տեսիլք չէ եղեր, ըսաւ Պիւսի :

— Ի՞նչպէս, տեսիլք չէ՛ եղեր :

— Պերելի բարեկամ ես կը կարծէի թէ այս բոլոր բաները սրոյ հարուածէն զատ, տեսիլք մ'էին :

— Ձեր խօսքերը զարմանք չեն պատճառեր ինձի, Պարոն, բայց երկտասարդ բժիշկը:

— Ինչո՞ւ համար:

— Վասն զի ես այ կը կասկածէի թէ դադանիք մ'ըլլալու է այս բանին ներքեւ:

— Այո, բայրեկամ, դադանիք մը որ կուզեմ երեւան հանել. դուք ալ ինձի պետի օգնէք, այնպէս չէ:

— Մեծաւ հաճութեամբ:

— Լաւ, նախ և առաջ երկու բառ կուզեմ լսել ձեզին:

— Ըսէք:

— Ի՞նչ է ձեր անունը և մականունը:

— Պարոն, անունս ապրու չեմ դժկամակիր: Իրաւ է որ ըստ սովորութեան պէտք էր որ ես ալ մէկ ոտքիս վրայ կեցած եմ ձեռքս ալ ազդրիս վրայ դրած ընէի. ձեր անունը, Պարոն եթէ կը հաճիք ընել: Բայց դուք երկար սուր մ'ունիք և իմ քովս բժշկական նշտրակս միայն կը գտնուի. դուք ազնուականի մը կերպարանքը ունիք: Իսկ ես անշուշտ թափառական սրկիկ մը կերեւամ ձեր աչքին, սրովհետեւ շուրջ մինչեւ քսկորներս անցեր է և ես ալ բոլորովին տղմամթաթաւ եղած եմ: Ուստի համարձակախօսութեամբ կը պատասխանեմ ձեր հարցման: Ես կը կոչուիմ Ռեմի լը Հօտուէն:

— Եստ լաւ. մեծապէս շնորհակալ եմ, Պարոն: Ես ալ կը կոչուիմ Լուի տը Բլէրման Սէնէօս տը Պիւսի:

— Պիւսի տ'Սանգուազը, դիւցազն Պիւսի՞ն, գոչեց երկտասարդ բժիշկը մեծ ուրախութեամբ: Ի՞նչ, Պարոն, գո՞ւրք էք այն հռչակաւոր Պիւսին, այն զօրապետը, զոր... որ... ո՞նչ:

— Եոյն ինքն եմ, ըստ ազնուականը համեմատութեամբ. Հիմա որ ըստ բաւականին վերտը ճանչցանք, շնորհք ըրէք, Պարոն, հետաքրքրուիմ ինչն յազեցունելու, թէ եւ ջրաթաթաւ և տղմասոյլ եղած էք:

— Հիմա գործը հոս է որ, ըստ երկտասարդը իր յետտաճ անգրտովարտիքը աչքէ անցունելով, գործը հոս է որ Երամիննոտաս Թէփայեցիին պէս երեք օր տունը մնարու է:

մէկ տախար մը և մէկ վերարկու մը միայն ունենալուս համար... Բայց, ներեցէք, Պարոն. կարծեմ թէ ինձի բան մը կը հարցունէիք:

— Այո, կը հարցունէի թէ ի՞նչպէս երած էք այս տունը:

— Այդ շատ պարզ և միանգամայն շատ խառնաշփոթ է. կը տեսնէք հիմա:

— Տեսնեմք:

— Պարոն Կոմս, ներեցէք, այն ստափճան շփոթած էի որ մինչեւ հիմա առանց պատուանունիդ տալու կը խօսէի ձեզի հետ:

— Բան մը չէ, շարունակեցէք դուք:

— Ուրեմն սկսիմ պատմել եղելութիւնը, պարոն Կոմս:

Ես կը բնակիմ Պօթրէյլի փողոցը, ասկէ հինգ հարկուր երկու քայլ հեռուն: Արհեստս վերարժուութիւն է. թէ եւ նոր սիւրսած եմ, բայց կը վստահացունեմ զձեզ որ բաւական յաջողակ եմ արհեստիս մէջ:

— Փոքր ինչ տեղեկութիւն ունիմ, ըստ Պիւսի:

— Եստ լաւ սովորած եմ վերարժուութիւնը, բայց յաճախորդներ չունիմ, շարունակեց երկտասարդ մարդը: Ինչպէս որ արդէն ձեզի ըսի Ռեմի լը Հօտուէն կը կոչեն զիս. Ռեմի մկրտութեան ժամանակ զբուսած անուն է և Հօտուէն ալ հայրենեացս անունը, որովհետեւ Կանթեօյլ լը Հօտուէն քաղաքը ծնած եմ ես: Եօթը ութը օր կայ սրբունի նաւարանին ետին մարդ մը դանակով զարնուած ըլլալով, իրեն փորին մտրթը կարեցի և դուրս ինկած փորտիքը ներս դնելով իրենց տեղը հաստատեցի: Ստով մերձակայ տեղերը համբաւս տարածուեցաւ և այս համբաւին արդիւնքն էր կարծեմ որ երէկ գիշեր զսղորելի և գեղգեղուս ձայն մը քունեսս զիս արթնցունելու երջանկութիւնը ունեցայ:

— Անո՞յ ձայն մը, դո՞ւնց Պիւսի:

— Այո, բայց շատ մի արտաքար, սիրելի ազնուական, թէ և ես դեղձուկ մ'եմ, բայց տիրո հիներուն ձայնը կը ճանչեմ:



աղախնոյ մը ձայնն էր այս . երկոցունցն ալ շատ անդամ՝ լած ըլլալու համար, լաւ կրնամ տարբերել զանոնք :

— Ի՞նչ ըրիք այն ժամանակ :

— Նրայ դուռը բացի . բայց հաղիւ թէ անդուղին զըլուխը հասածէի, երկու փոքրիկ ձեռքեր որոնք ոչ շատ փափուկ և ոչ ալ շատ կարծր էին, երեսիս վրայ քող մը ձգեցին :

— Առաջնայ բան մ'ըսելու, հարցոց Պիւսիս :

— Ասելով թէ ետեւէս եկէք, բայց չը պիտի ուզէք տեսնել թէ ո՞ր կերթաք . խոհեմութեամբ վարուեցէք . ահա ձեր վարձքը :

— Ի՞նչ էր տուած վարձատրութիւնը :

— Քսակ մը ձեռքս դրաւ որուն մէջ Կարօլ սկիւներ կային :

— Օ՛հ, Օ՛հ, ի՞նչ պատասխան տուիք :

— Պատասխանեցի թէ պատրաստ եմ իմ գեղեցիկ առաջնորդիս հետեւիլ . թէ և չէի գիտեր թէ գեղեցիկ էր կամ ոչ, բայց կը խորհէի թէ այս ածականը քիչ մը չափազանց ալ ըլլայ, քիսս չունի :

— Առանց դիտողութիւն մ'ընելու, առանց երաշխաւորութիւն մը պահանջելու հետեւեցաք իրեն :

— Այս տեսակ պատմութիւններ շատ կարգաշար եմ ես գործերուն մէջ և գիտած եմ որ միշտ բժշկին համար օգտակար արդիւնք մ'եւած է . ուստի հետեւեցայ իրեն : Արդ՛ր հոգի մը վրայէն կը քալէինք, գլխունուս կարկուտներ ուտելով, հաշուեցի որ չորս հարիւր, չորս հարիւր յիսուն, վերջապէս հինգ հարիւր երկու քայլ ըրինք :

— Լաւ, խոհեմութեամբ շարժեր էք . ուրեմն այս դուռը ըլլալու է, ըստ Պիւսի :

— Պոնէ շատ հեռու ալ ըլլալու չէ, որովհետեւ այս անգամ չորս հարիւր իննսուն ու ինը հաշուեցի : Արնայ ըլլալ որ խորամանկ կիներ ձամբան պտուղաներով զիս բերած ըլլայ և կը տարակուսիմ ալ այսպիսի շարժիւն մ'ըրած ըլլալուն :

— Բայց երթաբերով թէ այդ նախազգուշութիւնն ըրած

ըլլայ, եթէ սատանային ընկերն անգամ ըլլայ, դարձեալ մէկ նշան մը ձգած, մէկու մը անուն տուած է անշուշտ :

— Ամենեւին ոչ :

— Բայց դո՞ւք ալ ինքնիրեննիդ բան մը չը գիտեցիք :

— Մասներս աչքի տեղ գործածելով, որչափ կարելի էր ամեն բան գիտեցի . դուռ մը կար վրան բեւեռներով, դռան ետին երկար բարակ ճամբայ մը ձամբուն ծայրը սանդուխ մը :

— Զա՞ն կողմը :

— Ճիշդ : Մանդուղին աստիճաններն անգամ հաշուեցի :

— Ռըչափ էին :

— Տասներկու :

— Անոր ետեւէն :

— Անմիջապէս անոր ետեւէս ալ նեղ ճանբայ մը կար կարծեմ, սրովհետեւ մինչեւ հոն հասնիլը երեք դուռ բացուեցաւ :

— Լաւ :

— Յետոյ ձայն մը լսեցի . ա՛հ, ահա այս ձայնը տիրուհիի մը ձայնն էր, գողտրիկ և սրտազրաւ ձայն մը :

— Այո այո, իրենն էր :

— Լաւ, իրենն էր :

— Այո, ապահով եմ, իրենն էր :

— Շատ աղէկ, եթէ ապահով էք : Յետոյ զիս մղելով սենեկի մը մէջ մտնուցին ուր դուք պառկած էիք և հրամայեցին որ աչքիս կապը հանեմ : Այն ժամանակ ձեզ տեսայ :

— Ո՞ր էի :

— Սնկողնոյ մը վրայ պառկած :

— Ոսկեճամուկ սպիտակ դամասկէ անկողնոյ մը վրայ :

— Այո :

— Գետինը դորդ մը փռուած սենեկի մը մէջ :

— Ճիշդ ու ճիշդ :

— Մարդոց պատկերներով նկարուած սուստաղով մը :

— Այո . երկու պատու հաններուն մէջ ալ . . .

— Պատկեր մը :

- Այս, գարնանայի՛ բան :
- Ար տան ու ութը քան տարեկան կնոջ մը կենդանա, գիրը կը ներկայացունէր :
- Ճիշդ :
- Խարտեշադե՞ր :
- Շատ լա :
- Հրեշտակայի՛ն դեղեցկութեամբ :
- Անոնցմէ աւելի դեղեցիկ :
- Կեցցե՛ս : Ի՞նչ ըրիր այն ժամանակ :
- Գարնանցի զձեզ :
- Եւ արդարեւ շատ լա գարնանցիք :
- Կրցած իս չափ :
- Շատ լա, սիրելի Պարոն, շատ լա, որովհետեւ այս առաւօտ վերջս գրէթէ գոցուած էր և կենդանի դոյն մ'առած :
- Ստիկայ բաղասանի մը չորհրդին է որ ես չինած եմ և շատ ընտիր գեղ մ'է. շատ անգամ փորձառութեան համար ուրիշ դեղ չդանելով իմ մտքիս վրայ վերքեր բացած եմ և ասով երկու երեք օրուան մէջ այդ վերքերը գոցուած են :
- Սիրելի պարոն Արմի, ազնիւ մէկն էք դուք, գոչեց Պիտի. սաստիկ համակրութիւն մը կգդամ քու վրադ . . . : Բայց վե՞րջը, ըսէք տեսներ :
- Վերջը նորէն դուք թարկացաք : Չայնը տեղեկութիւն խնդրեց ինձմէ ձեր վրայօք :
- Ռարկեց կը խօսէր :
- Ձեր պառկած սենեկին կից ուրիշ սենեակէ մը :
- Ուրեմն զինքը չէիք տեսներ :
- Ոչ :
- Պատասխան տուի՞ք իրեն :
- Այո, պատասխանեցի թէ վերքը վտանգաւոր չէ և թէ քան ու չորս ժամուան մէջ կառողջանայ :
- Գոհ եղա՞ւ :
- Աւրախութեան աղաղակեց : Ի՞նչ երջանկութիւն, ո՞վ Աստուած :

- Ի՞նչպէս. ինչ երջանկութիւն աղաղակե՛ց : Ռ՛հ, սիրելիդ իմ պարոն Արմի, ես ձեզ պիտի հարտացունեմ : Վերջը վե՞րջը :
- Վերջը ալ ամեն բան ըմբոս էր. ալ ես գործ մը չունէի հոն, որովհետեւ ձեզ գարնան եցի : Այն ժամանակ ձայնը ըսաւ ինձի. պարոն Արմի . . . :
- Չայնը դիտէ՛ր ձեր անունը :
- Անտարակոյս, դանակով զարնուած մարդ մը տառջլաշընելու համբաւէն, որ ձեզի պատմած եմ, անուն իմացած ըլլալու է :
- Ի՞նչ ըսաւ ձայնը ձեզի, պարոն Արմի :
- Մինչեւ վերջը պատուաւոր մարդու մը պէս վարուեցէք, չափազանց մարդասիրական զգացումէ յափշտակեալ կին մը վտանդի ենթակայ մի ընէք, դարձեալ աչքերնուդ քովը փաթթեցէք և սուսնց ննդութեան թոյլ տուէք որ ձեզ վերստին տուներնիդ առաջնորդեն :
- Խոստացա՞ք :
- Այո, խոստացայ որ իրենց ննդութիւն մը չը պիտի ընեմ :
- Խոստմունքնիդ պահեցի՞ք :
- Այո, ինչպէս դուք ալ կը տեսնէք. տունն անգամ չեմ գիտեր և կը փնտռեմ, պատասխանեց երիտասարդ մարդը պարզմտութեամբ :
- Շատ պատուաւոր և շքեղ գործ մ'է այդ, ազնուական մարդու մը գործ, ըսաւ Պիտի. և թէեւ սրտիս խորը սաստիկ ցաւ մը կըզգամ այդ կարեւոր բաները չը գիտնայուդ համար, բայց չեմ կրնար ինքզինքս զսպել. սուէք ձեռքերնիդ պարոն Արմի :
- Եւ Պիտի բոլորովին յափշտակուած ձեռքը երկնցուց երիտասարդ բժշկին :
- Պարո՛ն, ըսաւ Արմի բոլորովին շիտթած :
- Տուէք ձեռքերնիդ, տուէք, գուր պղտուականութեան արժանի մէկն էք :

— Պարոն, ըսաւ Պիւսի յաւիտենական ոյրածանք մը պիտի ըլլայ ինծի համար քաջ Պիւսի տ'Սմայուաղին ձեռքը թոթված ըլլալը : Բայց հիմա խղճմտանքս կը նեղէ դիս :

— Ինչո՞ւ համար :

— Քսակին մէջը տասը բիստոլ\* կար :

— Է՛հ :

— Ես որ մէկ այցելութեանս փոխարէն հինգ սու\*\* կառնեմ, եթէ ճրիարար գացած չըլլամ, այնչափ ստակ մը չափազանց վարձատրութիւն կը համարիմ և խղճմտանքս չը ներէր ինծի : Ուստի եկեր տունը կը փնտռեմ . . . :

— Քսակը ե՞տ տարւ համար :

— Այո :

— Սիրելիդ իմ պարոն Ռըմի, կերդնում որ շատ փափուկ զգացում մը կը կրէք . այս ստակը դուք պատուաւոր կերպով շահած էք ուստի և ձերն է :

— Կը հաւատա՞ք այդպէս ըլլալուն, ըսաւ Ռըմի իր խղճմտանքին վրայ թեթեւութիւն մը զգալով :

— Անտարակոյս, և ձեզ ալ կը վստահացունեմ. միայն թէ տիկինին պարտքը չէր այդ ստակը վճարել, որովհետեւ ոչ ես զինքը կը ճանչեմ և ոչ ալ ան դիս :

— Տեսա՞ք, ահա ուրիշ պատճառ մ'ալ :

— Ըսե՛ղ կուզէի թէ ես ալ ձեզի պարտք ունիմ :

— Գո՞ւք, ինծի պարտք ունի՞ք :

— Այո և պիտի վճարեմ դայն : Ինչո՞վ կզբաղիք դուք Բարիկ մէջ, Ըսէք . . . խօսեցէք . . . իբրեւ մտերիմ բարեկամի մը կրնաք յայտնել ինծի ձեր գաղտնիքները, սիրելիդ իմ պարոն Ռըմի :

— Բարիկի մէջ ինչ ընե՞լա կը հարցունէք . ամենեւին ոչինչ, պարոն Աոմն : Թէ որ յաճախորդներ ունենամ, բան մը պիտի կրնամ ընել :

\* Մէկ բիստոլը տասը ֆրանքի չափ է :

\*\* Մէկ սուն տասը փարայ է :

— Ուրեմն աղէկ իրարու հանդիպեցանք . նախ և առաջ ձեզի յաճախորդ մը ես կըլլամ. կուզէ՞ք սիս : Հող մընէք, անուանի յաճախորդ մ'եմ ես . որ չըլլար որ կամ ես մարդու մը մէկ տեղը չը վերադարձի և կամ անոնք իմն : Սրարչին ամենագեղեցիկ գործը մեր միջոցաւ անդադար կը խանդարուի : Է՛յ, ի՛նչ կըսէք . կուզէ՞ք դարմանել ուրիշները ինծի և ես ալ ուրիշներուն տուած վէճքերս :

— Ահ, պարոն Աոմն, արժանի չեմ ես . . . ըսաւ Ռըմի :

— Ոչ, ընդհակառակն ինծի ալ ձեզի պէս մարդ մը պէտք է : Կնիւն ձեռքի պէս թեթեւ է ձեր ձեռքը և անոր հետ ֆէրածուի պայտասան ալ . . . :

— Պարոն . . . :

— Իմ ապարանքս կուգար ընտելելու . . . ձեզի համար առանձին ընտելարան մը և պատաստներ կուտամ : Սիրելիս, թէ որ չընդունիրք այս առաջարկութիւնս, հաւատացէք որ ոչորոս սաստիկ պիտի վերադարձուի, Այոս ամենայնիւ, ձեր գործը դեռ կատարելագէտ լրացած չէ, անգամ մ'ալ սպեղանին վէճքիս վրայ դնելու է, սիրելիդ իմ պարոն Ռըմի :

— Պարոն Աոմն, այն աստիճան յափշտակուած եմ որ չեմ գիտեր թէ ի՛նչպէս յայտնեմ սրտիս զգացած ուրախութիւնը : Ահ, պիտի աշխատիմ, յաճախորդներ պիտի ունենամ . . . :

— Բայց ոչ, ես ձեզի ըսի թէ միայն իմ և բարեկամներու բժիշկը պիտի ըլլաք : Հիմա, ամենեւին ուրիշ բան մը չէ՞ք յեղել :

— Ոչ :

— Ուրեմն, եթէ կարելի է, դուք ալ ինծի օգնեցէք այս բանս իմանալու համար :

— Ի՞նչպէս :

— Տեսնանք . . . դուք որ այդչափ խելացի և դիտող մէկն էք . դուք որ քայլերը կը հաշուէք, պատերը ձեռքով կը զըննէք, ձայները իրարմէ կորուէք, ըսէք ինծի, ինչպէս կըլլայ որ ձեզնէ դարմանուելէս վերջը այս տունէն կը փոխադրուիմ Թասթըլի խրամներուն գառ ի վայրին վրայ :

— Դո՞ւք :

— Այո . . . ես . . . : Այս տեղափոխութեան կերպով մը դուք ալ օգնեցի՞ք : Անդհակառակն, եթէ ինձի խորհուրդ հարցունէին, ամենեւին հաճութիւն չէի ասոր . . . : Յուրաք կրնար շատ վտանգաւոր ըլլալ ձեզի համար :

— Աւրեմն հոն խելքս դիտէս դացած է, ըստ Պիւսի կուզէ՞ք ինձի հետ միասին քիչ մ'ալ վնասել :

— Ինչ որ կուզէք, կը կատարեմ, Պարոն . . . բայց կը վախնամ անօգուտ չըլլայ . այս բոլոր տուները իրարու կը նմանին :


— Լաւ, ուրեմն ցերեկին դարձեալ կուզանք կը նայինք :

— Բայց ցերեկին մեզ կը տեսնէն :

— Աւրեմն պէտք է տեղեկութիւն ստանալ :

— Այո Տէր իմ, նախ հարկ եղած տաղեկութիւնները կատանանք :

— Եւ այդպէս նպատակնուս կը հասնինք : Հիմա երկու հոգի եղանք և իմացանք թէ իրականութիւն մ'է և ոչ տեսիլք մը . առ այժմ այսչափն ալ բաւական է, Արմի :



Ք Լ Ո Ւ Խ Ժ Ա .

ՅՐԲՈՒՆԻ ՈՐԱՊՈՒՅՈՒՏ Պ . ՊԵՆՆ ՏԷՄՈՆՍՈՐՈ

Երբ որ Պիւսի տեղեկացաւ թէ իր տեսիլք համարած կիւնը իրական էր և թէ այդ կինը վեհանաճն հիւրնկալութիւն մը ըրած էր իրկն որոյ յիշատակը շիտթ կերպով միտքը մնացած էր, փոխանակ ուրախութիւն մը զգալու այս մտատանջութիւնն զառանցանքը աւելի կը վրդովէին զինքը :

Աստի չուզեց երբէք թողուլ երեսասարդ բժիշկը որուն իր սովորական բժիշկի պաշտօնը տուաւ : Արմի թէեւ տղմաթաթաւ եղած էր, հարկ եղաւ որ դահաւորակը ելնէ և իրեն հետ նստի . կը վախնար Պիւսի որ եթէ վայրկեան մը իր քովէն հեռացունէր, այս ալ ուրիշ տեսիլքի մը պէս աներեւոյթ

չըլլար : Միտքը դրաւ որ իր սպարանքը տանի զանիկա, զիչերը փականքի տակ պահէ և առաւօտուն ալ խորհի թէ ինչպէս ազատ թողելու է զինքը :

Պիւսի իր սպարանքը վերագտնալուն բոլոր ժամանակը նորանոր հարցումներով անցուց, բայց իր ընդունած պատասխանները վերը դժուած փոքրիկ շրջանակէն դուրս չէին կրնար ելնել : Արմի չօտուէն ալ Պիւսիէն աւելի բան մը չէր գիտեր, սա տարբերութեամբ միայն որ ինքը թալկացած չէր և իր տեսածը առ երեւոյթ բան մը չըլլալուն վրայ ապահով էր :

Բայց մարդ մը որ սկսած է սիրահարիլ, ինչպէս էր Պիւսի, արդէն մեծ բան մ'է իրեն համար այնպիսի բարեկամ մ'ունենալ որուն հետ իր սիրուհւոյն նկատմամբ կարենայ խօսակցել : Արմի իրաւ է որ այդ կինը տեսած չէր, բայց ատով աւելի արժանաւորութիւն մը ստացած էր Պիւսիին առաջը ըստ որում կինը կենդանադրէն աւելի գերազանց և գեղեցիկ ըլլալը իրեն իմացունեւու համար, Պիւսի կը պարտաւորէր մանրամասնաբար խօսակցել իրեն հետ կնոյր նկատմամբ :

Պիւսի ամբողջ գիշերը անձանօթ տի չնով վրայ խօսակցելով անցունեւու սաստիկ փափաք մը կզգար, բայց Արմի իբրեւ բժիշկ իր պաշտօնը սկսաւ գործադրել և խնդրել որ վերադառնալը քնանայ կամ գէթ պառկի . արդէն ցաւն ու յօքնութիւնն ալ նոյն խրատը կուտային գեղեցիկ ազնուականին և այդ երեք ազդեցութիւններն ալ միացած յաղթեցին իր փափաքանաց :

Բայց Պիւսի ննջելէն առաջ իր նորեկ հիւրը երեք սենեակներու մէջ զետեղեց ուր երբեմն ինքը կը բնակէր . այս երեք սենեակները Պիւսիի սպարանքին երրորդ դասիկոնին մէկ մասը կը կազմէին : Յետոյ, ապահով ըլլալով թէ երեսասարդ բժիշկը իւր նոր բնակարանէն և նախախնամութեան պատրաստած այս նոր բաղդէն դո՛հ և դաղադոզի չը փախիր սպարանքէն, ինքն ալ առաջին դասիկոնը իր շքեղ բնակարանը իջաւ :

Հետեւեալ աւաւտ արթնցած ժամանակը Ռըմին ան- կողմոյն քովը կանգնած գտաւ : Երիտասարդ բժիշկը գիշերն ի լոյս այս երկնառաք երջանկութեան վրայ կասկածելով ան- ցուցած էր և Պիւսիին արթննալուն կսպասէր, ապահով ըլլա- լու համար թէ իրեն ալ տեսիլք մը երեւցած չըլլայ :

— Ի՞նչպէս էք հիւսմ, հարցուց Ռըմի :

— Կատարելապէս աղէկ, սիրելիդ իմ Կարելաք . իսկ դու՞ք ինչպէս էք, գո՞հ էք, հանգի՛տտ էք :

— Իմ ազնիւ և վեհանձն պաշտօնանս, այն աստիճան գո՞հ եմ որ իմ վիճակս Հէնրի Գ. թագաւորին վիճակին հետ չեմ փոխեր, թէեւ անիկա երէկ ցերեկին երկինք առաջնորդող ճամբուն վրայ ուղղեւորութիւն մ'ըրաւ : Բայց գործը հիւսմ անոր վրայ չէ, վերքերնիդ տեսնե՛ք թէ ի՞նչպէս է :

— Տեսէք :

Պիւսի իր կուշտին վրայ պռուկեցաւ որպէս զի երիտա- սարդ վիրաբոյժը սպեղանին վերցունէ :

Ռըմի տեսաւ որ վէրքը երթալով աղէկնալու վրայ էր, վէրքին չրթունքը իրարու մտեցած և կարմիր գոյն մ'առած էին, Պիւսի ալ երկնիկ, հանդիստ քուն մը քնայած էր, և քունն ու երջանկութիւնն ալ վիրաբոյժին օգնած ըլլալով, ալ անոր գործ մը չէր մնացած :

— Ի՛հ, ի՞նչպէս դուք վէրքս, պարոն Անգլուազ Բարէ :

— Չեմ համարձակիր ըսել թէ բոլորովին առողջացած էք, գտնալով որ զիս դարձեալ Պօթրէյի փողոցը չը դրկէք, այն հուշակաւոր տունէն հինգ հարիւր երկու քայլ հեռանաք :

— Որ մենք նորէն պիտի գտնենք, այնպէս չէ՞, Ռըմի :

— Այո, կը յուսամ :

— Հիւսմ, որդեակ իմ, դու կըսես որ . . .

— Ներեցէք, գոնեց Ռըմի ուրախութենէն արտասուելով կարծեմ թէ ինձի համար դու ըսիր, Տէր իմ :

— Ռըմի ես սիրած մարդիկներուս հետ դու՛ով կը խօսիմ : Վշտացա՞ք այդպէս եղակի դու՛ով խօսելուս համար :

— Ընդ հակառակն . Տէր իմ, ընդ հակառակն սաստիկ

կուրսխանամ որ իրբեւ ձեր ընտանեաց մէկ անդամը հետս ընտանեաք կը վարուիր, գոնեց երիտասարդ մարդը Պիւսիին ձեռքը համբուրել ուզելով : Ար վախնայի թէ սխալ լսած կըլ- ամ : Ո՛հ, Տէր իմ Պիւսի, ուրախութենէս պիտի խենթեցու- նեք զիս :

— Ոչ, բարեկամս, չեմ ուզեր որ ձեռքս համբուրես, մի- այն թէ կուզեմ որ ինչպէս ես զքեզ, նոյնպէս և դուն ալ զիս սիրես, ինքզինքդ այս տունին իրբեւ օտար մը չը համարես և թող տաս որ այսօր, մինչդեռ դուն կահ կարասիներդ տեղափո- խես, ևս ալ արքունի որսորդապետին՝ գաւազանը\* (էսթոր- թիւէր) ընդունելու հանդիսին ներկայ գտնուիմ :

— Ո՛հ, հիմակուրնէ սխանք անխոհեմութիւններ գոր- ծելու :

— Ոչ, ընդ հակառակը կը խոստանամ որ խոհեմութեամբ շարժիմ :

— Բայց հարկ պիտի ըլլայ որ ձի նստիր :

— Մնտարակոյս, անհրաժեշտ պէտք է :

— Սրբնթաց և միանգամայն հանդարտ քայլող ձի մ'ունի՞ք :

— Լաւ, այսօրուան համար դուք գործածեցէք այն ձին որուն վրայ կենդանադրին կինը հեծցունել կուզէիք, կը յիշէք :

— Ահ, անշուշտ կը յիշեմ, Ռըմի : Սրգարեւ միշտ իմ սիրտս շահելու կերպը գտաք, ևս շատ կը վախնայի որ այդ որսին կամ որսի նմանութեան հանդիսին երթալ կարդիլէք ինձի . բոլոր պաշտտական տիկիները և բազմաթիւ պատուա-ւոր քաղաքացւոյ կիներ հրաւիրուած են հոն : Հիւսմ Ռըմի սիրելիդ իմ Ռըմի, այդ կենդանադրին տիկինը կամ պաշ- տականի մը տիկինն էր և կամ պատուաւոր քաղաքացւոյ մը :

\* Այս գաւազանը արքունի որսորդապետին քովը կը պահուէր որ թագաւորը որսի ելած ժամանակ իրեն կուտար, ձիարշախի մի- ընցին իրեն զիմադրող ծառերուն ձի գերը մէկգի ընելու համար :

այս ամենայայտնի է թէ պարզ քաղաքացի մը չէր ան . այն դորդերը , բարակ կիտուածները , ներկուած առաստաղը , սպիտակ դամասկէ ոսկեճամուկ անկողինը , այն բոլոր զարդերը սրունք այնչափ վայելչութեամբ յօրինուած էին , ահնուականի մը կինը կամ դէթ հարուստ տիկին մ'ըլլալը յայտնի կը ջուշնեն . ահ , արդեօք հանդիսին մէջ պիտի հանդիպլի մ'իրեն :

— Ամենայն ինչ կարելի է , պատասխանեց Ռըմի փիլիսոսիայի մը պէս :

— Ի բաց առեալ տունը վերստին գտնելը ըսաւ Պիւսի հառաչանօք :

— Եւ գտնելէն վերջը ներս մտնելը , յարեց Ռըմի :

— Հիմա այդ հող չեմ ընելու ես , ներս մտնելու ժամանակ կը մտածեմ : Եթէ դ ործը ատոր մնայ , ներս մտնելու միջոց մը գիտեմ ես :

— Ի՞նչ :

— Այնպիսի կարգադրութիւն մը կ'ընեմ որ որոյ ուրիշ հարուած մ'ալ կ'ընդունիմ նոյն տեղը :

— Լաւ , կը տեսնեմ որ այդպէս կ'երպով ամեն ժամանակ օգտակար պիտի կրնամ ըլլալ ձեզի և կը վստահիմ որ զիս ձեր ասպարանքը պիտի պահէք :

— Անհող եղիր , ըսաւ Պիւսի . ինձի այնպէս կուզայ թէ քսան տարի կայ որ զձեզ կը ճանչեմ . հաւատա ինձի , Ռըմի , որ այսուհետեւ ալ չեմ կրնար ձեզին բաժնուիլ :

Երիտասարդ բժշկին գեղեցիկ երեսները անպատմելի ուրտխութիւն կը յայտնէին :

— Մն ուրեմն , ալ որոշուած ըմբօցած է , ըսաւ , դուք որտի կերթաք տիկինը փնտուելու համար , ես ալ Պօթրէյլի փողոցը կ'երթամ տունը փնտուելու համար :

— Եստ զուարճալի և դեղեցիկ բան մը կըլլայ , թէ որ երկուքնիս մէկ մէկ բան գտած վերադառնանք :

Ատոր վրայ Պիւսի և ը Հոտուէն բաժնուեցան իրարմէ աւելի երկու բարեկամներու նման . քան թէ ծառայի և տիրոջ :

Վէնսանի անտառը որսորդութեան մեծ հանդէս մը կար այսօր պարան Պրիան տը Մոնտորի առաջին անգամ իր պաշտօնը գործադրել սկսելուն առթիւ որ քանի մը շարաթէ հետէ արքունի որսորդապետ եղած էր : Երեկոյեան թափօրը և թագաւորին սաստիկ ապաշխարութեանց մէջ մտնելը որ առանց միտրոց օրուան սպասելու երեքշաբթի օրէն սկսած էր պահք բռնել , շատերուն կասկած կը ներշնչէին թագաւորին անձամբ ներկայ գտնուելուն վրայ , վասն զի թագաւորը այսպիսի ապաշխարութիւններ ըրած ժամանակ այնպիսի սաստիկ ջերմաւանդութիւն մը կուզար վրան , որ եթէ վանք մը մըտնելով ապաշխարելու աստիճանը չը հասնէր , գէթ քանի մը շաբաթ Լուվրին դռնէն դուրս չէր ելնէր : Բայց մեծ զարմանքով լսեցին ամենքն ալ թէ թագաւորը առաջտեան ժամը իննիս միջոցները Վէնսանի դղեակը գացած էր հոն իր եղբորը ա'Մնժու դքսին ու բոլոր պարստականաց հետ այժեամբ ներս ետեւէն կարչաւէր :

Ժամագրութեան և հաւարուելու տեղն էր Ռոն-Բուէն տիւ Ռուա Սէն-Լուի բուած տեղը որ քառուղի ճամբայ մ'էր ուր , կըսուի թէ մինչեւ այն ժամանակ կեցած էր այն կաղնիին ծառը որուն վրայ նահատակ արքայն դատաստան կարած էր բոլոր հանդիսականներն ալ ժամը իննիս հոն հաւարուած էին , երբ ամենուն հետարբքրութեան առարկայն եղող նոր պաշտօնակալը որ դրէթէ պարստականներէն ոչ մէկը կը ճանչէր , սեւաթոյր և փառաւոր երկվարի մը վրայ նստած , բազմութեան մէջ երեցաւ :

Ամենքն ալ իրենց հայեցուածքը անոր ուղղեցին : Գրէթէ եռետուն և հինգ տարեկան , բարձրահասակ մարդ մ'էր : Իր ծաղկապսակ դէմքը որուն վրայի բիծերը իւր սիրտը ուղղ զգացմանց համեմատ փոփոխական և տարբեր դոյն մը կ'առնէին , առջի բերան դիտողին աչքը իրեն կը դըրաւէ որ աւելի ուշագրութեամբ քիչ մ'ընդերկար գիտելով սահանքի զգացում մը կ'իմանայ և կը դարչի իրմէն : Արդարեւ առաջին հայեցուածքով համակրութիւն մը կ'զգայ մարդ իրեն :

վրայ, իր համարձակ նայուածքը և անկեղծ ժպիտը դիտողին տեսութիւնը կը գողուեն և անոր չըթանցը վրայ ալ լիտխօղարձ ժպիտ մը փայլել կուտան:

Մինչեւ ծոհակերը հասնող կանաչադոշն ատուիէ գրատ մը հագած էր վրան որ բարդովին արծաթեայ ժապուէշներով զարդարուած էր, մէջքը արծաթեայ սուսերակապ մը անցուցած էր որուն վրայ արքայական զինանշանները գործուած էին, գլուխը երկայն փետուրով, փնդոյր մը գրած էր, ձախ ձեռքը որսորդական սուխ մը բռնած կը ճօճէր և աջ ձեռքն ալ թնայ աւորին որսորդական գաւազանը (էսթորթիէն): Պ. տը Մոնտրօ իր այս կերպարանքովը սոսկալի մարդ մը դարձած էր, բայց ոչ երբէք գեղեցիկ աղնուական մը:

— Վայ, ինչ տղեղ մարդ մը բերել տուած էք ձեր կառավարութեան երկիրներէն, Տէր իմ, ըսաւ Պիւսի Ենժոպ դքսին. այսպիսի աղնուականներու չորհրդ բնել կը փախարկը որ հեռաւոր գաւառներէն բերել տուիր: Ստոանան տանի, եթէ ասոր պէս մէկն ալ կարելի է գտնել Քարիզի պէս մեծ և բազմամարդ քաղաքի մը մէջ ուր ամեն տեսակ անարդ մարդիկներ կը գտնուին: Արսեն թէ, թէեւ ես չուզեցի հաւատալ, բացարձակապէս խնդրած էք թնայ աւորէն որ պրօնի որսորդապետութեան պաշտօնը ձեր ընտրած մարդուն յանձնուի:

— Պ. տը Մոնտրօ բաւական ծառայութիւններ մատուցած է ինձի և ես ալ զինքը կը վարձատրեմ, ըսաւ գուքսը լակոնարանութեամբ:

— Շատ գեղեցիկ կը խօսիք, Տէր իմ. երախտագիտութիւնը իշխանաց քով այնչափ հազուագիւտ բան մ'է որ խիստ փախարկելի է անոր գործադրութիւնը տեսնել. բայց եթէ միայն երախտագիտութեան պատճառաւ ըրիք զի, ես ալ կարծեմ բաւական ծառայութիւններ մատուցած եմ Ձեր բարձրութեան, և կրնաք հաւատի ըլլալ, Տէր իմ, որ այդ խոշոր հրէշէն աւելի կարող էի ես արքունի որսորդապետութեան գրատը կրելը Մորուքն ալ կարմիր է եղեր. առաջին անգամ աղէկ մը չը նմարեցի. այդ ալ աւելի գեղեցկութիւն մ'է:

— Նոր կը լսեմ հիմա ձեզնէ թէ մարդ մը արքունի պաշտօններու արժանի ըլլալու համար Սպարտին կամ Մետինոսի կաղապարին վրայ ձուլուած ըլլալու է եղեր, պատասխանեց Ենժոպ գուքսը:

— Գեռ նոր կը լսէք այսպիսի խօսք մը՝ Տէր իմ...: Շատ զարմանալի բան, ըսաւ Պիւսի բոլորովին հանդարտութեամբ:

— Ես մարդուն սիրտը կը լինտուեմ կը նայեմ և ոչ թէ երեսը, մատուցած ծառայութիւնները և ոչ թէ խոստացածները:

— Ձեր բարձրութիւնը թերեւս ըսէ թէ հետաքրքրութեան չափը կանցնիմ քիչ մ', բայց կը խոստովանիմ որ կը խորհիմ ու կը խորհիմ և չեմ կրնար զիտնալ թէ այդ Մոնտրօն ինչ ծառայութիւն մատուցած է ձեզ:

— Ահ, Պիւսի, ըսաւ գուքսը խոտութեամբ, արդարեւ ինչպէս ըսիք, հետաքրքրութեան չափը կանցուեցէք:

— Սհա այսպէս են իշխանները, գուցեղ Պիւսի իր սովորական համաձակախոտութեամբը: Իրենք ամեն բաներու վրայ հարցումներ կ'ընեն և ամեն հարցումներուն ալ պատասխանը տալու է. իսկ մէկը թէ որ իրենց բան մը հարցունէ, բան մը միայն, ամենեւին չեն ուզեր պատասխան տալ:

— Իրաւունք ունիս. բայց զիտե՞ս ի՞նչ ընելու է թէ որ կուզես տեղեկանալ:

— Ոչ, չեմ գիտեր:

— Գնա, նոյն իսկ պարոն տը Մոնտրօն տեղեկացիր:

— Էհ, իրաւունք ունիք, Տէր իմ, ըսաւ Պիւսի և եթէ չը պատասխանէ, իրեն դեմ որ պարզ աղնուական մ'է, մէկ բան մը միայն կուենեամ ընելու:

— Ի՞նչ:

— Իրեն ըսել թէ լիրը և անբազարաւար մէկն է:

Եւ առանց ուրիշ կերպ խորհրդածութիւն մ'ընելու, գլխորկը ձեռքը բռնած պարոն տը Մոնտրօն քովը գնաց որ հանդիսականաց բազմութեան մէջ տեղը ձիւն վրայ նստած, ամենուն ալ տեսութեան առարկայն եղած էր և զարմանալի

անտարբերութեամբ կտրատէր որ թագաւորը ազատէ զինքը ամենուն ալ աչացն առարկայ ըլլալով անոնց հայեցուածնէրուն ծանրութենէն :

Երբ որ տեսաւ թէ Պիւսի զուարթ դէմքով, ծիծաղկոտ շրթունքով և գլխարկի ի ձեռնին իր քովը կուգար, զուարթութիւն մ'եկաւ իր դիմացը վրայ :

— Երեւոյնք, պարոն, ըսաւ Պիւսի. ինչո՞ւ համար առանձին կը տեսնեմ զձեզ հոս. միթէ ձեր նոր վայելած շնորհքը՝ աղբունի որսորդապետ ըլլալէն ութ օր յառաջ որչափ բարեկամ որ կրնայիք ունենալ, նոյնչափ ալ թշնամիներ յարոյց հիմակուրնէ :

— Կարելի է, ես ալ այնպէս կը կարծեմ, պատասխանեց պարոն տը Մոնտորո : Բայց կրնամ իմանալ, պարոն կոմս, թէ ինչո՞ւ համար արդեօք այս պատիւը ինձի կընէք, իմ առանցնութիւնս վրդովելով :

— Ձեզի նկատմամբ ունեցած այն մեծ զարմացմանս համար որ տ'Սնժու դուքը ներշնչեց սրտիս :

— Ի՞նչպէս :

— Ձեր մեծագործութիւնը պատմելով որուն համար արքունի որսորդապետութեան պշտօնին արժանի եղած էք :

Պ. տը Մոնտորոյն երեսին դոյնը նետեց այնպիսի սոսկալի կերպով որ ծաղկի հիւանդութեան իր դէմքին վրայ բացած դոյն գոյն ակօսները կարծես թէ մէկ մէկ սեւորակ կէտեր դարձան իր թալկահար մորթին վրայ և Պիւսիին երեսն ի վեր նայեցաւ այնպիսի հայեցուածքով մը որ իր սրտին սաստիկութեամբ յուզուիլը յայտնի կը ցուցնէր :

Պիւսի հասկեցաւ որ իր նպատակին հասնելու համար սխալ ընթացք մը բռնած և ըստ այնմ խօսած էր. բայց իր բերնէն երածը ետ առնող մէկը չէր, ընդ հակառակն այնպիսի մարդ մ'էր որ իր կատարած մէկ անխոհեմութիւնը յանդգնութեամբ դարձան կը տանէր :

— Պարոն, ըսիք թէ Նորին բարձրութիւնը իմ կատարած վերջին մեծագործութիւնս պատմած է ձեզ :

— Այո Պարոն, երկար բարակ պատմեց, այնպէս որ կը խտտովլանիմ թէ սաստիկ փախար մը զգայել բուն խակ ձեր բերնէն ալ լսելու այս պատմութիւնը :

— Ստուգիւ, Պարոն, ձեր քաղաքավարական յարգանաց շնորհակալ ըլլալով, բողբողին պատրաստ էի ձեր խնդիրքը կատարելու. բայց դժբաղդարար ահա թագաւորը կուգայ. եթէ կը բարեհաճիք, ուրիշ ժամանակի մը թող մնայ :

Եւ արդարեւ թագաւորը դեղանի դուռով Սպանիական մատաղաձիւտ մը վրայ նստած որ իրեն շատ սիրելի էր, աճապարանօք դեռակէն Ռոն-Բուէնը կերթար :

Պիւսի փոքր հայեցուածք մ'արձակեց իր բողբողիքը և տ'Սնժու դուքը հանդիպեցաւ աչքին որ ամենագաւան կերպով կը ժպտէր :

— Տէր և ծառայ, երկուքն ալ խնդացած ժամանակին երեսին կը դժգոհեցունեն, հապա թէ որ լալու ըլլան, ինչ պիտի ընեն, ըսաւ Պիւսի խրովի :

Թագաւորը դեղեցիկ և բարեմայն դէմքով մարդ իկներէն կախօթէր, ուստի պարոն տը Մոնտորոյն դէմքը որ առաջուց անդամ մը միայն տեսած էր, վերատին տեսած ժամանակ, առաջնոյն նման տհաճելի երեցաւ իրեն : Մտկայն և այնպէս քաղաքավարութեամբ ընդունեց անոր ձեռքէն որսորդական գաւազանը որ պարոն տը Մոնտորո սովորութեան համեմատ մէկ սաքը ծնրագրած կեցած կը ներկայացունէր իրեն : Իսկ զոյն թագաւորը զէնքերը վրան առաւ. և որսական շուներուն հրամանատարները ծանուցին թէ այժմեակն որչը գտնուած է և որն ալ սկսեց :

Պիւսի ամբողին մէկ քովը կանգնած էր որպէս զի ամենքն ալ իր առաջին անցած ժամանակին կարդաւ դիտէ զանոնք. բոլոր անցրդները աչի ուշով կը զննէր իր տեսած կենդանազրին իսկականը գտնելու համար, բայց իր ջանքը ի դերեւ ելաւ : Թէ և շատ գեղեցիկ տիկիներ, սրտազբաւ և զնայելի կանայք ներկայ էին այս հանդիսին ուր արքունի որսորդապետը առաջին անգամ կտկեր գործադրել իր պաշտօնը, բայց



Հիրցաւ գտնել երբեք իր վնասած հրեշտակային արարածը :

Ուսակ իր սրտակից բարեկամներուն քովը դնաց անոնց հետ խօսակցելու համար : Անդրակէ որ միշտ զուարթ և շաղակրատ մէկն էր, բաւական զբօսանք սրտածառեց Պիւսիին որ սկսած էր ճանճրանալ :

— Արքունի որտորդապետնիս խիտ ժանտատեով մէկն է, այնոյէս չէ՞, ըստ Անդրակէ :

— Մտակալի մարդ մ'է : Մտոր սերսնողը ինչպէս պիտի ըլլայ արդեօք, եթէ իր ընտանիքն ալ իրեն կը նմանի : Իրեն կինը ցուցուր ինձի, տեսնեմ :

— Պէտ նոր պիտի ամուսնանայ, սիրելիս, պատասխանեց Անդրակէ :

— Ռւրկեց զխտես :

— Տիկին վէտորոնէն որ շատ հաճեր է արքունի որտորդապետին գեղեցկութեանը և ասով չորրորդ անգամ ըլլալով պիտի ամուսնանայ և իրեն ամուսին պիտի առնէ զինքը, ինչպէս որ Լիւրբէս Պորճիա իրեն չորրորդ ամուսին առաւ տ'Եսթ Կոմսը : Կը տեսնե՞ս ինչպէս իրեն աշխէտ ձին պարոն տը Մոնսորօին սեւ ձիուն ետեւէն կը վազցունէ :

— Որ գաւառին տէրն է այս մարդը :

— Շատ մը գաւառներու :

— Պէտ ի ս'ը կազմը :

— Անժուի կազմերը :

— Ռւրկին հարձատ է :

— Այնպէս կը պատմեն, բայց իրեն անունը հռչակուած մէկը չէ. կերելի թէ իր ունեցածը փորրկի անուակախութիւն մ'է :

— Ո՞վ է արդեօք այս գեղջուկ անուակախին սիրտ հին :

— Սիրտ հի չսնի. այս Պարոնը իր սեռին մէջ մէկ հատիկ է . . . բայց Նորին բարձրութիւն տ'Անժու դուքսը ձեռնացի ձեզ կը կոչէ. գնա և շուտ եկաւր :

— Է՛հ, նորին բարձրութիւն տ'Անժու դուքսը թող քիչ մը սպասէ : Այս մարդը իմ հետաքրքրութիւնս սատարիկ շարժեց :

Սրակի մարդ մ'է : Ձեմ գիտեր ինչո՞ւ համար մարդուս վրայ այսպիսի դառափարներ կուգան, երբ որ առաջին անգամ մէկը տեսնէ. չեմ գիտեր ի՞նչու համար սիրտս սատարիկ հակախութիւն մը կզգայ այս մարդուն դէմ և այդ Մոնսորօ անունն ալ . . . ի՞նչ անչորհք անուն մը :

— Մոնսորօին Գաղղիերէն տուգարանութիւնն է Մոնսորօն որ բնկէ մինալեռ : Իմ բարեկամներէս ծերունի արքա այս առաւօտ սովբեցուց ինձի այս և ըստ թէ Լատիներէն Մոն Սորիսի բառէն ծագումն առած է :

— Իմ ուզածս ալ ասկէց աղէկ չէ, պատասխանեց Պիւսի :

— Բայց կեցիք, կեցիք, դուքեց յանկարծ Անդրակէ :

— Ի՞նչ կայ :

— Լիվարօն կը ճանչէ ասիկա :

— Ասիկան ինչ է :

— Մոն Սորիսին : Իրենց երկիրները իրարու քով են :

— Շատ ըրէ ուրեմն, պատմէ մեզի, Լիվարօ :

Լիվարօ քովերնին մտեցաւ :

— Հոս եկուր հաս, շուտ ըրէ Լիվարօ Մոնսորօն, Մոնսորօն :

— Է՛հ, ինչ կայ, հարցուց երեսասարդը :

— Մոնսորօին վրայ տեղեկութիւն տուր մեզի :

— Մեծաւ ուրախութեամբ :

— Երկար կը տեւէ :

— Ոչ, շատ կարճ : Երեք բառով պիտի բնեմ ինչ որ գիտեմ և ինչ որ կը մտածեմ իրեն նկատմամբ. ես կը վախնամ անկեց :

— Լաւ, ինչ որ կը մտածես, ըսիր. հիմակ ալ ինչ որ գիտես, այն ըսէ :

— Մտիկ ըրէք . . . ասկէ գրեթէ վեց ամիս յառաջ :

— Ա՛հ, կարծեմ տակալի եղանակաւ մը կսկսի, ըստ Անդրակէ :

— Բայց թողէք որ վերջացունեմ :

— Լաւ :

— Ասկէ գրեթէ վեց ամիս յառաջ հօրեղբորս տ'Անդրա :

կին տունը դայած ըլլալով, երեկոյին կը վերադառնայի Մէ-  
րիտորի անտառին մէջէն, երբ յանկարծ տոսկալի աղաղակ մը  
ընցի և առանց թամբի սպիտակ ձիւ մը անցնելը տեսայ որ  
մայառտաներուն մէջ կը մտնէր. յառաջ ընթացայ և վերջա-  
լոյսին ստուերներովը միմնցած երկար ճամբու մը ծայրը հաս-  
նելով, սեւ ձիւ վրայ հեծած մարդ մը նշմարեցի հեռուէն .  
այս ձին չէր վազեր, այլ կը թռչէր: Խեղդուկ ձայնը դարձ-  
եալ լսեցի և ձիուն թամբին առաջը կին մը տեսայ որուն բե-  
րանը ձեռքովը կը դոյէր: Որսորդութեան հրացանս քովս էր-  
դիտես որ բաւական աղէկ կընամ գործածել: Հրացանս մար-  
դուն ուղղեցի. և հաւաստայի որ վինքը մեռուցած էի, ե-  
թէ կայծահանը թող տուած ժամանակս պատրոյդը մարած  
չըլլար:

- Էյ, վերջը՞, ըսաւ Պիւսի:
- Վերջը փայտահատի մը հարցուցի թէ ո՞վ է սեւ ձիուն  
վրայ նստած այս Պարսնը որ կանանց առեւանդութիւն կընէ .  
պատասխանեց թէ Պ. ար Մոնտրոն է:
- Բայց կարծեմ թէ կանանց առեւանդութիւնը տարօրե-  
նակ չէ, շատ անդամ կըլլայ, այնպէս չէ՞, Պիւսի, ըսաւ  
տ'Անդրակէ:
- Այո, բայց գոնէ այդպէս չեն պոռնցուններ:
- Եւ կինը ո՞վ էր, իմացա՞ք, հարցուց Անդրակէ:
- Ա՛հ, այդ մէկն ալ չէր գիտեր:
- Սրդարեւ նշանաւոր մարդ մ'է այս, երթալով հետա-  
քըքրութիւնս կաւերնայ:
- Այսպիսի միայն գիտեմ որ այդ սիրելի պարսնը կատա-  
ղութեան կողմանէ համբաւաւոր է:
- Ուրիշ գործեր ալ կը պատմե՞ն իր վրայօք:
- Ոչ, բայց սակէ ուրիշ մեծ շարք մ'ըրած չունի, կըսեն  
նաեւ թէ իր շինականներուն հետ աղէկ կը վարուի, թէեւ իր  
ժառանգութեանը տակ եղած երկրին ընակիւնները կրակի մը  
պէս կը վախնան իրմէն: Այսու ամենայնիւ՝ Նէմբոսին պէս  
դատարդ մ'է և թագաւորը՝ թերեւս ոչ Աստուծոյ առաջը,

բայց ստանալին առաջը ասոր նման արքունի որսորդապետ  
մը չը կընար գտնել: Սէն-Լիւքէն աւելի յարմար է այս պաշ-  
տօնին որուն պիտի յանձնուէր յառաջ, բայց տ'Անժու դըբին  
աղղեցութիւնը Մոնտրոն անոր տեղը անցունել տուաւ:

- Պիտե՞ս որ տ'Անժու դուքոր գեւ. քեզ կը կանչէ, ըսաւ  
Անդրակէ:
- Է՛հ, թող կանչէ, դիտե՞ս դուն ալ Սէն-Լիւքին համար  
ի՞նչ կըսեն:
- Ոչ, տակաւին բանտարկուած է թագաւորին պալատը,  
հարցուց Լիվարո ժպտելով:
- Շատ հաւանական է, որովհետեւ հոս ներկայ չէ, ըսաւ  
Անդրակէ:
- Սմեներէն ոչ, սիրելիս, կէս դիշերին ճամբայ ելեր է  
իր կնօջ երկիրներուն այցելութիւն մ'ընելու համար:
- Արսորուած է:
- Սյնպէս կը թուի ինձի:
- Սէն-Լիւք արսորուած . անկարելի բան:
- Սիրելիս, ճշմարիտ է նման սրբոյ Աւետարանին:
- Որ ըսա Ղուկասոս\*, այնպէս չէ՞:
- Ոչ, որ ըստ Պրիստը մարալախտին որ այս առաւօտ իր  
բերնովը պատմեց ինձի գործը:
- Ահա նոր և հետաքրքրական բան մ'ալ որ պատիւ չը  
բերեր Մոնտրոնին:
- Հասկցայ:
- Ի՞նչը հասկցար:
- Ես գտայ:
- Ի՞նչը գտար:
- Պ. տ'Անժուին մատուցած ծառայութիւնը:
- Սէն-Լիւքի՞ն:
- Ոչ, Մոնտրոնին:
- Իրա՞ւ կըսես:

\* Ս. Ղուկասոսն գաղղ. է Սէն-Լիւք:

— Այո , կը տեսնէք դուք ալ հիմա . միասին եկէք .

— Պիւսի՛ Լիվարօին և Անդրակէին հետ ձիբրնին վաղ-  
ջուցին ա՛Մնժու դքսին հասնելու համար որ նշանացի Պիւսին  
կոչելէն պարտասեալ , քանի մը նետարնկէց հեռացած էր իրմէն :

— Ա՛հ , Տէր իմ , ի՛նչ սքանչելի մարդ մ'է եղիք այս պա-  
րոն Մոնտրօն , գոչեց իշխանին քովը հասած ժամանակ :

— Ստուգի՛ւ :

— Մտքէ դուրս սքանչելի մէկն է :

— Ուրեմն խօսեցար իրեն հետ , ըսաւ իշխանը ծաղրական  
դէմքով :

— Անտարակոյս , բայց չէի դիտեր թէ այս աստիճան խե-  
լացի մէկն է :

— Հարցուցի՛ր իրեն թէ ի՛նչ ծառայութիւն մատուցած է  
ինձի :

— Անշուշտ , այդ գիտաւորութեամբ դացի իր քովը :

— Եւ պատասխանեց ըբզի , հարցուց իշխանը աւելի ծի-  
ծաղական դէմքով :

— Անմիջապէս , և այնպիսի քաղաքավարութեամբ որուն  
համար յախտեան շնորհակալ պիտի ըլլամ իրեն :

— Ի՛նչ ըսաւ ըբզի , տեսնենք , պարոն մեծարան :

— Քաղցրութեամբ խոստովանեցաւ , Տէր իմ , թէ Ձեր  
բարձրութեան գործակատարն է եղեր :

— Որսորդութե՛ան :

— Ոչ , այլ կանանց գործակատար :

— Ի՛նչ բոխք , հարցուց դուքոր որուն ճակտին վրայ ալ-  
ներեւ տիրութիւն մը պատեց իսկոյն , ի՛նչ կը նշանակէ այս  
կատակարանութիւնը , Պիւսի :

— Կը նշանակէ , Տէր իմ , թէ իր սեւադոյն մեծ ձիուն  
վրայ նստած կանանց առեւանդութիւն կընէ ձեզի համար ,  
և որովհետեւ խեղճերը զնն դիտեր անշուշտ թէ դիրնը ինչ-  
պիսի պատեց մը պիտի արժանացունէ , բերաննին ալ կը դոցէ  
որդէս զի շաղաղակեն :

Պաւքը յօնքերը պատեց , բարկութեամբ ձեռքերը աճ

դիտեց , երեսին գոյնը դեղնեցաւ և այնպիսի կատաղու-  
թեամբ արշաւեցուց իր երկվարը որ Պիւսի և իրենները յետ  
մնացին :

— Ո՛հ , ո՛հ , կարծեմ կատակարանութիւնը շատ գեղեցիկ  
էր , ըսաւ Անդրակէ :

— Այնչտի գեղեցիկ , որ կարծեմ թէ կատակարանու-  
թեան մը պէս ադդեցութիւն մը չըրաւ դքսին վրայ :

— Չարմանալի բան , կարծես թէ խեղճ դքսին բերանը  
կտաղուեցաւ մնաց :

Քիչ մը վերջը ա՛Մնժու դքսին ձայնը բուեցաւ որ ծիծա-  
ղելով կըսէր .

— Ո՛ւր ես , Պիւսի . եկուր նայի՛նք :

— Ահա առիկ եմ , Տէր իմ , ըսաւ Պիւսի յառաջ երթալով  
իշխանը բարձրածայն կը խնդար :

— Օ՛ , Տէր իմ , կերեւի թէ ըսած խօսքս շատ ծիծաղելի  
շարժեց :

— Ոչ , Պիւսի , ըսած խօսքիդ համար չեմ ծիծաղիր :

— Այդ ալ մոյթ չէ , Տէր իմ . պատիւ կը համարիմ ինձի  
որ զրէթէ երբէք չծիծաղող իշխան ինդացուցած եմ :

— Մնոր համար կը խնդամ , թշուառ Պիւսիս որ վարպե-  
տութեամբ եկեր իմ առաջն պարսպ կը նետեա լեցուն բռնե-  
լու համար :

— Ժանտախտը զարնէ , և թէ ուր մը խօսեցայ , Տէր իմ :

— Լաւ . պատմէ ինձի ուրեմն այդ վերքիկ պատմութիւնը ,  
մինչդեռ առանձին երկու հողի ենք հոս . ուրիշ խնայար այդ  
պատմութիւնը որ եկեր ինձի կը պատմէս :

— Մերիտորի անտառներուն մէջ , Տէր իմ :

Այս անդամ եւս դքսին երեսին գոյնը նետեց , բայց ու-  
մենեւին խօսք մը չըրաւ :

— Անտարակոյս ինչ և իցէ կերպով մը դքսին մատը կը  
դանուի այս գործին մէջ , մբմնեց Պիւսի :

Եւ ձայնը բարձրացունելով ծիծաղելու ըսաւ .

— Տէր իմ , ի՛նչ կերպով կընամ այնպիսի ծառայութիւն

մը մատուցանել ձեզ որ ուրիշներէն աւելի հաճելի ըլլայ .  
բռէք մեզի և պարսն տը Մոնարօֆին դէմ բարի նախանձով մը  
չարտած կը կատարենք զայն :

— Ս. յո, Պիւսի, կայ մէկ միջոց մը և անպ ձեզի կըսեմ  
հիմա :

Պուրքը մէկ կողմ տանելով Պիւսին՝ ըսաւ իրեն :

— Գիպուածով եկեղեցիին մէջ գեղանի տիկին մը տեսայ  
որուն քողարկեալ դէմքին դժագրութիւնները կնոջ մը յիշա-  
տակը կարթնցունէին մտքիս մէջ զոր չարագանց սիրած . ուս-  
տի իրեն ետեւէն գացի և բնական տեղը ըստ մը տեղեկա-  
ցայ : Իւր ազականոյն հետ համաձայնեցայ և հիմա տանը հա-  
մար բանալի մ' ունիմ ըստ :

— Լաւ , առոնք դէշ չէն :

— Սպասէ :

— Արտեն թէ շատ համեստուհի մէկն է , թէև և ազատ ,  
գեղեցիկ և մանկամարդ է :

— Ահ , Տէր իմ , հիմա ալ երեւակայական բաներու սկը-  
տանք :

— Պիւսի , քաջ մէկն ես դուն և զիս կը սիրես , այնպէս չէ :

— Ս. յո բանին համար կապրիմ :

— Բա՞ջ ըլլալու համար :

— Ոչ , գձեզ սիրելու համար : Պատրաստ եմ Ձեր բարձ-  
րութեան ծառայելու :

— Լաւ , ինձի համար այնպիսի գործ մը պիտի կատարես ,  
որ սովորաբար ամեն մարդ ինքզինքին համար կընէ :

— Ոհ , Տէր իմ , կարծեմ Ձեր բարձրութիւնը կը վախաբի  
որ երթամ իր սիրուհին վաղաքեմ փորձելու համար թէ իր  
գեղեցիկութեանը չափ ալ համեմատ է : Իհ , գէշ չէ , այս իմ  
գործիս կուգայ :

— Ոչ , միայն թէ պիտի տեղեկանար որ ուրիշ մէկը իրեն  
հետ յարաբերութիւն հաստատած է :

— Հիմա խառնաշիթ եղաւ գործը , Տէր իմ : Խօսքերնիդ  
բացատրեցէք որ զիրար հասկնանք :

— Ահար է որ դարմանակարութեամբ տեղեկանաւ թէ ով  
կերթեւեկէ իր տունը :

— Կա՞յ ուրեմն այդպիսի մէկը :

— Կը կատարեմ :

— Սիրտհա՞ր մը , ամուսի՞ն մը :

— Ի՞նչ , թերեւս նախանձորդ մը :

— Ս. լելի աղէկ , Տէր իմ :

— Ինչպէ՞ս , աւելի աղէկ :

— Ս. յո , այդպէս ձեր բաղդը աւելի կը յաջողի :

— Ծեղրհակալ եմ . հիմա կը վախաբիմ իմանալ թէ այդ  
մարդը ո՞վ կընայ ըլլալ :

— Եւ այդ պաշտօնը ինձի՞ կը յանձնէք :

— Ս. յո , և եթէ այս ծառայութիւնը ինձի մատուցանես . . . :

— Կարդը ինձի՞ պիտի դայ արքունի որսորդապետ ըլլա-  
լու , եթէ այդ պաշտօնը պարտալ մնայ :

— Մեծապէս երախտապարտ պիտի ըլլամ . քեզի և արդա-  
բեւ մինչև հիմա արժանաւոր շնորհք մ' ըրած չեմ :

— Ի՞նչ , Ձեր բարձրութիւնը կը խոտտովանի այդ :

— Արդէն շատ ժամանակէ հետեւ ես ինքնիրենս կըսէի այս :

— Ինչպէս անյսելի մեղմիկ ձայնով մը կը խօսին իշխան-  
ները այսպիսի բաները :

— Ի՞նչ , ի՞նչպէս , կը հաճիս :

— Տիկինը լրտեսելու :

— Ս. յո :

— Տէր իմ , կը խոտտովանիմ որ այդ յանձնարարութիւնը  
չատ հաճելի չը թուիր ինձի և սիրով կը կատարէի , եթէ ու-  
րիշ բան մ' ըլլար :

— Տակաւին հիմա կը խոտտանայիք ինձի ծառայութիւն մը  
մատուցանել և ի՞նչպէս ետ կը քաշուիք :

— Բայց դուք ինձի լրտեսի մը պաշտօնը կը յանձնէք ,  
Տէր իմ :

— Ոչ , բարեկամական պաշտօն մ' է այս : Ս. յոու ամենայ-  
նիւ մի կարծեր թէ աւանց աշխատութեան հանդիստ կենա-

լով կրնաս պատիւ ստանալ. թերեւս հարկ պիտի ըլլայ սրով  
խաղալու :

Պիւսի գլուխը թռթռէր :

— Տէր իմ, այնպիսի գործեր կը դանուին որ ազէկ ըլլալը  
փախաբողիները իրենց ձեռքովը կատարելու են, եթէ մինչեւ  
անգամ իշխան ալ ըլլան :

— Ուրեմն կը մերժե՛ս առաջարկութիւնս :

— Ա, յո, Տէր իմ :

Գուրբը յծնքերը պատուեց :

— Ես ալ ձեր խորհուրդին հետեւելով անձամբ կերթամ,  
ըսաւ. և եթէ սպաննուիմ կամ վիրաւորուիմ, պիտի ըսեմ թէ  
բարեկամս Պիւսիին սղաչեցի որ այս սրոյ հարուածը ընդու-  
նելու կամ իր հակառակորդին տարու պաշտօնը յանձն առնել  
և ան՝ իր կենացը մէջ առաջին անգամն ըլլալով ուղեց խոհե-  
մութեամբ չարժիլ :

— Տէր իմ, պատասխանեց Պիւսի, անցեալ երեկոյ ինծի  
ըսիք. Պիւսի, թագաւորին բոլոր սիրելիներն ալ ոգևով չափ  
կատեմ. ամեն սրբադայի մէջ մեզ կը ծաղրեն և կը թշնամա-  
նեն. սէտք է որ դուն Սէն-Վիւրքին հարսանիքը երթաս և հոն  
վէճ մը յարուցանելով այս անպիտանները մէջ տեղէն վերցու-  
նես և այսպէս ձեռքերնէն սղատինք : Ես ալ դացի, Տէր իմ.  
Իրենք հինգ հոգի էին իսկ ես առանձին. զանոնք պատերազ-  
մի գրգռեցի. դարան մը լարեցին ինծի դէմ. ամենքը միա-  
սին վրաս յարձակեցան. երկարս սպաննեցին, թէեւ ես ալ  
իրենցմէ երկուքը վիրաւորեցի և մէկն ալ դանակածեցի : Հի-  
մա ալ կը խնդրէք որ երթամ կնոջ մ'ալ քնաս հասցունեմ.  
Ներեցէք, Տէր իմ, ազնուականի մը իր իշխանին պարտաւոր  
եղած ծառայութեանց սահմանէն դուրս կեղնէ այս և ես ալ  
չեմ ընդունիր :

— Փոյթ չէ. ես անձամբ կերթամ այն տեղերը գիշերա-  
պահութիւն ընելու և կամ Օրիլիին հետ միասին, ինչպէս որ  
ուրիշ անգամ ալ ըրած ենք :

— Ներեցէք, Տէր իմ, ըսաւ Պիւսի որուն այնպէս թուե-

ցաւ թէ իր մտքին վրայ տարածուած մշուշի պէս բան մը նորի՞ն  
ժամուն ցրուեցաւ :

— Ի՞նչ կայ :

— Տէր իմ, անցնալ գիշեր երբ դիւ լրտեսող դարանա-  
գործ սիրելիները գէմը երան, այն տեղերը գիշերապահու-  
թե՞ան դացած էիք :

— Ա, յո :

— Ուրեմն այդ գեղեցիկ տիկինը Պասթիլլի կողմէ՞րը կը  
բնակի :

— Իր բնակարանը Սէնթ-Քատրին վտղոցին դիմացն է :

— Իրա՞ն կրուէք :

— Խիստ վտանգաւոր թաղ մ'է այդ, ինչպէս դուք ալ ան-  
չուչտ զիտէք :

— Ձեր բարձրութիւնը այն գիշերուէնէ վերջը դարձեալ  
լրտեսե՞ց :

— Ա, յո, երէկ գիշեր :

— Ձեր բարձրութիւնը տեսա՞ն . . . :

— Մարդ մը որ հոն տեղի բոլոր ներքսամուտ անկիւնները  
մանրակալուղիւ կը զննէր, տեսնելու համար թէ արդեօք զինքը  
լրտեսող մը կայ և անտարակոյս զիս տեսնելով դնաց տանը  
գռանը առաջը յամառութեամբ կանդնեցաւ կեցաւ :

— Ա, յո մարդը առանձին էր, Տէր իմ հարցուց Պիւսի :

— Ա, յո, գրէթէ կէս ժամու չափ առանձին մնաց :

— Իսկ կէս ժամէն վերջը :

— Ձեռքի լապտեր բռնած մարդ մը եկաւ քովը :

— Ո՛հ, ըսաւ Պիւսի հառաչանքով :

— Ա, յո ժամանակ՝ վարապանակ մը վրան առած մարդը . . .  
յարեց իշխանը :

— Առաջինը վարապանակ մը առած էր վրան, հարցուց  
Պիւսի իշխանին խօսքը ընդմիջելով :

— Ա, յո, այն ժամանակ վարապանակ մը վրան առած  
մարդն ու լապտերով մարդը սկսան իրարու հետ խօսակցիլ.  
և որովհետեւ այնպէս կը թուէր թէ իրենց կեցած տեղէն

հեռանալու գիտաւորութիւն չունէին, ես ալ իրենց ձգեցի այն հրապարակը և ապարանքը վերադարձայ :

— Ա.յս կրկին փորձերէն ձանձրացած . այնպէս չէ :

— Ա.յո, ստոյգ է, կը խոտոտվանիմ թէ . . . : Ա.յնպէս որ այդ տունը մանեղէս առաջ որ կրնայ վտանգաւոր տեղ մը ըլլալ . . . :

— Կը փափաքէք որ ձեր բարեկամներէն մէկը սպանուի հոն :

— Կամ աւելի շխտակը բերելով, այդ բարեկամը իշխան մը չըլլալուն համար ինծի չափ նախանձորդներ և թշնամիները չունի և այսպիսի արկածներու ալ արդէն վարժուած ըլլալով, կրնայ տեղեկանալ թէ արդարեւ վտանգ մը կ'ա՞յ ինծի դէմ և ինծի ալ հարկ եղածը տեղեկացունէ :

— Տէր իմ, եթէ այդ կիներ ալ մտքերնուդ հանէք, շատ աղէկ կըլլայ :

— Ս.մենեւին ոչ :

— Ինչո՞ւ համար :

— Բայց դուք ըսէք թէ հազիւ տեսած էք իր քողարկեալ գէմքը :

— Բաւական կըցայ տեսնել իր խարտեշազոյն սքանչելի ձեւերը :

— Ո՛հ :

— Փառաւոր աչքերը :

— Ո՛հ, ո՛հ :

— Երեսներուն կենդանի գոյնը և աննման սլայծառու թիւնը, սքանչելի հասակը :

— Ո՛հ, ո՛հ, ո՛հ :

— Կը հասկընաս անշուշտ թէ այսպիսի կիւն մը մարդ գիւրութեամբ մտքէն չը կրնար հանել :

— Ա.յո, Տէր իմ, հասկցայ և ձեր այդ վիճակը իմ սիրտը չարժեց :

Դուքար խոժոռ նայուածքով մը Պիւսիին երեսը նայեցաւ :

— Պատուոյդ վրայ խօսք կուտաս, Տէր իմ, ըսաւ Պիւսի :

— Կը ծաղրե՞ս :

— Ոչ, Տէր իմ և ըսածս ապացուցանելու համար, եթէ Ձեր բարձրութիւնը հարկ եղած հրահանգները տայ և տունը ցուցունէ ինծի, այս քերեկոյ կերթամ կը հսկեմ :

— Ուրեմն առաջին որոշմանդ մէջ սխալած ըլլալով ես կ'առնեմ զայն :

— Տէր իմ, քանի որ մարդ ենք, ամենքս ալ սխալական ենք, բայց ի մեր սրբազնաստուրբ քահանայապետ Գրիգ որիոս ԺՊ. բարէն : Հիմա՛ եթէ կը հաճիք, ըսէք ինծի ինչ որ պիտի ընեմ :

— Դռնէն քել մը հեռու կը պահուրոյք որ ձեզի պիտի ցուցունեմ. և եթէ մարդ մը ներս մտնելու ըլլայ, դուք ալ ա՛նոր ետեւէն կը մտնէք ու ըլլալը իմանալու համար :

— Լաւ. բայց թէ որ ներս մտած ժամանակը դուռը դուցելու ըլլայ :

— Քեզի ըսի թէ բանալի մ'ունիմք ըսի :

— Հա՛, իրաւ, միայն թէ բան մ'ալ կայ վախնալու, դուցէ սխալմամբ ուրիշ մարդ ու մը ետեւէն կերթամ և բանալին ալ ուրիշ դրան մը կը յարմարի :

— Բայց սխալելու բան մը չի կայ : Գրան ներսի կողմը երկայն բարակ ճամբայ մը կայ, ճամբուն ծայրը ձախ կողմը սանդուղ մը կայ. տասներկու աստիճաններէն վեր կենես և ինքզինքդ նեղ անցքի մը մէջ կը գանես :

— Բայց, Տէր իմ, ի՞նչպէս գիտէք դուք այս բաները մինչդեռ տունը դացած չէք :

— Քեզի չըսի՞ թէ տանը ազախներ իմ կողմն շահած եմ. ամեն բան պատմեց ինծի :

— Ի՞նչպէս հանդիստ են իշխանները. իրենց ամեն պէտք եղածը շուտով մը կը պատրաստուի : Իսկ ես, Տէր իմ, եթէ հարկ ըլլար այդ տունը անձամբ գտնել, դռան ներսի երկար բարակ ճամբան աչքէ անցունել, աստիճանները հաշուել, նեղ անցքը գննել. այս ամենը իմանալու համար բաւական ժամանակ վտանգելու էր և յաջողիլ ալ Տէրը միայն գիտէ :

— Աւրեմն այսպէս կը հաճին :

— Միթէ ես Ձեր բարձրութեան մէկ առաջարկութիւնը մերժած եմ : Միայն թէ պէտք է որ հետո գաք դուռը ինծի ցուցնելու համար :

— Ամենեւին ոչ : Որտէն վերադարձած ժամանակնիս ճամբէն քիչ մը կը շնորհիք Անթ-Անթիւան դռանը կողմէն կանցնիք և տունը քեզի կը ցուցնեմ :

— Եստ լա՛ւ, Տէր իմ : Թէ որ մարդը գալու ըլլայ, ի՞նչ ընելու է :

— Մինչեւ որ ով ըլլալը իմանաս, իրեն ետեւէն կերթաս :

— Այդ շատ փափուկ գործ մէ : Օրինակի աղագաւ, եթէ մարդը խոհեմութեամբ շարժելով կէս ճամբան կանց առնէ և իմ հետադարձութիւններս անկատար թողու :

— Ազատ ես, պարագային բերմանը նայելով ուղածիդ պէս գործէ :

— Աւրեմն Ձեր բարձրութիւնը կատարեալ ազատութիւն կուտայ ինծի իբրեւ իմ գործս ուղածիս պէս կատարելու :

— Կատարեալ ազատութիւն :

— Ես ալ այնպէս կը կատարեմ, Տէր իմ :

— Բայց մեր երիտասարդ պարոններուն բան մը չըսէք :

— Ամենեւին ոչ. ազնուականութեանս վրայ կը խոստանամ :

— Մէկն ալ հետդ չը պիտի գտնուի :

— Եստ լաւ, առանձին կերթամ. այդ կողմէն ալ ապա-

հով կրնաք բլաւ :

— Աւրեմն ալ բնցած է այս : Պատթիլին կողմէն կը վերադառնանք. դուռը քեզի կը ցուցնեմ. . . գուն ալ իմ ապա-րանքս կուգաս. . . բանալին քեզի կուտամ. . . և այս երեկոյ. . . :

— Ձեր բարձրութեան գործը կը կատարեմ ես, ահա ըսի լինցաւ :

Պիւսի և իշխանը դարձեալ եկան միացան որսի հանդիսին հետ որ պարոն տը Մոնտրո ճարտար մարդու մը կը կատա-վարէր : Ամեն կայանները ու օթեւանները ճիշդ ու ճիշդ որո-

չած էր որուն վրայ թագաւորը շատ ուրախ եղաւ : Երկու ժամու չափ կենդանին հալածուելէն վերջը, չորս հինգ մղոն շրջապատ ունեցող տեղւոյ մը մէջ դարձգարձեւէն և քսան անգամալ աչքի երեւնալէն վերջը պարոն տը Մոնտրոն մա-հացու հարուած մ'ընդունեց :

Թագաւորն ու տ'Անտու իրենց ուրախակցութիւնը յայտնելով, սովորական բարեմաղթութիւնները ըրին պարոն տը Մոնտրոն իր պաշտօնին նկատմամբ :

— Տէր իմ, ըսաւ, ձեր այդ յարգանացը արժանանալուս համար շատ երջանիկ կը համարիմ զիս, որովհետեւ ձեզի կը պարտաւորիմ այս ընդունած պաշտօնս :

— Բայց գիտե՞ք, Պարոն, ըսաւ դուքսը, այս յարգանաց միշտ արժանաւոր գտնուելու համար պէտք է որ այս երեկոյ անպատճառ Ծովթէնըսլո երթաք : Թագաւորը վաղը չէ միւտ օրէն սկսեալ որսորդութիւն կուղէ ընել հոն. ուստի պէտք է որ օր մը առաջ հոն դառուիք անտառը անգամ մը աչքէ անցունելու և ուշի ուշով գննելու համար :

— Գիտեմ, Տէր իմ և արդէն իմ մարդիկներովս պատրաստուած եմ : Այս գիշեր ճամբայ պիտի ելնեմ :

— Ա՛հ, կը տեսնէք, պարոն տը Մոնտրո, այսուհետեւ ալ ձեզի համար հանգստութիւն չի կայ : Արքունի որսորդաւ պետ ըլլալ կուղէիք, ահա եղաք. այս պաշտօննաւ մէջ ուրիշ մարդոց չափ հանգիստ գիշերներ չը պիտի ունենաք. բարեբաղդաբար դեռ ամուսնացած չէք, սիրելիք իմ Պարոն :

Պիւսի այս խօսքը ըրած ժամանակը կը ծիծաղէր. դուքսը պարոն տը Մոնտրոն երեսն ի վեր կը նայէր պըուցեալ աչուրներով, յետոյ միւս կողմը գառնաղով գնաց իր ուրախակցութիւնը յայտնելու, գիշերունէ հետէ թագաւորին աւուշլութիւնը բարեբաւած ըլլալուն համար :

Իսկ Մոնտրո, Պիւսիին կատակաբանութեանը վրայ երեւին դոյնը նետած ըլլալով, սասկալի կերպարանք մ'առած էր :

Ի Լ ՈՒ Թ Յ :

ՊԻՍԻ ԴԵՆՊԱՆԱԳԻՐԵՆ ԵՒ ԱՆՈՐ ԻՍԿԱԿԱՆԸ  
ՄԵԱՆԳԱՄԱՅԵՆ ԿԸ ԳՏԵՆ

Երեկոյեան ժամը չորսին առեւնները որսորդութիւնը վեր-  
ջացաւ . ժամը հինգին բարձր պալատականաց բարեմութիւնը  
Բարիկ վերադառնալ սկսաւ , Անթ-Անթուան արուարձանէն  
երթալով , իբրեւ թէ թաղաւորը տ'Անժու գ.քսին սրահն ան-  
ցածը գուշակած ըլլար :

Պ. տը Մոնարո առանց վայրկեան մ'ուշանալու , ճամբայ  
եղնելու պարտուակաւ , իշխաններուն հրաժեշտի ողջոյնը  
տուած , իր մարդիկներովը դէպ ի Ֆրոնանթօ կերթար :

Պատթիլին առաջէն անցած ժամանակին թաղաւորը իր բա-  
րեկանց կը ցուցնէր այդ ամբողջն իտալիա և ահաւոր երեւոյթը .  
որով կուզէր իրենց յիշեցունել թէ՛ եթէ իրեն թշնամութիւն  
ընել ուզեն՝ Պատթիլը պատրաստ կեցած իրենց կապսէ :

Նատերը հասկցան թաղաւորին միտքը և իրենց անկեղծ  
հարտակութեան ու յարգանաց նշանները յայտնեցին Նորին  
Վեհափառութեան :

Այս միջոցին տ'Անժու գուքսը մեղմ ձայնով կըսէր Պիւ-  
սիին որ իր քովէն կը քալէր :

— Տես , Պիւսի , ալ կարմիր դարչիլը , սա փայտաշէն տունը  
տեսա՞ր , որուն քրտոյն տակը Աստուածածնի փոքրիկ արձան  
մը կայ . այս տունէն սկսեալ , նոյն կարդին վրայ ուրիշ չորս  
տուն ալ կը հաշուես :

— Լաւ , ըսաւ Պիւսի :

— Հինգերորդը տիկինին բնակարանն է որ ճիշդ Անթ-  
Քաթերին փողոցին դէմը կիցնայ :

— Տեսայ , Տէր իմ : Թաղաւորին գալուստը իմացունող  
Նուաղարաններուն ձայնէն բարձր տուններուն պատուհանները  
հետաքրքիրներով լցուած են :

— Բայ ի ձեզի ցուցուցած տունէս որուն պատուհանները  
փակուած մնացած են :

— Բայց վարդայրին մէկ ծայրը կէս մը բացուած է , ըսաւ  
Պիւսի տակալի սրտատրոփով մը :

— Թէեւ անկարելի է բան մը նշմարել : Մ՛հ . տիկինը սա-  
տիկ զգուշութեամբ կը պահէն կամ ինքզինքը կը պահէ : Ինչ  
և իցէ , ահա տունը այս է . սպարանքը երթալունս վերջը բա-  
նալին քեզի կուտամ :

Պիւսի վարդայրին կիտարաց անկիւնէն ակնարկ մը արձա-  
կեց բնակարանէն ներս , բայց ոչինչ կրցաւ նշմարել , թէեւ  
աչքերը յարած ընդերկար դիտեց հոն :

Տ'Անժու գ.քսին սպարանքը երթալունս վերջը՝ գուքսը  
տանը բանալին հանեց Պիւսիին տուաւ , կրկին և կրկին  
պատուիրելով իրեն որ աղէկ պահէ զայն : Պիւսի խոստացաւ  
գ.քսին ամէն ուղածները կատարելու և մեկնեցաւ իր ապա-  
րանքը գնաց :

— Ի՞նչ ըրիր , հարցուց Ռ.լիին :

— Եթե այ նոյն հարցումը կընեմ ձեզի , Տէր իմ :

— Բան մը չըգտար :

— Այդ տունը ինչպէս դիչերը նոյնպէս և զերեկն ալ գըտ-  
նելը անկարելի է : Հինգ վեց տուն կայ իրարու քով , որոց  
մէջէն որն ըլլալը չըկրցայ որոշել :

— Ռ.լեմն , ըսաւ Պիւսի , կարծեմ ես քեզնէ սուրի բա-  
րեբաղդ գտնուեր եմ , սիրելիդ իմ Հօտուէն :

— Ի՞նչպէս , Տէր իմ . գու՛ր այ սրտնեցիք տանը :

— Այ . միայն թէ նոյն փողոցէն անցուց :

— ձանցյալը գու՛ր :

— Մերեկ բարեկամս , նախախնամութիւնը գաղտնի ճան-  
քաներով խորհրդաւոր գործեր և միակերպութիւններ կը  
կատարէ :

— Ռ.լեմն սպահով էր :

— Չեմ ըսեր թէ սպահով եմ , բայց կը յուսամ :

— Եւ թէ որ ձեր փնտռածը գտնելու ըլլաք , երբ պիտի



իմանամ ես ալ :

- Վաղն առաւօտ :
- Հիմա ինձի պէտք ունի՞ք :
- Այ, սիրելիդ իմ Արմի :
- Ձէ՞ք ուզեք որ ձեր ետեւէն դամ :
- Մնկարե՛լի՛ բան :
- Խնդրեմ գոնէ խոհեմութեամբ շարժիք, Տէր իմ :
- Ա՛հ, աւելորդ է ասոր համար խրատ տալը . այդ մասին նշանաւոր եղած եմ ես :

Պիւսի քիչ մը բան ընթրեց, բայց ինչպէս և ուր ուտելը չէր գիտեր : Յետոյ ժամը ինը զարկածին պէս, իր ամենէն ընտիր սուրբ առաւ, զոյգ մը ատրճանակներ մէջքը կապեց, թաղաւորին հանած հրովարդակին հակառակ որ կարող իջէ՞ր ատրճանակով պտըտել, և դահաւորակը բերել տալով, մինչև Ահն-Բօլ փողոցին ծայրը գնաց : Հոն հասածին պէս Սասու աւազանի արձանով տունը գտաւ, անկէջ վար չորս տուն ալ հաչուեց, ապահով ըլլալով որ հինգ երորդը որոյնեալ տունն էր . և մութ գունով մեծ վերարկուի մէջ փաթթուած, գնաց Մէնթ-Քամօ շէրին փողոցին անկիւնը կձկտեցաւ, հաստատու պէս մտքը գնեցով որ երկու ժամ հոն սպասէ . և եթէ երկու ժամէն վերջը մէկը չի գայ, իր անձնական գործը կարգադրէ :

Ահն-Բօլ փողոցը ժամը ինը կը զարնէր, երբ Պիւսի դարասնի մտաւ : Հազիւ թէ տասը վայրկեան անցած էր, երբ մթնութեան մէջէն երկու հեծեղականաց Պասթիլի դռնէն դալը նշմարեց : Օթէլ տէ Թուրնէլի պոնդուկին առջին կանկ առին : Անոնցմէ մէկն ձիէն վար իջնելով սանձը միւսին տուաւ որ հաւանականաբար ծառայ մ'էր, և անոր իրենց եկած ճամբայէն ետ դառնալն ու իր և երկու ձիերուն մթութեան մէջ աներեւութանալը տեսնելէն վերջը՝ դէպի Պիւսիի հօտորութեան յանձնուած տունը սկսաւ երթալ :

Տուն հասնելու քանի մը քայլ մնացած՝ անձանթը մեծ շրջանակ մը քաշեց, որպէս զի իր չորս կողմը յրտեսէ . ետքը

իր մէկէ մը չտեսնուելուն վրայ ապահով եղած՝ տանը մտաւ . ցառ ու աներեւոյթ եղաւ :

Պիւսի լսեց դռանը ձայնը որ իր վրայէն կրկին գոցուեցաւ :

Բոպէ մը սպասեց վախնալով որ այն գաղտնի անձը չըլլայ թէ միշտագուսն ետին պահուած ըլլայ զինկը դիտելու համար . և քանի մը վայրկեանէն ետքը՝ ինքն ալ սալայատակէն անցնելով՝ գնաց դուռը բացաւ, և արդէն փորձառու ըլլալուն լռելեայն կրկին գոցեց զայն :

Ետ դարձաւ, միշտագուռը ճիշդ իր աչքին առջին էր և շատ հաւանական է որ այս միշտագուռն դիտած էր Քէյլուսն :

Բայց Պիւսի հոն կենալու համար եկած չէր . ուստի կամաց կամաց յառաջ գնաց ճամբուն երկու կողմերը խարխալեցնելով, որուն ծայրը, ձախ կողմը, սանդուխի մը առաջին աստիճանն գտաւ :

Հոն, երկու պատճառու կանկ առաւ, նախ՝ սաստիկ այլալայլութենէն սրունքներն տկարանալ սկսան, երկրորդ՝ ձայն մը լսեց ասանկ,

— Առթուիւ՛ա, ըսէ տիրուհիդ որ ես եմ ու ներս մտնել կուզեմ :

Այս խնդիրքը չընդունուելու չափ հրամայող կերպով մը եղաւ . բոպէ մը ետքը Պիւսի ազախինի մը ձայն լսեց որ կը պատասխանէր .

— Պարոն, մեծ սրահը դացէք, տիկինը ձեզ հոն պիտի գայ գտնէ :

Անատեն Պիւսի Բէմիլի համբաժ տաններկու-աստիճանները մեղելով տաններկուք ալ ինքը համբեց ու սանդուխի դուռնին հասաւ :

Միտքը բերաւ տանը նըբայաւիղ անցքն ու երեք գուներն շունը բռնած՝ ձեռքը առջեւէն երկնքը ելով քանի մը քայլ առաւ . ձեռքին տակը դուռ մը եկաւ . այս այն դուռն էր, ուրկէ անձանթը ներս մտած էր . շարունակեց ճամբան, ուրիշ դուռ մը գտաւ, ու ոտքէն մինչև գլուխը գողալով բա-

նալին դարցուց կղպարին մէջ ու դուռը հրեց :

Պիւսի մտած սենեակը բոլորովին մութ էր , միայն կողմնակի դռնէ մը մեծ սրահէն ներս խիստ թեթեւ լոյս մը մտած էր :

Այս լոյսը պատուհանի մը վրայ զարկած էր , որուն վրայ երկու պատաստակալէ վարագոյր կային , որոնք ուրախութեան նոր սող մը պատճառեցին երիտասարդին սրտին :

Ետքը աչուրները դարցուց ձեղունին այն մասին վրայ ուր մի և նոյն լոյսը զարկած էր , և արդէն տեսած դիցական ձեղունն ճանչցաւ , ձեռքը երկնցուց և գտաւ քանդակուած անկողինն :

Այ տար սիրոյ չմնաց իր վրայ . աս ճիշդ այն սենեակին էր ուր հիւրընկալութեան պատճառաւ վերաւորուած դիշերն արթնցած էր :

Պիւսի երակները ուրիշ դող մ'ալ ինկաւ , երբ այն անկողնոյն դպչելով երիտասարդ ու գեղեցիկ կնկան մը անկողինը չտեսնուած անուշահոտ բուրում մը զգաց իր վրայ :

Պիւսի անկողնոյն վարագոյրներուն պլլուելով սկսաւ մտիկ ընել :

Գովի սենեակէն անձանութիւն անհամբեր քայլերը կը լսուէին , որ երբեմն երբեմն կայներով ակուններուն մեջէն այսպէս կը մրմնէր .

— Էյ , պիտի գայ :

Այս հարցումներէն քիչ վերջը մեծ սրահը դուռ մը բացուեցաւ , որ արդէն կիտարաց դռանը գուգահեռական կը թուէր : Սթոցին պզտիկ ոտքի մը տակ ճգմուելուն ձայնը լսուեցաւ , մէտաքսէ հազուադէպ մը դետիւր քսուելուն ձայնը մինչև Պիւսի ակունը հասաւ , և երիտասարդը վախով արհամարհեամբ լցուած կնկան մը ձայնը լսեց որ կըսէր .

— Ահա եկայ , Պարոն , ալ ինչո՞ւ կուզէք դիս :

— Ո՛հ , ըսաւ Պիւսի վարագոյրին տակը պահուրտելով , եթէ այս մարդը իր սիրահարն է , աչքը լոյս երկանը :

— Տիկին , ըսաւ մարդը՝ սրուն այս ցուրտ ընդունելու .

Թիւնն ըրած էին . պատիւ ունիմ՝ ծանուցանելու որ վաղն առտու Յօնթէնալլօ երթալու ստիպուած լլլալով այս դիշեր ձեր քովը պիտի կենամ :

— Հօրս վրայօք ըւրբեր կը բերէք ինձ , հարցուց մի և նոյն ձայնը :

— Տիկին , մտիկ ըրէք ինձ :

— Պարոն , երեկ ձեր կինը լլլալու հաւանութիւն տուած ատենա՞ ինչ դաշինք եղաւ , դիտէք , այսինքն՝ ամէկ բանէն առաջ՝ կամ հայրս Փարսիկ դալու է , կամ ես երթալ հայրս գանելու եմ :

— Տիկին , պատուոյս վրայ կերդնում որ Յօնթէնալլօն գառնալուս պէս կերթանք , բայց հիմայ . . .

— Ո՛հ , Պարոն , դուռը մի գոցէք , մինչև որ հօրս վիճակին վրայ ապահով չլլլամ , անկարելի բան է որ մէկ դիշեր մը մի և նոյն տանիքի տակ անցնեմ ձեզի հետ :

Այս ըսելով խիոյն իր արծաթեայ սուղիք փչեց , որմէ սուր և երկար ձայն մը ելաւ .

Սա՛ր՝ գանդակները դեռ չհնարուած ծառաները կանկերու եղանակ մ'էր :

Նոյն միջոցին Պիւսի մտած դուռը նորէն բացուեցաւ և երիտասարդ կնկան աղախինն անցաւ . ասիկայ էր Անթուի մեծ ու ուժեղ աղջիկն , որ կիրեւայ թէ տիրուհիին այս ձայնին սպասելով՝ զայն ըածին պէս արտորիօք եկաւ :

Ան ատեն Պիւսի եղած սենեակը լոյս մը թափանձեց , որով երկու պատուհանի մէջէն կենդանադիրն աեսաւ ,

— Անթուիւս , ըսաւ Տիկինը , այս դիշեր չպիտի պառկիս , և միշտ իմ ձայնիս պիտի սպասես :

— Սղախինը առանց պատասխանելու եկած ճամբայէն ետ դարձաւ մեծ սրահին դուռը բաց ձգելով , և հետեւաբար սրանցելի կենդանադիրն աւելի աղեկ երեւցաւ :

Իսկ Պիւսի վրայ ալ տարակոյս չմնաց . այս կենդանադիրը ճիշդ իր տեսածն էր :

Ասանց մը գնաց ձգինիներուն թանձրութենէն դուռն և

պատին մէջ եղած բացուածքէն դիտելու . բայց որչափ որ կանայ գնաց, սենեակը նայելու կետին՝ տախտակամածին ձայնն ելաւ :

Ասոր վրայ կինը ետին դարձաւ . նոյն կնքն էր կենդանաւ գրին իսկականը, նոյն կնքն երազեալ վնուկը :

Մարդը՝ թէպէտ բան մը չըսեց, բայց կնկանը ետին դառնալը տեսնելով՝ կնքն ալ դարձաւ :

Ասի Մոնսորոյի իշխանն էր :

— Ահ, տարաբաղդ կին . . . յախշուակեալ կին . . . ըսաւ Պիւսի . անտարակոյս հիմա սոսկալի պատմութիւն մը պիտի լսեմ :

Եւ իր կամքովը երեւնի ի վար վազած քրտինքը սրբեց :

Պիւսի, ինչպէս ըսինք, երկուքն ալ կը տեսնէր . կինը դեղնած, ոտքի վրայ և արհամարհոտ դէմքով :

Միւսը նստած, շառագոյն, ոտքը կերերցընէր ու ձեռքը կը խանէր :

— Տիկին, ըսաւ վերջապէս Մոնսորոյի իշխանն . մի՛ յուսաք թէ երկար առէն ձեր այդ դիմադրութիւնն ու անհաւանութիւնն մտիկ պիտի ընեմ . դուք Փարիզ իմ տունս էք, ուստի և Մոնսորոյի իշխանուհին, այսինքն՝ իմ կինս կը հաւմարուիք :

— Թէ որ ձեր կինն եմ, ինչո՞ւ զիս հօրս տանիլ չէք ու՞զեր, ինչո՞ւ զիս աշխարհիս աչքէն կը ծածկէք :

— Տ'Անժու դուքսը մոռցաք, Տիկին :

— Դուք զիս ապահովցուցիք որ եթէ մէյ մը ձեր կինն ըլլայի, ալ անկէ վախու տեղ չունէի :

— Այսինքն . . .

— Դուք այս մասին զիս ապահովցուցիք :

— Բայց, Տիկին, դեռ պէտք է որ զգուշութիւններ ընեմ :

— Ի՛հ, Պարոն, այդ զգուշութիւնները ընելէն վերջը եւ կէք զիս տեսէք :

— Տիանա, ըսաւ իշխանը որուն սիրտը բարկութեամբ լեցուած է, Տիանա, ամուսնութեան սրբազան կապը խազայիկ

չէ : Ասի խրատ մ է որ կուզեմ ձեզի տալ :

— Պարոն, եթէ ամուսնուց մը վրայ կատարելապէս վստահացնէք զիս, ամուսնութիւնը կը յարդեմ :

— Ինձի կուգար թէ ձեզի հետ ունեցած վարմունքովս ձեր վստահութեանն արժանի եղած էի :

— Պարոն, կը մտածեմ որ մինակ իմ շահս ձեզի առաջնորդ եղած չէ, կամ թէ որ այնպէս է, դիպուածը ձեզի աղելի ծառայութիւն մ'ըրած է :

— Ահ, ալ շատ եղաւ, պոռայ կոմսը, ես իմ տունս եմ, դուք ալ կինս էք, որչափ ալ ընդդիմանաք, այս դիշեր իմ քովս պիտի ըլլաք :

Պիւսի ձեռքը ոտքին պահպանակին վրայ դնելով . քայլ մը առաջ դնաց . բայց Տիանա անոր երեւալու ժամանակ չը տուաւ :

— Ահա ասով, ըսաւ մէջքէն դաշոյն մը հանելով, ասով կը պատասխանեմ ձեզի :

Եւ Պիւսիի եղած սենեակը ցտորելով՝ կրկին դուռը դոցեց երկու նիզնալ դրաւ, և մինչդեռ Մոնսորո սպասնալիքներ կը տեղար ձեռքովը տախտակները ծեծելով,

— Եթէ այս դռան վրայէն ամենախորք կտոր մը տախտակ փրցանէք, ըսաւ Տիանա, սեամին վրայ մեռեալ պիտի դանէք :

— Հանդարտեցէք, Տիկին, ըսաւ Պիւսի Տիանան թեւեւրուն մէջ աւնելով, վրէժխնդիք մ'ունիք :

Տիանան աղաղակ պիտի մղէր . բայց հասկըցաւ որ իր գըլըխը եկած վտանգին սրտաճառը սոսկ իր ամուսինն էր, Ռատի ինքզինքը պաշտպանեց . բայց լսելէնս կը դողար բայց սնչարժ : Պ. տը Մոնսորո ոտքը ուժով դեմինը զարկաւ . յետոյ անտարակոյս ըլլալով որ Տիանա իր խօսքը պիտի ընէ, մեծ սրահէն դուրս ելաւ . դուռը ետեւէն սաստիկ հրելով : Նոյն միջոցին իր տանը նրբաշաւիղէն անցնիլն ու ս'ընդունէն վար իջնելը լսուեցաւ :

— Բայց դուք, Պարոն, ըսաւ Տիանա Պիւսիի թեւեւրէն

երևելով ու քայլ մը ետևս երթալով, դուք ո՛վ էք ու ի՞նչպէս եկաք հոս :

— Տիկին, ըստ դուռը բանալով ու Տիանայի սուղին ծունկ չող ելով, ես այն մարդն եմ որուն կեանքը պահպանեցիր : Ի՞նչպէս կը կարծէք որ ես գէշ դիտաւորութեամբ մը հոս եկած ըլլամ, կամ ձեր պատուոյն դէմ գարաններ լարեմ :

Երիտասարդին ազնիւ դէմքին վրայ զարկած սաստիկ լոյսէն Տիանա զայն ճանչնալով,

— Ա՛հ, Պարոն, դ՞ուր էք, ըստ ձեռքերը միաւորելով, դ՞ուր, ուրե՛ն ամեն բան իմացաք :

— Աւա՛ղ, այս՛ Տիկին :


— Բայց ո՛վ էք դուք, Պարոն, անուննիդ ի՞նչ է :

— Տիկին, ես Լուի աը Քէւսմոն եմ, Պիւսի կոմսն :

— Ի՞նչ, դուք քաջ Պիւսի՛ն էք, պոռաց Տիանա անկեղծաբար՝ իր այս ճայնէն երիտասարդին սրտին պտտաւած ու լախութեանը վրայ անկաւկած ըլլալով : Ա՛հ, Այեթուա, ըստ աղախնոյն դառնալով, որ իր սիրուհիին մէկու մը հետ խօսիրը լսելով ահարեկ հոն եկած էք, Աեթուա, ա՛յ վախու տեղ չունիմ, այս վայրկեանէն վերջը իմ պատիւս Գաղղիոյ աւելի բարեսիրտ և աւելի օրինաւոր աղնուականի մը պաշտպանութեան տակն է :

Վերջը ձեռքը Պիւսիին երկնցունելով,

— Ոտքի վրայ ելէք, Պարոն. ես ձեր ով ըլլալն գիտեմ, դուք ալ պէտք է իմ ով ըլլալ իմանաք :



Գ Լ Ո Ւ Խ Թ Գ

Պիւսի իր երջանկութեանը վրայ հիացած ոտքի վրայ ելաւ և Տիանայի հետ Պ. տը Մանսրոյի թողած մեծ սրահը գնաց :

Մեծ զարմացմամբ Տիանայի երեսը կը նայէր. չէր համարձակեր հաւատալ որ իր միտաւած կինը իր երազած կնիկնը հետ նմանութիւն կարենայ ունենալ. և ահա ճշմարտութիւնը բոլոր իր երեւակայական հաճոյքով ընդունած իրողութիւններն կոչնչացրէր :

Տիանա տանըութը կամ տաւրինը տարեկան էր. այսինքն թէ՛ ունէր երիտասարդութեան և զեղեցիլութեան այն առաւլին չորհը, որ իր ամենամարտը գոյնը ծագիկին կատայ և ամենագեղեցիկ երեւոյթն ալ պտուղին. Պիւսիի աչքերը բնաւ զինքը չէին խաբեր. Տիանա կը զարմանար, և չէր կրնար իր հիացումը Պիւսիի վրայէն վարատել :

Վերջապէս իմացաւ որ պէտք էր լուծիւնը խախտել շատ բան հասկընալու համար :

— Պարոն, ըստ, հարցումներէս մէկուն պատասխանը տուէք, բայց միւսինը՝ ո՛չ. ձեր ով ըլլալն հարցուցի, զայն ըսիք. բայց երբ հարցուցի թէ ինչպէս եկաք հոս, բնաւ պատասխան չտուիք :

— Տիկին, ըստ Պիւսի, ձեր Պ. տը Մանսրոյի հետ ըրած քանի մը խօսքերէն իմացայ որ իմ հոս դալուս պատճառները ձեր ինծի խտտացած պատմութենէն պիտի կրնայ գիտութեամբ հետեւցընել : Դուք՛ առ ժամայն չըսիք ինծի թէ ձեր ով ըլլալն իմանալու պարտաւոր էի :

— Ա՛հ, այո, կոմս, հիմայ ամէն բան պիտի պատմեմ ձեզի, պատասխանեց Տիանա. ձեր անունը կըցաւ զիս կատարելապէս ապահովցընել, վասն զի շատ անգամ լսած եմ որ դուք քաջ և ազնիւ մարդ մ'էք, և ձեր օրինաւորութեանն ու պատուոյն ամեն բան կրնայ վտահացուիլ :

Պիւսի գլուխը ծռեց :

— Սա լսած քիչ խօսքերնէդ, ըստ Տիանա, կըցար իմանալ որ ես Մեթիստորի պարոնին աղջիկն էի, այսինքն Մեթուի աւելի աղնուական և աւելի հին անուններէն մէկուն միակ ժառանգը :

— Եղաւ, ըստ Պիւսի, Մեթիստորի Պարոն մը՝ որ Բայիի

մէջ իր ազատութիւնը պաշտպանելով եկաւ իր սուրը Սպանիացոց նուիրել երբ իմացաւ թագաւորին գերի իյնալն, և փոխարէն Ֆրանսուս Ա. ի հետ Մատրիտ երթալ լինողներով անոր գերութեանը հաղորդ եղաւ և միայն Գաղղիա դալու և իր փրկանքը վարելու համար մեկնեցաւ անկէ :

— Ստի իմ հայրս է, Պարոն, և եթէ ժամանակ ըլլայ որ Մեռիտորի դղեակին մեծ որահը մտնէք, հոն Ֆրանսուս Ա. թագաւորին կենդանաց իրը պիտի տեսնէք ի յիշատակ իր այս անձնութրութեանը շնորհուած, որն որ Աէժնաւ տը Վէնսիի ձեռագ ործն է :

— Ահ, ըսաւ Պիւսի, այն ժամանակի իշխանները իրենց ծտուաները կը վարձատրէին :

— Սպանիայէն դառնալուն հայրս ամուսնացաւ : Երկու առջի մանչ տղաքը մեռան : Ասի Մեռիտորի պարոնին համար մեծ ցաւ մ էր, քանզի ժառանգ մ'ունենալու յոյսը բուրովին կորսնցուց : Քիչ վերջը թագաւորն ալ մեռնելով պարոնին ցաւը յուսահատութեան փոխուեցաւ . քանի մը տարիէն վերջը պալատը թողլով իր կնկանը հետ Մեռիտորի դղեակը եկաւ բնակեցաւ : Հոն ծնայ ես իբր թէ հրաշքով և զբայրներուս մեռնելէն տասը տարի վերջը :

Ան ատեն պարոնը բոլոր իր սէրը ինձի տուաւ . իմ վրաս ունեցած հասակրութիւնը խանդաղատամբէն չէր . այլ կապաթ ողին սէրէն : Իմ ծնանելէս երեք տարի վերջը մայրս մեռաւ . յիրաւի այս մահը նոր ցաւ մը պատճառեց պարոնին, բայց ես՝ դեռ որսած կորուստիս խելքս չհասնելուն, միշտ կը ժպտէի, և իմ այս ժպիտս զինքը մօրս մահուանը վրայ մխիթարեց :

Մեծցայ, զարդացայ իր աչքին առջին : Որովհետեւ ես անկէ զատ բան մը չունէի, ինքն ալ, խեղճ հայրս, ինձմէ զատ ուրիշ բան մը չունէր : Տանըվեց տարեկան եղայ առանց ժաբէս անցընելու որ իմ ոչխարներուս, սիրամարդներուս, կարասիներուս ու տատրակներուս աշխարհէն զատ ուրիշ մ'ալ կայ, առանց խորհելու որ այս կեանքը վախճան ունի և առանց ա-

նոր վախճանն ինդրելու :

Մեռիտորի դղեակին բոլորովը բնդարձակ անտառներ կային որոնց տէրն տ Անժու դուքան էր : Ատոնց մէջ շատ այժեամբեր և եղջէրուներ կը բնակէին որոնք անաւ մէկէ մը վնաս չէին կրեր և անով ընտանի եղած էին . ամենքն ալ քիչ շատ կը ճանչնային . ամանք այնպէս սովորած էին ձայնիս որ կանչելուս պէս կուգային . ասոնց մէջէն եղնիկ մը, իմ մեծցուցածս, իմ սիրելիս, Տաֆնէս, ահ, խեղճ Տաֆնէս, միշտ ձեռքէս բան կուտէր :

Գարուն մը՝ ամիս մը շարունակ զինքը չտեսնելով մեռած կարծեցի ու սկսայ բարեկամահի մը կորսնցուցածի պէս լալ, երբ յանկարծ երկու ձաղերով երեսան ելաւ . ձագերն առաջ ինձմէ վախցան, բայց տեսնելով որ մայրերնին զիս կը գգուէ, իմացան որ վախու տեղ մը չունին ու սկսան իրենք ալ զիս գգուել :

*Handwritten note:* Ստի

Նոյն միջոյնները ձայն ելաւ թէ Պ. տ'Անժու դուքար իր կողմանէ գաւառին մայրաքաղաքը կառավարիչ մը զրկեր է : Քանի մ'օրէն իմացանք որ այս կառավարիչն եկաւ և իր անունն էր կոմս տը Մոնտորո :

Ինչո՞ւ այս անունը լսելուս պէս սիրտս խփոյն թռնդ ելաւ : Այս ցաւալի զգացմանս պատճառը զանի առաջուց ճանչնալէս զաւ ուրիշ բանի չեմ տար :

Այժ օր անցաւ : Կոմս տը Մոնտորոյի վրայ բոլոր գաւառին մէջ խփտո այլ և այլ խօսքեր կըլլային : Առտու մը սնտառներն որսորդներու փողերէ ու շուներու հայհուններէ սկսան թնդալ . վազեցի մինչև պարտեզին ցանկապատը և նոյն կէտին տեսայ որ Տաֆնէս շուներու բազմութենէ մը հայածուելով կայծակի արագութեամբ կը փախչէր, ձագերն ալ ետուէն :

Վայրկեան մը ետքն ալ մարդ մը կարծես թեւաւոր սեւ ձիւ մը վրայ հեծած անգաւ գնաց . այս էր պարոն տը Մոնտորո :

Ուղեցի ազազակ մը մղել, ուղեցի իմ սիրելի Տաֆնէսիս համար շնորհ խնդրել . բայց անիկա իր որսին սէրէն այնքան յափշտակուած էր, որ իմ ձայնս չսեց կամ ընտ ախանջ չկատեց :

Ան ատեն առանց իմ հեռաւորութեանս սրտաճառաւ հօրս վրայ գալիք անհանգստութիւնն խորհելու՝ դէպի որսին իբր խած ճանքան սկսայ երթալ, յուսալով որ կամ կոմսը կամ հեռի մարդ իկներէն մէկը կը տեսնեմ և անոնց կաղերսեմ որ իմ փրոս վշտայնող հալածանքէ մը ետ կենան :

Աէս մղմնի չափ դացի առանց ուր երթալս զիտնալու . երկար ատենէ ի վեր, եղնիկ, շոնն, որսորդ, ամէն բան առջեւէս կորսնցուցեր էի: Եւստ մը ետքը՝ շուներուն հաջիւնն ալ չլսեցի և ծառի մը տակ իյնալով սկսայ լալ: Հնն զրեթէքառորդի մը չափ կեցայ, մէյ մ'ալ հեռուէն որսին ձայնը աւանջս հասաւ, և ստուգիւ կամայ կամաց անանկ որոշ լոցիլ և այնչափ մօտէն եկաւ ձայնն, որ ալ չտարակուսեցայ թէ որսը նոյն միջոցին աչքիս առջեւէն պիտի անցնի: Աւստի իսկոյն ոտքի վրայ ելայ և դէպի ձայնին եկած տեղն սրացայ :

Յիրաւի տեսայ որ խեղճ Տափնէս շնչասպառ անտառին մէկ անձառ տեղէն կանցնէր միայն մէկ ձագովը, միւսը անշուշտ ճամբան ուժէ իյնալով շուներէն գիշատուած էր :

Յայտնի բան է որ Տափնէս ալ յոգնած էր . քանզի իր և շուներուն մէջ եղած միջոցը առջինէն քիչ էր . ալ սկսած էր վազելու տեղ զատրուտելով յառաջ երթալ . երբ առջեւէս անցաւ, խեղճուկ կերպով պոսաց :

Այս առաջին անգամն էր, որ պարապ տեղը ամէն շանք քրի ձայնս լսել տալու համար : Պ . տը Մոնտորո միայն իր հալածած կենդանին կը տեսնէր . այս անգամ առաջինէն աւելի արագութեամբ անցաւ կատաղաբար փողը փչելով :

Անոր ետեւէն երեք չորս մարդ փողով ու ձայնով շուները կը զրդուէին : Այս հաջիւնները, փողերու ձայներն ու աղաղակները փոթորկիկ մը պէս անցան, անտառին մէջ աներեւութացան և հեռուն կորսուեցան :

Յուսահատ մնացի . ես ինձի ըսի որ եթէ միայն յիտուն քայլ անդին եղած ըլլայի՝ կենդանին անցած ճամբուն ծայրը, զիս կը տեսնէր ու աղաչանքիս չդիմանալով խեղճ կենդանին ապառ կը թողուր :

Այս խորհուրդը զիս քաջալերեց . որսը կրնար երրորդ անգամ առջեւէս անցնիլ : Աւստի երկու կողմը ծառազարդ ճամբայ մը բռնեցի, որ ուղղակի Պոժէի գղեակը կհ հանէր, որուն տէրն էր տ'Անժու դուքսն և հօրս գղեակէն երեք մղանի չափ հեռու : Պահ մը ետքը տեսայ գղեակը, և ան ատեն իմացայ որ ոտքով երեք մղան ճամբայ ըրած եմ, և մինակ ու Մեռիտուի գղեակէն շատ հեռու մնացած :

Նոյն միջոցին վրաս վախ մ'եկաւ և խորհեցայ թէ ինչ տնխտհեմութիւն ու անպատեհութիւն էր ըրածս : Լճին եղբրէն շարունակեցի ճամբաս այս խորհրդով որ հնն եզոզ բարեսիրտ պարտիչպանի մը, որն որ հօրս հետ պարտեզը դացած ատենս ինձի գեղեցիկ փունջեր կուտար, հարցնեմ թէ որ ճամբէն երթալու եմ, երբ յանկարծ որսին ձայնը նորէն լսեցի :

Անշարժ կանկ առի սկանձ դնելով, ձայնը մեծցաւ, ամէն բան մուսայ : Գրեթէ նոյն կէտին, լճին միւս կողմէն, եղնիկն անտառէն դուրս ցատքեց, բայց զինքը հալածողներն այնչափ մօտ էին իրեն, որ իսկոյն պիտի բռնուէր : Այս տնգամ մինակ էր, միւս ձագն ալ ճամբանս մնացեր էր, ջուրը տեսնելուն պէս կարծես նոր ուժ մ'եկաւ վրան, քիթովը զովութիւնը շնչեց ու նետուեցաւ մէջը իբր թէ ինձի գալու համար :

Դտե և առաջ արագութեամբ լոցայ և կերեւար թէ բոլոր իր զօրութիւնը ստացայ : Իսկ ես արտասուալից աչքը, թեւերս բացած և զրեթէ սնուր պէս շնչասպառ երեսը կը նայէի . բայց կամայ կամաց զօրութիւնը սպառեցաւ, մինչդեռ ասոր հակառակ շուներուր ոյժը սկսաւ կրկնապատկիլ : Եւստով շուներուն աւելի կատաղիներն հասան քովը, եւ վանի խածնելով ալ չթողուցին առաջ երթալ : Պ . տը Մոնտորո երեւցաւ անտառին բերանը, վազեց չճին քով ու ձիէն վար իջաւ, Ան ատեն բոլոր ուժովս սկսայ պոսալ ձեռքերս միացուցած, ողորմէ . ինձի անանկ եկաւ որ զիս տեսաւ, ուստի նորէն պոսացի առջինէն ուժով : Լսեց ձայնս, քանզի գլուխը վեր վերցուց, և տեսայ որ նաւակի մը քով երթալով պարանը

փրցուց ու անով արագութեամբ կենդանիին կերթար, որ նոյն կէտին վինքը պատող շուերուն մէջ կը տանջուէր: Անտարա- կոյս էի որ Պ. տը Մոնտորո իմ ձայնէս, չարթուսներէս ու ա- զայանքէս ի դուժ չարթած՝ կենդանին տշտտելու համար ա- նանկ շուտով կերթար, բայց մէկէն Տաֆնէի քովն երթալով՝ դանակ մը հանեց, արեւուն ճառագայթը անոր վրայ շողշու- ղելով՝ փայլակ մը արձակեց ու մէկէն անհրեւոյթ եղաւ. տես- նելով որ դանակը բոլորովին խեղճ կենդանիին կողորդը մը- տաւ, սուր աղաղակ մը մղցի: Հոսած հեղեղանման արիւնն լճին շուրջ կարմրուց: Եզնիկը մահանշան և քղբալի ձայն մը հանեց, ոտքերը շուրին զարկաւ. գրեթէ ոտքի ելաւ, վերջը ինկաւ մեռաւ:

Անոր պես ցաւալի աղաղակ մ'ալ ես հանելով՝ լճին եզեր- քը մարեցայ ինկայ:

Երբ աչքս ու տեսայ որ Պոժէի դղեակը սենեակի մը մեջ պառկեր էի, և հայրս ալ, զոր խօսոյն բերել տուած էին, բար- ձիս քովը նստած կուլար:

Քրովհետեւ ինձի պատահած դէպքին՝ անընդհատ ճամբայ քալելէս առաջ եկած շրային տկարութենէ մը զատ ուրիշ բան չէր. հետեւեալ օշը կրցայ Մեռիտոր դառնալու. բայց և այն- պես երէք չորս օր դուրս չեայ:

Չորրորդ օրը հայրս ինձի բաւ որ հիւանդութեանս ա- տեն Պ. տը Մոնտորո, որ զիս մարած տանելու ստեննին տե- սած էր, իմ վրայօքս լուր առնելու եկեր էր: Խիստ ցաւեր է այս դէպքին ակամայ պատճառն ինքը ըլլալուն վրայ և շատ ներումներ խնդրէր է ըսելով որ մինչև իմ բերնովս իր բրածին թորութիւն չտամ, հանդիստ չպիտի կրնայ ըլլալ:

Միծաղելի բան կըլլար իր երեսը տեսնել չուզելս. որչափ ալ բարկացեր էի իրեն, անյիշաչար եղայ:

Հետեւեալ օրը ինձի եկաւ. իմ բրածիս ծիծաղելի ըլլալն հասկոցեր էի. որորդութիւնը անանկ զբօսանք մ է, որուն շատ անդամ կրնան ալ հաղորդ կըլլան: Ուստի կերպով մը ես այս ծիծաղելի այլայլութիւնս մերժեցի, և վայն Տաֆնէի

վրայ ունեցած համակրութեանս տուի:

Բայց կոմսը սկսաւ ցաւիլ և քսան անգամ պատուոյն վրայ երդում ըրաւ որ եթէ իր որսին ինձի այնչափ սիրելի ըլլալը գիտցած ըլլար, մեծ հաճութեամբ կը խնայէր անոր. սակայն իր այս խոտովանութիւններն զիս բնաւ չմխիթարեցին, և կոմսը առանց ինձի պատճառած ցաւալի տպաւորութիւնը սրտէս ջնջելու ելաւ դնայ:

Գացած ատենը կոմսը կրկին գալու հրաման խնդրէց հօր- մէս: Ինքն Սպանիա ծնած ու մեծցած ըլլալուն՝ պարոնն ալ շատ կախորժեր այս գաւառին խօսքը լսել, ուր ինքն ալ շատ ասան կեցած էր: Մնայ որ կոմսը անուակաւան ցեղէ, գաւառ- ուին փոխ կառավարիչն և մամաւանդ Պ. տ Մնժու դուքսին ալ մտերիմն ըլլալուն՝ հայրս ալ չէր կրնար անոր խնդիրը մեր- ժել, ուստի և հրաման տուաւ:

Աւանդ, այն վայրկեանէն վերջը՝ չքսեմ երջանկութիւնս այլ հանդարտութիւն կորսրուեցաւ: Ետևով տեսայ կոմսին վրայ ըրած տպաւորութեանս արդիւնքը: Նախ չարալթը անգամ մը կուղար, յետոյ երկու, վերջնապէս ամէն օր սկսաւ գալ: Կոմսը հօրս վրայ աղէկ ինամ տանելուն անոր հաճոյ եղած էր: Կը տեսնէի որ պարոնն անոր ըրած խօսակցութենէն ճաշակ մը կիմանար, որ միշտ կատարեա մարդու մը խօսակցութենէն վար չէր մնար: Ինաւ չէի համարձակէր դանդալալի, քանզի ի՞նչ բանի վրայ դանդալատէի: Կոմսը իմ վրաս տիրու հիի մը պէս տարիանք ունէր, և քրոջ մը տէս ալ համարում:

Առտու մը հայրս սովորականէն աւելի ծանր դէմքով մը սենեակս մտաւ, սակայն իր ծանրութիւնը զուարթութիւն մը ունէր:

- Չաւակս, ըսաւ ինձի, դուն զիս միշտ ապահովցուցած ես որ չքամուելով երջանիկ պիտի ըլլաս:
- Այո, հայրիկ, լսի, դուք ատանկ ըլլալը գիտէք, ասի իմ ամենասիրելի Պախոս է:
- Եստ աղէկ, Տիանաս, ըսաւ ծռելով ճակատս համբու- րելու համար, հիմա քու ուխտիդ կատարումը պէտք է որ տեսնես:

Այս ըսածին վրայ տարակուսեցայ և անանկ գէշ դեղնե-  
ցայ որ չկրցաւ ճակատս շրթ ունեցեալն մօտեցնել :

— Տխանա, դաւակա, պոռայ . ո՛հ, Սասունած իմ . . . ի՛նչ  
եղար :

— Պ. տը Մոնսորո, այնպէս չէ՛, ըսի թոթովելով :

— Է՛յ, այո՛, ըսաւ հիացած :

— Ահ, երբէք հայր իմ, եթէ կը գթար ձեր աղջկանը  
վրայ, երբէք :

— Տխանա, սիրելիս, քու վրադ ունեցածս գթութիւն չեմ,  
այլ կաթողին սէր, ասիկայ աղէկ դիտես . ահա քեզի ութը  
օր, մտածէ : և եթէ ութը օրէն . . .

— Ահ, ո՛չ, ո՛չ, պոռայի, անօգուտ բան է, ո՛չ ութը օր,  
ո՛չ քսանըջորս ժամ, և ո՛չ իսկ վայրկեան մը : Աչ, ո՛չ, ո՛հ, ո՛չ  
Եւ սկսայ դառնապէս լալ :

Հայրս զիս սաստիկ կը սիրեր, երբէք լալս տեսած չեմ, զիս  
դիրքը առաւ ու երկու խօսքով զիս տախտակեց . իր աջնուս  
կանութեանը վրայ երդում ըրաւ ինձ՝ որ ալ այս ամուսնու-  
թեան վրայ չխօսի :

Յիրաւի ամիս մը անցաւ առանց Պ. տը Մոնսորո երեւնալու  
էր առսնց իր վրայ խօսք մը ըլլալու : Մատու մը հայրս ու ես  
Պ. տը մօտսորոյէն հրաւեր մը բնդ ունեցանք որով մեզ իր թա-  
գաւորին եզբօրը տալէք մէծ խնճոյքին կը կոչէր սր իրեն հա-  
մանուն դաւառը այցելելու եկած էր : Այս խնճոյքը ա՛ Մոնսու-  
քանքին պանդոկը պիտի ըլլայ :

Պ. տը մօտսորոյէ զստ իշխանն ալ յատուկ հրաւեր զրկած  
էր հօրս, ըսելով սր զինքը Հէնրի թագաւորին հալար երբէմս  
տեսած է և ուրախութեամբ կրկին տեսալցիլ կը բաղձայ

Նախ հօրս աղաչեցի որ չերթանք, և յիրաւի խօսքս կը  
կատարէր եթէ հրաւերն միայն Պ. տը Մոնսորոյի կողմէն ե-  
ղած ըլլար, բայց իշխանն ալ անկէ մաս մը ունենալուն հայրս  
վստցաւ որ չըլլայ թէ իր չերթալովը Նորին Բարձրութիւնը  
վերաւորէ :

Ուստի ելանք դացիներ . Պ. տը Մոնսորո ինձի այնպէս բն-

դ ունեցաւ որպէս թէ մէջերնիս բան մ' անցած չլար, իր ինձի  
դէմ ունեցած վարմունքը ո՛չ անտարբեր եղաւ, ո՛չ մտերիմ,  
միւս բոլոր տիկնանց պէս հիւրընկալեց զիս, և բարեբաղդա-  
բար իր կողմանէ բնաւ խորութիւն մը չոտեայ, ո՛չ աղէկ և ո՛չ  
դէշ մաստի :

Բայց ա՛ Մոնսու դուքսը նոյն համակրութիւնը չունեցաւ  
վրաս : Երբ զիս տեսաւ, նայումքէն իմացայ որ զիս ալ չպիտի  
թողու : Ուստի սաստիկ դէշութիւն մը զգացի և առանց իմ  
հօրս ըսելու որ այս պատճառաւ հանդէսէն բաժնուիլ կուզեմ  
այնպիսի ճամբայ մը բռնեցի որ ամենէն առաջ մեկը դուրս  
ելանք :

Երէք օրէն վերջը, Պ. տը Մոնսորո Մեռխորր եկաւ, զին-  
քը հեռուէն դղեակին ճամբուն վրայ տեսայ և սենեակս  
քաշուեցայ :

Կը վստիմայի որ հայրս զիս կը կանչէ . բայց չկանչեց : Այս  
ժամէն վերջը տեսայ որ Պ. տը Մոնսորո ելաւ գնաց և մէկը  
իր այցելութիւնը ինձի չիմացուց : Հայրս ալ բան մը չխօսեցաւ  
ինձի . միայն սա դիտեցի որ Փոխ-կառավարչին այս այցելու-  
թեանէն ետքը սովորականէն աւելի տխուր կերեւէր :

Անցաւ քանի մ' օր ալ : Օր մը դղեակին մօտերը շրջագա-  
յութիւն մ' ըրած երբ ետ կը դառնայի, իմաց ըրին ինձ որ  
Պ. տը Մոնսորո հօրս հետ էր : Պարմը երկու երեք անգամ  
զիս հարցուցած՝ և երկու երեք անգամ մեծ անհանգստու-  
թեամբ ուր կրնալ երթալուս վրայ տեղեկութիւն ուզած էր :  
Հրաման տուեր էր որ դառնալուս պէս իրեն իմացնեն :

Մտղարեւ սէնեակս մտնելուս պէս հայրս վազեց եկաւ :

— Զաւակա, ըսաւ ինձի, մէկ պարազայ մը՝ որուն պատ-  
ճառը անօգուտ բան է քեզի իմանալ, զիս կատիպէ քանի մը  
աւուր չափ քեզմէ բաժնուիլ . բան մի՛ հարցնէր ինձի . միայն  
գիտցիր որ այս պարագան այնչափ ստիպողական է որ զիս կը  
դարտաւորէ շարաթ մը, տասնը հինգ օր, և դուրսէ ամիս մը  
քեզ չտեսնել :

Ստոր վրայ սկսայ դողդրդալ, թէ և դեռ գլուխս գալիք



վտանգը չէի գիտեր, բայց Պ. աբ Մոնտորոյի այս կրկին այցելութիւնը աղէկ հետեւութիւն մը չէին ցուցններ ինձ :

— Ես ո՛րք պիտի երթամ, հայր, հարցուցի :

— Տը Լիւրի գլխակը՝ քրոջս քով, ուր մէկու մը չերեւալով պիտի կենաս : Իսկ քու ճամբորդութիւնդ գիշեր ատեն պիտի ըլլայ որ մարդ չիմանայ :

— Դուք հետս չպիտի գար :

— Այ, ես հոս պիտի կենամ որ կասկածները փարատին . ստունին մարդիկն անգամ քու երթալը չպիտի իմանան :

— Հապա ո՞վ պիտի տանի զիս :

— Երկու հոգի, որոնց վրայ ապահով եմ :

— Ա՛վ Սասուած իմ, հայրիկ :

Պարոնք զիս գրկեց :

— Զաւակս, ըսաւ, աւանկ պէտք է : Ես հօրս իմ վրայ ունեցած սէրը անանկ աղէկ գիտէի որ ալ աւելի խօսք չըրի ե ուրիշ բացադրութիւն մը չուզեցի :

Միայն որոշեցինք որ Աեւթուաւ, դայեակիւ աղջիկն հետս գայ :

Հայրս երաւ դնաց պտտուիրելով ինձ որ պատրաստ ըլլամ :

Օր մը՝ որ ձմեռուան աւելի երկար օրերէն ըլլալուն շատ մուխ ե շատ ալ ցուրտ էր, իրիկուան ժամը ութնին հայրս զիս եկաւ գտաւ իրեն պատուէրին համեմատ բողբոջովին պատրաստուած . աւանց ձայնի վար իջնելով պարտեզէն անցանք : հայրս դուռ մը բացաւ որ անտառը կը հաներ, և հոն լծուած կառք մը ու երկու մարդ գտանք . պարոնք երկար ատեն խօսեցաւ սա մարդոցը հետ, կերեւոր որ զիս անոնց յանձնեց . ետքը Աեւթուաւի հետ մեկտեղ մտանք կառքը :

Հայրս վերջին անգամ զիս գրկեց և ճամբայ ելանք :

Ձեի գիտեր թէ ինչ տեսակ վտանգ կապաւնար ինձ և կրստիպէր Մեւսիտորի գլխակը ձգել : Աեւթուաւի կը հարցնէի ան ալ չէր գիտեր ինձի պէս : Մեր առաջնորդներուն ալ բան մը հարցնել չէի համարձակէր զիրենք չճանչելու համար : Բուսի լսելեայն և շրջուն ճամբայներէ անցնելով առաջ կեր-

թայինք : Երկու ժամ երթալնէս վերջը՝ նոյն միջոցին որ ես ալ իմ անհանգստութեանցս ու կառքին միակերպ ու նոյնաձայն դնացքին շնայելով սկսեր էի նիթհել, յանկարծ Աեւթուաւին թեւս բռնեղէն և մանաւանդ կառքին խփոյն կանկ տռնեղէն արթնցայ :

— Ահ, Օրիորդ, ըսաւ խեղճ աղջիկը, սա ի՛նչ էր գլուխդիս եկաւ :

Գլուխս պատուհանէն դուրս հանեցի . և տեսայ որ շրտ գլխակաւոր ձիւորներ մեզ շրջապատեր էին . մեր մարդիկը թէ և ուզեցին ասոնց դէմ գնել, բայց անղէն ըլլանքուս ետ քաշուեցան :

Խելք ըրի անգամ մը օգնութիւն պօռալ, բայց ո՞վ պիտի լսեր մեր ձայնը : Այնակաւորներէն մէկը՝ որ մեծերնին ըլլալ կերեւէր, կառքին դռանը մօտենալով

— Մի՛ վախճաք Օրիորդ, ըսաւ, բան մը չկայ, միայն պէտք է որ մեզի հետ գար :

— Ա՛րք պիտի երթանք, հարցուցի :

— Անանկ տեղ մը, ուր ոչ թէ միայն վախճալու բան մը չունիք, այլ և թագուհի մը նման կեանք պիտի վարէք :

Այս խօսամունքը սպառնայիքէ մը աւելի սարսափեցուց զիս

— Ահ, հայր իմ, հայր իմ, ըսի :

— Մտիկ ըրէք, Օրիորդ, ըսաւ ինձի Աեւթուաւ, ես սա տեղուանքը գիտեմ . ձեզի անձնուէր եմ և զօրաւոր . շատ բան պիտի գայ գլուխդիս թէ որ ասիկց չիխախնք :

Խեղճ աղախնայս ինձի տուած ապահովութիւնը թէպէտ զիս բողբոջովին չհանգարտեցուց, բայց իր խօսքերէն քիչ մը զօրութիւն և քաջալերութիւն եկաւ վրաս :

— Պարոններ, ըսի ան ատեն, ուզածնիդ ըրէք ձեզի, մենք երկու թշուառ կիներ ենք, չենք կրնար ինքզինքնիս պաշտպանել :

Մարդոցմէ մէկը ձիէն վար իջաւ, և կառավարին տեղը նստելով կառքերնուս ճամբան փոխեց :

Պիւսի, ինչպէս որ յայտնի ալ է, անհնախորին ուշադրու-

Թեամբ Տիանայի պատմութիւնը մտիկ կընէր: Եթէ մէկը անձ մը սիրել սկսի, իր տեսչական սիրոյ յուզմանցը մէջ գրէթէ կրօնական զգացում մը կըզայ նոյն սիրած անձին նկատմամբ: Արդէն ընտրած կինն ալ, այս ընտրութեամբ միւս կիներէն վեր կը համարուի, անի կը մեծնայ, կը մարբուի և կանոնահանայ, իր շարժումներն մէյակէկ նշաններ են, զորս ձեզի կը նուիրէ. իր ամէն մէկ խօսքը շնորհ մը՝ զր ձեզի կընէ. թէտը երեսնիդ նայի, ձեզ կուրախացընէ, թէտը ժարտի ձեզի կըզմայլեցընէ:

Ուտտի երկտասարդն թողած էր որ գեղեցիկ պատմիչու հին իր կենաց գէպքերն պատմէ, առանց զանի դադրեցընել ուզելու և առանց մտքէն անցընելու զանի ընդմիջել: Այս կեանքին ամէն մէկ մանրամասն կէտերն՝ որուն վրայ հակելու պարտաւոր կզգար իր անձը, իրեն համար մէյակէկ զորաւոր նշաններ էին. ուտտի և Տիանայի խօսքերը մտիկ կնէր լուեւեայն և գրեթէ շունջը բռնած, իբր թէ իր գոյութիւնը անոր այս խօսքերէն կախում ունեցած ըլլար:

Բայց երկտասարդ կինն անշուշտ իւր զգացած կրկին խօսվութեանցը չկրնայով տոկալ. խօսվութիւններ՝ որոնց մէջ ներկան անցեալին բոլոր յիշատակները կը հաւաքէր, վայրկեան մը կանկ առաւ, և Պիտի չկրնայով իր ծանր անհանգստութիւնը փարատել, ձեռքերը միւտորելով.

— Ոհ, շարունակեցէք Տիկին, ըսաւ, շարունակեցէք:

Տիանա չէր կրնար իր երկտասարդին թեւադրած շահուն վրայ խափուիլ, քանզի անոր ձայնն, շարժումներն ու գեւեքին ճնշումը խօսքերուն մէջ եղած ազաչանքին հետ ներդաշնակութիւն մ' ունէին: Տիանա տիրութեամբ ժպտելով շարունակեց:

— Գրեթէ երեք ժամ երթումէս վերջը՝ կառքը կայնեցաւ: Մէկէն դուռ մը բացին, և փոփոխակի քանի մը խօսք ըլլալով՝ նորէն սկսանք երթալ, և իմացայ որ շարժական կամուրջի նման որտեղնորստ տեղէ մը անցանք: Կառքէն դուրս նա յիցայ տեսայ որ դղեակի մը վայրագ ախիթն էինք:

Որ դղեակն ըլլալը ո՛չ Աեռթուա գիտէր և ո՛չ ես: Եստանդամ ճամբան չորս կողմերնիս գիտել ուզեցինք, բայց անհուն անտառ մը տեսանք: Արգարեւ աղէկ վերահասու էինք երկուքս ալ որ մեր եղած տեղն բոլորովին մեզի մոռցընելու համար, այս անտառին մէջ հաշուով անօգուտ ճամբայ մը ըրած էին:

Կառքին դուռը բացուեցաւ, և արդէն մեզի հետ խօսող մարդն վար իջնալ հրաւիրեց մեզ:

Լուծեամբ հնազանդեցայ: Գղեակին մարդոցմէն երկու հոգի ջահերով մեզի առնելու եկած էին: Արդէն մեզի եղած սոսկայի խօստմունքէն մեր բանտարկութեանն ալ խիստ մեծ ակնածութիւններ ըլլալը յայտնի կը տեսուէր: Չահերը բռնող մարդոց ետեւէն գացինք, և մեզի փառաւոր զարդարուած սենեակ մը տարին, որ կարծես թէ Պրեսնուա Ս. Ի. աւելի փայլուն ժամանակը վայելցութիւն մը և ցուցակ մը ըլլալու համար զարդարուած էր:

Բաղմածախ սեղանի մը վրայ դուզնաքեայ ընթրիք մը մեզի կապատէր:

— Գուք ձեր տունն էք, Տիկին, ըսաւ արդէն երկու անգամ մեզի հետ խօսող մարդն, և աղախինի մը կարեւորութիւն ունենալուդ համար ձերինք քովերնիդ թող մնայ. իր սենեակը ձերինին քովն է:

Աեռթուա ու ես ուրախութեամբ իրարու երես նայեցանք:

— Երբ որ մէկը կանչել կուզէք, ըսաւ գիմնակաւոր մարդը, սա դունահարը կըզարնէք, և մէկը՝ որ յատկապէս նախասենեակը կեցած է, շուտով քովերնիդ կուգայ:

Այս յայտնի ուշադրութենէն իմացուեցաւ որ բնաւ մեկուն չգիտի երեւայինք: Գիմնակաւոր մարդը խնարհեցաւ ու գնաց, և լսեցինք որ դուռը երկուք դառնալով գոցուեցաւ:

Աեռթուա ու ես մինակ մնացինք:

Պահ մը անշարժ կեցանք ու սեղանին վրայ վառուած երկու մեծ ճրագներուն լոյսովը իրարու կը նայէինք: Աեռթ-

սխտ ուղեց բերանը բանալ, բայց մատով նշան ըրի որ լռէ կասկածելով որ մեզի մոիկ ընող կըլ լայ :

Կեռթռուտի համար որոշուած սենեակը բաց էր, և երկուքս ալ խելք ըրինք երթալ զայն նայելու : Կեռթռուտ ճըլսագին մէկն առաւ և սովորուս ծայրը կոխելով զայցինը հոն :

Ստի մեծ ներքնասենեակ մ' էր պտուկելու սենեկին վերաւ բերեալ իբր զարդարանքի խուց մը : Սեր մտած դռանը զուգահեռական ուրիշ դռու մ' ալ կար . այս դռուը , ինչպէս նաև և միւսն ալ , քանդակուած պղինձէ պղծիկ դռնահար մը և դամ մ' ունէր , զորոնք տեսնողը կըսէր թէ Պէնյէնիթօ Սելլինքի ձեռագործն են :

Յայտնի էր որ սա երկու դռներն նախասենեակը կը հասնէին :

Կեռթռուտ ճրագը կզպարին մօտեցուց և տեսանք որ նիւզը երկուք դարձած դոցուած էր :

Հետեւաբար բանտարկուած էինք :

Զարմանալի բան թէ ինչպէս էրը երկու վիճակնին տարբեր անձինք մի և նոյն կացութեան ու վտանդի մէջ ըլլան , զարմանալի է կըսեմ , ինչպէս իրարու նման խորհուրդ կուներ նան , և ինչպէս դիւրութեամբ վերացեալ տեղեկութիւններէ ու անօդուտ խօսքերէ ետ կը կենան :

Կեռթռուտ ինձի մօտենալով

— Օրիորդ , դիտեցի՞ք , ըսաւ ցած ձայնով , որ սանդուխէն վեր ելած ատեննիս հինգ աստիճան միայն կոխեցինք :

— Այո , ըսի :

— Աբեմն , ըսաւ , դետնի երեսը սենեակի մը մէջ ենք :

— Ատոր տարակոյս չկայ , ըսի :

— Աստի , ըսաւ աւելի ցած ձայնով և աչքը դուրսի փեղկերուն դարձընելով , ուստի . . .

— Թէ որ պատուհանները երկաթէ վանդակ չունենան . . . ըսի :

— Այո թէ որ քաջութիւն ունիր . . .

— Քաջութիւն , պոռայի , ո՛հ , ապահով եղիր , ունիմ աղջիկս :

Այս ձայնիս վրայ Կեռթռուտ ալ մատը բերնին վրայ դրաւ :  
— Այո , այո , միտքդ կը հասկընամ , ըսի :

Կեռթռուտ նշան ըրաւ ինձ որ կեցած տեղէս չչարժիմ , և տարաւ ճրագը պտուկելու խուցին սեղանին վրայ դրաւ :

Սրդէն իւր դիտաւորութիւնը խնայած ըլլալով պատուհանին քովը զայցեր զապանակները կը փնտուէի :

Վերջապէս դուայ . կամ Կեռթռուտ որ ճրագը ձգած քովս եկած էր , դտաւ զանոնք ու փեղկը բացաւ :

Ուրախութեան ազազակ մը հաննեցի , քանզի վանդակ չկար : Բայց Կեռթռուտ մեր պահնորդներուն այս կարծեցեալ անհոգութեան պատճառը սրդէն խնայած էր : Պատին տակը լիճ մը կար . ջուրէն վեց ոտնաչափ բարձր տեղ մը փակուած էինք , այնչափ աղէկ որ եթէ պատուհաններն վանդակ ունենային , այնքան ապահովութիւն չէին տար մեր պահնորդներուն :

Սակայն աչքս ջուրէն անդին դարձընելով ինձի ընտանի տեսարան մը տեսայ , և խիստին խնայայ որ Պօժէի դղեակը բանտարկուած էինք , ուր շատ անգամ , ինչպէս ըսի , հօրս հետ կուգայի , և ուր ամիս մ' առաջ խեղճ Տափնէիս մահուանը համար ընդունուած էի :

Պօժէի դղեակին տէրը Պ . տ' Անժու դուքսն էր :

Ահա այն ատեն կայծակի լոյսէ մը լուսաւորուածի պէսս մեն բան հասկըցայ :

Տխուր գոհունակութեամբ մը լճին նայեցայ որն որ բռնութեան դէմ վերջին հնարք և անպատուութեան համար ալ մեծ ապաւէն մ' էր :

Փեղկերը նորէն գոյեցինք : Հաղուստներովս անկողնոյն վրայ յիսուեցայ , Կեռթռուտ ալ թիկնաթուռի մը վրայ սուքիս տակը քնայաւ :

Քիչերը՝ անտեղի վախերէ քսան անգամ յանկարծ արթնցայ , բայց իմ գանձուած կացութենէս զատ ուրիշ բան մը չէր սարսափեցընէր զիս . բնաւ բան մը ինձի դէմ գէշ դիտաւորութիւն մը չէր յայտնէր . ընդհակառակն ամենքը դղեա-

կին մէջ քնացած էին և միայն ճախնի թռչուններուն ձայնը  
գիշերուան լուսթիւնը կը խափանէր :

Առտու եղաւ . լոյսը թեպէս մթութեան սոսկալի քողը  
տեսարանին վրայէն վերցուց , բայց զիս գիշերուան վախերուն  
մէջ հաստատեց . առանց դուրսէն օգնութիւն մ'ունենալու  
անկարելի էր փախչիլ , բայց այս օգնութիւնն ալ ո՞ւրսկից պի-  
տի գար մեզ :

Առտուան ժամը իննին ատենները դուռերնիս զարկին .  
Կեռթուիտին սենեակը անցայ ըսելով անոր որ դուռը բանայ :

Դուռը զարնողները՝ զորոնք կրնայ հազորդակցութեան  
բացուածքէն նշմարել , մեր առջի իրիկուան ծառաներն էին ,  
և եկան նախ ընթրիքը վերուցին , որուն ամենեւին դպած  
չէինք ու նախաճաշը բերին :

Կեռթուիտ անոնց քանի մը բան հարցուց , բայց անոնք  
պատասխան չտալով ելան դայիցն :

Ան ատեն նորէն սենեակս մտայ . Պօժէի դղեակը գլու-  
նուելէս և մեզի եղած կարծեցեալ մեծարանքէն ամեն բան  
ճշդիւ իմացած էի : Պ . տ'Անտու դուքսը զիս Պ . տը Մոնտու-  
րոյի ինձիւքը տեսելով սիրահարուած էր ինծի . հայրս ալ առ  
բանս իմանալով և ինծի դէմ ըլլալիք հետամտութիւններէն  
զիս ազատել ուզելով՝ Մեռիտորէն փախուցած էր զիս . բայց  
ծառայի մը մատնութեամբ թէ դժբաղդ գէպքով մը իր այս  
նախազգուշութիւնը անօգուտ եղաւ . և ես գարձեալ ինկայ  
այն մարդուն ձեռքը որմէ զիս փախցընելու ունայն փորձ մը  
ըրած էր :

Այս խորհրդածութեանս վրայ՝ որն որ ճշմարտանման էր  
և ստուգիւ ճշմարիտ ալ , կանկ առի :

Կեռթուիտի ստիպելովը գաւաթ մը կաթ խմեցի և քիչ  
մը հաց կերայ :

Առտուն անցաւ մեր փախուտ աալու անտեղի գազափար-  
նելովը . բայց և այնպէս մեզմէ հարիւր քայլ անդին եղէգնե-  
րուն մէջ խաբսխած մակոյկ մը տեսանք իր թիակներովը : Ար-  
դարեւ եթէ այս մակոյկը մէկը մեզի բերէր , կրնայինք մեր այս

բանտարկութենէն ազատիլ , աւելի վտաս՝ ըլլալով Կեռթ-  
ուիտի վրայ որ բնականաբար ուժով աղջիկ մ'էր :

Նոյն առտուն բնաւ բանէ մը վախ չի կրեցինք . նախաճա-  
շին պէս ճաշերնիս ալ բերին . բայց շատ տկարացած էի : Սե-  
ղան նստայ , որուն Կեռթուիտս կը ծառայէր մինակ , քանզի  
մեր պահնորդներն կերակուրը տուածնուն պէս կը մեկնէին :  
Հացը կտրելու ատենս տեսայ որ մէջէն տոմսակ մը ինկաւ :

Անմիջապէս բացի , և հետեւեալը գրուած էր մէջը :

— « Բարեկամ մը կը հսկէ ձեր վրայ . վաղը անոր և ձեր  
հօրը վրայօք լուրեր պիտի ընդունիք » :

Յայտնի է թէ որչափ ուրախացայ . սիրտս անհնարին կեր-  
պով կուրծքս կը ծեծէր : Տոմսակը Կեռթուիտին ալ ցուցու-  
ցի , և օրը յուսով և ակնկալութեամբ իրիկուն եղաւ :

Երկրորդ գիշերն ալ առաջինին պէս խաղաղ անցուցինք .  
նախաճաշիս ժամանակը եկաւ որուն անհամբեր կապանէի ,  
զամն զի աղէկ գիտէի որ հացիս մէջ նոր տոմսակ մը պիտի  
դանեմ , ինչպէս որ գտայ ալ , և մէջը հետեւեալ խօսքերը  
գրուած էին :

— « Ձեզ յափշտակող անձը այս իրիկուն ժամը տամին Պօ-  
ժէի դղեակը կուգայ , բայց ժամը իննին վրանիք հսկող բա-  
րեկամը ձեր պատուհաններուն տակը պիտի գայ նոմսակ մը  
բերելով ձեր հօրմէն , որ ձեզի վտահութիւն կը հրամայէ .  
վտահութիւն մը՝ զոր թերեւս առանց այն նամակին չպիտի  
կրնաք ունենալ :

Տոմսակս վառեցէք » :

Քանի մը անգամ կարդացի այս տոմսակը , վերջը իր հրա-  
մանին համեմատ կրակը ձգեցի : Պիրը բոլորովին անձանօթ  
էր ինձ , և չէի դիտեր թէ որմէ կրնաք ըլլալ այս տոմսակը :

Կեռթուիտս ու ես սկսանք զանազան կարծիքներ ընել .  
առտուն հարիւր անգամ պատուհանին քովը գացինք . և կանք  
թէ արգեօք լճին եզերքը և անտառին խորը մեկը կը տես-  
նենք . բայց մէկն ալ չերեւցաւ :

Ճաշէն կէս ժամ ետքը դուռերնիս զարնուեցաւ . այս ա-

ապլին անդամն էր որ կերակուրի ժամանակէն դուրս ուրիշ  
ատեն կուզէին սենեակինս մտնել. ըսայց և այնպէս, որովհե-  
տեւ ներքը փակուելու միջոց մը չունէինք, անմիջապէս դուռը  
բացինք :

Այս այն մարդն էր որ կառքին դռանը առջին և դղեա-  
կին վայրագաւիթը մեզի հետ խօսած էր : Չկրցայ դէմքէն  
զինքը ճանչել, քանզի ան ատեն դիմակաւոր էր, ըսայց իր  
ձայնէն շուտով ճանչեցի :

Նամակ մը ներկայացուց ինձ :

— Որո՞ն կողմէն է այս նամակը, պարոն, հարցուցի իրեն :

— Օրիորդ, ըսաւ, շորհ՛ ըրէք զայն բանալու և կիմանաք :

— Բայց մինչեւ որ այս նամակին որմէ ըլլալը չիմանամ,  
չեմ կրնար կարգալ :

— Օրիորդ, կրնաք ուղածնիդ ընել : Ես այս նամակը ձեզի  
յանձնելու հրաման առած ըլլալուս ահաւատիկ հրամանը կը  
կատարեմ. մնացածը դուք գիտէք :

Եւ յերաւի ծառան, որ ակտուալեմ մ'ըլլալ կը թոռեր,  
նամակը ոտքիս տակը պզտիկ աթոռին վրայ դրաւ ու գնաց :

— Ի՞նչ ընեմ, ըսի Աեռթռիւտին :

— Եթէ ինձի-կը հարցընէք, օրիորդ, այս նամակը կար-  
գալու էք : Կարելի է անով ուրիշ մէկ վտանք մ'ալ կիմանանք  
և փախուտու կուտանք :

Այս խրատը խելացի էր, ուստի և առաջուց միտքերնիս  
դրածնուս համեմատ բացի նամակը :

Այս տեղ Տիանա խօսքը կորեց, ոտք ելաւ և զմնազան  
կտրասիք պարունակող պզտիկ կապոց մը բանալով՝ մետաքսէ  
թղթապանակի մը մէջէն նամակ մը հանեց :

Պիւսիւ հասցէին վրայ նայելով կարգաց,

« Առ դեղեցիկն Տիանա » :

Յետոյ երիտասարդ կնիւն նայելով

— Այս հասցէն, ըսաւ, Տ'Անթու դուքսին գիրն է :

— Ահ, պատասխանեց Տիանա հառաչելով. ուրեմն ինձի  
խարած չէր :

Վերջը՝ որովհետեւ Պիւսի կը տարակուսէր նամակը բանալու,  
— Կարդացէք, ըսաւ, դիպուածը նախ և առաջ իմ կենացս  
աւելի մտերիմին մշեց ձեզի, ձեզմէ ալ բան մը չեմ պահեր :

Պիւսի հնազանդելով կարդաց,

« Թշուառ իշխան մը, որուն սիրտը ձեր երկնային գեղեց-  
կութիւնովը յախշտակուած է, այժմ իրիկուն ժամը տանին  
ձեզի դէմ ունեցած վարմունքին համար ներում խնդրելու պի-  
տիւ պ, վարմունք մը՝ որ ինչպէս ինչն ալ աղէկ գիտէ, իր  
ձեզի համար ունեցած անյաղթելի սէրէն զատ ուրիշ ներում  
չունի :

« ՏՐՍ.ՆԱՌԻՍ. »

— Իրաւ այս նամակը տ'Անթու դուքսին գրածն է, հար-  
ցուց Տիանա :

— Աւա՛ղ, այս, պատասխանեց Պիւսի, ասի իր գիրն ու  
իր ստորագրութիւնն է :

Տիանա հառաչեց :

— Եթէ իր խօսքին չհաւատայի, պակասութիւն մը բրած  
կըլլայի՞, հարցուց :

— Որո՞ւ, իշխանի՞ն, հարցուց Պիւսի :

— Ոչ, կոմս տը Մոնտրօյի :

Ասոր վրայ Պիւսի ալ հառաչանք մ'արձակեց :

— Եարունակեցէք, Տիկին, ըսաւ, և իշխանն ու կոմսը կը  
դատենք :

Այս նամակը՝ որուն իրական ըլլալուն վրայ տարակուսե-  
լու առիթ մը չունէի, որովհետեւ իմ վախերուս հետ շատ յար-  
մարութիւն ունէր, ինձի կը յայտնէր, ինչպէս Աեռթռիւտ ալ  
ըսաւ, իմ զլուխ եկած վտանգը. և զիս այս անձանօթ բա-  
րեկամին հօրս անուամբ ինձի օգնելու համար ընելիք միջա-  
մտութեանը վրայ կապահովէր : Ուստի յոյսս միայն անոր վը-  
րայ դրի :

Նորէն սկսանք հետազօտութիւններ ընել. Աեռթռիւտի  
հետ մէկտեղ ասպակներուն ետեւէն անդադար լծին ու պա-

տուհաններնուս դիմացը եղած անտառի մասին վրայ կը նա-  
յէինք : Բայց որչափ որ ալ նայեցանք , չտեսանք անանկ բան  
մը որ յոյսերնիս կենդանացընէր և զայն երկրորդէր :

Որովհետեւ յունվար ամսոյ մէջ էինք , գիշերը շուտ մը հա-  
սաւ . դեռ չորս հինգ ժամ պէտք էր որոշեալ ժամանակը լը-  
րանարու , և անձկութեամբ կսպասէինք :

Նոյն գիշերը ձմեռուան այն գիշերներէն մէկն էր , որ ե-  
թէ ցուրտ չըլլայ , կըսուի թէ գարնան վերջերը կամ աշնան  
սկիզբներն ենք : Նրկինքը հազարաւոր աստղերով կը լիայէր  
և իր մէկ անկիւնը լուսինն արծաթափայլ լոյսով տեսարանը  
կը լուսաւորէր : Աեւթուրի սենեակին պատուհանը բացի ,  
քանզի հաւանականորար անկից իմ սենեակիս պատուհանին  
չափ աղէկ չէինք տեսնուիր :

Ժամը եօթնին ատենները լճէն թեթեւ շոգի մը ելաւ ,  
բայց թափանձիկ կազէ քօղի մը նման ըլլալուն արդեւք չե-  
ղաւ մեր տեսութեանը , կամ թէ ըսենք , աչքերնիս մթու-  
թեան վարժուելուն համար , կրցան այս շոգիէն թափանձել :

Որովհետեւ ժամանակնիս հասկընալու բան մը չկար , ժամը  
քանին ըլլան ալ չգիտէինք : Յանկարծ այս թափանձիկ մթու-  
թեան մէջէն տեսանք որ անտառին ծայրը ստուերներ կը շարժէին  
որոնք կարծես թէ զգուշութեամբ յառաջ կուգային ծառերը  
բռնելով՝ որոնք մթութիւնը աւելի թանձրացուցած զանոնք  
կը պահպանէին : Արերի է , ըսինք , այս ստուերները մեր  
խոնջ աչքերուն առջին երեւոյթներ եղած ըլլան . բայց նոյն  
կէտին ձիւ մը խինջիւնն ալ լսեցինք :

— Ստոնք մեր բարեկամներն են , ըսաւ Աեւթուրի :

— Կամ իշխանը , պատասխանեցի :

— Ո՛հ , իշխանը , ըսաւ , իշխանը անանկ գաղտուկ չգար :

Այս պարզ խորհրդածութիւնը իմ կասկածներս փարատեց  
և զիս կրկին ապահովեց :

Աւելի ուշադրութեամբ սկսանք նայիլ :

Մարդ մը մինակ յառաջ եկաւ , և կերեւար որ անդին ծա-  
ռերուն տակը խումբ մը մարդ ձգած էր :

Այս մարդը շիտակ մակոյկին քովը գնաց , քակեց , մէջը  
մտաւ և զայն շուրին վրայէն սահեցընելով լուրեայն դէպի  
մեզի կուգար :

Քանի որ առաջ կուգար , այնչափ աւելի ուշադրութեամբ  
կը նայէինք ով ըլլալը իմանալու համար :

Հասակին մեծութենէն և դէմքին թախծազին ու խիստ  
ոխրանշան ցոյցերէն ինծի եկաւ որ կոմս որ Մանսրօն էր :  
Վերջապէս երբ տասը քայլի չափ մնաց մեզի հասնելու , ալ  
տարակոյս չունեցայ , ճիշդ ինքն էր :

Հիմա վրանդին չափ օդնութենէն ալ սկսայ վախնալ :

Պատուհանին անկիւնը քաշուած՝ լուռ և անշարժ կեցեր  
էի , անանկ որ զիս չէր կրնար տեսնել : Երբ պատին տակը հա-  
սաւ , մակոյկը հոն կապեց , և դըլլար վերցընելով՝ պատու-  
հանէն ներս նայեցաւ :

Ստոր վրայ թեթեւ ձայն մը հանեցի :

— Ահ , ներեցէք , ըսաւ կոմս աը Մանսրօ , գիտէի որ ին-  
ծի կազատէիք :

— Ո՛չ , մէկու մը կսպասէի , պարոն , ըսի , բայց դուք ը-  
լանիդ չէի գիտեր :

Կոմսը դառն կերպով մը ժպտեցաւ :

— Տիմնա տը Մեռխորի պատուոյն վրայ ինձմէ ու իր հօր-  
մէն զատ ուրիշ հսկող կայ :

— Պարոն , ձեր գրած նամակին մէջ ըսած էիք որ իմ հօրս  
անունովը կուգար :

— Այո՛ , օրիորդ , և որովհետեւ գուշակեցի որ դուք իմ  
ընդունած ծառայութեանս վրայ պիտի տարակուսիք , ահա-  
ւասիկ պարոնին տոմսեղը :

Այս ըսելով թուզով մ'երկնցուց ինձ :

Որովհետեւ ճրագ չէինք վառած , որպէս զի մթութեան  
մէջ աւելի ազատ ըլլանք պարագաներուն պահանջած բոլոր  
բաններն ընելու : Աւտի Աեւթուրի սենեակին իմ սենեակս  
երթալով կրակին առջին նստայ և վառարանին բօցին լուսովը  
կարգացի :

Օրերէի Տիանաս :

Մինակ Պ . կոմս տը Մոնտորո կընայ քեզ այդ վտանգէն ազատել, վտանգ մը որ անշարի է : Ուրեմն բոլորովին վտահէ անոր իբր լաւագոյն բարեկամի մը զոր երկինք զրկած է մեզ :

Ժամանակ պիտի գայ որ պիտի լսէ քեզի թէ իրեննկատմամբ ունեցած պարտաորութիւննիս կատարելու համար ի խոր սրտէ ինչ կը փափայիմ որ ընես :

Հայրդ , որ կաղաչէ քեզի իրեն հաւատալ և քու ու իր վրայ դժայ :

ՊԱՐՈՆ ՏԷ ՄԵՌԻՏՈՐ

Պարոն տը Մոնտորոյի դէմ ընաւ բան մը չմնաց սրտիս մէջ . անոր համար ունեցած ատելութիւնս աւելի ընազդմամբ էր քան թէ իրաւամբ . քանզի թ չնամու թիւնս եղնիկի մը մահուան նկատմամբ էր , և այն ալ սրտորդի մը համար շատ թեթև պահաւորութիւն մ' է :

Ուստի ելայ քովը դայի :

— Է՛յ , ի՛նչ ըրիր , հարցուց ինձ :

— Պարոն , հօրս նամակը կարդացի , կըսէ որ պատրաստ էք զիս ասիէ դուրս հանելու , բայց չըսեր թէ ուր պիտի տանիք :

— Պարոնին ձեզի սպասած տեղը , Օրիորդ :

— Ուր կսպասէ ինձի :

— Մեռիտորի դղեակը :

— Ըսել է որ երթամ հայրս պիտի դտնեմ :

— Երկու ժամէն :

— Ո՛հ , պարոն , թէոր իրաւ է ըսածնիդ . . . :

Լռեցի , բայց կոմսը խօսքը լմնցընելուս կսպասէի :

— Որչափ երախտապարտ պիտի ըլլամ ձեզ , ըսի դողդոջուն ու տկար ձայնով մը . քանզի գիտէի թէ այս երախտագիտութենէն անանկ բան մը կսպասէր զոր չէի կընար իրեն բացատրել :

— Ուրեմն , Օրիորդ , ըսաւ կոմսը , պատրաստ էք հետս գալու :

Մնահանգտութեամբ կեռութիւտի երեսը նայեցայ և տեսայ որ այն ալ ինձի պէս կոմսին թախծադէն դէմքին չէր հաւներ :

— Գիտցիք որ եթէ վայրկեա՛ մ' աւելի կորսնցընենք , մշաքերնուդ անցածէն աւելի վտանգատոր պիտի ըլլայ ձեզ , ըսաւ . գրեթէ կէս ժամ ուշացայ . հիմա ժամը աստը պիտի զարնէ , և չէք գիտէր որ իշխանը ժամը տասնին Պոթէի դըզեակը պիտի գայ :

— Աւա՛ղ , այո՛ , պատասխանեցի :

— Եթէ իշխանը մէյ մը հոս գայ , կեանքս առանց յուսոյ վտանգի ենթակայ կըլլայ , ինչպէս այս վայրկենիս մէջ ալ ձեր կենաց ազատութեանը պատճառաւ :

— Հայրս ինչո՛ւ չեկաւ :

— Ձէք դետեր որ հայրերնիդ պաշարուած է , և առանց ուր երթամ իմացընելու քայլ մը անգամ չընար առնուլ ,

— Դուք ի՛նչպէս եկաք , հարցուցի :

— Ես , ուրիշ . ես իշխանին բարեկամն ու խորհրդակիցն եմ :

— Բայց , Պարոն , պոռացի , թէ որ դուք իշխանին բարեկամն ու խորհրդակիցն էք , ուրե՛ն . . . :

— Ուրեմն , ստոյգ է որ ձեզի համար անոր դաւաճանութիւն կընեմ . անոր համար կըսեմ թէ ձեր պատիւը ազատելու համար կեանքս վտանգի տակ կը դնեմ :

Կոմսին այս պատասխանին մէջ անանկ աղէկ համոզում կար , և ճշմարտութեան հետ անանկ յայտնի առնչութիւն մը ունէր , որ եթէ քիչ մ' ալ տարակոյս մնացած էր վըստ անոր վրայ վտահէլու , ընաւ խօսք մը չգտայ այս տարակոյս յայտնելու համար :

— Կսպասեմ , ըսաւ կոմսը :

Կեռութիւտին երեսը նայեցայ որ ան ալ ինձի պէս չէր համարձակեր երթալու :

— Թէ որ դեռ կը տարակուսիր . ըսաւ Պ . տը Մոնտորո , մէյմը սա կողմը նայեցեք :

Եւ լճին անդիի կողմը նայեցայ տեսայ որ խումբ մը ձխաւորներ դէպի դղեակը կուղային :

— Ո՛վ են ասոնք , հարցուցի :

— ՏՄնժու դուրսն ու իր ծառաներն են , պատասխանեց կոմսը :

— Օրհորդ, Օրհորդ, ըստ Աեռթուիւտ, պէտք չէ ժամանակ կորսնցընել:

— Արդէն կորսնցուցինք, ըստ կոմսը. Աստուած սիրէք, ի՞նչ պիտի ընէք, ըրէք:

Աթոսի մը վրայ ինկայ, ալ ոյժ չմնաց վրաս:

— Ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ, ի՞նչ ընեմ, ըսի հասաչելով:

— Մտիկ ըրէք, ըստ կոմսը, մտիկ ըրէք, դուռը կը զարնեն. Յիրաւի լսեցինք որ երկու հոգի անդադար դուռը կը դարնէին, որոնք ինչպէս որ տեսած էինք, խուճիկն բաժնուած էին միւսներէն առաջ երթալու համար:

— Հինգ վայրկեանէն, ըստ կոմսը, ալ ժամանակ չմնար:

Փորձ մը ըրի որքի վրայ ելնելու, բայց չկրցայ:

— Քովս եկուր, Աեռթուիւտ, քովս եկուր:

— Օրհորդ, ըստ խեղճ աղջիկը, լսեցի՛ք, դուռը բացուեցաւ, և ձիերը վայրագաւիթը ոտքերնին գետինը կը զարնեն:

— Այո, այո, պատասխանեցի ոտքի վրայ ելնել ուզելով. բայց դարձեալ չկրցայ:

— Ո՛հ, ըստ Աեռթուիւտ, ատր ճարը աս է: Եւ զիս արդու մը պէս թեւերուն մէջ առնելով՝ կոմսին թեւերուն մէջը դրաւ:

Աս մարդուն ինծի դպիկը զգալու պէս անանկ դող մը եկաւ վրաս, որքիչ մնաց թեւերուն մէջէն լիճը պիտի լինայի: Բայց ինքը ուժով մը զիս բռնեց ու մակոյկը դրաւ:

Իմ ետեւէս Աեռթուիւտ ալ մտաւ մակոյկը առանց ուրիշի մը օգնութեան:

Ան ատեն տեսայ որ քօղս գլխէս լիճը ինկած ջուրին երեսը կի ծածանէր:

Միտքս եկաւ որ անով հետքերնիս պիտի յայտնուի:

— Քօղս, քօղս, ըսի կոմսին, քօղս վերցուր. և մասօվս ցուցուցի. բայց նա անոր նայելով

— Ո՛չ, ըստ, ատի շատ աղէկ բան մ'եղաւ:

Եւ թիերը ձեռքն առնելով անանկ ուժով սկսաւ թիա-

վարել, որ շատ շանչաւ լճին միւս կողմը հասանք:

Նոյն միջոցին տեսանք որ սենեակիս պատուհանները լուսաւորուեցան, քանզի ծառաները ճրագներով հոն մտած էին:

— Տեսա՞ք, ըստ Պ. որ Մոնսորօ, սո՛ւտ ըսի, ժամանակ կա՞ր կենալու:

— Ո՛հ, այո՛, այո՛, Պարոն, ըսի, ճշմարտագէտ դուք իմ ազատիչս էք:

Սակայն ճրագներն անդադար մէյոք իմ սենեակս, մէյո՛ք ալ Աեռթուիւտին սենեակը կը պտտէին: Լսեցինք մարդոց աղակները. մարդ մը ներս մտաւ, որուն առջեւէն բոլոր միւսներն հեռացան: Աս մարդը բաց պատուհանին քովը դնաց, դուրս ծռեցաւ, և քօղիս ջուրին երեսը ծածանիլը տեսնելով ազաւրակ մը փրցուց:

— Տեսա՞ք, աղէկ չըրի՞ք քօղերնիդ հոն ձգելս, ըստ կոմսը. իշխանը պիտի կարծէ որ իր ձեռքէն անգատելու համար լիճը նետուած էք, և երբ ինքը ձեզի փնտուել ասայ, մենք կը փախինք:

Ահա ան ատեն ստուգիւ աս մարդուն սուր խորհրդածուութեանը վրայ զարմացայ, որն որ առաջուց դիտմամբ այսպիսի միջոց մը գործածեր էր:

Նոյն միջոցին լճին անդիւի կողմը ելանք:



1918  
1919  
1920

2013

